

«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекаци”
“Grigor Narekatsy” State Accredited University

Դ Պ Ր Ա Տ Ո Ւ Ն

Գիտական հոդվածների ժողովածու

Д П Р А Т У Н

Сборник научных статей

D P R A T U N

Collection of Scientific Articles

1(6)

2018

Ստեփանակերտ
Степанакерт
Stepanakert

«Դիզակ պլուս» հրատարակչություն
Издательство “Дизак плюс”
“Dizak plus” Publishing House

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Դ 825

Հրատարակվում է 2011թ.
Издаётся с 2011г.

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՎՈՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ստեփ. «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

ԲԵԳԱՐՅԱՆ ԺԱՆՆԱ - ՀԼԳ ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների
թեկնածու

Դպրատուն: Գիտ. Հոդվածների ժող. /Գրիգոր Նարեկացի պետհա-
Դ 825 վատարմագրված համալս. -Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2018.
Հ. 1(6):2018 / Խմբ. խորհուրդ՝ Ա. Ավագյան և ուրիշ: Գլխ. խմբ.
Վ. Հակոբյան.- 168 էջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ-բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ-պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրԴՀ
պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ-բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ - բանասիրական գիտությունների թեկնածու, «Գրիգոր Նարե-
կացի» համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ավագ դասախոս

ԴՈՒՈՒՄԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ-ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Երևանի մանկավարժական
համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայ հին գրականության ամբիոնի վարիչ

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ-բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղ-
յանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ-մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԱրԴՀ հոգեբանության և մանկավարժության ամբիոնի դասախոս

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ-բանասիրական գիտությունների թեկնածու

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի վարիչ

ՀԱՎՈՐՅԱՆ ՍԵՎԱԿ-իրավաբանական գիտությունների թեկնածու, ԼԴՀ գլխավոր դա-
տախազի տեղակալ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ-մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆե-
սոր, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի տարրական կրթության և մեթոդիկայի ամբիո-
նի վարիչ

ՍԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ-փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղ-
թակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԻՐԱՆՈՒԵ - բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԿՐՏՅԱՆ ԷՂՎԱՐԴ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ.Աբովյանի մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզ-
վի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ-բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ-բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Արեղյանի անվան գրականության հնաստիտուտի ավագ գիտաշխատող

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԺԵՆՅԱ-բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН - д.ф.н., профессор, декан фил. фак. ЕГУ

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ - д.и.н., профессор, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ - д.ф.н., профессор, председатель ВАК РА

АКОПЯН СЕВАК - к. ю. н., помощник главного прокурора НКР

АРУТЮНЯН ГРИГОРИЙ - д.п.н., профессор, зав. кафедры методики и начального образования университета Григор Нарекаци

ГРИГОРЯН АМАЛИЯ - к.ф.н., преподаватель армянского языка и литературы унив. Григор Нарекаци

ДОЛУХАНЯН АЭЛИТА - член-корреспондент НАН РА профессор, зав. кафедрой древнармянской литературы Ереванского педагогического университета.

ДЕВРИКЯН ВАРДАН - д.ф.н., профессор, директор литер-го института имени М. Абегамяна НАН РА

ИСААКЯН АВЕТИК - доктор, профессор филологических наук, завед. кафедрой института литературы и текстологии имени М. Абегамяна НАН РА

КАЛАНТАРЯН ЖЕНЯ - доктор филологических наук, член корреспондент НАН РА

МАНАСЯН АЛЕКСАНДР - д.ф.н., член-корреспондент НАН РА, зав. кафедрой философии и логики унив. ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ - к.ф.н. научный секретарь литературного института имени М. Абегамяна НАН РА

МКРТЧЯН ЭДВАРД - д.ф.н., профессор, преподаватель кафедры армянского языка и литературы, методики Ереванского педагогического университета имени Х. Абовяна НАН РА

МУСАЕЛЯН ОВИК - д.ф.н., профессор, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

САРГСЯН АРМЕН - к.ф.н., заместитель министра образования и науки НКР

НИКОГОСЯН АРКМЕНИК - к.ф.н., старший научный сотрудник литературного института имени М. Абегамяна НАН РА

САРИНЯН СЕРГЕЙ - академик НАН РА, председатель специализированного совета 003, старший научный сотрудник Института литературы имени М. Абегамяна НАН РА

СОГОМОНЯН ТАТЕВ - к.ф.н., доцент кафедры армянского языка и литературы университета Григор Нарекаци

ТОВМАСЯН АРКАДИЙ - к.п.н., доцент, преподаватель психологии и методики университета АрГУ

ТОВМАСЯН ЛУСИНЕ - к.ф.н., доцент, зав. кафедрой английского языка университета Григор Нарекаци

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philological Sciences, Professor, ERU. The Dean of Philological Faculty.

- VALERI AVANESYAN - *doctor of Historical Sciences, Professor, ASU Vice-rector.*
LILIT ARZUMANYAN - *Doctor of Philological Sciences, Professor RA HAI President.*
AMALYA GRIGORYAN - *Candidate of Philological Sciences, Lecturer of Armenian language and Literature at "Grigor Narekatsi" University.*
AELITA DOLUXANYAN - *Correspondent Member of NAS RA, Professor.*
ARKADI TOVMASYAN - *Candidate of Pedagogy Sciences, Docent, Lecturer at the chair of Phychology and Pedagogy.*
VARDAN DEVRIKYAN - *Doctor of Philosophical Sciences, The Rector of Literary University named after M. Abeghyan.*
AVETIQ ISAHAKYAN - *Doctor of Philological Sciences, Professor NAS RA. The Head of the Department of Literature at the University named after M. Abeghyan.*
LUSINE TOVMASYAN - *Candidate of Philological Sciences, The Head of Chair of Foreign Languages "Grigor Narekatsi" University.*
SEVAK HAKOBYAN - *Docent of Law Sciences, The Deputy of NKR Chief Presecutor.*
GRIGORY HARUTYUNYAN - *Doctor of Pedagogy, Professor, The Head of Chair of Pedagogy of Stepanakert "Grigor Narekatsi" University..*
ALEQSANDR MANASYAN - *Doctor of Philosophical Sciences, correspondent member of NAS RA. The Head of Chair of YSU Theoretical philosophy and Logic.*
SIRANOUSH MARGARYAN - *Candidate of Philological Sciences, Scientific secretary of the Institute of Literature named after M. Abeghyan.*
EDWARD MKRTCHYAN - *Doctor of Philosophical Sciences, Professor, The Head of Chair of Philology at the Philological Institute.*
MUSAELYAN HOVIK - *Doctor of Philosophical Sciences, Professor, Lecturer at the chair of the Armenian literature and Journalism, ASU.*
ARQMENIK NIKOGHOSYAN - *Candidate of Philological Sciences, Researcher of the Literature Institute named after M. Abeghyan.*
ARMEN SARGSYAN - *Candidate of Philological Sciences, The Viece-minister of Education and Knowledge, NKR.*
SERGEY SARINYAN - *Academition of NAS Philological Sciences, Literature Institute named after M. Abeghyan.*
TATEVIK SOGHOMONYAN - *Candidate of Philological Sciences, Lecturer at the Chair of the Armenian language and Literature, Stepanakert "Grigor Narekatsi" University.*
JANNA QALANTARYAN - *Doctor of Philosophical Sciences, Correspondent Member of NAS, RA.*

ՀՏԴ 001

ՊՄԴ 72

ISBN 978-9939-1-0532-1

© « Գրիգոր Նարեկացի» համալսարան, 2018
© Վ.Հակոբյան, 2018

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ. ԳՐՈՂԻ ԲԱՆԱԶԵՎԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱՆ*

Բանալի բառեր: Երգային քնարերգություն, պարզություն, արդիականություն, գրականություն, հոգեկերտվածք, փոխաբերություն, բնություն, թախիծ, փիլիսոփայություն, ժամանակ և իրականություն, պատկեր, բանաձևային մտածողություն, լեզու և ոճ, նորարարական, նշանային համակարգ, միջնադար, չինական այբուբեն, չափանիշներ:

- 1 -

Համաշխարհային գիտական միտքը դեռևս շատ տարիներ առաջ անրագրել է մի կարևոր ճշմարտություն՝ մարդու հոգեկերտվածքը, բառի ամենաուղիղ իմաստով, կապ ունի այն բնության հետ, որտեղ նա ծնվել է, ապա՝ ոչինչ այնքան հստակորեն չի արտացոլում ազգային հոգեկերտվածքն ու բնությունը, որքան արվեստի ու գրականության գործը: Շնորհներով օժտված գրողի լեզուն. որպես անհատականացված խոսքի և բանաձևային հստակ մտածողության արտահայտություն, այն էական և գլխավոր միջոցն է, որը, հոսող ջրի օրինաչափություններով, ինքնահստակեցման է տանում բնականը, իսկ շինծու-արհեստականը, ավելորդն ու անմաքուրը դուրս արտանետում՝ բանաստեղծական անաղարտության համար ապահովիչի դերակատարություն ստանձնելով: Բոլոր այն առանձնատկությունները, որոնցով քերթողական արվեստն իր գեղագիտական տիրույթները դարձնում է անսահման-անընդգրկելի ու մտքի ձեռնածությունների հանդեպ անձեռնմխելի, ներառված են լեզվամտածողության մեջ: Ասում են, ի վերջո, ինքը՝ սոցիումն է պայմանավորում հասարակական բոլոր գործընթացները՝ հաճախ դրսի ազդակներով կատարվող անխուսափելի վերուվարումներով ու ժամանակի մեջ «ծաղկում» ապրող կոշտ դրսևորումներով: Եվ դարձյալ գեղարվեստականության չափորոշիչը քնարերգության մեջ եղել ու մնում է մայրենին, քանի որ բառի խորթնայրության տրվելն ու հավատափոխությունը գրի մեջ կործանարար է, փրկության միակ և անփոխարինելի ելքը քո արյան կենսաբանական արմատների վրա դարերում սերտաճած վարքի ու անխտոր շարժման այբուբենն է:

Առաջին բանաստեղծությունը, որ վաղ մանկական տարիքից մնացել է իմ հոգում, հեքիաթն էր: Տարիներ հետո միայն իմացա՝ թե հեքիաթ, թե բանաստեղծություն, երկուսն էլ **անհնարինի հնարավորն** են ներկայացնում: Սա է իսկական արվեստի չափանիշը, սակայն՝ ոչ առանց վերապահումների: Օրինակ, Չարենցի համար ոչ մի չափանիշ վերջնական չէ, ի վերջո, ոչ մի խորհուրդ չի ընդունում ապագայի երգը:(1) Թեև, ի վերջո, սա նույնպես յուրօրինակ խորհուրդ է՝ հղված ապագային: Ժամանակի հետ եթե չեն փոխվում չափանիշները, ուրեմն՝ դրանք չափանիշներ չեն, ավելին, իրենց նորացմամբ չափանիշները նորացնում են իրականությունը, այլապես՝ ուն են պետք պահածոյացված բառը, ժամանակը: Վերջապես

*Հոդվածն ընդունվել է 02.11.2018թ.:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

ինչ տեղ է գրավում ժամանակը բառի մեջ: Անկասկած այն կերպար է, ասենք՝ Դոստոևսկու Կարամազով Ալյոշան, Թոմասյանի Գիքորը, Բակունցի Արթին ապերը, Մաթևոսյանի Աղունը... Որքան էլ ամբողջական ու սիրված լինի կերպարը, նրանում չես ապրի՝ որպես պատրաստի տրված ժամանակի մեջ, որովհետև դու պիտի լինես-դառնաս քո ժամանակի կերտողը, որ ժամանակավրեպ չլինես թե դու, թե բառը, միևնույն է այս դեպքում, թե՛ ով: Անկասկած, ժամանակը փոխելու միակ ուղին՝ չափանիշները փոխելն է, իսկ չափանիշները և, իհարկե, դրանով իսկ՝ նաև աշխարհը, փոխելու միակ ձևը, ինքդ քեզ փոխելն է, կամ, ավելի ճիշտ՝ նախընտրածդ աշխարհի «մոդել» դառնալը: Չէ՞ որ յուրաքանչյուր աստվածաշնորհ արվեստագետի մեջ ինչ-որ չափով նոստրադամուսյան *պայծառատեսություն* կա:

Բանաստեղծության հաշվին խնայված ժամանակը փոուն-սիրոսացվում է, դուրս մնում ամենեցու հոգևոր ոլորտից: Նորից դառնամ Չարենցին: Եթե նա իր քնարերգությամբ, «Երկիր Նաիրի»-ով մեզ դարձնում է իր ժամանակակիցը, ապա դա երանական պատիվ է ոչ թե Չարենցի, այլ մեզ՝ նրա հետնորդներիս համար, ուրիշ է, երբ քո բառով ինքդ ես կարողանում Չարենցին բերել ու տեսնել քո իրականության մեջ, որը դու ես ստեղծել: Եվ ամբողջ առեղծվածն էլ հենց ստեղծումի մեջ է: Այստեղ հարկ կա խոսել *կանխամտածվածություն* երևույթի մասին, որը, որպես կանոն, մշտապես փչացնում է գործը. գրող են՝ գրում են: Եթե թռչունը ճյուղին կանգնելուց առաջ «պլանավորեր» իր անելիքը, իմանար, որ ինքը պիտի երգի, ապա չէր ստացվի ոչինչ: Նույն այդ թռչունը, որ ծառի ճյուղից կախված բույն է հյուսում, շատ հաճախ՝ կտցագործում, տարբեր շինանյութերից (ծղոտ, կեղև, փետուր, խոտ և այլն), ոչ մի ճարտարապետական կրթություն չունի: Պիտի վերուստ տրված լինի: Օգտագործեն *սովովի* բառը: Ազնվարյուն գործը ծնվում է ինքնաբուխ: Ոչ թե գրողն է ասելիքի ետևից վազում, այլև ասելիքն ինքն է առաջնորդում իսկական գրողին: Ահա թե ինչ է խոստովանում Չարենցը.

*Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու –
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի... (2)*

Կանխատրամադրված անկեղծությունն ավելի կեղծ է, քան ինքը կեղծիքը: Արդի գրականագիտության «թեժ գծերից» մեկը *ավանդականի և նորարարականի* հարաբերությունն է: *Ավանդ* հասկացությունը մեզանում արդեն կորցրել է իր նախնական իմաստը և շատ հաճախ կիրառվում է այս կամ այն գեղարվեստական կրկնությունը կամ գործի մեջ պոետական ինքնության աչքառու շեղումը քողի տակ պատշաճորեն պատասպարելու համար: Լավագույն գրիչների փորձը ցույց է տալիս, որ ավանդապահն իրականում նա է, ով խախտում է *ավանդը*: Այս հարցի շուրջ դեռևս կխոսենք: Ի դեպ, քանի որ խոսք եղավ այս մասին, ուզում են հանգամանորեն անդրադառնալ *պատշաճություն* հասկացությանը նույնպես, որը իր կիրառումներում հակացուցված է ոչ միայն բանաստեղծությանը, այլ գեղարվեստին ընդհանրապես: Այն ավելի շատ *ազգակցականություն* է դրսևորում երևույթների համահարթեցման, համահավասարեցման (կոմպլեմենտարիզմ), քան քնարերգության հետ: Սակայն, հիմնական ասելիքին անդրադառնալուց առաջ, փորձենք ցույց տալ այն երևույթները, որոնք նպաստում և հող են ստեղծում դրանց զարգացման ու տարածման համար: Դրանք, ցավոք, շատ են, բոլորը թվել, բնականաբար հնարավոր չէ, բայց ամենակարևորներից մի քանիսը թվարկենք.

- Սիրալիրություն՝ սիրո փոխարեն:
- Բառի պոպուլիզմը (ժողովրդահաճություն): Համաբանություն:
- Հայրենասիրական կեցվածք՝ գործնական ու ազնվաբուխ հայրենասիրության փոխարեն:

- . Անհարկի, արհեստական տուրք՝ նորաձեւությանն ու նորարարությանը:
- . «Հրատապ ու արդիական» թեմաների ու գաղափարների (խորհրդային շրջանից պահպանվող) իներցիոն դավանում:
- . Կանխակալություն և կողմնակալություն՝ բառի ու թեմայի հանդեպ:
- . Պատրաստի կերպարների խաղարկում, հերթապահ բառերի հնավաճառություն:

Նոր մտածողության ու աշխարհընկալման շնորհն է, երբ գրողը չի կրկնում նախորդների պատկերավորման միջոցներն ու հնարքները, կարողանում է հրաժարվել *պես, նման, հանգույն*, կամ ասենք՝ *ըլլայի* և բազմաթիվ այն միջոցներից, որոնք մեզ հետ են տանում պատկերային կառուցակարգով, ընդհուպ մինչև գուսանական *վարդն ու բլրուլը*, որի մասին խոսել է և Պ. Սևակը, սակայն դա չի նշանակում, թե մեր մեծերն իրենց ժամանակին դիմելով դրանց, պակաս կարևոր ու մնայուն գեղարվեստական արժեքներ են ստեղծել, ամենևին էլ՝ ոչ, խոսքը քո ձեռքով հյուսվող քո ժամանակի մասին է, որ պիտի ունենա քո մտքի ու զգացումի ձևագրեստը՝ ներքին բովանդակությամբ թելադրված: Սայաթ-Նովայից լավ չես գովերգի սիրածդ աղջկան՝ որքան էլ նրա մտածողական համակարգի մեջ մտնես, այստեղ կարևորը քո «զգայական ընկալումներն» ու երևույթի ուրույն մեկնաբանումներն են: Չարենցի երգը Չարենցի ժամանակն է, անիմաստ է այսօր սերը զգեստավորել չարենցյան բառերով, մանավանդ՝ կերտել-կառուցել չարենցյան ճարտարապետությամբ ու մտածողությամբ: «Ստեղծարար ուժի նպատակը ներքինն է, այդ ներքինը չի կարող բխել սոսկ արտաքինից»: (Վասիլի Կանդինսկի): (3) Ապա՝ մեծերը երբ չեն «հնանում», ուրեմն՝ չկան այն անունները, ովքեր կարող են ասպարեզը լցնել իրենցով: Հայկական ժողովրդական ասացվածք կա՝ եթե աշակերտը չի գերազանցում ուսուցչին, ուրեմն, կյանքը կանգնել է, և ջուրն անհոս է:

Օրինակ, մեր վաղամեռիկ բանաստեղծ Ղուկաս Սիրունյանը գտել է սիրերգության իր բանաձևն՝ առանց մի բառ անգամ թեքվելու մեր «հանճարեղ ճորտերի» կողմը՝ *աղջիկը կանգնեց խնձորենու մոտ և մի գիշերում խնձորենին ծաղկեց...* Ղուկասից առաջ, իհարկե, դասականներն են տվել ինքնատիպ ու անկրկնելի մտակառույցի բանաձևը, հիշենք Տերյանը՝ *դու այնպես ես ինձ սիրում, որ կարծես թե չես սիրում*: Բառը սեփական արյան գնդիկների ձայնն է բերում, երբ քո անկեղծ ապրումի լարման կիզակետում ես, մնացած դեպքերում խոսքը մնում է անօդ ու անգույն տարածության մեջ: Յուրաքանչյուր բառում տիեզերական անսահմանության ընդգրկումներ կան, անհաշիվ գույներ ու բույրեր, ձայներ, լույս, տրտմություն և այլն, և այլն, բանաստեղծն է, որ բառի մեջ արթնացնում է դրանց ներգործունության /էֆեկտի/ որակներն ու աստիճանը, բառին կտրելով բառարանանջարանային իր վիճակներից, ավելի պարզ՝ եթե երկի մեջ տեղ գտած բառն իր բառարանային իմաստն է արտահայտում, ուրեմն ոչինչ չի ասում:

Երբ բառի ծլունակության տոկոսը ստեղծագործության մեջ նվազում է՝ ընդհուպ իջնելով մինչև գրոյական աստիճան, նշանակում է նրա ներսում օդը մահացած է: Բառի որակները որոշվում են նրա և «հարևան» բառերի ներքին կապերով, բազմալար շփումներով, չէ որ, առանձին վերցրած, յուրաքանչյուր բառ ինքնին երկխոսություն է, տրամադրությունների ու մտային անհայտների մի ամբողջական համալիր, որն, ըստ հեղինակային ընկալումների ու հոգևոր ազդակների, դրսևորում է տարբեր որակներ: Երևույթի գեղագիտական ընկալումը հետաքրքիր ու ավարտուն մեկնություն է ստացել Սևակի մոտ՝ *մինչև չգժվի սերնը հողի մեջ, ծիլ չի դառնալու*:

Հենց *բանն էլ գժվելու մեջ է, ոչ թե իրեն գժի տեղ դնելու*:

Գրականության պատմությանը հայտնի գրեթե բոլոր ճանաչված սիրերգակների ստեղծագործությունները ծայրահեղ բուռն ու մեծ զգացումների, ապրումների արտահայտություն են, և դա բնական է: Ամենևին էլ հորինվածք չեն, ասենք,

ոչ Դանթեի Բեատրիչեն, ոչ Պետրարկայի Լաուրան, ոչ Եսենինի Շահանեն, ոչ Իսահակյանի Շուշանը, ոչ Տերյանի անուրջների թագուհին, ոչ Չարենցի Նավզիկեն, ոչ Սևակի Սուլամիթան... Ավելին, մեզ հայտնի են նաև նրանց հետ կապված իրական ու երթեմն, ինչու չէ՞ անսովոր կենսագրական պատմություններ, որոնք ոչ միայն ասվածի հավաստիքն են, այլև խորը դրամատիզմ են հաղորդում գրական ստեղծագործություններին, ստեղծում անկեղծ ու գերիրական տրամադրությունների դաշտ՝ խոսքին հաղորդելով այնպիսի անմիջականություն ու համոզականություն, որոնք և, ի վերջո, դառնում են գեղարվեստականության աննախադեպ մակարդակ ու որակ: Այս ամենն աներկբա ցույց է տալիս, որ միայն հոգով, էությանը խորապես ապրվածը, հազար ու մի տառապանքների միջով անցածը կարող է դառնալ արվեստ՝ դյուրին դարձնելով անգամ ամենաքմահաճ ու քիմքոտ, ինչպես ասում են, նյութի դիմադրությունը: Սպիտակով թղթի սպիտակը չի հաղթահարվում, այստեղ է, որ առաջնային պլան է մղվում **հակասության** խնդիրը՝ **սպիտակի և նրա հաղթահարման, իրականության և գրողի:** Ընդդիմանալու անսուտ դիրքորոշումը, «անհամեստությունը»:

Բանաստեղծի «բարոյական նկարագիրը» գրեթե անթերի է ներկայացված Եվգենի Եվտուշենկոյի տողերում՝ **դու մի գլորվիր դեպի հաղթանակ, այլև բարձրացիր դեպի պարտություն:** Գրողի ներքին «կառույցով» է պայմանավորվում նրա տողը: Եթե չեն սխալվում, ժամանակին Վ. Դավթյանն է նշել՝ երբ արդեն գրիչ ես առնում բանաստեղծություն գրելու, դա հենց ինքը մեծագույն անհամեստությունն է, հավելենք՝ գրիչ ես առնում գրելու, որովհետև այն, ինչ դու ես ուզում գրել, ոչ ոք չի գրել մինչև քեզ ու չի գրելու քեզանից բացի: Այստեղից էլ՝ հետևություն. մեծերից յուրաքանչյուրը մեծ է յուրովի: Չարենցը մեծ է որպես Չարենց: Համեմատություններն ընդհանրապես ոչինչ չեն տալիս և դառնում են կրկնակի անիմաստ, երբ խոսքը գրական անհատականությունների մասին է: Իսկ չչափվել մեծերի հետ, թվում է, ոչ միայն համեստություն է, այլ անհամեստություն ու գավառականություն, քանզի մեծերի մոտ «փոքր» լինելն էլ փոքր լինել չէ: Արվեստը ծնվում է այնտեղ, ուր կա հավատ: Դիմենք աստվածաշնչյան հանրահայտ ճշմարտությանը. **«Քայց արդ, մնում են հավատ, հույս, սեր. սրանք՝ երեքը և սրանցից մեծագույնը սերն է»:** Ո՞ւմ չեն հուզել Սողոմոն Իմաստունի «Երգ-երգոցի» հուզառատ տողերը. **«ես սև եմ, քայց գեղեցիկ...»:** Ավելին, անզուգական «Երգ-երգոցի» բարեբար ազդեցությունն անուրանալի է հայ և համաշխարհային լավագույն սիրերգակների գործերի վրա: Անհուն սիրով է իմաստավորվում արվեստը՝ խոսքի և գույնի, զօրի ներսույն բորբոք պահելով անհանգչելի հուրը: Եվ նման վիճակների մասին է հայ մեծ պատմիչ Բուզանդի իմաստությունը՝ **չկան բառեր և խոսքեր, որոնց ծայնը չլսվի:** Ոչ միայն **լսելի** է դառնում ծայնը, այլ նաև լինում է **հասանելի**՝ որքան էլ հեռու դարերի խորքերից հնչի:

**Աղոթեցի այսպես, և նա ժպտագին
Նայեց դեպի ինձ իր գահույթից հեռավոր,
Ապա, դարձավ Հավերժարուխ Ակունքին:**

Բեատրիչեի ժպտագին հայացքը նորովի է լուսավորել Դանթե Ալիգերիի ամբողջ կյանքն ու արվեստը: Եվ միանգամայն իրավացիորեն է նկատում Լուիս Բորխեսը, երբ գրում է, որ **«Դանթեն աղերսում է Բեատրիչեին՝ հանց Աստծու և սիրուհու...»**

**Ով սիրուհի, իմ հուսատուն անպատիր,
Դու, որ արժան համարեցիր մինչև իսկ
Դժոխք իջնել իմ փրկության ի խնդիր:**

Եվ ահա Բեատրիչեն մի պահ դեպի նա է թեքում հայացքը, ժպտում է դարձյալ, աչքերը հառում առ լույսի հավերժական ակունքը...»: Իսկ ահա Ա. Կ. Ջիվելեգովն այսպիսի եզրակացության է գալիս իր դիտարկումներում՝ Դանթեի

«ստեղծագործությունը ծնունդ առավ սիրո մեջ»: (4)Մի՞թե Ֆրանչեսկո Պետրարկայի ամբողջ քնարերգության շունչն ու ոգին չի արտահայտում այն հզոր սերը, որ նա տածում էր Լաուրայի հանդեպ՝ ամբողջ կյանքում: Ավելին, նա իր կյանքի երգերը բաժանել է երկու մասի՝ «Երգեր Լաուրայի մահից առաջ» և «Երգեր Լաուրայի մահից հետո»:

Գրեթե նույն ճակատագրին է արժանանում Ավ. Իսահակյանի մեծ սերը՝ ողբերգական ու տխուր շեշտերով: Իսահակյանը ևս, ինչպես հայտնի է, սիրահարվեց վաղ տարիքում ու ամբողջ կյանքում հոգու մեջ կրեց անշեշ կրակի խարանը, որը և, թող ներվի, մեր քնարերգությունը հարստացրեց ինքնատիպ երգերով. **«Գիշերները աստղ ու լուսին Վար կիջնեին երկնքեն, Ու հեքիաթներ ինձ կասեին Կախարդական, ոսկեղեն»:** (5) Իր սիրերգությամբ բոլորովին այլ աշխարհ և ներկայացում էգրա Փաուլուդը՝ անսովոր ապրումի ու իմաստության բանաստեղծը, որի համար սերը երբեք **«ջրասույզ չի լինում»**, իսկ սիրո ցանկությունը՝ **«չի ջնջվում համբույրներով»:**(6) Մայակովսկին «մերկ խոստովանության» է գնում. **«Ոչինչ ինձ համար անուշ չէ այսպես, ինչպես քո անվան քաղցր մեղեդին»:** Սերգեյ Եսենինը լորենու ծաղկեկրակի մեջ է տեսնում իր սիրո նշանի մատանին. **«Եթե վառվում ես, դարձիր կյանքի զոհ անշահ, Եվ իզուր չէ, հիրավի, որ ծաղկի մեջ լորենու Թութակի թանկ, մատանին ես հանեցի՝ ի նշան Այն բանի, որ ես ու նա միասին ենք վառվելու»:** Ահա և Սևակի սիրերգը. **«...Եթե աղջիկ ես ունենամ, Նա կկոչվի քո անունով: Ես ասում եմ քո անունը»:** (7) Այս ամենը կրկին ու կրկին հավաստում են, որ, իսկապես, հոգու ընդերքներից պեղված խոսքը, ինչպես ոսկին, երբեք չի կարող կեղծվել: Սակայն պիտի ասել, որ, ցավոք, քնարերգության մեջ մաքուր, անբռնագրոս, անբիծ սերն իր տեղը շատ անգամ ակամա զիջում է սիրալիրությանը: Եվ այս երևույթը բնորոշ է ոչ միայն հայրենի, այլև համաշխարհային իրականությանը. ներքին ապրումներին, նրբագույն ու անխոստովանելի զգացումներին, տրամադրություններին փոխարինելու են գալիս **«առանց քեզ չեմ կարող», «քո սիրուց քուն-դադար չունեն», «կուզենայի համբուրել շուրթերդ»** և նման պարզաբաներ ու տողեր, կամ՝ դրանց ավելի վատթար տարատեսակները: **Սիրերգությունը** ակամայից վերածվում է, եթե կարելի է այդպես ասել՝ **սիրալիրերգության**: Ռուս մեծ բանաստեղծ Մ. Լերմոնտովն այսպիսի տողեր ունի. **«Ты слыхком для невинности мила, И слыхком ты любезна, чтоб любить»:** (8) Հոգեբանական խորը դիտարկում, որն իր մեջ ընդգրկում է ամեն ինչ, և բացատրությունները դառնում են ավելորդ: Ես, իհարկե, կարող եմ կոնկրետ հեղինակներից համապատասխան օրինակներ բերել, բայց դա չէ իմ խնդիրը, այլև երևույթը, որը, գնալով, ավելի մեծ տարածում է գտնում:

Գրվում են պատվերային, հետևապես և՛ համահավասար գնահատականների ու մոտեցումների վրա կառուցված գործեր՝ խառնածին (հիբրիդային) նախադասություններով: Տեղի է ունենում հերթապահ մտքերի հնավաճառություն: Ես այդ ամենը բացատրում եմ առաջին հերթին նվիրականության բացակայությամբ, որի համար հող են պատրաստում սոցիալական պայմանները:

Հազար անգամ ասված ճշմարտություն է՝ այն, ինչ ժողովրդական է, հարագատ է բոլոր ազգերի ընթերցողներին: Հիմնական հեքիաթը դարերի ընթացքում հղկվել է ու դարձել ավելի պարզ ու խորքային՝ մարգարիտը խոսացրած տողերի մեջ, որոնց պատկերավորությունը՝ իմաստային ընդգրկումներում, անմրցակից է: Ուշադրություն դարձնենք «Հաստատական Յուն Սուն»(9) հեքիաթի ոճին ու տրամադրության անմիջականությանը: Հերոսը երեխա է, գրիչ ու գիրք չունի. **«Նա արագ-արագ մի բառ էր գծագրում ավագի վրա: Ալիքը գալիս գրածը տանում էր: Նորից էր գծագրում, ուրիշ մի ալիք դարձյալ սրբում էր նրա գրածը: Այդպես նա կարողանում էր անվերջ գրել...»:** Աշխատասիրություն, նպատակին հասնելու կամք, ուժ ու ավյուն. ահա այն հատկանիշները, որոնք բնորոշ են Յուն Սու-

նին: Սակայն նրա բնավորության լավագույն գծերի մեջ հատուկ տեղ ունի **հնարամտությունը**: Այսպես. **«Լուսնկա գիշերները Յուն Սուն կարդում ու գրում էր լուսնի լույսով, իսկ երբ լուսինն ամպերի ետևից չէր երևում, նա հավաքում էր խոտերում փայլփլող լուսատուփկներն ու կայցնում բամբակի ծողին: Դրանց արծակած թուլլ լուսնի տակ աշխատասեր պատանին կարդում էր նաև մուք գիշերով»**: Յուրաքանչյուր պատկեր ազգային մտածողության ու ժողովրդական խոսքի անգերազանցելի արարչություն է՝ յուրօրինակ փիլիսոփայությամբ: Ահա այսպես են բանահյուսուն չինացիները՝ միշտ կանգնած լինելով աշխարհի հնագույն մշակույթ ու քաղաքակրթություն ունեցողների առաջին շարքում: Նրանք բնականաբար, «ազգային բնավորության» իրենց բնորոշ գծերն ունեն ամենատարբեր երևույթների նկատմամբ՝ աշխարհը փիլիսոփայորեն մեկնելու բնածին հակումներից մինչև սովորույթներն ու ավանդույթները: Օրինակ, ինչպես Վասիլի Կանդինսկին է նշում, **սկի և սպիտակի** նկատմամբ նրանք ունեն իրենց առանձնահատուկ և մերից խիստ առանձարկված վերաբերմունքը: Թվում է, թե սա այնքան էլ ելական չէ, բայց երբ խորքով են քննում երևույթը, զգում են, որ նրա հիմքում արմատական մոտեցումներ կան: Այսպես. **«Մենք՝ քրիստոնյաներս, քրիստոնեության հազարամյակներից հետո մահն ընկալում ենք որպես վերջնական լռություն կամ, իմ բնորոշմամբ, որպես «անեզր անդունդ», իսկ հեթանոս չինացիները լռությունն ընկալում են որպես նոր լեզվի սկիզբ կամ, իմ բնորոշմամբ՝ որպես «ծնունդ»**: Ուշադրություն դարձնենք **«նոր լեզվի սկիզբ»** ոչ պատահական ձևակերպմանը, որը տանում է դեպի աշխարհի գեղարվեստական-փիլիսոփայական ընկալման ակունքները և, իր հերթին ենթադրում է ստեղծվող նոր աշխարհի սկզբնավորման գործում լեզվի՝ որպես աստվածաշնչյան **«ի սկզբանե էր բանն»** իմաստության առաջնայնություն: Սա, խոստովանենք, ակնածանք է լեզվի հանդեպ, որի մեջ պիտի փնտրել տիեզերական բոլոր առեղվածների լուծումը: Իսկ դրան տանող ամենաառաջին ուղին ազգային բանահյուսությունն է:

Տարիներ առաջ համացանցով բանաստեղծություններ էի ստացել չինացի մի շնորհաշատ բանաստեղծուհուց, կարդացի տողացիները, շատ հավանեցի ու թարգմանելով՝ տպագրեցի դրանք «եղիցի լույս» թերթում, ապա՝ իմ վեցերորդ հատորում: Այդ պոետուհին ժառ Սին է. **«... ճեղքերով լի այս աշխարհը այն զգեստն է, որը ես ստիպված եմ կրել»**: (10) Ինձ հետաքրքրում էր, թե ինչպիսի միտումներ է դրսևորում այսօր չինական երիտասարդական քնարերգությունը՝ քերթողական հնագույն արվեստ ունեցող Չինաստանում, որն աշխարհի գերտերություններից մեկն է (ըստ վիճակագրական տվյալների, յուրաքանչյուր հինգերորդ մարդ աշխարհում այսօր խոսում և ընթերցում է չինարեն լեզվով): Հաղորդակցություն բանաստեղծական ու իմաստասեր այդ ժողովրդի արդի հոգևոր արժեքների հետ, եղավ ինձ համար բավականին արդյունավետ: Իսկ ժառ Սիի երիտասարդ ժամանակակիցը՝ Ջիդի Մաջիան, որն արդեն երկրորդ հայերեն գրքով է ներկայանում մեր ընթերցողներին, բանաստեղծությունը տանում է դեպի կատարյալ ազատականացում՝ պատկերների մեջ սովորական աչքերով «որսալով» ու մեզ ներկայացնելով (թարգմանությունը՝ Գ. Դավթյանի) անսովոր ու անտեսանելին. **«Լսու՞մ եք դուք, Դա շրշունն է աղջկական շրջազգեստի, Ոչ թե ցուլը խոտ է ծամում»**: (11) Վերջինիս արձագանքում է նրա մի ուրիշ հայրենակից Լի Հաուն. **«Ն ուզում եմ շարժվել դեպի Աստծո զոհասեղանը»** (12) (թարգմանությունը՝ Ռ. Ծատուրյանի): Ի դեպ, ըստ Աստվածաշնչի, առաջին զոհասեղանը քարից էր և գտնվում է հայոց բիբլիական լեռան Արարատի լանջին:

Զեմ խոսում չինական գրականության երևելի դեմքեր, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Մո Յանի և Գաո Սինցզյանի գրական մեծ վաստակի, նրանց գործերի մասին: Սա արդեն առանձին թեմա է:

Դժվար չէ տեսնել տրամաբանական այն ներքին կապը, որ կա չինական ժամանակակից և դասական քնարերգության միջև, մասնավորապես այդ ընթերցողի սեղանին է արդեն «Չինական դասական պոեզիա» նոր ժողովածուն: Իհարկե,

անժխտելի է, որ այս գործում նպաստավոր դեր ունի հայ-չինական հարաբերությունների դինամիկ զարգացման կարևոր գործոնը նույնպես:

- 2 -

Ուզում եմ կանգ առնել բանաստեղծական մի բացառիկ երևույթի վրա, խոսքը 12-րդ դարի չինացի բանաստեղծուհի Լի Ցինչժաոյի քնարերգության մասին է, քերթողական արվեստ, որը ոչ միայն դիմացել է դարերի քննությանը, այլ նորովի է ներկայանում մեր ժամանակներում առանց կորցնելու արդիական հմայքն ու աստվածատուր խոսքի մաքրությունը, անմիջականությունը: Ավաղ, հեղինակից, ինչպես վկայում են գրականագիտական աղբյուրները, շատ քիչ գործեր են հասել մեզ, ընդամենը ու տնտեսական իրականությունն արտացոլվում են նրա ստեղծվածների մեջ, դառնում ժամանակի բնավորություն՝ ներկայացնելով ազգային կյանքի մի ամբողջական համապատկեր: Այստեղ կարևորը թեմատիկ բաժանումները չեն, որն այս պարագայում կլինեք պայմանական, քանի որ Լի Ցինչժաոյի ստեղծագործություններն ամեն ինչ համադրում են խորը քնարականության շաղախի մեջ, հաճախ այնքան միաձուլվել, որ հնարավոր չի լինում, ինչպես ասում են, ջոկոտություններ անել: Սակայն և այնպես, բոլոր բառերում, բոլոր բանաստեղծություններում կա ինքնաբերական ու մեծ սեր, որով առանձնանում է պոետուհու անհատականությունը: Իրավիճակների հոգեբանական ու սոցիալական վերարտադրությունների վարպետ է բանաստեղծուհին, ով երբեք չի կորցնում իր երագի **տեսլականը**: Նա տեսնում է «երկնագույն հեռուն», ուր «խաղաղ մայրամուտն է» հովանի, սիրո արբեցումի պահերում գույզը մոռանում է «ճամփան ետդարձի», բայց հանկարծ «կորչում է երջանկությունը»՝ «պիտի ետ լծվենք նորից թիերին»: Ու ցավի, տրտմության մեջ պոետուհու աչքերից անտես չի մնում ջրերից նայող լուսու ծաղիկը, որն ամենուր է սիրող գույզի հետ՝ գույների ամմեկնելի ու տաք, տիեզերական խորհուրդներով. **«Ամենուր լուսուն է մեր ճամփին»**: Լուսոսը ոչ միայն Հին Արևելքի քնարերգության զարդն է դարեր շարունակ, այլև ինքնատիպ կիրառություն ունի նաև հայ գրականության մեջ՝ հնուց մինչև մեր օրերը: Մեջբերենք Թումանյանի և Իսահակյանի տողերը՝ համապատասխանաբար. **«Պարտեզն այնտեղ ծաղկում է ծոխ լուսնի խաղաղ լույսի տակ, Իրենց քրոջը սպասում են լուսոսները սպիտակ», «Տեսավ հնդու խաղաղության գետերը սրբազան լուսոսներով օծուն»**:

Լի Ցինչժաոյի հոգու անբացատրելի թրթռներում հայտնվում են երկինք բարձրացող թևեր: Բանաստեղծուհու մտորումն ավելի քան ընդգրկում է, գեղարվեստական լուծումներով հագեցած.

**...Եվ չվիթահար որորները հեռվում
Ավազաթմբից չվում են, չվում: (14)**

Սա գրքույկի առաջին ստեղծագործությունն է, ինչպես այս (Մեղեդի «ժումենլին»), այնպես էլ մյուս բանաստեղծությունների վերնագրերը դրված են վերջում: Ամեն վերնագիր սկսվում է **մեղեդի** բառով, որը և խոսում է գրողի ստեղծագործական նախընտրության մասին, երաժշտականությունն ու ժողովրդականությունը հատուկ են նրա մտածողությանն ու քերթողական արվեստին: Ժողովրդական երգերն ուղեկցվում էին երաժշտությամբ, այդ երևույթը հատուկ է նաև մեր միջնադարին: Եվ պոետները՝ ժամանակի գիտությունները հիմնավոր սերտած, բարձր ինտելեկտի ու իմացությունների տեր անհատներ էին, ինչպես ասենք (12-րդ դարից բերենք օրինակներ) Ներսես Շնորհալի, Հովհաննես Սարկավազը, Վարդան Անեցին և այլն: Թեև Լի Ցինչժաոյի դեպքում իրադրությունն այլ էր, այն առումով,

որ նրա երգերը ժամանակին սկսեցին երաժշտությունից «առանձնանալ», ինչպես ասում են, բայց այդ «բաժանումը», համաշխարհային գրականության մեջ ավարտին հասավ միայն 14-րդ դարում: Սակայն պոետուհու ստեղծագործության ժողովրդականության մասին՝ ավելի հետո:

Մեծ ապրումները մարդուն դարձնում են ավելի նրբազգաց, և պատահական չէ ամենատարբեր ծաղիկների առկայությունը բանաստեղծուհու երգերում, դրանք հանդես են գալիս որպես խորհրդանիշեր՝ գույների անսպառ բազմազանությամբ, նրանց միջոցով հեղինակն արյան ներքին ընթացքն ու իր զգացումներն է վերարտադրում:

*Ամպամած ու ցուրտ գիշեր էր այսօր,
Անձրև ու քամի,
Այդ աղմուկի տակ քնել եմ ամուր,
Բայց գինով եմ էլի:*

*Մեկը բացում էր վարագույրները,
Հարցրի նրան.
- Բեզոնիան արդյոք
Ծաղկաթափ եղավ այս գիշեր:*

*Առաջվանն է մի՞թե,
Ինչպես կար,
Ծաղիկը մի՞թե
Չի թափվել...*

*- Օ, ոչ: Բայց կարմիրն է պակասել,
Եվ հիմա կանաչ է առավել: (15)*

Այս քերթվածը կերտվել է, թվում է, գեղանկարչի հանճարեղ վրձնահարվածներով: Բանաստեղծուհին, ինչպես արվում է սովորաբար, ծաղիկը բնորդ չի դարձնում՝ «բնության նմանակումի» տրամաբանությամբ, դա «գիտական» արվեստ է, որն իր մեջ արհեստ և տեխնիկա է պարունակում, նա ստեղծում է իրենը՝ ծաղկի մասին գրելիս ինքը «դառնալով» նրա բնորդը: Ու դա խոսում է հեղինակի ոչ միայն կերպարվեստի մասին ունեցած խորը գիտելիքների ու համոզմունքների, այլ նրա պատկերավոր մտածողության, բարձր տեսողականության ու դիտողականության, աշխարհը յուրովի ընկալելու ու վերարտադրելու նրա կարողությունների մասին: Իհարկե, որքան էլ չուզենանք կանգ առնել բանաստեղծուհու կենսագրական փաստերի վրա, այնուամենայնիվ, դրանք իրենց զգացնել են տալիս. մանկությունն ու պատանեկությունը Լիի անցել են արվեստի ու գրականության նվիրյալների, ճանաչված անհատականությունների շրջապատում, ամուսինը եղել է գեղանկարիչ, հայրը գրականագետ, մայրը՝ զարգացած մտավորական և այլն... Իմացություններն իրենց զործը կատարում են, ինչ խոսք, բայց էականն այստեղ այն ներքին կրակն է, որ կա պոետուհու արյան վազը ու վարքի մեջ:

Բանաստեղծուհու բառերին հատուկ է գունային հնչողությունը: Այսպես. **«Աղմուկի տակ քնել եմ, բայց հարթած եմ էլի»:** Անմիջական ու անկեղծ: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծուհին առանց ներկերին դիմելու էլ երանգներ է ստեղծում՝ ալքիմիկոսի բարդ ու բարձր հնարամտությամբ: Բառը Ցինչժաոյի գրչի տակ ներկայանում է որպես տարածիզ մտքերի ու ապրումների անընդգրկելի համակառույց՝ չպեղված ընդերքներով՝ միտք, զգացում, հոգեբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, մետաֆիզիկա, փիլիսոփայություն, աստղաբաշխություն և այլն: Ո՞ր որակներն են առաջնություն ստանում նրանում. սա արդեն հեղինակային լուծման խնդիր է: Այսպես: Ո՞վ է այն **մեկը**, որ բացում է վարագույրները, և, ապա վարագույրները դադարում են վարագույր լինելուց, տիեզերական շղարշներ են դառնում: Եվ բնական է այս պարագայում, որ բանաստեղծուհին պիտի տա մի հարց այդ **մեկին**, հարց, որը դառնում է անմեկնելի՝ տիեզերական սիրո և, ինչու չէ, նաև քաոսի մեջ. **«Բեզոնիան արդյոք Ծաղկաթափ եղավ այս գիշեր»:** Տազնապր բազմապատկվում է հարցի կրկնություններում. **«Առաջվանն է մի՞թե, Ծաղիկը մի՞թե Չի թափվել...»:** Հիրավի, գեղեցիկը ներքին հատկանիշ է, որ կարող է երևալ

նաև դրսից: Բեզոնիա ծաղկի մեջ պոետուհին տեսնում է իր կերպարը. պատե-
րազմական հրդեհների ու արհավիրքների մեջ հայրենիքն ու սիրածին կորցրած
մարդու ներքնաշխարհն է խորհրդանշում տեղումների ու կայծակնացայտ ամպ-
րոպների, տեղատարափ անձրևների տակ հայտնված ծաղիկը, և առավել քան
հասկանալի է դառնում պոետուհու սրտի դողն ու կսկիծը, ապա՝ վաղ լուսաբաց-
յան առաջին հարցը, որը կարելի է մեկնաբանել այսպես՝ կյանքի հարվածները
ոչնչացրե՞լ են հոգու սքանչանքն ու հմայքը... Գրողի իմաստասիրական հայե-
ցումներն ու ընդգծված բնապաշտությունը /պանթեիզմ/ նրա խոսքը դարձնում են
առավել ընդգրկուն: Եվ դա տեսանելի է դառնում առանձնապես այն պահին, երբ
մտապատկերների ու տողատակերի վշտակնած կիսախավարում հանկարծ ճա-
ռագում է բանաստեղծուհու հույսի անսքող շողը՝ կյանքի ու լույսի ներգործու-
թյունը բառային գունալուծումներում դարձնելով զարմանալի արդյունավետ: Եվ
երգն ավարտվում է քնարական խորիմաստ պատասխանով, բառերի խորերգու-
թյան մեջ առանձնանում է մի ձայն. **«Օ՛, ոչ: Բայց կարմիրն է պակասել, Եվ հիմա
կանաչ է առավել»:** Ոսկերչական նրբանկատություն՝ ծաղկի ու գույների հանդեպ,
ասես Լի Ցինչժաոն կյանքի ու գոյի ամենակարևոր խնդիրներն է շոշափում՝ խո-
սելով կախարդական այն թելի մասին, որից կախված է տիեզերքը: Այդ թելը, ըստ
բանաստեղծուհու, սերն է: Այն մաքրամաքուր զգացումը, որն այս քերթվածի մեջ
կրում է բեզոնիա ծաղկի անունը: Ծաղկի ընտրությունը նման գրակտավի համար,
իր խորհուրդն ունի, չէ՞ որ բեզոնիան մշտադալար այն բույսն է, որի թերթերը
թարմ են ձմռանը նույնպես և ծաղիկների բազմապիսության մեջ սրտածնությունը
իշխող է, բացի դա, բազմագույն է ու նրբագեղ: Ծաղիկը հեղինակի համար հոգին
բացելու, ներքին ապրումները գեղարվեստորեն վերարտադրելու միջոց է: Գրեթե
յուրաքանչյուր տաղի մեջ հեղինակը դիմում է որևէ ծաղկի՝ նրան դարձնելով իր
մտածումների ու տրամադրությունների արտահայտիչը՝ նրանով ամբողջական
դարձնելով իր ինքնանկարը: Բայց ամեն անգամ ծաղիկ-հերոսուհիները տարբեր
կերպարներ են մարմնավորում: Ասենք՝ լոտոսը, որը Չինաստանում սուրբ ծաղիկ
է համարվում, իսկ բուդդայական մշակույթում ու զարդարվեստում, ինչպես վկա-
յուն են աղբյուրները, իր առաջնային տեղն ունի: Բանաստեղծուհու մեկ այլ երգի
մեջ լոտոսի պտուղը «հասարակ զարդ է մազերի» համար, նրա տերևներն երգով
զգեստն է գեղեցկանում, մի խոսքով, թվում է գործ ունենք բնությունը մարմնավո-
րող մի բացարձակ ոգու հետ: Մի ուրիշ երգում կարդում ենք.

**Իմ տնկած թուփը մեյխուայի (16)
Գետափին առել է հասակ,
Բայց ես չեմ կարող աշտարակից
Ձմայլվել նրանով մենակ: (17)**

Մեյխուայի մասին խոսելիս բանաստեղծուհու ձայնը դողում է տագնապի թր-
թիռներով, քանի որ նա մեյխուայի մեջ տեսնում է «խորհուրդ անմեկնելի», ան-
զամ նրանով է պայմանավորում մոլորակային համաստեղության գոյությունը
(«**Դրանից չէ՞, որ լուսինը պայծառ է այնքան**»), երկրային բոլոր անցքերն ու ակ-
նահաճո իրադարձությունները. **«Եվ չի կարող մի այլ ծաղիկ Լինել այսքան անթե-
րի»:** Իսկ ահա «Մեղեդի «Գույաներ» քերթվածի նախաբանում այսպիսի խոստո-
վանություն է անում հեղինակը. **«Բոլորը, ովքեր գրում են մեյխուայի մասին, հենց
գրիչ են վերցնում, չեն կարողանում խուսափել մանրությունից: Ես նույնպես փոր-
ձեցի նրա մասին գրել և համոզվեցի՝ անհիմն չի ասված»:** Միայն մեծ հոգին կա-
րող է նման ինքնաբացման հասնել:

Հեղինակի փիլիսոփայական միտքը խորը ընդհանրացման է հանգում բանաս-
տեղծության վերջին տողերում.

**Մեյ բուրավետ ճյուղը պոկեցի.
Կուղարկեի սիրեցյալիս նվեր,
Բայց չկա ոչ ոք աշխարհում,
Ոչ էլ երկնքում, ավաղ,
Չկա մեկը, որ այն տեղ հասցներ: (18)**

Բանաստեղծուհու միտքը և հոգին սնունդ են ստանում ժողովրդական ակունքներից, հավատալիքներից, եթե մեյխուան «խորհրդանշում է մաքրություն և ազնվություն, դիմացկունություն, անկոտրում ոգի», ապա քրիզանթեմը (նրա թերթիկներից Չինաստանում անգամ գինի են քաշում) (19), որն իր ուրույն տեղն ունի պոետուհու ներկայանակում, չինացիների մոտ՝ հնագույն ժամանակներից մինչև հիմա, պաշտամունքի առարկա է: Ու այսպես՝ շարունակ, բանաստեղծուհու երգերում մեզ դիմավորում է կախարդական բույրերի ու գույների մի ծաղկանոց, որտեղ ամեն քայլի մենք հաղորդակցվում ենք աստվածային իմաստության հետ: Բնությունը մեր դեմ շռայլորեն բացում է իր հայտնի ու անհայտ գաղտնիքները, որոնց մեջ մարդը սակայն աշխարհի հետ անհաշտ է (**«Քամու հետ էլ թերևս Չեմ կարող հաշտվել»**), (**«ես դեմ չեմ խնել հանուն քրիզանթեմների, Որ արևելյան պարիսպների տակ են դեղնել»**), (**«Նույն թախիծն է պատել Երկինքն ու երկիրը»**): (20)

Լի Ցինչժաոյի քնարերգության մասին ռուս թարգմանիչ և գրականագետ Մ. Բասմանովը, ով նաև բանաստեղծուհու հայերեն ժողովածուի առաջաբանի հեղինակն է, գրում է. **«Չգագնունքների անաղարտություն, խորը բանաստեղծականություն և երաժշտականություն՝ արտահայտված կենդանի, պատկերավոր լեզվով և ձևերի կատարելությամբ. ահա այն գլխավորը, որ կանխորոշել է Լի Ցինչժաոյի պոեզիայի կենսունակությունը և հանրաճանաչությունը»**: (21) Միանգամայն ճշգրիտ գնահատական, որը բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի, նրա ստեղծագործության և արվեստի վերաբերյալ հիմնավոր իմացություններ է ամփոփում իր մեջ: Մանավանդ, այս համատեքստում ուշադրություն է գրավում **կատարելիությամբ** բառը, որն այլ պարագաներում զուցե թե բանավեճի տեղիք կտար, այս դեպքում տեղին է ու թիրախային: Բանը նրանում է, որ հեղինակն իր ինքնաբերականորեն տվել է միանգամայն հակառակ դիտանկյունով.

**Կյանքս համակ նվիրել եմ
Դժվարին գործին պոետի,
Սակայն շատ քիչ եմ գրել,
Տողեր կատարյալ: (22)**

Ինքնադատումի տրամադրությունները նրան հանգիստ չեն թողնում: «Մեղեդի «Մանտինֆան» բանաստեղծությունը սկսվում է այսպես.

**Գաղտնիքները հանգի, վանկի
ես վաղուց եմ սերտել,
Բայց թոթովն անձրևի
Երբեք չեմ հասկացել: (23)**

Երևույթների զուգադրման միջոցով պոետուհին հասնում է քերթողական արվեստի և զեղագիտական մտքի փիլիսոփայական անմախաղեպ ընդհանրացումների՝ ստեղծելով իր «բանաստեղծության գիտությունը», որն առայսօր չի կորցնում արդիականությունը:

Այսպիսի մի դիտարկում կատարենք. եթե գրողն իր կերտած ժամանակի մեջ չէ, ուրեմն՝ ոչ մի ժամանակի մեջ չկա, ուրեմն՝ ժամանակից դուրս է մնացել: Չնուշանանք, որ այստեղ երկրորդական չէ, ավելին՝ դրան զուգահեռ ու առաջնային է սեփական տարածություն ստեղծելը՝ թեմատիկ-աշխարհագրական մտածողության ներքին սահմաններով, թող որ՝ անընդգրկելի, ոգեղեն: Տերյանի բնորոշմամբ՝ հոգևոր հայրենիքի սահմանները: (24)

Լի Ցինչժաոն բառ առ բառ կերտում է իր ժամանակը, կանխորոշում իր տարածքային սահմանների անսահմանությունը, իր հայրենիքը: Նրա քնարերգությունն ունի մի էական առանձնահատկություն ևս. բանաստեղծուհու ցանկացած բառի մեջ ներկա է հայրենի աշխարհը՝ անկախ նրանից, թե ինչ թեմաներ է արծարծում գրողը: Հայրենիք է ներկայացնում առանց հայրենիքի մասին խոսելու, ինչպես կխոսեն Աստծո մասին խուսափելով նրա անունն անհարկի տալուց, բայց՝ հասկանալի, ըմբռնելի ու անթաքույց ակնածանքով: Երբ բառն իր տեղում է, ուրեմն՝ նա կարող է ոչ միայն հոգևոր հոսանք հաղորդել ժամանակին, այլ նաև

նրանից հոսանք ընդունել: Ես կարծում եմ երկնային այս շնորհն է, որ դարերի հետ անընդհատ շունչ ու կենդանություն է պարգևում Լիի տողերին, որոնք «ձևել» է նա նրբատաշ հասպիսից, թանկարժեք այն քարից, որը փոխաբերական (մետաֆորային) իմաստ է ստացել պոետուհու ամբողջ ստեղծագործության համար: Խնդրին հետաքրքիր մեկնաբանում է տվել անվանի գրականագետ Նատալյա Նաունովան: Նա գրել է. **«Անգամ նրա գլխավոր ժողովածուի անունը՝ «Տաղեր նրբատաշ հասպիսից», մտածելու տեղիք է տալիս բարձրակարգ ոսկերչական արվեստի մասին: «Ես վերցնում եմ մարմարե մի մեծ կտոր և ազատում եմ նրան ավելորդություններից», - ասել է Օգուստ Ռոդենը Միքելանջելոյից հետո: Այսպիսի տպավորություն են թողնում նաև Լի Ցինժաոյի բանաստեղծությունները: Նրանք, կարծես, ազատվել են հասպիսի ավելորդ մասերից»:** (25)

Համաշխարհային իրականությունը հարուստ է հայրենեագության լավագույն նմուշներով, սակայն, խոստովանենք, որ քիչ չեն նաև բարձրագույն, ճառային, հաճախ ծանծանկար ռու էժանագին թխվածքները: «Տաղեր» գրքում տեղ գտած գործերում իր էպիկական քնարերգությամբ առանձնանում է **«Մայրամուտի հրացուքը ոսկե»** (26) տողով սկսվող բանաստեղծությունը, ուր պոետուհին բառապաշարի մեջ գրեթե աչքառու նորոյթների չի դիմում, բայց կարողանում է խոսքը սխրանքի տանել, գրում է ոչ բանաստեղծական բառերով, ինչպես ասում են (ի դեպ, սա Լի Ցինժաոյի արվեստին առավել բնորոշ գիծն է), բայց ամենասովորական, ամենահասարակ բառերը բանաստեղծականանում են նրա գրչի տակ: Ամպերը շողարծակում են հասպիսի նման, թեև սիրածն «առաջվա հանգույն» իր հետ չէ. այս տրամադրությունը տրամաբանորեն հանգեցնում է «սրնգի հեկեկոցին», «թռչնած սալորենու» տխրածայն երգին և... պոետուհու տեսլականում հառնում է հարագատ հողը. **«Լավն էր Յուանսաոն, մեղմ ու լուսավոր»:** Ինչպես տառը չինարենում, այնպես էլ բանաստեղծուհու ամեն մի բառն ամփոփում է մի ուրույն խորհրդանիշ: Այս երևույթն իր մեջ դաս ունի: Բառը չպետք է դարձնել բարոյագիտական գաղափարների, թող ներվի, բեռնակիր, ոնց որ ոչ հեռու անցյալում անում էին «խորհրդային քնարերգության» շատ ներկայացուցիչներ **կոմունիզմի պայծառ արև, հոկտեմբերյան փայլ** և այլն, թեև դրանք հիմնականում վահան էին դառնում կամ գրահ, ինչպես Սևակն էր ասում... Այսպես թե այնպես, դա ոչնչացնում է գրականությունը, դա **ինքնապաշտպանություն** լինելուց առաջ, ինչպես ցույց տվեց ժամանակը, **ինքնասպանություն** է: Մինչդեռ այսօր էլ շատ հաճախ բառի ժողովրդահաճությունը (պոպուլիզմը) քաղաքական դաշտից տեղափոխվում է գրական միջավայր՝ ենթարկվելով թեմատիկ մուտագիստների: Անկախության շրջանի գաղափարաբանությունն էլ, բերում է իր **գաղափարաբանանմուշների պատշաճ կադապարածույթները:**

Լի Ցինժաոյի երգերը՝ ավերված հայրենիքի տխուր պատկերներով, հիշեցնում են Ներսես Շնորհալու անզուգական **«Ողբ Եդիսիոյ»** պոեմը.(27) **«Երբեմն էղաք մենք ըղձալի, բայց այժմ էղաք յոյժ եղկելի»:** Անդրադառնալով ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքներին, ակադեմիկոս Լևոն Մկրտչյանը գրել է. **«Կար ժամանակ, Եդեսիան նման էր ավետյաց երկրի»:**(28) Բայց թշնամիք այն վերածել են ավերակների՝ գաղթի մատնելով կենդանի մնացածներին: Պանդխտության թեման հայերիս հարագատ է «էն գլխից», ցավոք: Հիշենք, թերևս, հայկական ժողովրդական բանահյուսության գոհարներից մեկը՝ «Տաղ դարիպի».

**Թողել եմ ու եկել մելքերս ու այգիս,
Քանի որ այն քաշեմ՝ կու քաղուի հոգիս,
Կռունկ, պահ մի կացիր, ծայրիկդ ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մի չունի՞ս:** (29)

Կորսված հայրենիքի վիշտը հանգիստ չէր տալիս բանատեղծուհուն, և միայն երազներում է նա «ծանոթ ճամփով» կարողանում շտապել դեպի հայրենի Չանան(30) Եթե մեր ժողովրդական բանահյուսության մեջ «ղարիպն» անցնող կռունկին է դիմում՝ հայրենի ավերից լուր ստանալու համար, ապա չին բանաստեղծուհին դիմում է հայրենիքում այնքան սեր վայելող, «մտածող, հզոր» սագին.

*Վերևում թևում է սագը միայնակ,
Կարծես երամից ետ է մնացել:
Շատ բան ունեի հաղորդելու նրան,
Բայց նրա ուղին ծանր է ու երկար: (31)*

Կամ՝

*Վերից տխրագին ծայներ են լսում.
«Մնաս բարով, մեր հին բարեկամ»:
Սագերն են ինչ-որ տեղ՝ երկնքում.
Չեռու երկրներ են չվում: (32)*

Պիտի ասել, որ, այո, Չինաստանն այն եզակի երկիրն է ամբողջ մոլորակում, ուր գործում է Չվոդ թռչունների հիվանդանոց (33), պարզ է՝ չինացիները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ քաղցրահամ ջրի լիճը (Պոյանհու) մշտապես տարբեր ծագերից շատ թռչունների է քաշում-բերում, իսկ նրանք և խնամքի, և սննդի, և բուժման խնդիրներ են մշտապես ունենում: Չինական բնապաշտությունը, մանավանդ՝ թևավորների հանդեպ տածվող սերը, խորը արմատներ ունի դարերում, այս մասին հետաքրքիր անդրադարձներ կան համաշխարհային գրականության մեջ ու պատմական աշխատություններում: Եվ, ընդհանրապես, քանի որ խոսք եղավ թռչունների մասին, ընդգծենք, որ գրեթե բոլոր ազգերի ու ժողովուրդների մոտ նրանց նկատմամբ կա պաշտամունք, որը և արտահայտվում է դիցաբանական գրույցներում, դյուցազներգություններում, բանահյուսության մեջ: Մի ավանդագրույցում նշվում է, օրինակ. «Սողոմոն թագավորը մի մատանի ուներ, որը նրան հնարավորություն էր տալիս հասկանալ թռչունների լեզուն»: (34) Պատմական մի այլ վկայության հավաստմամբ, հունական և եգիպտական դիցաբանության մեջ սրբացած Փյունիկ թռչունը, որն ապրում է հինգ հարյուր տարի, գերբնական ուժունի և կարող է իր երկու թևերով ծածկել անգամ «արևի լույսը»: Մեկ ուրիշ և ավելի հզոր հավք՝ Չիգ անունով, դա անում է միայն մի թևով: Իհարկե, Փյունիկի հանդեպ առանձնահատուկ վերաբերմունք ունենք և հայերս: Ու դա իր պատճառներն ունի, չէ՞ որ Փյունիկն այն թռչունն է, որ «վառվելուց հետո» ինքն իր մոխիրներից հառնում է բոլորովին նորացած ու անհաղթ ավելի: Այս երևույթը ներքին աղերսներ ունի մեր ժողովրդին վիճակված ճակատագրի հետ: Սակայն խնդրից չչեղվենք, շարունակենք մեր միտքը: Ամենևին էլ պատահական չէ այն հանգամանքը, որ, ինչպես նշված է բորխեսյան հետազոտություններում («Ինը դասախոսություն»), «Աստվածային կատակերգության» հեղինակին գերազանցած և նրանից մեկ հարյուրամյակ առաջ թռչունների արքա Սիմուրգի գարմանահրաշ կերպարը ստեղծած («Թռչունների գրույցը») սուֆիկ գրող Ֆարիդադին Աթթարը հենց Չինաստանի կենտրոնում է Սիմուրգի հիասքանչ փետուրներից մեկի ընկնելը պատկերել: Իսկ թռչունները «հոգնելով հավերժական անարխիայից, որոշում են գտնել Սիմուրգին: Նրանք գիտեն, որ արքայի անունը նշանակում է «երեսուն թռչուն», գիտեն, որ նրա ապարանքը գտնվում է Կաֆա լեռան վրա, և շուրջանակի գրկում է երկիրը»: (35) Եվ ի՞նչ, ի վերջո պարզվում է, որ կախարդական Սիմուրգին փնտրող թռչուններն իրենք իրենց են փնտրում, իսկ «Սիմուրգի ետևում Պանթեիզմն է», հետևապես և՛ «կորած» փետուրի ետևում՝ թռչունների աշխարհը Չինաստանում: Անշուշտ, խորհրդանշական դիտարկումներ են: Կարծում են, բանաստեղծուհու ընդգծված վերաբերմունքը թռչունների նկատ-

մամբ հենց ազգային սովորույթների ու ավանդների հետ հիմնավոր աղերսներ ունի: «Մեղեդի, Յուլյգյաառ» տաղում բանաստեղծի գլխավերևում կրկին թերի ծայնն է. **«Իմ գլխավերևում հայարտ ճախրում էր Ջորեղ թռչունը, ամպերից վեր...»:** (36) Ջորեղ թռչունը (Պեն), ինչպես ներկայացված է գրքի «Ծանոթագրություններ» (37) բաժնում, առասպելական է, **«նրա թևերի մեկ թափահարումը հաղթահարում է տաս հազար լի և բարձրացնում երկինք իննսուն հազար լի»:** Պոետուհին օտար ավերում գրույցի է բռնվում անգամ երկնքի հետ՝ իր ներքին արժանիքները վերագրելով նրան.

**Ու հարցրեց ինձ երկինքը
Բարեգութ ու կարեկցագին,
Թե դեպի ուր եմ բռնել
Ճանապարհն իմ երկրային:**

Մեկ այլ բանաստեղծության մեջ (Մեղեդի «Ժունենլին») բանաստեղծուհին արդեն ինքն է իր «շփոթմունքը» տալիս հավքերին: Ասել է թե՛ բնության հետ նա մշտապես «կիսվում», հաղորդակցվում է՝ ինչպես ինքն իր հետ:

Գրեթե նույն ժամանակահատվածում Ներսես Շնորհալին գրեց իր տաղերն ու «Ողբ Եդեսիոյ» պոեմը: Շնորհալին լինելով մեր «առաջին մանկագիրք», սիրված երգահան, շարականագիր, բազում շնորհներով օժտված անհատականություն, ով Նարեկացուց հետո «ամենաշատ սիրված գործիչն էր» մեր միջնադարում, համաշխարհային ճանաչման էր արժանացել դեռևս կենդանության օրոք, միայն «Հավատով խոստովանիմ» բանաստեղծությունը **«թարգմանված կար 36 լեզուներով»:**(38) Եվ Շնորհալին, և Լի Ցինչժաոն բնապաշտներ էին:

Ցավը թեմատիկ առնչությունների է տանում, սակայն յուրաքանչյուր գրիչ միանգամայն տարբեր ու ինքնատիպ ձևով է բառավորում մարդկային անհուն վիշտը, «հարազատ երկրի արհավիրքները»: Ինչպես տեսնում ենք, Լի Ցինչժաոյի երգային քնարերգության մեջ ևս կա ծանր ու չբառավորվող մի ողբ՝ թե կորսված հայրենիքի ու սիրո, թե կրած մարդկային դաժանությունների համար, ողբ, որն անընդհատ ելք է փնտրում:

Հնարավոր չէ առանց հուզմունքի կարդալ պոետուհու տխուր սիրո և կարոտի երգերը: Օտար ավերում դեգերող ու գրեթե միանձնուհու կյանքով ապրող բանաստեղծուհու մտքում հայրենի «Չժունչժոուն է ծաղկուն», հիշում է անցած «օրերը՝ խաղաղ, անվրդով», հայրական տան աշխույժ կյանքն ու եռուզեռն անենօրյա, տոնակատարությունները: Այս համապատկերում խամրում է հոգու անենամանշտադալար ծաղիկն անգամ.

**Երգի ու գինու ընկերներն են եկել
Իմ ետևից: Կառքը սպասում է:
Բայց ես ուզում եմ
Միայնակ լինել,
Չեմ ուզում հիմա
Ոչ գինի, ոչ երգեր: (39)**

Ասում են՝ արվեստը, առավել ևս՝ գրականությունը հուշ է, որը և, ինչպես Վիլյամ Սարոյանն է գրում՝ երևակայություն է. **«...Ինչ որ հիշում ես, նման չի ճշգրտորեն քո տեսածին, և քանի որ քո տեսածը տարբեր է, քո հիշողությունը մի աստիճանն է երևակայության: Իսկ երևակայությունը վերհիշված իրականն է»:** (40) Հենց այդ «վերհիշված իրականությունն» է, որ հանգիստ չի տալիս բանաստեղծուհուն, հայրենական տան տեսիլքները վերապատկերվում են մեկ տառապանքի ու հիասթափության, մեկ հույսի նշույլներով, մեկ կարոտի գույներով...

Կյանքի ու աշխարհի ունայնությանը բախվելով՝ բանաստեղծուհին ավելի ու ավելի է մոտենում ինքն իրեն, ոճը դառնում է ավելի լակոնիկ ու սեղմ, ինչ որ տեղ՝

հատու, բայց մտքի մեջ՝ շարունակական («Ամեն ինչ կորավ: Գեղեցկությունն էլ»), խոսքն՝ առավել իմաստուն: Գեղանկարչականն ու թատերականը պոետական լեզվի մեջ համադրվելով՝ պատկերային խոսքի ինքնատիպ որակ են բերում. «Ավելի լավ է հեռվում, Մեկուսի, Վարագույրի ետևում, Լսեմ ծիծաղն ուրիշի»: Այդ ուրիշը հենց ինքն է: Բայց, ավաղ, անդառնալի անցյալում: Նա տեսնում էր ավելին, քան կարելի է տեսնել: Թվում է, հենց Լի Ցինչժաոյի մասին է ասված այս խոսքը. «Տաղանդը հասնում է մի նպատակի, որին ոչ ոք չի կարող հասնել, հանճարը՝ այն նպատակին, որը ոչ ոք չի կարող տեսնել» (41) (Ա. Շոպենհաուեր):

Բանաստեղծուհու քնարերգության ամենատարբերիչ ու բնութագրական գծերի մեջ պիտի առանձնացնել **ապրումի հոգեբանական անմիջականությունը, խոհի պարզությունն ու շարադրանքի ինքնատիպությունը, ասելիքի փիլիսոփայական խորությունը**: Անգամ առարկաներին դիմելիս, նա կարողանում է պատկերները առարկայականությունից, ինչպես ասում են, տանել դեպի երևույթի խորքը: Ահա այս հատկանիշներն են, որոնք բարձր ժողովրդայնություն են հաղորդում նրա ստեղծագործությանը: Կարդալով Լի Ցինչժաոյի գիրքը, անմիջապես հիշում են հինգ հազար տարի առաջ գրված այն քերթվածը, որը համարվում է աշխարհում պահպանված ամենահին բանաստեղծությունը: Ինչպես նշում է անվանի գրականագետ Սեյրան Գրիգորյանը, բանաստեղծությունը «հայտնագործվել է Մեսոպոտամիայի Ուր քաղաքի պեղումների ժամանակ» (42)

*Դժբախտ ժամանակակից մարդ.
Նա մեն-մենակ թափառում է
Կեղտոտ քաղաքի աղմկոտ փողոցներով:
Նրա գլուխը պայթում է ծանր ցավից:
Նա արդեն չի լսում ձայնն իր Աստծու,
Որ լռության մեջ երգում է նրա համար:*

Որպեսզի հասնենք ինքներս մեզ, գնում ենք դեպի վաղնջական ժամանակներում գրված այս տողերն ու մեզ գտած՝ վերադառնում: Անշուշտ, շատ կարևոր է, որ խստորեն պահպանվի խոսքի անկեղծությունը, հեղինակի ոչ բանաստեղծելու, այլ պարզապես ինքնաարտահայտման անմիջականությունը, պատկերների հստակությունն ու շարադրանքի անկողմնակալությունը: «Նրա գլուխը պայթում է ծանր ցավից» տողն ասում է ավելի շատ բան ժամանակի, ապրելակերպի, մտածումների և այլնի մասին, քան կարող է դա ներկայացնել մի ամբողջական գիրք: Ավելին, վեց տողի մեջ ընդգծվում է հեղինակի կերպարը, որը շատ կարևոր ու էական է այս պարագայում: Եթե խոսքի մեջ, մանավանդ՝ գեղարվեստական, խոսողի դեմքը չես տեսնում, ուրեմն՝ ասելիքը վրիպում է ու տեղ չի հասնի: Իսկ խնդրո առարկա բանաստեղծությունը, տեսե՛ք՝ որտեղից-որտեղ է եկել: Սա հենց խոսում է արժեքային այն համակարգի մասին, որը հատուկ է ժողովրդական ստեղծագործություններին: Գրականությունից բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, բայց թեկուզ միայն մեր ժամանակակիցներ Մաթևոսյանի, Շուկչինի, Դովի. Գրիգորյանի անուններն էլ բավական են, որպեսզի մեկ անգամ ևս համոզվենք անվիճելի ճշմարտության մեջ:

Չինացիների առաջին գիրքը՝ «Շիցզին» (43) («Երգերի գիրք») աշխարհ է եկել «դեռևս մեր թվարկությունից առաջ՝ 11-10-րդ դարերում»: Բնական է, ի սկզբանե փիլիսոփայություն հասկացության մեջ մտնում էին և գիտությունը, և արվեստն ու գրականությունը, և նշակույթն ու դպրությունը... Իսկ գրականությունը ներկայանում էր որպես բանահյուսություն: Լի Ցինչժաոյի ամբողջ ստեղծագործությունը չինական ժողովրդական բանահյուսության լավագույն գծերի ու ավանդների ամենացայտուն մարմնավորումներից է: Որքան ավանդական, այնքան էլ այն նորարարական է: Եվ սա քնարերգության զարգացման գլխավոր օրինաչափություններից մեկն է:

Բանաստեղծուհու գրեթե բոլոր երգերը պատկանում են չինական քնարերգության «Ցի» կոչվող ժանրին: *«Բավական է ասել,- գրում է գրականագետ Վ. Երյոմինը,- որ միջնադարյան Չինաստանի ութ մեծ գրողներից վեցը ներկայացնում են Սունի դարաշրջանը: Դա դարաշրջան է, այսպես կոչվող, Ցի դասական երգերի ժանրի, որոնք շարադրվել էին բանաստեղծությունների տեսքով՝ երկար տողերով, բացարձակապես բարդ ռիթմիկական պատկերով: Ի տարբերություն Տանի շրջանի որոշակի չափի մեջ խիստ Շի արտահայտված չի ժանրի բանաստեղծությունների»:*(44) Այստեղ պիտի հասկացության մեկնությանը մոտենալ որոշակի նկատառումներով, որովհետև չինական այբուբենի յուրաքանչյուր տառ հիերոգլիֆային իր արտահայտության մեջ ընդգրկում է մի ամփոփ միտք, երբեմն, ինչպես ասում են՝ տարբեր իմաստներով, ասենք՝ «Ցի» հասկացությունն ունի *երկմքի էներգիա* ու այլ իմաստներ ևս: Ես հանգել եմ մնան եզրակացության: Բայց ավելի լավ է մեջբերենք *«Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացությունները»* գրքից (45) (առաջին մաս) մի հատված, ուր մեկնաբանվում է այդ եզրույթը. *«Ցի-ն (էական ուժ) ունի նյութական գոյություն՝ անկախ սուբյեկտիվ գիտակցությունից. այն բոլոր ֆիզիկական առարկաների հիմնական տարրն է: Այն մաև կյանքի և ոգու ծննդի և գոյության հիմքն է: Ի լրումն դրա, որոշ մտածողներ բարոյական հատկանիշ են վերագրել ցիին: Ցին մշտապես շարժվում ու փոփոխվում է և չունի որոշակի ծև: Նրա կենտրոնացումը ծնունդ է տալիս առարկայի, իսկ անհետացումն ազդարարում է այդ երևույթի վախճանը: Ցին ներթափանցում է բոլոր ֆիզիկական էակների մեջ և նրանց շրջապատ: Որպես փիլիսոփայական հասկացություն՝ տարբերվում է նրանից, ինչ սովորաբար ցույց է տալիս ցի բառը (Վ), որ բառացի նշանակում է օդ: Չնայած հեղուկ կամ պինդ վիճակում իրերը տարբերվում են օդեղեն վիճակից, հին չինական փիլիսոփայության տեսանկյունից նրանց ձևավորումն ու գոյությունը ցիի կենտրոնացման արդյունք են»:*

«Տաղեր» գրքի առաջաբանում բոլորովին այլ դիտանկյունից է տրված «Ցի»-ի պարզաբանումը, ուր նշվում է, որ եթե «Ցի»-ն *«փոքր բանաստեղծություն է, բաղկացած է լինում երկու մասից, առաջինում, որպես կանոն, տեսարանի, միջավայրի, իրադրության նկարագրություն է, իսկ երկրորդում, միանգամայն անկախ հատվածում, արտահայտվում են բանաստեղծության հիմնական միտքը, զաղափարը»:* (46) Կարծում եմ, այս դիտարկումն ավելի սպառնչ պատասխան է տալիս մեզ հուզող հարցին և համարյա նույն մոտեցումներն են դրսևորում այդ հասկացության բացատրության հարցում մաև Լի Ցինչժաոյի ստեղծագործությանն իրենց աշխատություններում անդրադարձած հեղինակներ Վ. Երյոմինը (47), Մ. Ն. Բըչկովը:(48) Սակայն այստեղ նույնպես մի վերապահում կատարենք. Լի Ցինչժաոն որպես մեծություն *«Նա մեծ էր նշանի ահագնությամբ»* (49), մշտապես իր գործերում կիրառել է բանաստեղծության իր «ներքին» օրենքներն ու սահմանումները, որոնք հնարավոր չէ, ինչպես տեսնում ենք, տեղավորել որևէ ժանրային «կադապարի» կամ «իզմի» մեջ: Չենց այս հանգամանքն է, որ դարերում ապահովում է նրա քնարերգության մշտադալարությունն ու ժողովրդականությունը: Նա տաղերում ներկայացնում է իր կերպարը, ժամանակի իր հերոսին, որն ինքն է, մարդ, ով քաջատեղյակ է ոչ միայն արվեստների պատմությանն ու զարգացման ընթացքին, այլև իր ազգի հնագույն սովորույթներին, կենցաղավարությանը, դժվարին պատմության առանձնահատկություններին: Չենց այս իրողությունների ընդհանուր համապատկերում էլ ձևավորվել են նրա *բանահյուսական միտքն ու բանածևային մտածողությունը*, որը և նրա ստեղծագործությանը թեկադրել է կառույցի միանգամայն թարմ, կարծրատիպերից հեռու արխիտեկտոնիկա՝ արվեստի «չինարարական» ու գեղագիտական իր ընկալումներին ու ստեղծագործության կենսաբանական ներքին ազդակներին (իմպուլսներին) համահունչ:

Հակիրճ անդրադառնանք Լի Ցինչժաոյի փիլիսոփայական հայացքներին: Այդ խնդիրն ինձ, ճիշտն ասած, հետաքրքրում է և այն պարզ պատճառով, որ մենք գործ ունենք չին բանաստեղծուհու հետ, իսկ Չինաստանն աշխարհին հայտնի է փիլիսոփայական մտքի իր հսկաներով, որոնց մեջ առանձնանում են հատկապես Լաո Ցզին, Կոնֆուցիուսը և Սունցզին: Եվ այնպիսի գտարյուն բանաստեղծուհին, ինչպիսին Լի Ցինչժաոն է, չէր կարող իր աշխարհայացքի ձևավորման գործում չկրել համաշխարհային այդ վիթխարի երևույթների բարերար ազդեցությունը: Մանավանդ, նրա ստեղծագործությունն ասվածի պերճախոս վկայությունն է: Նրա գործերում գեղարվեստական նարմնավորում են ստացել ժողովրդական շատ ասացվածքներ՝ կապված որոշակի հավատալիքների հետ, դիցաբանական ասույթներ, իմաստություններ: Լայն մասայականություն են վայելում Լաո Ցզիի իմաստասիրության բանաձևային դրույթները, հիշենք դրանցից երկուսը. **«Ով գիտե՝ չի խոսում: Ով խոսում է՝ չգիտե», «Սեղմությունը հաղթում է կոպտությանը, «թույլը» հաղթում է «ուժեղին»...** Փիլիսոփայությունը գնում է դեպի գիտությունը, գիտությունը դեպի փիլիսոփայությունը:

Ես ընդամենը երկու տող մեջբերեցի մեծ մտածողի **«Գիրք ճանապարհի և առաքելության մասին»** հանրաճանաչ աշխատությունից՝ ցույց տալու համար այն ակունքները, որոնք սնունդ են տալիս բանաստեղծուհու մտքերին ու պատկերավոր մտածումին: Փորձենք այդ կապը տեսնել Լի Ցինչժաոյի բանաստեղծական տողերի մեջ: Ահավասիկ. **«Այգի չեմ վազի առաջվա սման՝ Առաջին հետքը ձյունին թողնելու», «Դժվարանում եմ հիշել համը գինու, Որ խմեցինք բաժանվելիս», «Տերևը ոսկեկարմիր է, Չունյանի տոնը մոտ է», «Աշխարհը նույնն է, Բայց դու այնտեղ չկաս»...** Երկու դեպքում էլ գործ ունենք ոչ թե առարկայական, այլ տրամաբանական պատկերների հետ, որոնք և նույնքան տրամադրական են: Երբ խորքով ենք մայում իրողություններին ու բանաստեղծական խոսքի բանաձևումներին, անշուշտ, տեսնում ենք կենսաբանական այն աղբյուրը, որը ժողովրդական իմաստության արժեք է՝ թե փիլիսոփաների, թե բանաստեղծների համար: Սերգեյ Սարինյանը գրողի ստեղծագործության և նրա կենսաբանական ծագման ընդհանրությունների մասին գրել է. **«...Եականը բնաշխարհի գեներտիկան է»:**(50) Գեներտիկայի հետ համախոս է և այբուբենը, որը տալիս է ազգային մտածողության, աշխարհաճանաչման ու ընկալման, իրականության և ընդհանրապես տիեզերական առեղծվածների ու անհայտի բացման բանալին: Այբուբենն ազգային բանահյուսության ամենացայտուն արտահայտությունն է:

Չինարեն այբուբենը, հիրավի, իր մեջ ներքին հղումներ ունի դեպի հրաշքներով լեցուն, անծանոթ ու անվերծանելի, բայց միշտ կանչող անհայտը: Անգամ կարդալ չիմացող ընթերցողին այն ակամայից տեղափոխում է գեղանկարչական գլուխգործոցների պատկերասրահ, ուր ամեն մի փոքրիկ խազ ունի «շարժման իր փիլիսոփայությունը»:

Լի Ցինչժաոյի ստեղծագործությանը հատուկ է խորը մարդասիրությունը, և հենց այս եզրույթում է ծավալվում, թեժանում նրա պայքարը՝ հանուն կատարյալի: Ավելին, այստեղ բանաստեղծուհին՝ ինքնամարտի և ինքնամաքման առումով, շառավիղ է ձգում դեպի իր հայ մեծ մախորդ Գրիգոր Նարեկացին: Ամենեցուն անաղարտության տանելու ներքին շնորհներ ունի չին բանաստեղծուհին: Եվ, չնայած նրան, որ 12-րդ դարում Չինաստանում արդեն գլուխ էին բարձրացրել նեոկոնֆուցիուսականությունը և այլ ուղղություններ, Լի Ցինչժաոն կարողանում էր հաստատուն լինել իր որդեգրած բարոյական ու գաղափարական սկզբունքների, ուրույն ընկալումների ու աշխարհաճանաչման սկզբունքներում: Կոնֆուցիոսից **«Մարդկանց մի արա այն, ինչ չես ցանկանում քեզ»** (51) բանաստեղծուհին ժառանգեց, ինչպես ասում են, **մարդասիրությունը** («Ժեն»): Սակայն ես այստեղ ուզում եմ շեշտել Կոնֆուցիուսի հետևյալ միտքը՝ **գիտելիքը կարող է լինել բնա-**

ծին և ստացական: (52) Ըստ փիլիսոփայի, առաջնությունը վերապահվում է **իմացականին**: Այսօր էլ այս դրույթը ոչ միայն չի կորցրել իր թարմությունը, այլև խիստ կիրառական է: Սակայն ուրիշ է պատկերն արվեստի ու գրականության մեջ: Որքան էլ իմացական բարձր մակարդակ ունենար Լի Ցինչժաոն, այնուամենայնիվ, գլխավորը նրա երկնային շնորհն էր, բնածին տաղանդը: Ինչո՞ւ ես կանգ առա այս հարցի վրա: Բանը նրանում է, որ այսօր գրական աշխարհը լիքն է այնպիսի «գրողներով», որոնք ունեն պատշաճ իմացություններ գրական արվեստի վերաբերյալ և, իրենց ինտերակտիվ ջանքերի շնորհիվ նորանոր թխվածքներով հեղեղում են ասպարեզը: Մինչդեռ ընթերցողներս ուզում ենք ազնվարյուն տող, որի բովանդակային և արխիտեկտոնիկ առավելությունները կենսաբանական բջիջներով են պայմանավորված, ինչպես ասենք, մեզ ծանոթ այս տողերում.

***Նա արդեն չի լսում ձայնն իր Աստծու,
Որ լռության մեջ երգում է նրա համար:***

Պոետական ինչպիսի դիտարկում: Խորը փիլիսոփայություն: Մարդու ներքին աշխարհի անթերի բացահայտում: Հեղինակը երգի կենսաբանական բջիջների բանալիները դնում է ընթերցողի ակի մեջ, հուշում անենաանտեսանելի անհայտի բացման գաղտնաբառը: Հատկապես, երբ փիլիսոփայորեն ենք մոտենում հարցին, տեսնում ենք, որ հայտնին ավելի անհայտ է, քան ակնհայտ անհայտը:

Արդի գրականագիտության մեջ ընդունված է Լի Ցինչժաոյին ներկայացնել որպես երկրորդ Սաֆո, թերևս այսպես են նրան մեծարում համաաշխարհային իրականության մեջ: Եվ դա ունի իր հիմնավորումները: Նախ՝ երկու պոետուհիներն էլ **«բնության կողմից ստեղծված օրգան էին՝ բացառապես պոեզիայի համար»**, ինչպես դարեր հետո Սերգեյ Եսենինի մասին պիտի ասեր Մ. Գորկին:^{*} Համաաշխարհային սիրերգության մեջ թե Սաֆոն, թե Լի Ցինչժաոն ուրույն մտածողություն ու ոճ ստեղծեցին՝ մարդուն առավել բաց ու անթաքույց ներկայացնելով ներքին, դեռևս անհայտ զգացումների ու տրամադրությունների գեղարվեստական վերծանումներով, պատկերավորության անսովոր միջոցներով ու միանգամայն պարզ ու զարմանալի գեղագիտությամբ: Գրականագիտական աղբյուրները վկայում են, որ Սաֆոյի մասին իրենց կարծիքներում անսահման շառլ են գտնվել ժամանակի անվանի մտածողները: Այսպես. **«Սոկրատեսը համարում էր Սաֆոյին «սիրո գիտության մեջ» իր ուսուցիչը, Ստրաբոնը նրան «հրաշք» է անվանում և պնդում, որ պատմության մեջ անիմաստ է փնտրել մեկ այլ կնոջ, ով կկարողանա գեթ հեռավոր համեմատության մեջ դրվել նրա հետ, իսկ անտիկ շրջանի հունական քնարերգության գիտակներ Դիոնիսիոս Հալիկառնացին, Կատուլլոսը և Հորացիոսը Սաֆոյին համարում են բանաստեղծական նոր դարաշրջանի հիմնադիր»:** (53) Այս գնահատականներն, անշուշտ, չեն կարող կասկածների տեղիք տալ, քանի որ «առաջին ձեռքից» են և, միաժամանակ ի դերն են դարձնում Սաֆոյի մասին հին ժամանակներից մինչև մեր օրերը հաճախ բարձրացվող այն ոչ բարենպաստ դիտարկումները, թե իբր պոետուհին իր գործերում ինչ-որ չափով տուրք է տվել լեսբիական տրամադրություններին: Գուցե նման վերաբերմունքի պատճառ է հանդիսացել Սաֆոյի գործունեությունը՝ Լեսբոս կղզում գործող խմբակներից մեկում, ուր որ «սիրո աստվածուհի Աֆրոդիտեի պաշտամունքով» հանդերձ, առանձին աղջիկների մեջ կային նաև ձախ կողմնորոշումներ. Սաֆոն աղջիկներին դասավանդում էր ընդամենը «երգեցողություն, պար և տաղաչափություն»: (54)

Այսպես թե այնպես, տարամտությունները լուծվում են հենց բանաստեղծուհուց մեզ հասած, թեև քիչ, բայց ցայտուն բնավորություն, հոգեկան հարուստ աշխարհ արտահայտող, ազնվարյուն երգերով: Ահավասիկ.

*Երանությանը հավասար է աստվածներին նա,
Ուն վիճակվել է լինել քո կողքին,
Ունկնդրել թովիչ խոսքերը քո
Եվ տեսնել քեզ՝ հալչելով քո հնայքից:*

Այդ քո շուրթերից դեպի շուրթերը նրա նրբաբողբոջ ժպիտ թող թռչի: (55)

Ամեն մի հաջողված տող իր մեջ կրում է հեղինակի (այստեղ էական չի, թե նա որ դարում է ապրել), ամբողջական կերպարը ներկայացնող կենսաբանական բջիջներ, որոնք կեղծել հնարավոր չէ, ինչպես թանակով թաթախված մատի հետքը՝ թղթին: Առավել ևս՝ այնպիսի մի անզուգական պոետուհի, ինչպիսին Սաֆոն է, որի երգային քնարերգությունը ժողովուրդն իր սրտին մոտ է ընդունել: Ոչ ոք չի կարող չհավատալ, ասենք, «Աթենքի օրենսդիր Սոլոնի» հետ կապված պատմությանը, մարդ, ով իր զարմիկից երբ «լսում է Սաֆոյի խնջույքի երգերից մեկը, ցանկանում է անմիջապես սովորել այն՝ ասելով. **«Չէի ցանկանա մահանալ՝ առանց սովորելու այդ երգը»:** (56)

Ցավոք, Լի Ցինչժաոյի քնարերգությունը հեղինակի կենդանության օրոք մման ընդունելության չարժանացավ, ավելին, միայն քսաներորդ դարում այն որպես «հողի մեջ անթեղված գանձ», պեղվեց մոռացությունից ու ճանաչում գտավ ամբողջ աշխարհում, և մարդիկ տեսան, թե հոգևոր ինչպիսի բարձր արժեքների հետ գործ ունեն: Եվ որքան էլ տարբեր աշխարհայացքի տեր լինեն Սաֆոն ու Լի Ցինչժաոն, նրանց սիրերգության միջև ընդհանրություններ կան, երկուսն էլ աշխարհին իրենց երգով մաքրության են տանում՝ մտածողության, լեզվական, փիլիսոփայության ու գեղարվեստական առանձնահատկություններով հանդերձ: Ի տարբերություն Սաֆոյի, ամասելի դաժան ճակատագրի արժանացավ չին բանաստեղծուհին՝ մատնվեց տառապանքների և, ազգային վիշտը սրտում, մահկանացուն կնքեց վտարանդիության մեջ:

Գրականագիտական մի այսպիսի անվիճելի դրույթ կա՝ գրողների մեծությունը ոչ թե նրանց մմանության, այլ տարբերությունների մեջ է: Արիստոտելյան այս դիտարկումն ինչու հիշեցի. Սաֆոյի և Լի Ցինչժաոյի գեղարվեստական սկզբունքների ու բերած աշխարհների միջև «սար ու ձորերի» խիստ առանձնարկված հսկայական տարբերություններ կան: Ամեն մեկն ունի քնարերգության իր ինքնատիպ առանձնահատկությունները, որոնք և միաժամանակ հանդես են գալիս որպես յուրօրինակ «ընդհանրություններ»:

- 3 -

Երբ Ստրամբոնը, Սաֆոյի առիթով, ասել է, թե «պատմության մեջ անիմաստ է փնտրել մի այլ կնոջ, ով կկարողանար գեթ հեռավոր համեմատության մեջ դրվեր նրա հետ», այն ժամանակ, բնականաբար, չկային ոչ Լի Ցինչժաոն, ոչ Սիլվա Կապուտիկյանը, առավել ևս՝ ոչ էլ Աննա Ախմատովան:

«Կերպավորիր ինձ ըստ քո պատկերի». այսպես է Սիլվա Կապուտիկյանը դիմում հայոց բիբլիական լեռանն իր «Աղոթք Արարատին»(57) բանաստեղծության մեջ: Կա ստեղծագործական մի հետաքրքիր օրինաչափություն՝ բնությունը, դա պայմանավորված չէ նույնիսկ նրանով՝ գրողը դիմում է դիմառնական միջոցի (մեթոդ), թե չէ, ինքնին ներկայանում է գեղարվեստական արարչության մեջ: Տվյալ պարագայում խոսքը Սիլվա Կապուտիկյանի հայրենի եզերքի մասին է, որն ինքնին խոսում է բանաստեղծուհու շուրթերով: Ասվածի գեղեցիկ առիվատշյաններից մեկն էլ Սահյանի հանրահայտ տողն է՝ **ասես թե՛ ես գետ, գետն է բանաստեղծ,** կամ **«Ծառերից մանկություն է ծորում»:** (58) Իրականում այդպես է ոչ միայն հայ, այլև համաաշխարհային իրականության մեջ: Իսկ այնտեղ, ուր հողը տաք է ոչ միայն օջախի պողից, այլև չմարած կրակներից նոր Ավարայրի, երգն այնտեղ տարօրինակ է, հաճախ՝ ավերից դուրս ելած, մեծ, անսահման, մման է աստվածների

սիրուն: Յենց այս առանձնանիշերն են, որ Սիլվա Կապուտիկյանի քնարերգությանը հաղորդում են ժողովրդական իմաստություն ու խորք, բանատողը դարձնում երգային սերված մեր ազգային բանահյուսության հարուստ գանձարանից:

***Ես բերեցի իմ մեջ՝ տարիներից փրկված
Աղջկական մի հին զուլալություն.
Ինչպես ամռան շոգին՝ զազաթներից բերված
Ու հրաշքով պահված՝ միանիտ ծյուն:***

Որքան թանկ ու անհրաժեշտ է այսօր մարդուն այդ «ծյունի միանությունը», որի հալոցքի մեջ արարատյան արևի սեր կա, ներքին ցավի հասցե: Այս մասին իր խոսքն, անշուշտ, ժամանակին ասել է մեր գրականագիտական միտքը:

Կանգ առնենք այսպիսի մի իրողության վրա, որի ճշմարտացիությունը բազմիցս հավաստվել է գրականության մեջ: Գրողի ինքնաազատագրումն այն ամենից, ինչը համարվում է մինչ այդ ստեղծված իրականության պարտադրանք, զգալիորեն նպաստում է, թույլ է տալիս, որպեսզի նրա աշխարհընկալումն ու պարզ, սովորական երևույթների մեկնությունները, լինեն ինքնատիպ: Այս մասին են վկայում նաև Աննա Ախմատովայի կյանքն ու գործունեությունը: Սա նշանակում է՝ ինքնավերլուծականի զնալ ամեն մի բառում, ճանապարհը դարձնել կարծրատիպերի ջարդման պատմություն, տողն անընդհատ տանել դեպի մտքի ու ապրումի ազատականացում, արյամբ սերտել ցանկացած կեցվածքի հաղթահարման այբուբենը, ստեղծածը իրականությունը ենթարկեցնել այն սկզբունքներին, որոնք որդեգրել են: Ավելի հակիրճ՝ ժամանակի մեջ լինել այլաժամանակ, խոհի մեջ՝ այլախոհ, գեղագիտության մեջ՝ այլագեղագետ: Այս ուրվագծերով էլ կարելի է տալ ռուս մեծ բանաստեղծուհու անթերի դիմանկարը: Նա մշտապես հայտնվեց մենակության մեջ՝ զոյաբանական այդ եզրույթում դրսևորելով միայն իր բարձր կամքն ու անսպառ կորովը: Ավելին, տեսավ նաև իր նման մեծակներին՝ Պաստերնակին, Չարենցին, Մանդելշտամին... Նա դեռևս եղեռնական երեսունականներին նկատեց Չարենցին ու թարգմանեց նրա գիրքը, որը, սակայն, «տպագրվեց միայն Չարենցի մահից քսան տարի հետո»՝ հասկանալի պատճառներով:(59) Բառը, հիրավի, եթե ժամանակի դիմադրություն չի դառնում, ուրեմն՝ բառ չէ: Անկրկնելի սիրերգակ է Աննա Ախմատովան:

***Կմոռանա՞ն ինձ: Չեն զարմանում:
Չարյուր անգամ են մոռացվել:
Չարյուր անգամ են եղել շիրմում,
Ուր այժմ էլ ննջում են գուցե:
Իսկ մուսան մի խուլ ու կույր, մեղմիկ
Սերմի պես փտում է հողում,
Որ հետո գորշ մոխրից հանց Փյունիկ
Չառնի երկնագույն երկնքում:***

(Թարգմ. Գիսանե Յովսեփյանի)

Բնական է, որ Չարենցի հանդեպ Ա. Ախմատովայի վերաբերմունքը փոխադարձվում էր հայ գրողի կողմից: Իր տպագրվելիք գրքի խմբագրին Չարենցը գրում է. «**Չարգելի Իգոր: Շատ ուրախ եմ, որ իմ ստեղծագործությունների թարգմանության մեջ ներգրավել են Աննա Ախմատովային: Ինձ համար այդ խոշոր, ինձ վաղուց հայտնի ռուս բանաստեղծուհու թարգմանությունները մեծ ուրախություններ են: Չատկապես, որ դրանք կարծես շատ ճշգրիտ են: Խնդրում եմ առիթի դեպքում փոխանցիր նրան իմ երախտագիտությունը**»:(60) Ախմատովայի մասին Նվարդ Տերյանին հղած նամակի մեջ, Չարենցից առաջ, իր սիրո խոստովանությունն է արել Վահան Տերյանը. «**Ես սիրում եմ այդ բանաստեղծուհուն: Դու էլ սիրիր նրան: Նա արժանի է սիրո՝ մեր և բոլոր արվեստասերների**»:

Ինչպես նկատելի է, հավերժական ժամանակների սիրուն են արժանանում հիմնականում իրենց ապրած ժամանակներից մերժվածները: Իհարկե, վերապա-

հուններ կարող են լինել: Եվ՝ ոչ քիչ: Բայց այդ ամենի հետևությունը թելադրում է չգրված օրենքի ուժ առած մի ելակետային դրույթ, այն է՝ **բարոյաբանությունն ու գաղափարաբանությունը** սպանում են արվեստը՝ վերածվելով այս կամ այն կացութաձևին հատուկ ինչ-որ քարոզչության, կցորդն են դարձնում գրողին անցողիկ քաղաքական համակարգերի: Մինչդեռ **«Չի կարող լինել մեր ոգին գերի Սերտած խոսքերի, կռտած մտքերի»** (61) (Չարենց):

Լի Ցինչժանոն և նրանից շատ դարեր առաջ ապրած Սաֆոն, ապա՝ չին պոետուհուց հարյուրամյակներ հետո աշխարհին իրենց խոսքը հղած Աննա Ախմատովան ու Սիլվա Կապուտիկյանն առանձնանում են ոչ միայն իրենց կերտած դարով ու ստեղծագործությամբ, այլև սկզբունքներով, յուրաքանչյուրն իր անհատականությամբ, ժամանակի մեջ գեղարվեստական գործերի թողած հետագծով, փիլիսոփայությամբ, ստեղծած աշխարհի ամբողջականությամբ:

- 4 -

Երկիրը ձևավորվեց ըստ Բանի: Բանահյուսությունը, ի սկզբանե իր մեջ կրում էր ազգերի կայացման առաջին «նախագիծը», այլ բառերով՝ աճի և ընթացի աշխարհագրական ու հոգևոր քարտեզը: Ժողովուրդների, պետությունների զարգացման ճանապարհին առաջին կողմնացույցը եղավ հենց բանահյուսությունը: Համաձայն ակադեմիկոս Ս. Սարինյանի դիտարկման, Հենրիխ Բյուլը ճշգրիտ է ձևավորել այդ «գործընթացը». **«Կա գրականություն, կա պետություն, չկա գրականություն չկա պետություն»:** (62) **«Քաղաքական գործիչները տնտեսական շահը միշտ վեր են դասել բարոյականից: Հենց դա էլ այսօր կործանում է ամբողջ երկրապետությունը»** (Մարիաննե Թիմեն): (63) Որքան պետությունը հեռանում է մշակույթից, արվեստից ու գրականությունից, այնքան դիմադրողականությունը կորցնում է դարերի պայքարում: Խնդրեմ, կարող ենք դա տեսնել նաև մեր ժողովրդի անցած ուղուն հայացք զցելով՝ Տիգրան Մեծից մինչև Նիկոլ Փաշինյան: Ի դեպ, Փաշինյանը գրականության ու պետության մասին հետաքրքիր դիտարկումներ ունի իր «Գրողը և ժամանակը» էսսեի մեջ, որը գրել է տարիներ առաջ... Իսկական գրողը նա է, ով գործերում ոչ թե արտացոլում է իրականությունը, այլ ներկայացնելով այն՝ ցույց է տալիս մարդկանց երազած աշխարհի մոդելը: Թունամյանը, ինչպես գրում են անգամ դասագրքերում, ցույց չի տվել միայն նախապետական աշխարհը, ոչ, նա պատկերել է այդ աշխարհն ու նրա մարդկանց աչքերում ապրող **վաղվա տեսլականը: «Ժամանակի շունչը դառնալն» այսօր այլևս քիչ է, պիտի ժամանակը դարձնես քո շունչը:** Գրողը երազի վրա չի կառուցում իրականությունը, այլ իրականության վրա է կառուցում երազը: Ահա այս գերիրականն է Չարենցին թելադրել գեղագիտական իր հավատամքը՝ հասնել մի **ջինջ պարզության, որ ձեռք է բերվում դժվար վարժությամբ:** (64) Հենց այս «դժվարի» բարդության մեջ են պարզության առեղծվածները: Եվ այս եզրույթում է, որ բանաստեղծությունը գերժամանակի մեջ հասնում է խոսքի գերխտացման, իսկ սատանում է դեպի բանաձևային մտածողություն ու ավելի իրական, կենսաբանական գործոնով պայմանավորված արխիտեկտոնիկա (ճարտարապետական, շինարարական արվեստ): Ինքնատիպ պատկեր (մեծ հաշվով՝ կերպար), առանց որի գեղարվեստական գրականություն չկա, քանզի. **«Պատկերը, որ մի հոգի է կարողանում կառուցել, հենց այն պատկերն է, որ ուրիշ ոչ ոքի վիճակված չէ»:** (65) Ժողովրդական բանահյուսության մեջ է ազգի զարգացման ծրագիրը, չինացիների համար այն «Երգերի գիրքն» է, հայերիս համար՝ մեր Գողթան երգերը, էպոսը, մեր գրականությունը: Բայց, ցավոք, այսօր մեզանում վերացել են անգամ ժողովրդական ստեղծագործության տները, որոնց գոյությունը, կարծում են, չպետք է պայմանավորվել այս կամ այն հասարակական կացութաձևով (ֆորմացիայով). նրանք եղել են ի սկզբանե, և պիտի լինեն բոլոր ժամանակներում:

Բանաստեղծությունը, կարծում եմ, չպիտի նույնիսկ ինքնանպատակ լինի, որովհետև ինքնանպատակությունը ևս նպատակ է, իսկ քնարերգությունը, որ գրականություն է, ի վերջո, նպատակ չի հանդուրժում: Բանաստեղծության մեջ «ծրագրվածությունը» չի մարսվում: Ինչպես՝ ծնվելը, սիրելը, ժպտալը, շնչելը: Լի Ցինչժաոի, Շնորհալու կամ Չարենցի տաղ ասելը, թռչնի երգելը... Եվ հետո՝ ով է ասել, թե թռչունը երգում է, երբ ծվվում է, գուցե ողբո՞ւմ է... Նման «մեկնություններում» բանաստեղծությունը, ուրեմն՝ վրիպում է ամենայն հավանականությամբ, ուրեմն՝ այդ բանաստեղծությունը շեղվում է իր ատաղձը կազմող «ներքին գիտության» հաշվարկներից: Չպիտի ոչ բնական գործառույթներ վերագրել քնարերգությանը: Ծաղիկը նպատակադրվածությամբ չի բուսնում, բայց նա կիրառություն է գտնում, մարդիկ իրար ծաղիկներ են նվիրում: Գործառնականությունը չափվում է երկի կիրառելիության աստիճանով, սակայն ոչ մի գործ չի ստեղծվում այդ «հատկանիշների» նկատառումով: Այնպես որ՝ ճիշտ չէ աղավաղել դարձնել նամականատար, ինչպես դա արվեց առաջին համաշխարհայինում, իսկ հետո Շեր Ամին անունով այդ թռչնակին «Արիության համար» մեղալ տվին, նրա կորսված ոտքին «արոտեզ» հագցրին, գոնե այս վերջին արարմունքը մարդկային է:

Խոսքս ուզում եմ ավարտել իմաստասեր Էդ. Ա. Հարությունյանի «Անհնարին հաղթահարումը» հոդվածից մի մեջբերումով. **«Մինչ մենք Հայկի, Արա Գեղեցիկի, Վարդանի ու Փոքր Միերի բարոյական հաղթանակների հովվերգությունն էինք անում, այլոք աշխարհն էին իրար մեջ անում: Մինչ մենք Նարեկացու ինքնադատման զոհասեղանին մեր հոգին էինք մատաղում և պատիժ հայցող աղերսանքներով դիմում առ Աստված, այլոք թողություն հայցող ինդուլգենցիաների վաճառքով էին զբաղված: Մինչ մենք կազմաքանդում ու մասնատում էինք այս աշխարհի մետաֆիզիկական հիմքերը և տքնաջան որոնում մեր գոյության իմաստը, ուրիշները ջանադրաբար վերլուծում էին մեր անցյալի մեջ պարունակվող չիրականացված հնարավորությունների վիրտուալ խորությունը և դասեր քաղում»:** (66)

Ամուր են այն պետությունները, որոնք կառուցված են Աստվածաշնչի վրա, իսկ Աստվածաշունչը մարդկության ամենագրեղ բանախյուսությունն է: Շեղվելով բանից՝ մեր պետության հիմքերն ենք խարխուլում: Պիտի ամրագրենք, որ արդեն շատ ենք ուշացել ինքներս մեզանից, և այս պայմաններում հնարավորն անել՝ կնշանակե ոչինչ չանել: **Մեր միակ և վերջին ելքը մնացել է մի բան՝ անել անհնարինը:**

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չարենց Ե., «Ընտրանի», «Նաիրի» հրատ., Երևան, 1997թ., էջ՝ 211:
2. Չարենց Ե., «Ընտրանի», «Նաիրի» հրատ., Երևան, 1997թ., էջ՝ 211:
3. «Կետը և գիծը հարթության վրա», Սարգիս Խաչենց, ֆրիթինֆո, Անտարես, Երևան, 2018թ., էջ՝ 79:
4. Ջիվելեգով Ա. Կ., Դանթե Ալիգերի, «Աստվածային կատակերգություն», «Ակադեմիա» հրատ., Երևան, 1969թ., էջ՝ 574:
5. Իսահայկյան Ավ., Ընտրանի, «Սով. գրող» հրատ., Երևան, 1987թ., էջ՝ 7:
6. <https://granish.org>
7. Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1972թ., էջ՝ 274:
8. Лермонтов М. Ю. "Сочинения", В 6 т. — М.; Л., изд-во АН СССР, г. Москва, 1954-1957г., см. 228.
9. <http://blog.times.am>, «Հաստատական Յուն Սուն»:
10. Հակոբյան Վ., «Երկեր», «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2016, էջ՝ 445:
11. <https://granish.org/>, Ջիդի Սաջիա, Հրեղեն խոսքեր:

12. <https://granish.org/> , Լի Հատ, Էլեգիա:
13. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ.:
14. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ. էջ` 14:
15. Նույն տեղում, էջ` 15:
16. Մեյխուա-դեկորատիվ սալորենու տեսակ (այս և հետագա բացատրությունները` ըստ «գրքի ծանոթագրությունների»):
17. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ. էջ` 63:
18. Նույն տեղում, էջ` 40:
19. Նույն տեղում, էջ` 67:
20. Նույն տեղում, էջ` 52:
21. Նույն տեղում, էջ` 12:
22. Նույն տեղում, էջ` 49:
23. Նույն տեղում, էջ` 64:
24. Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 2, Հայպետհրատ, Երևան, 1961թ., էջ` 303:
25. <https://shkolazhizni.ru>
26. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ., էջ` 61:
27. Շնորհալի Ներսես, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1982թ., էջ` 66:
28. Սկրտչյան Լևոն, «Հայ դասական քնարերգություն», հ. 1, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ` 70:
29. «Մարգարիտներ հայ քնարերգության», «Հայաստան» հրատ., Երևան, 1971թ., էջ` 6:
30. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ., էջ` 46:
31. Նույն տեղում, էջ` 56:
32. Նույն տեղում, էջ` 58:
33. <https://econews.am>
34. Խորխե Լուիս Բորխես, «Բաբելոնյան գրադարան», «Ամտարես» հրատ., Երևան, 2016, էջ` 526:
35. <https://armspanish.wordpress.com>
36. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ., էջ` 49:
37. Նույն տեղում, էջ` 69:
38. «Մարգարիտներ հայ քնարերգության», «Հայաստան» հրատ., Երևան, 1971թ.:
39. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ., էջ` 61:
40. «Գրական թերթ», թիվ 29 (3394), ուրբաթ, 14 սեպտեմբերի 2018թ.:
41. <http://m.tsayg.am>
42. <http://mamul.am>
43. <https://hy.wikipedia.org>
44. <http://mirror6.ru.indbooks.in>
45. «Չինական մտքի և մշակույթի հիմնական հատկություններ», հ. 1, «Ոգի Նաիրի» հրատ., Ստեփանակերտ, 2016թ., էջ` 42:
46. Լի Ցինչժաո, «Տաղեր նրբատաշ հասպիսից», «Վան Արյան» հրատ., Երևան, 2017թ., էջ` 9:
47. <http://thelib.ru>
48. <http://www.lib.ru>
49. <http://mirror6.ru.indbooks.in>
50. Սարինյան Սերգեյ, «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը», «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2016թ., էջ` 19:
51. <https://hy.wikipedia.org>

- 52. <http://chinatodaymag.newsilkroad.am>
- * Горький М., Серге́й Есенин в книге. "Есенин в воспоминаниях современников" 2-о́у мом, Москва, 1986г., см. 49/63.
- 53. <http://philotheus.blogspot.com>
- 54. Նույն տեղում:
- 55. Նույն տեղում:
- 56. Նույն տեղում:
- 57. Կապուտիկյան Սիլվա, «Պոետի խոսքը լեռան», «Հայաստան» հրատ., Երևան, 1972թ., էջ 35:
- 58. Սահյան Հ., «Երկեր՝ երկու հատորով» հատ. 2-րդ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1989թ., էջ 43:
- 59. <http://philotheus.blogspot.com>
- 60. Նույն տեղում:
- 61. Չարենց Եղիշե, «Ընտրանի», «Նաիրի» հրատ., Երևան, 1987թ., էջ 9:
- 62. Սարինյան Ս., «Հայոց գրականության երկու դարը», հ. 4-րդ, Աճառյան համալսարանի հրատ., 2004թ., Երևան, էջ 21:
- 63. <https://grigorzatikyan11.wordpress.com>
- 64. Չարենց Ե., «Հատընտիր», «Սով. գրող» հրատ., Երևան, 1987թ., էջ 376:
- 65. Խորխե Լուիս Բորխես, «Բարբելոնյան գրադարան», «Անտարես» հրատ., Երևան, 2016, էջ 285:
- 66. «Վեմ» համահայկական հանդես, Ժ (ԺՁ) տարի, Երևան, 2018թ., թիվ 1 (61), հոկտ.- մարտ, էջ 9:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ. ԳՐՈՂԻ ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հոդվածում անդրադարձ է կատարվում ժամանակակից հայ և համաշխարհային քնարերգության զարգացման հիմնական միտումներին. այս համապատկերում Վ. Հակոբյանը հանգամանորեն վերլուծում է 12-րդ դարի չին բանաստեղծուհի Լի Ցինչժաոյի ստեղծագործությունը՝ զուգահեռներ տանելով նրա և հայոց միջնադարի նույն ժամանակաշրջանում ստեղծագործած գրողներ Ներսես Շնորհալու, Հովհաննես Իմաստասերի, ինչպես նաև հայ և չին ժողովուրդների ազգային բանահյուսության նմուշների միջև:

Վարդան Հակոբյանն ուսումնասիրության մեջ դիտարկում է գրականության փիլիսոփայության ու միջնադարը մեր օրերին կապող գեղագիտական մի շարք խնդիրներ, որոնք մշտապես կենսունակ են պահում քնարական խոսքը՝ անկախ լեզվամտածողական ոճի առանձնահատկություններից:

Հետազոտական աշխատանքում առանձնանում են հատկապես **ժամանակ-գրող-իրականություն, ավանդ-նորարարություն, արդիականություն-գերարդիականություն** և այլ հասկացություններ, որոնք նոր ու յուրովի մեկնաբանություններ են ստանում գրականագետի գրչի տակ, հատուկ լուսաբանության են արժանանում **սեր և սիրալիրություն, բառ և բառի պոպուլիզմ, պատշաճություն** եզրույթները:

Հոդվածում բարձրացվում են գրականագիտական հարցեր, կատարվում համապատասխան արժևորումներ ու եզրակացություններ՝ համեմատության, համադրության և վերլուծական այլ մեթոդների միջոցով:

РЕЗЮМЕ

ТАЙНЫ ИСТОРИИ: ДОМАТИЧЕСКОЕ МЫШЛЕНИЕ ПИСАТЕЛЯ И
АРХИТЕКТОНИКА ПРОИЗВЕДЕНИЯ.

ВАРДАН АКОПЯН

Ключевые слова: праздничный лиризм, ясность, актуальность, литература, умонастроение, метафора, природа, печаль, философия, время и реальность, образ, язык и стиль, инновационный, система маркировки, средневековье, китайская азбука, критерии.

В статье исследованы основные тенденции развития современной армянской и всемирной лирической поэзии. В данном контексте В.Акопян основательно анализирует произведения китайской писательницы 12 века Ли Цинджао, проводя параллели между ней и армянскими средневековыми писателями указанной эпохи: Нерсесом Шнорали, Ованесом Имасасером, так же как и между образцами армянского и китайского национального устного народного творчества.

В исследовании рассматривается ряд эстетических проблем философии литературы и связывающих средневековье с современностью аспектов, которые всегда делают лирическое слово жизненно важным, независимо от особенностей стиля языкового мышления.

В научном исследовании особо выделяются понятия время-писатель-реальность, инновационный вклад, актуальность-сверхактуальность и др., которые получают под пером литературоведа новые и своеобразные толкования; отдельного прояснения удостоиваются термины любовь и вежливость, слово и популизм слова, конгруэнтность.

В исследовании поднимаются литературоведческие вопросы, даются соответствующие оценки и заключения посредством различных методов: сравнения, анализа, синтеза.

SUMMARY

THE MYSTERIES OF SIMPLICITY: THE FORMULAIC THINKING OF THE
WRITER AND THE ARCHITECTONICS OF HIS WORKS

VARDAN HAKOBYAN

Key words: song lyrics, simplicity, novelty, literature, mentality, metaphor, nature, sorrow, philosophy, time and reality, image, formulaic thinking, language and style, innovative, sign system, Middle Ages, Chinese alphabet, criteria.

The article reflects the main tendencies of the development of modern Armenian and world lyrics. On the basis of it V. Hakobyan analyses deeply the works of the 12th century Chinese poetess Lee Tsinchjao thus showing parallels between her and Armenian medieval writers of the same age Nerses Shnorhaly and Hovhannes Imastaser and between national folklore samples of Armenian and Chinese people as well.

V. Hakobyan considers a number of aesthetic questions that connect the philosophy of literature and the Middle Ages with our days and always keep lyrical word alive despite the peculiarities of the language thinking style in his investigation.

The concepts of time-writer-reality, contribution-novelty, actuality-super actuality and others are distinguished which acquire new unique interpretation by the literary critics, such terms as love and politeness, word, word populism and decency have special illustration in the research.

The article touches upon the literary questions and relevant appreciations and conclusions are made through comparative, descriptive and other analytical methods.

ՍՈՎԻԵՏ ԽԱՆՅԱՆ

ՍՈՒՐԱՑԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ*

Բանալի բառեր. Մուրացան, մուրացանագիտություն, հայկական մամուլ, ռոմանտիզմ, ռեալիզմ, աշխարհայացք, գրեհիկ հասարակաբանություն, Ա. Տերտերյան, Ս. Սարինյան, Վ. Հակոբյան, մուրացանագիտության մեթոդյա զարգացում:

Հայ գրականագիտության պատմությունը դարերի ընթացքում զարգացման արդյունավետ ճանապարհ է անցել՝ ունենալով ուսանելի նվաճումներ: Այն նոր հունի մեջ մտավ առանձնապես 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ ասպարեզի վրա էին Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ստ. Լիսիցյանը, Ն. Աղբալյանը և այլ գրական գործիչներ: Այդ ժամանակաշրջանում գրական հայացքների նկատելի ձևավորումը առնչվում է հայ մամուլի ակտիվ գործունեությանը: Այդ ուղղությամբ ակնառու դեր խաղացին «Հյուսիսափայլ», «Մշակ», «Մեղու», «Թատրոն» և այլ թերթեր, «Բազմավեպ», «Արարատ», «Արևմուտք», «Փորձ», «Մուրճ», «Տարագ» և այլ հանդեսներ: Ուշագրավն այն էր, որ գեղարվեստական գրականության աննախընթաց հարստացմանը զուգահեռ իր խոսքն էր ասում գրական քննադատությունը՝ սկզբնավորելով այն գիտությունը, որը վերաբերում է կոնկրետ ստեղծագործող անհատականությունների հունձքին: Այսպես, XIX դարի վերջին ու XX դարի սկզբին հիմնադրվեցին Աբովյանագիտությունը, Նալբանդյանագիտությունը, Մունդուկյանագիտությունը, Աղայանագիտությունը, Թումանյանագիտությունը և այլն: Իհարկե, ոչ բոլոր դեպքերում էին, որ կամավոր գրողների երկերը գնահատվում էին ըստ էության, քանզի հաճախ նկատվում էին քաղաքական, հասարակական, մշակութային տարբեր դիրքորոշումների արտահայտություններ: Կարևորն այն է, որ գրականագիտության այդ բնագավառն արդեն իրեն զգացնել էր տալիս:

Ինչ վերաբերում է Մուրացանագիտությանը, գոհունակությամբ կարող ենք նշել, որ այն ունեցել է խոսուն ընթացք: Եվ, դա հասկանալի է: Մուրացանը ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլև նորարար, ճանապարհ բացող, ուսուցիչ, որի լույսը երբեք չի աղոտացել, ընդհակառակը, գնալով ավելի շողարծակ է դարձել ստեղծագործող նոր սերունդների համար: Մուրացանը գրական ասպարեզ է իջել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ բուռն վերելք էր ապրում հայկական ռոմանտիզմը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել Բաֆֆու դերը, որի ստեղծագործությունը ռոմանտիզմի գրականության փայլուն հաղթանակներից է: Բաֆֆուց հետո Մուրացանն էր, որ դարձավ ուշ ռոմանտիզմի խոշոր ներկայացուցիչը հայ իրականության մեջ:

Մուրացանի ստեղծագործության անսպառ ակունքը կյանքն էր՝ իր բազմաշերտ ընթացքով: Հայոց գյուղերում ու քաղաքներում տեղի ունեցած բոլոր իրադարձություններն արձագանք են գտել նրա բազմաժանր երկերում: Կյանքում ոչինչ չի վրիպել նրա ուշադրությունից, նա միաժամանակ ձեռք է մեկնել ժողովրդի պատմական անցյալին՝ իր երկերում արդիական հիմնախնդիրները քննարկելու և նոր ժամանակների այրող հարցերին ծառայեցնելու միտումով:

*Հոդվածն ընդունվել է 15.01.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

Մուրացանն իրեն համարել է տենդենցիոզ (միտումնավոր) գրող: Եվ զարմանալի չէ այդ ինքնաբնութագրումը: Ապրելով կապիտալիզմի դարաշրջանում, մեծ գրողը ծանոթ է եղել ժողովրդի տարբեր խավերի սոցիալական դրությանը: Նա հանդես է եկել կապիտալիզմի քննադատությամբ: Ուստի, Մուրացանի ստեղծագործության մեջ ընդգծված երևում է նրա միտումը, ասել է, թե՛ նրա որդիական համակրանքը սեփական ժողովրդի աշխատավորական շրջանների և անձնվեր հայրենասերների նկատմամբ:

Մուրացանի աշխարհայացքի և նրա ստեղծագործական ռոմանտիկական մեթոդի միջև հակասություն չկա: Իր երկերում քննադատելով չարն ու չարությունը, նա ստեղծել է իդեալական իր հերոսների կերպարները:

Ծանոթանալով մուրացանագիտության ընթացքին, նկատում ենք, որ այն միանշանակ չի զարգացել: Առանձին գրականագետներ Մուրացանի գեղարվեստական մեթոդը համարել են ռեալիզմ՝ նկատի ունենալով գրողի գեղարվեստական պատկերների ճշմարտացիությունը:

Ռոմանտիզմի և ռեալիզմի մասին խոսելիս Բելինսկին նշել է դրանց տարբերությունը, միաժամանակ մատնանշել է այն ճշմարիտ փաստը, որ վերջին հաշվով գրողի ընդհանրացնող պատկերներում առկա է ռոմանտիկականը: Ռոմանտիզմի ներկայացուցչի երկերը սերտորեն առնչված են իրականության ճշմարտացի պատկերմանը: Բայց նրանց աշխարհայացքը և ընտրած մեթոդի առանձնահատկությունը թելադրում են այն սկզբունքը, որը հենց ռոմանտիզմի էությունն է: Այսինքն, եթե ռեալիզմը պահանջում է կյանքը ներկայացնել ինչպես որ է, ապա ռոմանտիզմը պարտադրում է պատկերել կյանքի ցանկալի կողմերը: Մուրացանագիտության մեջ հաճախ շրջանցվել է ռոմանտիկ Մուրացանի երկերի մեջ ընդգծված ցանկալին:

Մուրացանին անդրադարձել են 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին հանդես եկած համարյա բոլոր գրաքննադատները: Այս առումով հատկանշական է Արփիար Արփիարյանի գնահատականը Մուրացանի երկերի վերաբերյալ: Սակայն Արփիարյանը արևելահայ գրականության մասին ստեղծած իր դասագրքում, առանձնացնելով իրարից պոեզիան, արձակը, դրամատուրգիան, շրջանցել է ազգային գրականության մեջ եղած այն ընդհանուրը, որը հատուկ է գրական բոլոր երկերին: Ուստի Արփիարյանի մոտ Մուրացանի ստեղծագործությունների գնահատականը ստացվել է միակողմանի: Մուրացանագիտության ընթացքի մեջ առանձնապես կարևոր տեղ է գրավում ականավոր գրականագետ Արսեն Տերտերյանի գնահատականը:

Նա նկատել է, որ Մուրացանը նախքան որևէ երկ գրելը գերազանցորեն ուսումնասիրել է իր նյութը. նա իրականությունը հետազոտել է պատմական վեպ գրողի պես... Այդ բոլոր հատկություններով՝ Մուրացանը, հարկավ, չի դառել ռեալիստ, քանի որ նա երբեք չի տվել «կյանքը ինչպես որ է», այլ այն խմբագրել է իր կանխակալ հայացքների ոգով. նա վերստեղծել է իր դիտած իրականությունը սեփական իդեալների համաձայն:

Պետք է նշել, որ Մուրացանի գեղարվեստական երկերում գրողի իդեալը և իրականությունը երբեք հաշտության եզրեր չեն գտել: Ահա թե ինչու՝ նրա ամբողջ ստեղծագործությունը պարզապես մի բանավեճ է: Նա ստեղծել է հերոսներ, որոնք մշտապես մտավոր ու հոգեկան լարման մեջ են: Արժե այստեղ ընդգծել Ա. Տերտերյանի դիտարկումը դեռևս 1913թ.: Նա գրել է.

«Մուրացանի անձնուրաց հերոսները ներդաշնակ, հարմոնիկ հոգեկան աշխարհ ունին: Նրանց մեջ հավասարապես զարգացած են կամքը, զգացմունքը և միտքը: Մարդ զարմանում է, երբ լսում է նրանց խոսքերն ու վեճը. ի՞նչ խելք, ի՞նչ մտքի ճկունություն և խորաթափանց ներքնատեսություն: Մուրացանի սիրած հերոսները երկաթե լոզիկա ունին, որոնք ոչ միայն զգացմունքների ծով են, այլև

մտքերի: Եվ վա՛յ նրանց, ովքեր կընկնեն այս հերոսների ջախջախիչ քննադատության հարվածների տակ»: (1)

Մուրացանագիտության զարգացման գործում քիչ ջանքեր չի գործադրել հայտնի հայագետ Լեոն: Թեկուզ նա որևէ քաղաքական կուսակցության անդամ չի եղել, սակայն իր քաղաքական դավանանքով կանգնած է եղել մշակականների, ասել է, թե՛ հայկական բուրժուական լիբերալիզմի դիրքերում: Հենց իր այս դիրքերից էլ նա գնահատում է ոչ միայն Մուրացանին, այլև մյուս գրողներին: Նա եկել է մի եզրակացության, որ հայ գրականության միակ իշխող թեման պետք է լինի ազգային ազատագրական պայքարը: Կառչելով այս գաղափարին՝ նա նույնիսկ 20-րդ դարի սկզբին պաշտպանում էր այդ սկզբունքը, չնկատելով, որ ինքը հետ է մնում կյանքի նոր պահանջներից: Ահա, թե ինչու նա ամբողջության մեջ չէր կարող ճիշտ արժևորել ոչ միայն Մուրացանի, այլև Հ. Թումանյանի, Վ. Տերյանի երկերը:

Պատահական չէ, որ Վ. Տերյանը իր դժգոհությունն է հայտնել Լեոնի գրական ընկալումների վերաբերյալ:

Սովետական 70 տարիների ընթացքում Մուրացանի երկերը ուսումնասիրության առարկա դարձան հանրակրթական դպրոցներում և բուհերում:

Հայտնի են Ա. Տերտերյանի «Հայ կլասիկներ», Վ. Պարտիզունու «Մուրացանի կյանքը և ստեղծագործությունը» աշխատությունները: Հանրակրթական դպրոցի դասագրքերում հանդես են եկել Մ.Մկրյանը, Հր. Թամրազյանը: Ծանոթանալով նրանց դիտարկումներին ու գնահատականներին, զգում ես գռեհիկ հասարակաբանության ազդեցությունը անմահ գրողի հավերժախոս երկերի արժևորման վրա:

Ելնելով գրականության վերաբերյալ լեհինյան գաղափարաբանությունից, մեր այդ անվանի գրականագետները քննադատում են Մուրացանին, թե նա իբր չի տեսել կապիտալիստական հասարակական կացութաձևի նեխվածությունը, ուստի շրջանցել է բանվոր դասակարգի առաջատար ուժը սոցիալական արդարության համար մղվող պայքարում:

Անցյալի գրական ժառանգությունը գնահատելու հիմնական գործոնների մասին ժամանակին իր ուսանելի խորհուրդն է տվել Վ. Ի. Բելինսկին: Նա գրել է. «Բացառապես գեղագիտական տեսակետը, ինչպես և ունեն մի միակողմանիություն, միշտ էլ կեղծ հետևությունների է հանգեցնում, և այդ պատճառով, գրականության մասին դատելիս, բացի գեղագիտական տեսակետից, պետք է նաև պատմական տեսակետ»:(2)

Դժվար չէ նկատել հանճարեղ գիտականի կարծիքը՝ պատմականության վերաբերյալ: Այս խորհուրդի շրջանցումն էր, որ դուռ էր բացում գռեհիկ հասարակաբանության առջև:

Բերենք մի հատված անվանի գրականագետ Հր. Թամրազյանի վերլուծական խոսքից. «Մուրացանը 19-րդ դարի վերջի գյուղական կյանքի մշանավոր պատկերահաններից է: Նա ցավով նկատում էր, որ կապիտալիզմի պայմաններում գյուղը քայքայվում է: Ազգության հիմքը համարելով՝ գյուղացիությունը՝ գրողը երազում էր կանգնեցնել կապիտալիզմի մուտքը դեպի գյուղ և գավառ: Պատմական առումով սա միամիտ տեսակետ էր, մոլորություն: Մուրացանը չէր ըմբռնում հասարակության զարգացման օրինաչափ ընթացքը, չէր տեսնում, որ ազգությունը տնտեսապես, հոգեբանությամբ, լեզվով ու մշակույթով առավելապես կազմակերպվում էր կապիտալիզմի շրջանում: Բայց նա շատ լավ էր տեսնում հայկական գյուղի սոցիալական թշվառությունը, Ժողովրդի ճորտական կախումը չինովմիկներից, վաշխառուներից ու ցեցերից:

Այստեղից էլ սկիզբ են առնում նրա աշխարհայացքի հակասությունները: Մի կողմից գրողն առաջ է քաշում կապիտալիզմի առաջընթացը կանգնեցնելու և

գյուղը նրա հարվածներից փրկելու, այսինքն՝ ազգության հիմքը պահպանելու ռոմանտիկական ծրագրեր, մյուս կողմից դրսևորում է աստելություն կապիտալիզմի նկատմամբ և սեր դեպի ժողովուրդը: Մուրացանը խոր ցավով պատկերել է ժողովրդի ծանր վիճակը, սոցիալական ողբերգությունը, գյուղի բարոյական աղետները, հանդես գալով որպես զգաստ ռեալիստ: Բայց դրա հետ միասին, որպես ռոմանտիկ միամտորեն կարծում էր, թե ժողովրդին կարող են փրկել միայն անձնագոհ ու կրթված անհատները, եթե անձնվիրաբար լուսավորություն տարածեն գյուղում, գիտելիքներով օգնեն հարստահարվող գյուղացուն»: (3)

Գրականագետի նման դիտարկումն ու զնահատականը բխում է գեղարվեստական գրականության վերաբերյալ դասակարգայնության ու կուսակցականության լենինյան սգբնունքներից: Ոչ միայն այդ: Սոռանալով, որ անցյալի նշանակալից երևույթները, իրադարձությունները, անհատականությունների գործունեությունը պետք է զնահատել պատմականորեն, ընդհակառակը, գրականության կուսակցականության գաղափարը դարձրել են անցյալը զնահատելու ուսմունք ու լուսարծակ: Ահա, հենց այս գաղափարաբանության հրամայականով դիտարկել ու զնահատվել են հայ հզոր դասական Մուրացանի գրական ամբողջ ժառանգությունը, պարտադրելով, որ նա մտածեր այնպես, ինչպես մարքսիստ լենինյանները:

Ոչ միայն հայ, այլև համաշխարհային հռչակավոր դասական գրողներն իրենց քաղաքական, հասարակական, ազգային, մշակութային մտորումներն ու ակնկալիքներն արտահայտել են պատկերավոր խոսքի միջոցով՝ տարբերվելով հասարակական գիտակցության ձևերի երևելի ներկայացուցիչներից, հստակ գիտակցելով, որ վերջապես, հասարակական գիտակցության բոլոր ձևերի վերջնական նպատակը աշխարհի ճանաչումն ու աշխատավորական լայն զանգվածների սոցիալական վիճակի բարելավումն ու մարդկային հավասար իրավունքների ստեղծումն ու փայփայումն է: Մի կողմ թողնելով ականավոր դասականների երկերի ենթաբնագրային առաջադիմական, մարդասիրական արժարժանները սովետական գրականագետները սխալ եզրակացություններով են զնահատել մեծ արվեստագետների աշխարհայացքը, ստեղծագործական մեթոդը և գրական ժառանգությունը: Այդպես են վարվել աշխարհահռչակ Դոստոևսկու, Լև Տոլստոյի և այլ մեծությունների հետ, այդ նույն են կրկնել Հայաստանում Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Մուրացանի գրական ժառանգության վերաբերյալ:

Մեկ դարից ավելի է, ինչ հայ գրականության երկնականարում փայլում է Մուրացան-գերաստղը, հայ ժողովրդի հոգևոր աշխարհի ճանփաներում ցանցելով ապրեցնող ու մշտատև գաղափարներ: Կյանքն ընթանում է առաջ, աշխարհում, նաև Հայաստանում, հասարակական կացութաձևերը փոփոխվում են անընդմեջ, մի տեղ կատարելագործվում են, մի ուրիշ տեղ դոփում տեղում, նույնիսկ վերադառնում միջնադար, սակայն կյանքի օրենքները, մարդկային սրտերի տրոփը, երազանքը երբեք չեն փոխվում: Մարդը դիմում է իր հայրենի հողին՝ իրեն սնուցող մորը, նրա հետ առնչվում և՛ ապրուստի միջոցների հայթաթումը, և՛ գալիք սերունդների բարգավաճ ապրուստը, որոնց ճանապարհին, առաջին հերթին, հենց մարդու կատարյալ դառնալու հիմնախնդիրն է, աստծուն նմանվելու ու հասնելու ծարավը, որի արտահայտիչներից մեկը հայ պոեզիայի հսկան է, տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետ Գրիգոր Նարեկացին: Միջնադարից մինչև 21-րդ դար հասարակական կացութաձևերը փոփոխվել ու շարունակում են ձևափոխվել, միևնույն է, դասականների առաջադրած մարդասիրական, աստվածահաճ գաղափարները՝ արժարժաված գեղարվեստական կերպարների միջոցով, չեն խունա-

նում, սերունդների համար ծառայում են որպես դաս ու խորհուրդ: Այս դիտակետից էլ հենց պետք է գնահատել նաև Մուրացանի գրական ժառանգությունը: Այս ուղղությամբ ուսանելի երևույթ է ակադեմիկոս, արժանահիշատակ Սերգեյ Սարինյանի մուրացանագիտությունը:

Ճշմարտությունը պահանջում է նշել նրա մոտեցումներում եղած գռեհիկ հասարակայնությունության առկայությունը մի քանի տարի շարունակ, սակայն կյանքի վերջին տարիներին, ասել է թե անկախության շրջանի գրական մտորումներում նա կրկին ու կրկին անդրադառնում էր Մուրացանի կյանքին ու գրական ժառանգությանը և իր մտքի լուսարձակով վերագնահատում անմահ գեղագետի և՛ երկերը, և՛ նրա հայացքները՝ նրա աշխարհայացքի ստեղծագործական մեթոդի գուճահեռներով:

Այսպես, նա ընգծում է, որ Մուրացանի խառնվածքը շատ կողմերով է պայմանավորվել նրա արվեստի ռոմանտիկական սկզբունքով: Սարինյանն իր խոսքը համեմուն է Մեծն Իսահակյանի հետևյալ դիտարկումով. «Մուրացանը իր տանջված, տխուր կյանքում մի մխիթարություն ունի, իր գրադարանը, ուր մոռանում է նա իր մենակությունն ու տխրությունը և ապրում իր սիրած հերոսների հետ, իր երագների, տենչերի, իր պաշտած գաղափարների աշխարհում»: (4)

Մուրացանի գեղարվեստական երկերը գնահատելիս, բազմալաստակ գրականագետը նախ ներկայացնում է նրա ապրած ժամանակաշրջանը, նշում դարաշրջանի կարևոր սոցիալական, քաղաքական, հասարակական, ազգային հիմնախնդիրների խաչներուկը և այդ համայնապատկերի վրա բնութագրում նրա բազմաժանր երկերը: Սարինյանն էջ առ էջ, լուրջ գիտնականի հմտությամբ ու ներքնատեսությամբ քննարկում ու արժևորում է Մուրացանի երկերը՝ հայ գյուղի, եկեղեցու, կենցաղի, պատմության, գալիքի, ակնկալիքների, ազգային միասնության, ճակատագրի, ժողովրդի բարոյա-հոգեբանական դրսևորումների, նրա առողջ հիմքերի և այլ կարևորագույն գործոնների մասին: Գրականագետն ընդհանրացնում է. «Այնտեղ, ուր վերջանում է մռայլ իրականությունը, երկի սկիզբ է առնում իդեալական աշխարհը, և գեղագետ Մուրացանը գնաց գտնելու այդ աշխարհի համակրելի հերոսներին»: (5)

Այդ հերոսների թիվը շատ-շատ են, որոնք ներկայացնում են հասարակական տարբեր խավերը: Այստեղ է, որ ընդգծվում է Մուրացանի պատմա-փիլիսոփայությունը, որի գնահատականը ևս մատնանշում է Սարինյանը, բերելով հենց Մուրացանի ստեղծած օրինակելի կերպարի՝ Գևորգ Մարզպետունու պատգամը. «Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է. զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ... սիրով, միությանբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ուժը: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքներ պիտի խնամե, ինչպես մի հոգատար պարտիզպան, որ ծառի ճյուղերը զորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն երևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը: Ինչպես որ չի կարող ապրել այն տունկը, որ արմատները չորացած են կամ որդնակեր, այնպես և կանգուն չի մնա այն ազգը, որի ընտանիքներում տիրում է ապականություն, որոնցից հլաժածական է սերը, միությունը, առաքինությունը, և, նամանավանդ, աստծո երկյուղը»: (6)

Ահա, այստեղ է, որ վերջին հաշվով դրսևորում է գեղագետ Մուրացանի աշխարհայացքի, ստեղծագործական մեթոդի լուսառատ արդյունք հանդիսացող մարդու կենսափիլիսոփայությունը՝ ուղղված գալիք սերունդներին:

Մուրացանագիտությունը որպես պատմական երևույթ զարգանում է՝ արտահայտելով նոր սերունդների աշխարհընկալման հրամայականը:

Այս առումով ուշագրավ երևույթ է տաղանդավոր բանաստեղծ, գրականագետ Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պորբլեմը» աշխատությունը:

Հնտորեն քննարկելով Մուրացանի պատմափիլիսոփայական աշխարհայեցողությունը. նա գալիս է հետևյալ եզրակացության. «...Որո՞նք են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Դոստոևսկուն և Մուրացանին՝ որպես արվեստագետներ ու անհատներ: Առաջին հերթին, նրանց մարդկային ծայրահեղ զգացմունքայնությունն ու դառն ապրումների էկզալտացիան»: (7)

Այս դիտարկումից անմիջապես հետո Վ. Հակոբյանը համոզիչ փաստարկումներով բնութագրում է ականավոր գրողների թեմատիկ նախասիրություններն ու զեղարվեստական մեթոդները և ընդգծում. «Իսիստ տարբեր են ելակետերն ու մոտեցումները. Դոստոևսկու թեման ժամանակի իրադարձություններն են ու կյանքի սոցիալական երևույթները՝ ռեալիստական թանձր գույների մեջ, իսկ Մուրացանը զերադասում է արդիական հարցերին անդրադառնալ անցյալի զեղարվեստական վերարտադրումների միջոցով՝ մարմնավորելով ռոմանտիզմի ամենաբնութագրական գծերը»: (8)

Գրականագիտական այս լուրջ դիտարկումից հետո Վ. Հակոբյանն ընդգծում է, որ թեմատիկ նախասիրությունները չեն խանգարել, որպեսզի Դոստոևսկին պատմական անցքերին տեղ տա նաև իր պատկերակառույցներում, ինչպես և Մուրացանը սևեռուն ձևերով կանգ առնի ապրած ժամանակի առանձին հիմնախնդիրների շուրջ:

Բնականորեն նման դիտարկումը գրականագետին պետք է տանի դեպի գրական կերպարների կերտման այն մեթոդներն ու միջոցները, որոնց զեղարվեստական ուրույն կիրառումների արդյունքում գործող անձինք հանդես են գալիս հոգեկան ապրման ամենաբարձր կիզակետում, բացառիկ էքստրեմալ պայմաններում, հզորագույն կրքերի բախումների մեջ: Այս ճշմարիտ նկատառումից անմիջապես Հակոբյանն եզրակացնում է. «Այս պարագայում արդեն ռոմանտիզմը մերձենում է ռեալիզմի սահմաններին, ռեալիզմը՝ ռոմանտիզմի»: (9)

Վ. Հակոբյանը չէր կարող չանդրադառնալ Մուրացանի հերոսների կրքերի բախմանը՝ առանձնապես «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում: Նա մատնանշում է Աշոտ Երկաթի և Ասպրամի սիրո պոռթկումը իրավիճակների լարման գագաթնային կետերում, Սահականույշի ներքին դրաման, Սևադայի և Աշոտ Երկաթի բախումը Սևադայի և նրա որդու կուրացումը՝ Աշոտ Երկաթի կողմից, Յլիկ Ամրամի տառապանքը...

Ո՞րն է Մուրացանի հաջողության գրավականը կերպարների կերտման ընթացքի մեջ: Վ. Հակոբյանը հաջողության գաղտնիքը տեսնում է հերոսների հոգեբանության ու կերպարների զեղարվեստական զարգացման ընթացքի մեջ, որոնց տիրապետում էր Մուրացանը: Եվ նկարագրվող իրականությունն ինչքան ճշմարտացի, այնքան համոզիչ ու առինքնող է գրողի խոսքը: Պատմականի արդիական հնչողության փաստի ընդգծումով Վ. Հակոբյանը հաստատում է. «Հենց այս հորիզոնականի վրա էլ բազմապատկվում է «Գևորգ Մարզպետունու» ոչ միայն պատմական, այլև արդիական արժեքը, ժամանակակից հնչողություն ստանում այսօր, երբ գրական հերոսների մեջ (և ոչ միայն) զեղագիտական իդեալի կորուստը գալիքի համար տագնապներ է արձանագրում»: (10)

Գրականագետը չի մոռանում բնության նկարագրությունների կարևորությունը գրական կերպարի հոգեբանական նրբերանգների բացահայտման ու կոլորիտ ստեղծելու առումով: Մատնանշում է Մուրացանի ստեղծագործության պատկերային համակարգը: Ասել է, թե՝ նա կրկին ու կրկին խոշոր տեղ է հատկացնում

գրողի պատկերավոր մտածողությամբ: «Բնությունը,- գրում է նա,- մուրացանյան արվեստում ներկայանում է աստվածահայտնության գաղափարի ու առաքելության մեջ՝ շաղախված անթաքույց մարդասիրությամբ»: (11)

Վ. Հակոբյանը հետաքրքիր բացահայտումներ է կատարում նաև Դոստոևսկու և Մուրացանի անհատական խառնվածքների աշխարհը ներկայացնելիս: Այս կապակցությամբ նա բերում է Դոստոևսկու և Մուրացանի ստեղծած կերպարների պատկերասրահը, ուր առաջնակարգ տեղ է հատկացված հավատին: Նա նշում է. «Գեղագետներին, բոլոր դարերում էլ, մշտապես հուզել է մարմնի և հոգու «պրորբլենը», խնդիր, որ համաշխարհային իրականության մեջ, սկսած հին աշխարհի մեծ մտածողներից մինչև մեր ժամանակի իմաստասերները, մշտապես վիճահարույց մտքերի տեղիք է տվել»: (12)

Ընդգծելով այս կարևոր փաստը Հակոբյանը նշում է, որ մարմնի և հոգու «առեղծվածային» խնդիրն ինքնատիպ լուծում է տվել Մուրացանն իր պատմավեպում: Այսպես, տանջվում են Ասպրամի, Աշոտ Երկաթի, Սահականուշի, Սևադայի, Ցլիկ Ամրամի մարմինն ու հոգին: Ու պատահական չէ, որ Մուրացանի մի շարք հերոսների անընդհատ հետևում է փրկչի հայտնության առասպելը: Այստեղ գրականագետը բերում է Գևորգ Մարգարետունու խոստովանությունը. «Ես հույս դրի Աստծո և իմ կամքի վրա, և, ինչպես գիտենք, հաղթեցի ամեն դժվարություն, ցույց տվի աշխարհին, թե ինչ կարող է ամեն մի մարդը, երբ նրան ոգևորում է զգացմունքներից ազնվագույնը՝ հայրենիքի սերը: Ձեզանից ամեն մի՛նը թող զինվի այն հավատով, որ ունեի ես դեպի հայրենյաց ապագան, այն սիրով, որ տածում էի դեպի իմ եղբայրները և այն հույսով, որ դրել էի Աստծո վրա, և կտեսնենք, որ անկարելին կարելի կդառնա, և արգելքները իրանք իրենց կվերանան, և վտանգներն անհետ կկորչեն: Ամենից ավելի սիրեցեք միությունը, որովհետև դա այն ուժն է, որ լեռներ է պատառում, ամբարտակներ է կործանում, գետերի ընթացք է կասեցնում: Սովորեցեք զոհել այդ միությանը ամենը՝ ինչ-որ ունիք աշխարհում թանկագին. և նա կբերի ձեզ և ձեր որդոց այն երջանկությունը, որին շատերն են որոնում, բայց շատ քչերն են ժառանգում»: (13)

Դժվար չէ նկատել Մուրացանի կենսափիլիսոփայության հավերժական հոլովումը, նրա գործնառական նշանակությունը, որն էլ հենց գտնվում է գրականագետի ուշադրության կենտրոնում: Եվ ոչ միայն այդ: Վ. Հակոբյանը չի շրջանցում ընտանիքի մուրացանյան փիլիսոփայությունը, մատնանշելով անմահ գրողի «էթնիկական պատմա-փիլիսոփայությունը», ըստ որի ազգի «բարոյական հարստության» հիմքը ընտանիքն է:

Ճիշտ է, մուրացանագիտությունը նկատել է մեծ գրողի ստեղծագործության գաղափարաբանական հենքում տեղ գտած առաքելությունը, սակայն հետաքրքիրն այն է, որ Վ. Հակոբյանն ավելի է կենտրոնանում գրողի կողմից ընդգծված այդ գաղափարաբանությանը: «Մեծ մտածողին մշտապես հուզել է ժողովրդի ազատության և լուսավորության գաղափարը,- գրում է Հակոբյանը,- մի խնդիր, որ ամբողջ սրությամբ դրված էր նաև մեր «ոսկե միջնադարի» թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական բնույթի գործերի հիմքում»: (14)

Դրանով էլ հենց բացատրվում է այն ճիշտ դիտարկումը, որ նկատում է գրականագետը և հաստատում այն ճշմարտությունը, որ Մուրացանի հերոսները գրեթե մշտապես ասպարեզ են գալիս իրենց աստվածային առաքելության մեջ՝ ծառայելու ժողովրդին:

Դոստոևսկու աշխարհայեցողությունը համեմատելով Մուրացանի կենսափիլիսոփայության հետ, ընդգծելով ազգային գրողի երկերի համամարդկային նշանակությունը, Վ. Հակոբյանը կատարում է ընդունելի հետևյալ ընդհանրացումը. «Գեղագետ Մուրացանի աշխարհայացքը, ինչ խոսք, առաջին հերթին արմատներով գայի, և մեր ժողովրդական բառ ու բանի, մեր պատմության հարուստ ակունքներից: Ասենք, հավաքական և վշտից զորեղ մարդու իդեալը: Որքան էլ մենք գրողի մտածողական համակարգում փորձենք եվրոպական մտքի ու տրամաբանության մերձավոր եզրեր գտնել, այնուամենայնիվ, անժխտելի է, որ մեր ժողովուրդը, որպես ամենահինագույն արվեստ ու մշակույթ ունեցողներից մեկն աշխարհում, դարերի ընթացքում իր մեջ խտացրել է այնպիսի հատկանշական

գծեր, որոնք, ի վերջո, հինք են հանդիսացել «Սասունցի Դավիթ» դյուցազներգության համար, իսկ դա բնականաբար, աշխարհայեցողական ու փիլիսոփայական իր բոլոր առանձնահատկություններով չէր կարող չարտացոլվել այնպիսի մի գրողի երկում, ինչպիսին Մուրացանն է»։ (15)

Վ. Հակոբյանի Մուրացանին նվիրած այս բովանդակալից ու բազմերանգ աշխատության մեջ կարևոր տեղ են գրավում նաև մարդկային խղճի, հոգու, սիրո, ընտանիքի, հավատարմության և այլ կենսահաստատ հասկացություններ, որոնք գտնում են համոզիչ պատասխաններ։

Գրականագետը կարևորել է նաև Մուրացանի ծանոթությունը համաշխարհային, առանձնապես ռուս դասական գրականությանը։

Վ. Հակոբյանն անդրադառնալով Մուրացանի գրական հայացքներին, ճշմարիտ ընդգծումներով հաստատում է հայ գրողի խորքային ծանոթությունը ռուս հանճարեղ գրաքննադատ Բելինսկու ուսմունքին։ Պատահական չէ Մուրացանի հիացմունքը Բելինսկու հանդեպ։ Նա Բելինսկուն համարել է «երևելի կրիտիկոս», «ռուսաց գրականության փայլուն աստղերից մեկը»։

Իր հետաքրքիր աշխատության վերջին մասում Վ. Հակոբյանը բնականաբար զգուշանում և ընթերցողին զգուշացնում է՝ հանկարծ չկարծեն, թե Մուրացանին ներկայացնելով Դոստոևսկու ստեղծագործական աշխարհի զուգահեռներում, կարող է հանգել հայ գրողի ինքնատիպության անտեսմանը։ Հենց այս մտավախությունը ցրելու միտումով, Հակոբյանը նշում է. «Ճանփաբաժանը, ինչպես ասում են, սկսվում է այս կետից, ու մենք առնչվում ենք գեղարվեստական մտքի ու խոսքի միանգամայն տարբեր երևույթների հետ։ Մանավանդ՝ մեծերը մեծ են լինում ոչ թե իրենց նմանություններով ու ընդհանրություններով, որ բնական են, այլ ավելի շատ՝ էական տարբերություններով։ (16)

Ճիշտ և ընդունելի ընդհանրացում։

Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պրոբլեմը» ուսումնասիրությունն ուշագրավ երևույթ է մուրացանագիտության մերօրյա հոլովույթում, որը գալիս է ընդարձակելու մեծ գրողի ստեղծագործության զնահատման ուղիները՝ գերծ գռեհիկ հասարակաբանության անտեղի և անիմաստ դատողություններից։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տերտերյան, Մուրացանը որպես մտածող և գեղագետ, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 45:
2. Վ. Գ. Բելինսկի, Երկեր 13 հատորով, ԽՍՀՄ ԳԱ հրատ., 1993-59, հ.5, էջ 651-652:
3. Հր. Թամրազյան, Հայ գրականություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար, «Լույս» հրատ., 1996թ., էջ 45
4. Հայ մոր գրականության պատմություն, 5 հատորով, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 126-127:
5. Նույն տեղում, էջ 133:
6. Նույն տեղում, էջ 181-182:
7. «Նորահայտ էջեր վիպասանի կյանքից». «Դիզակ պլուս» հրատ., 2010թ., էջ 38:
8. Նույն տեղում, էջ 38-39:
9. Նույն տեղում, էջ 40:
10. Նույն տեղում, էջ 43:
11. Նույն տեղում, էջ 44:
12. Նույն տեղում, էջ 48:
13. Նույն տեղում, էջ 52:
14. Նույն տեղում, էջ 53:
15. Նույն տեղում, էջ 60:
16. Նույն տեղում, էջ 68:

**ԱՄՓՈՓՈՒՄ
ՍՈՒՐԱՑԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ
ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆ**

Սույն հոդվածում ներկայացվում է մուրացանագիտության զարգացման ընթացքը՝ սկսած 19-րդ դարի վերջից մինչև մեր օրերը:

Նշվում է Ա. Արփիարյանի վաստակն այդ ուղղությամբ, ընդգծվում Ա. Տերտերյանի գրականագիտական լուրջ դիտարկումներն ու գնահատականը մեծ գրողի ստեղծագործության մասին: Նշվում է խորհրդային տարիներին գեղեիկ հասարակաբանության ազդեցությունն անմահ դասականի աշխարհայացքի, ստեղծագործական մեթոդի գնահատման վրա: Ուշադրություն է դարձվում ակադեմիկոս Ս. Սարինյանի «Մուրացան» ուսումնասիրությանը, այն համարվում մուրացանագիտության մեջ լուրջ ներդրում:

Հոդվածի հեղինակն անդրադառնում է բանաստեղծ-գրականագետ Վ. Հակոբյանի «Մուրացան և Դոստոևսկի. ներքին մարդու պորբլեմը» հետազոտությանը, այն գնահատելով որպես նոր խոսք մերօրյա մուրացանագիտության մեջ:

**РЕЗЮМЕ
ПРОЦЕСС РАЗВИТИЯ МУРАЦАНОВЕДЕНИЯ**

СОКРАТ ХАНЯН

Ключевые слова: *Мурацан, мурацановедение, армянская печать, романтизм, реализм, мировоззрение, вулгарный социологизм, А. Тертерян, С. Саринян, В. Акопян, современное развитие мурацановедения.*

В данной статье представлен процесс развития мурацановедения с конца XIX века до наших дней. Отмечается заслуга А. Арпиаряна в этом деле, подчеркиваются серьезные литературоведческие наблюдения и оценки А. Тертеряном произведений великого писателя. Отмечается влияние вулгарного просторечия на оценку мировоззрения и творческого метода бессмертного классика в советские годы. Обращается внимание на исследование академика С. Сариняна "Мурацан", расценивая его как серьезный вклад в мурацановедение.

Автор статьи останавливается на исследовании поэта-литературоведа В. Акопяна "Мурацан и Достоевский: проблема внутреннего человека", характеризуюя этот труд как новое слово в современном мурацановедении.

**SUMMARY
THE PROCESS OF DEVELOPMENT OF MURATSAN STUDY**

SOKRAT KHANYAN

Key words: *Muratsan, Muratsan studies, Armenian printing, romanticism, realism, viewpoint, vulgar socialism, A. Terteryan, S. Sarinyan, V. Hakobyan, modern development of Muratsan studies.*

The given article represents the process of Muratsan studies development since the end of the XIX century up to now. It points out A. Arpiaryan's contribution to this work and underlines A. Terteryan's serious literary review and assessment on the works of the great writer. It also marks the influence of vulgar socialism on the assessment of the immortal classic's viewpoint and creative method during the Soviet period. The article draws the reader's attention to "Muratsan", the research by academician S. Sarinyan considering it to be of great value for Muratsan studies.

The author of the article highly appreciates the research "Muratsan and Dostoevskiy: A Problem of The Inner Man" by poet and literary man V. Hakobyan regarding it as a novelty in the modern Muratsan studies.

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

**ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԻՆՔՆԱԿԵՐՊԱՐԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ***

Բանալի բառեր՝ պայմանականություններ, ինքնահատուկ, խորաշերտեր, գաղտնագրեր, արտածումներ, ներքնաշխարհ, կանխադրույթ, նախանշված:

Բանաստեղծների անկրկնելիությունը պայմանավորվում է նաև նրանց ապրած ժամանակների անկրկնելիությամբ: Վարդան Չակոբյանի ապրած ժամանակները աննախադեպ չեն իրենց պատմական անցուդարձերի ներպահած բուն բովանդակությամբ, բայց առանձնահատուկ են ոգեղենությամբ ու դրանից սկիզբ առնող տարաբնույթ բռնկումներով:

Խռովքոտ ժամանակների այդ բռնկումները, իրենց մեջ առած ազգային հոգեցնցումների, քաղաքական կյանքի անվերջանալի թվացող վերուվարումների անհանգստություններն ու ցավերը, ինչպես և արյամբ վճարվող հաղթանակների պարզևած զգացողությունները, թելադրում են համազգային կենսակերպի ընկալման նոր մշակույթ, մանավանդ որ «մենք լավ գիտենք միասին զոհվելը, // միասին ապրելը դեռ չենք սովորել»*:

Ժամանակերն են ծնում իրենց կերտող-կերպարավորողներին՝ նրանցից վերուստ տրված առաքելությամբ առանձնացնելով շնորհյալ տաղանդավորներին, որոնց շնորհիվ և որոնց միջոցով էլ հնարավորություն են ստանում չորուցամաք ժամանակացույց-պատմագրքերից դուրս մի ուրիշ կյանքով, ուրիշ չափումներով գոյավորվելու և գնահատվելու:

Անկասելի ժամանակավագքի մեջ օր օրի «փոքրացող» աշխարհը դառնում է աննախադեպ հասանելի, և աշխարհաճանաչողության գլխապտույտ արագընթացի մեջ փոխվում են ժամանակի և տարածության ոչ միայն հասարակական, այլև անհատական ընկալումներն ու չափումները: Ավելի զգայուն են դառնում հատկապես արվեստի մարդիկ, երևի թե պոետները՝ առավելապես («Ես կորցրել եմ ժամանակի // չափումները և հայտնվել մի // վայրում, որը գտնվում է ամեն // մի տարածությունից դուրս» («Այլընտրանքային ժամանակ ու տարածություն»), «Ինձ միշտ արևային ազդակներ է հղում // մի ծաղիկ, որի հասցեն չգիտեմ. սա // տիեզերական // իմ հաղորդությունն է: Եվ՝ ժամանակը» («Ինքնահարցում»): Չե-տաքրքիր է և **տարածության** բանաստեղծական ընկալումը. «Չեռուն վայր է, որ մշտապես ստեղծում ենք ինքներս, // այնտեղ հասնելուց կամ չհասնելուց առաջ, // մեզնից, անշուշտ, ինչ-որ մաս կա մեր հեռվի մեջ» («Դիտումներ»):

Իրականության գեղարվեստական իմաստավորումը, իրերի և երևույթների գաղափարա-զգացական գնահատումները յուրաքանչյուր ստեղծագործող կա-

*Հոդվածն ընդունվել է 20.01.2018թ.:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ պրոֆեսոր Հ. Մուսայեյանը:

տարում է ինքնակերպ: Իրենց ստեղծած իրական-անիրական աշխարհի համար բանաստեղծներն ավելի շատ են օգտվում տարածաժամանակային այլընտրանքային չափումներ սահմանելու հնարավորություններից, քանի որ անպարփակելի են նրանց արարման միջոցի՝ բանաստեղծական խոսքի հնարավորությունները. մեծապես նրանց է տրված «յուրաքանչյուր բառի տակ թաքնված միտքը, հոգին խոսք դարձնելու» կարողությունը (քաղված է Վահրամ Փափազյանի խոսքից): (1) (Հետաքրքիր է բանաստեղծական խոսքի վերաբերյալ անցած դարի ֆրանսիացի բանաստեղծ, արվեստի տեսաբան և քննադատ Պոլ Վալերիի հայեցումը, թե այն խոսք է, որ «ներկայացնում է միայն բացակա կամ խորապես ու գաղտնաբար ապրված բաներ. արտասովոր խոսք, որ կարծես ստեղծվել է մեկ այլ անձի և ոչ թե ասողի կողմից ու հղվում է մեկ ուրիշին և ոչ թե լսողին: Մի խոսքով՝ դա լեզու է լեզվի մեջ»): (2)

Վարդան Հակոբյանի՝ իրերի և երևույթների բովանդակության մասին դատելու արտասովոր ունակությունների շնորհիվ նրա բանաստեղծական ժողովածուներում կենսավորվում է գեղագիտական մի աշխարհ, որտեղ, հընթաց ժամանակի ու տարածության բանաստեղծական կերպարավորման ու գնահատման, հանդիպում ենք ինքնակերպարավորման յուրատիպ դրսևորումների. իր իսկ խոսքով՝ քարտեզներին չի դիմում իր ճանապարհին, // ոչ էլ նշաններին երթևեկության, // բանաստեղծությունը դրանք // շարտել է մի կողմ՝ վաղուց, շա՛տ վաղուց: *Ինքը* // առաջնորդվում է հոգու // սլաքքներով (ընդգծումով դիմափոխությունը մերն է՝ Ջ.Ե.):

Գեղագիտության մեջ, գիտենք, կա նաև ձևի և բովանդակության շեղում հասկացությունը. երևույթը հաճախադեպ է հակոբյանական խոսքում: Մանրակրկիտ դիտարկումների դեպքում կարելի է առանձնացնել ձևի և բովանդակության շեղումներով ստեղծված գեղարվեստական պատկերների մեծաքանակ մի ամբողջություն՝ ինքնօրինակ, անկրկնելի: Իրենց օրինաչափ հատկությունները կորցրած այդ պատկերների արտառոցությամբ ստեղծվող բանաստեղծական իրականությունը, ի դեպ, ունի սադրիչ գրավչություն: Ստեղծվում են դրություններ, ընկալման վիճակներ, որոնցում խոսքերն անջատվում են բանաստեղծական տեքստերից, և պատկերների խորքում տեքստ փնտրող ընթերցողը հայտնվում է հեղինակի թելադրած արտասովոր խոսքի, բառ-պատկերի, պատկեր-ասելիքի իր չափումներն ու սահմանումներն ունեցող պոետական աշխարհում, որտեղ ոչ սովորական ընկալում-չափումներով է մատուցվում ոչ միայն գեղարվեստական տարածաժամանակը (քրոնոտոպը), այլև հիմնականում գեղագիտական համատեքստում են ընկալվում ասելիքն ու հուզագագացական ապրումները: Այդ աշխարհում «*Հորիզոնը սկիզբ է առնում մի հատիկ ծաղկից*», «*Հեռուն մտել է թիթեռի թևերը, // հեռուն գլխահան է արել թիթեռին, մինչդեռ մեկ օրվա, // նույնիսկ մեկ դարու ճանփա չէ հեռուն*», «*Եվ հասնել չկա՝ // որքան էլ գնաս, // իսկ ով «հասնում է», կասկածելի է, «նա ունի՞ հեռու*», «*Մայրամուտը սկսվում է այնտեղ, ուր վերջանում է հեռուն*», *իսկ «Իրիկունն իր շեմին // կանգնել-քարացել է», և... « Կյանքը ճեպագրույց է անհայտի հետ*»:

Թերևս դիտարկված առանձնահատկությունն է թելադրում նաև գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների՝ բանաստեղծի գերադասած ընտրանին: Բանաստեղծական ամենաաչքառու պատկերավորման միջոցները, որոնք հաճախադեպ են Վարդան Հակոբյանի պոետիայում, պարադոքսն ու առաջին հայացքից տարօրինակ թվացող, իմաստային նուրբ երանգներով խոսքն արտահայտիչ դարձնող արտահայտություններն են, որոնք երբեմն անցնում են ինքնահատուկ

անսպասելիության սահմաններից էլ այն կողմ («Ցավից ազատվելու միակ միջոցը ցավի // մեջ մշտապես ներկա լինելն է», «Ես ոչ մեկի մոտ անկեղծ չեմ այնքան, // որքան մենակության հետ», «Քարի // ծաղկունը, դա՛ ես եմ», «Իմ ընթացքը ճանապարհ է՝ // վերջակետից հետո», «Ճանապարհի հետ հանդիպում եմ միայն // այնտեղ, ուր հասնում եմ»...): Հակոբյանական խոսքին հատկապես առանձնահատուկ արտահայտչականություն են հաղորդում առատորեն գործածվող խտանութերը, ինքնատիպ ձևակերպումներով խոհ-մտածումները («Մարդը միշտ խլված է իրենից: Տխրությունը // մարդուն վերադարձնում է, // դարձնում է այնպիսին, ինչպիսին նա // ծնվել է մորից», «Ես սիրում եմ ժամանակի և տարածության հեռավորությունը, որ // ազնվացնում է ոգին, որ // սիրո մեջ հայտնաբերում է անգամ սեր, և, // ով գիտե, գուցե և մի կարևոր բան, որ մենք չգիտենք», «Ես այնքան հույսեր էի կապում վաղվա հետ, // մինչդեռ պարզվում է, որ // ժամանակի մեջ «վաղը» գոյություն չունի», «Հեռացող // յուրաքանչյուր վայրկյան իրենով է // սկսում հավերժությունը»...):

Պետք է ասել, որ բանաստեղծի աշխարհայացքային կանխադրույթը գոյավորող ազգային կողմնորոշչները, ներաշխարհային գունեքանգների առատությունն ու ինքնահայեցումների խորաթափանցությունը տարարտահայտումներով ընդգծվում են նրա թե՛ չափածո, թե՛ արձակ գործերում, հարկավ, առավելապես՝ չափածոյում, որտեղ դրանք ինքնատիպ պայմանականություններով առանձնակի կենսականություն են ձեռք բերում: Մեծ մտածող, պոեզիայի նրբաճաշակ գնահատող Գրիգոր Գուրգադյանը, ըստ որի առանց պոեզիայի մարդը չի կարող ապրել, գրում է. «Մարդու, իրական աշխարհում ապրող իրական մարդու ներքին էությունը մի հսկա պայմանականություն է, տեսակ-տեսակ պայմանականությունների մի ամբողջ աշխարհ: Մարդու վրա պայմանական լեզվի ազդեցությունը շատ է մեծ, այն չի կարող փոխարինվել ոչնչով, այդ պայմանական լեզուն, այդ արևտրակցիան, քողարկված առօրյա պրոզայով, մշտապես է նստած նրա ներսում...»: (3) Պոեզիան՝ պայմանականությունների այդ գունագեղ աշխարհը, ինքնահատուկ պայմանական լեզվով կարողանում է արտահայտել «այն ամենը, ինչը մարդկային է՝ ներքնաշխարհը, հոգեկան տվայտանք, տարուբերումներ, խնդություն, ուրախություն, այլևայլ տրամադրություններ». «պայմանական լեզվի ներքին պահանջը հատուկ է բոլորին, դա կենսաբանական պահանջ է, կապված չէ մարդու անհատական հատկությունների հետ...»: (4) Թերևս մեծամուն խոհագրողի՝ շեշտադրումով առանձնացրած այս հատկանիշն է պոեզիայի համար գերաշնորհ տեղ ապահովում արվեստների շարքում:

Նշենք, որ յուրատիպ ու հետաքրքրական է Վարդան Հակոբյանի ընտրած «պայմանականությունների լեզուն». այն, անշուշտ, պայմանավորված է նրա պոետական համակառույցով, որի գոյավորումը, անընդհատ որոնումներով ուղեկցվելով հանդերձ, վաղուց կայացած իրողություն է՝ իր յուրօրինակ ամբողջականությամբ («Իմ հեռուն // բացարձակորեն իմն է և ես իմ // ճանապարհին չեմ հանդիպում այլ // ճանապարհների»): Ավանդական միջավայրում կյանք առած այդ պոեզիան կարողացել է հատել ընդունված սովորականի սահմանագծերը («Գրելու ժամանակ գրիչս թղթի սահմաններից // դուրս է գալիս մեկ-մեկ, և ես // շարունակում եմ գրել անսահմանության մեջ՝ // փրկելով օդը վերահաս ճահճացումից» (**«Փրկելով օդը վերահաս ճահճացումից»**)). այն անընդհատ նոր ծիրեր է բացում իր համար՝ ընտրելով, ինչպես արդեն նշել ենք, պայմանականություններով խոսելու ինքնահատուկ լեզու: Այդ լեզվի պատկերային համակարգի առանձնահատ-

կությունները դիտարկելուց և դրանց նրբություններին հնարավորինս հասու դառնալուց հետո ես հասկանում պոեզիայի պոետական բանաձևումը, թե՛ «Աշխարհում, բանաստեղծությունից բացի, // ամեն ինչ բանաստեղծություն է. ահա թե // ինչ է պոեզիան»: (5) Պոեզիայի այս ինքնօրինակ սահմանումը, հարկավ, բխում է բանաստեղծի՝ աշխարհի մասին ունեցած գեղագիտական զարմանալի գունագեղ պատկերացումներից, խոհափիլիսոփայական ներհայեցումներից ու զգայական յուրատիպ ընկալումներից: Այդ աշխարհում ամենայն գոյը ներկայացնող գաղափարները արժեփոխումներով են, իրերի, երևույթների համադրում-զուգորդումները տարբեր կերպերով են: Այնտեղ «լեռան զագաթները հավքերի հետ // ճախրում են երկնքում», «թռչուններն իրենց կտուցին մի կտոր հեռու են բերում», «հավքերը անգամ ամպոտ օրվա մեջ արև են տեսնում», «հեռավորության ճերմակ վարագույրները // բռնկվում են խելագար բոցերով անհայտի»... և «ժամանակն ուտում է ինքն իր վայրկյանները»... Այսպես կարող ենք բազմաթիվ տողեր մեջբերել, և դրանք կլինեն բանաստեղծի տեսած աշխարհի պատկերը ներկայացնող վրձնահարվածների մի չնչին մասը միայն: Բանաստեղծին շրջապատի աշխարհը տրվում է շռայլորեն, և ոչ միայն նրա պոետական ելության առանձնատեսակից, այլև մարդ-կառույցից է կախված, թե նա ինչպես է ընկալում, ամրագրում իր գիտակցականում և վերապատկերում տեսած-զգացածը, և, որ ամենակարևորն է, ինչ վերաբերմունք ունի բառի նկատմամբ: Յետաքրքիր է Մալլարմեի՝ մի առիթով Դեգային ուղղված խոսքը, թե՛ «Գաղափարներից չեն սարքում բանաստեղծությունները, այլ՝ բառերից»:

Բանաստեղծի ստեղծած գեղագիտական աշխարհի շաղախը, հարկավ, բառն է՝ բառ-պատկերը: Վարդան Չակոբյանը հաճախ է բառը վերածում առեղծվածի: Ասես փորձության է ենթարկվում ընթերցողի զգայունակությունը, երբ մտահայեցողական ճանաչողության դաշտում հանդիպում է իր իսկ կողմից բազմիցս անկաշկանդ գործածված, երբեմն շատ սովորական դարձած բառի անսպասելի դիմադրությանը. բառը պարտադրում է իր մեջ տեսնել, փնտրել առժամանակյա գործառույթներից դուրս մեկ այլ գործառույթ ևս. այն նոր իմաստավորումով վերածվում է բանաստեղծի վերացական մտքի մարմնավորման միջոցի:

Իրերի, իրողությունների ու երևույթների այլատեսական-այլաբանական ընկալումները փոխում են բանաստեղծի՝ տարածության և ժամանակի չափման ընկալումները. դրանք էլ իրենց հերթին բերում են բանաստեղծական բառ ու խոսքի զարմանալի ձև ու կշռույթներ, և ինչպես Բրունո Շուլցն է ասում. «Ամեն անգամ, երբ գործնականության խստաշունչ հրամայականները ինչ-ինչ պատճառներով թուլանում են և ճնշումից ազատ խոսքը թողնում են ազատ, վերադարձնելով վաղեմի իրավունքները՝ նրան մեկեն համակում է ետդարձի տենչը, և բառը ձգտում է վերականգնել նախկին կապերը, վերադառնալ դեպ իմաստի լիությունը: Բառի այդ տենչն առ հարազատ օրրանը, նրա կարոտն առ վերադարձ, դեպի բառային նախահայրենիքը զգալի, տեսանելի-շոշափելիի չափ կայացած իրողություն է: Բանաստեղծը, որ չի ուզում՝ «բառը դառնա մահապատիժը մտքի», բառի բազմաթիվ բանաձևումներ ունի, բոլորն էլ ինքնատիպ: Այն, «որ վեհափառն է միակ և առաջնորդը համայն լռության», նրա պոեզիայում մեծարվում է ամենայն ակնածանքով, իմաստախոսություններով, խտամտքերով: Ահավասիկ. «Քո բառը քո մակույկն է,

որ երբեք // ափ չի հանելու՝ // եթե նրա մեջ դու չես», «...Համոզված եմ, ծննդավայրս // այն բառն է լինելու, որ // դառնալու է ինձ ափ հանող իմ միակ նավակը», «Բառը լույսի համար հասունացնում է // մութը», «Բառը փախուստ է այն ամենից, // ինչ մենք, ներեցեք, ուզում ենք ասել», «Յուրաքանչյուր բառ դիրք է, ոչ թե... ապաստան», և ի վերջո՝ «Բառը խնդրում են գրել այնպես, // որ իր գրվելն ինքը չիմանա, // չիմանա և իր ընթերցվելը // (թեպետ բառն ընթերցողին զգում է)»:

Մեջբերենք Բրունո Շուլցի՝ պոեզիայի մասին ասված խտանութից ևս մի հատված. «Պոեզիան ըմբռնում է կորուսյալ նշանակությունները, բառերը վերադարձնում է նախնական տեղը, համակցում է դրանք, ենթարկվելով ինձ իմաստին: Բանաստեղծի խոսքն ինչ-որ կերպ հիշում է իր ճշմարիտ էությունը, ծաղկում և զարգանում է առանց պարտադրանքի, իր իսկ օրենքներով, վերականգնում է վաղենի ամբողջությունը»: (7) Պակաս չէ իր բնորոշիչ խորիմաստությամբ և հաջորդող բանաձևումը նույն տեղում, թե՛ «փիլիսոփայությունը, ըստ էության, այլ բան չէ, քան բանասիրություն՝ խորը, ստեղծագործական ներթափանցում բառի մեջ»:

Իր ընթերցողին զգացող բառերն էլ հենց նրա առաջ բացում են պոետական էության այն տարածությունը, որտեղ ստեղծագործական ներթափանցումները հաճախ մատուցվում են անակնկալ, անսովոր ու արտառոց պատկերներով, հարակարծություններով ու տարամտություններով: Բանաստեղծ Վարդան Հակոբյանին «միշտ ձգում է անհնարինը», և նրա համար «հաճախ ընդունելի չէ այն, // ինչ ընդունելի է բոլորի համար»: Իրեն ձգող անհնարինը, խորապես ապրած հույզերը, զգացում-զգացմունքները բանաստեղծական տողերի են վերածվում արտասովոր խոսքով, որով և առանձնանում է նրա պոետական լեզուն:

Հայտնի է. լեզուն ստեղծագործության գեղագիտական աշխարհի գործնական արարումն է, իսկ հիմքն ու ոգին միջավայրն ու ժամանակն են, ուստի և այդ աշխարհը ամբողջականորեն ընկալելու և «լիակշիռ արժեքավորելու համար դարձնում միջավայրը» «անհրաժեշտ է կարդալ ոչ միայն բառերը, այլև ժամանակը, որ խոսում է այդ բառերի միջից»: (8)

Վարդան Հակոբյանի պոեզիայում միայն ժամանակը չէ, որ խոսում է բառերի միջից («Բառը տիեզերական ազդակն է ապագայի»), այլև բոլոր այն ուղիները, որոնք «ամեն առավոտ, // անհայտից իջնում են արևի հետ» (**«Ճախարանք»**): Ճանապարհն ու հեռուն՝ որպես տարածության կերպարավորման միջոցներ, բանաստեղծի կերտած գեղագիտական աշխարհում հաճախադեպ պայմանականություններից են («Ես հաճախ ավելի վաղ եմ «հասնում», քան // իմ ճանապարհը, որովհետև // սիրում եմ անճանապարհ քայլելը (**«Մութի մրուրը»**), «ճանապարհները // նմանակներ չեն ունենում, ծնված օրից // քայլում են, սակայն // նոր են հասկանում, որ մարդիկ միշտ կանգնած // են նույն տեղում, // և զնում գալիս են միայն ուղիները», «...յուրաքանչյուր խիզախ ուղևորով հեռուն նույնպես // նորից է սկսվում, ինչպես, ասենք, Արարատը սկսվում է... Նոյից» (**«Մութը խմելու ցանկություն»**), «Աչքերը սկսվում են հոգուց, հոգին՝ հեռուներից» (**«Նահանջող հորիզոններ»**):

Վարդան Հակոբյանի բանաստեղծական ժողովածուներում թե՛ ի բաց («Ձուլվածներին կխնդրեի՝ հրաժարվել ծաղիկներից նրանց // նրանց, ուլքեր // պսակներ դնելու պահին հատուկ նկարահանվում են // հուշարձանը դարձնելով ինչ-որ մի տարրն իրենց քարոզչության» (**«Բանաստեղծության փոխարեն»**)), թե՛ գեղարվեստական արտահայտչամիջոցների հմուտ գործածությամբ ու տարատեսակ հնարք-հնարանքներով խոսքի խորաշերտերում պահած-քողարկած ասելիքը

ծառայում է մարդու մեջ մարդկայինի արժևորմանը՝ ի հակակշիռ դարավոր կուտակումներով ձևավորված բարոյական արժեքների տարատեսակ խեղումների («...նորեխն իջել է մի ոտքի վրա պարող սատանայի քթին կապիկը ձեռքն է առել պիկասսոյի վրձինը և սենայի ափին նկարում է բոլորովին մերկ մի աղջկա...» (**«Վրձինով կապիկներ կամ ողղակի մուլյաժներ»**):

Նշյալ բանաստեղծությունը անմեծատառ, անկետադիր, առաջին ընթերցումից խառնափնթոր մուլյաժների շարք է, որը, սակայն, իր ներքին ընթացքի մեջ և՛ մեծատառերն է իրենց տեղերում դնում, և՛ առոգանելու ռիթմերը թելադրում. և ամեն մի *մուլյաժը* մի ամբողջական խոսք-բանաստեղծության շեշտակիրն է՝ եկած-տեղավորված իր ասելիքով: Ահավասիկ. «...հորիզոնի կանացի հրապույրները հուշում են // որ իշխանությունները հատուկ ջերմոցներում // դեմոկրատական սկզբունքներով աճեցնում են // արհեստավարժ «ընդդիմություններ» և խումբ-խումբ ցրում տիրությունով մեկ...»: Բաց է ասված. ասելիքային նորություն ասես չկա էլ, և պատկերավորումն է դարձնում բանաստեղծություն. բայց ահա ժամանակը կերպարավորողը, ասելիքի կշռույթը փոխող կենտրոնական բառակապակցությունը դառնում է ոչ թե սպասվող **տերությունով մեկ-ը**, այլ **տիրությունով մեկ-ը (ընդգծումները մերն են՝ Ջ. Ե.)**, և փոխվում է ասվածի քաղաքական ընկալումը. այն թելադրում է քաղաքացիական որոշակիորեն ընդգծված դիրքորոշում և ազգային որոշ կողմնորոշիչների վերաարժևորում: Փոխվում է ժամանակի արժեքափման ընկալումը. բանաստեղծը փոխվող չափումների հետ «խաղում է» բառերով՝ «և սերը պսպղում է ջրի ամենահատակում», «երկինքը դեմքը թաքցնում է պղտորված // ամպերի տակ և եսենիհի շունը ճանկռտելով // հողը գետնափոսերից մի կերպ հանում է ձագերին»: այսպես կարելի է երկար մեջբերել տողեր, որոնք հեղինակի ընտրած պայմանականության լեզվով ներկայացնում են «բացակա կամ խորապես ու գաղտնաբար ապրված բաներ»:

Հարկ է շեշտել, որ Վարդան Հակոբյանը մեծ վարպետությամբ է օգտագործում առարկայի, երևույթի, իրողության ու գաղափարի պայմանական անվանումով արտահայտելու պատկերավորության միջոցի գործածության համարյա բոլոր հնարավորությունները: Փոխաբերությունը (մետաֆորը) նրա բանաստեղծական մտասևեռման տիրույթում գեղարվեստական պատկերների ստեղծման ամենահաջողված արտահայտամիջոցներից է: Այլատեսական-այլաբանական երևույթների գոյավորումներով ստեղծվող պատկերները նրա պոեզիայի կարևորվող հետաքրքրական կողմերից են: Դրանք զգայականին հընթաց՝ փնտրել, խորհել տվող խոսքաստեղծ միջոցներ են, որոնք ավարտին են հասցնում՝ ճանաչել տալով սկիզբը («Ես միշտ // խոսքս ավարտելուց հետո են // ասում ասելիքս» (**«Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81րոպե»**):

Պոետական ասելիքն ամբողջացնող պատկերների հենաբառերի համածավալ ընթացքը Վարդան Հակոբյանի պոեզիայում հիմնականում բանաստեղծական վայելչախոսության կամ գեղաբանության գործառնությունների սահմանները խախտում, նոր ծիրեր է բացում և հանկարծակիի բերում ընթերցողին: Կայանում է յուրօրինակ հանդիպում պոետական երևակայության ստեղծած իռացիոնալ աշխարհի հետ: Ի դեպ, նա՛ն պոեզիայի ու արվեստի փայլուն գիտակ Գալիլեյը դեռևս 16-րդ դարում է ասել, թե ստեղծագործական միջոցներն ու ձևերը որքան ավելի շատ են հեռանում արտաքնապես պատկերվող առարկայից, այնքան այդ ստեղծագործությունը ավելի է արժանի հիացմունքի: (9)

Բանաստեղծական իրավիճակների ծավալման դաշտում դառնալով ներկայություն՝ Վարդան Չակոբյանն աննկատ օգնում է ընթերցողին՝ պատկերվող առարկայից արտաքննապես հեռացող ստեղծագործական միջոցներն ու ձևերը ընկալելու, թափանցելու բառերի ու պատկերների խորաշերտերը և մտնելու խոսքի թելադրած վիճակների մեջ: Այդպիսով, էջ առ էջ բացելով պոետական մտահղացումների գաղտնագրերը, նա ընթերցողին հասու է դարձնում ժամանակի ընկալման իր փիլիսոփայությանը՝ նրան վկան դարձնելով ինչպես ապրած ժամանակի, այնպես էլ ինքնակերպարավորման ողջ ընթացքին: Բանաստեղծական հոգեվիճակի մեջ հայտնված ընթերցողի մտաշխարհում հընթացս կերպավորվող բանաստեղծն ու ժամանակը ամբողջացնում են այն գեղագիտական աշխարհը, որտեղ կայանում է մտավորի ու զգայականի հանդիպումը, որտեղ երկրային ֆիզիկականի և մետաֆիզիկականի ներթափանց պատկերումներով կենսականացվում-մարմնավորվում են բանաստեղծական մտահղացումները:

Չակոբյանական բանատողերում պոետական նյարդերի գերլարումներ կան, ըմբոստացումներ ու խռովքներ, որոնք արդյունքն են ոչ սովորական ժամանակներում ապրած իր կյանքի (*«Չուսալքության պահերին ինձ // հանձարեղ եմ գգուն, այնքան, // որ քիչ է մնում ընկնեմ հոգեբուժարան»*) (**«Երեկը շարունակվում է վաղվա հաշվին»**): Բանաստեղծական խոսքաշերտերում գոյավորվող պոետական բնավորության, վարքագծի ու կենսահայեցողության արտահայտում-դրսևորումները ամբողջացնում են ոչ միայն բանաստեղծի կերպարը, այլև նրա աշխարհայացքի հիմնական հատկանիշների խտացումներով ուրվագծում ժամանակի՝ նրա թելադրած չափումները (*«Եթե տերևն առանց ծյուղ ու ծառի // կախվել է օդում, ուրեմն՝ աշուն է», «Մի ապրիլ պահը, որ դեռ չի // եկել, վիրավորում ես ապագան», «Վաղը միշտ ուշ է լինում», «Իսկ վայրկյանը, // երբ իր մեջ չի կրում «հետոն»-ն, քաշում է ետ», «Չայոց պատմության թանաքը չչորացած, այն // կրկին դառնում է ներկա, // մեր պատմությունը չի անցյալանում», «Չայրենիքը չէ հայրենիքը, // հայրենիքը // վաղն է», «Տառապանքի սահմանումը զուրկ է // բառերից, ավելին // տարածություն ու ժամանակից (որովհետև տարիները չեն գնում, տարիները գալիս են)»*):

Բանաստեղծի գեղագիտական աշխարհում կերպարավորված քնարական հերոսը, անանձնական արժեքների հետ միաձույլ, կրում է նաև իրեն կերտողի դավանած արժեքներն ու երբեմն էլ գաղտնաբար ապրված մեղանձնական հույզերը: Եվ ընթերցողն ականայից հաղորդակից է դառնում հեղինակի կենսաբանական ես-ի խնդիրներին, որոնց պոետական բացահայտումները յուրատիպ դրսևորումներով են: Այս առումով, որպես ինքնակերպարավորման հատկանիշների խտացված արտահայտություններ, դիտարկվող ժողովածուում կարելի է առանձնացնել **«Տիեզերական երգեհոն»**, **«Պոեմ իմ մասին, կամ 24-ն անց 81 րոպե»**, **«Ինքնահարցում»**, **«Գուցե և մենք չգիտենք»**, **«Առանց պարադոքսների»** ստեղծագործությունները:

Մարդը, անկասկած, մի քանի ես ունի, կամ այլ կերպ՝ *«Միննուն ես-ն ունենում է տարբեր կերպարանքներ»* (10) և, անշուշտ, ապրում է մի քանի այլ *կյանքեր*. ինչպես Պոլ Վալերին է ասում, *«Եթե յուրաքանչյուր ոք իր կյանքից բացի չկարողանար ապրել մի քանի այլ կյանքեր, ապա նա ի գորու չէր լինի ապրելու իր կյանքը»*: (11) Յուրաքանչյուր բանաստեղծ, իր բոլոր *ես* –երը, իր ապրած *կյանքերը* մեկտեղում, կերպարավորում է քնարական հերոսի միջոցով: Պոեզիայի ճշմարիտ բնույթը ճանաչող ընթերցողը կարողանում է քնարական այդ հերոսին միշտ վեր դասել հեղինակի անձից. նույնականացումը՝ քնարական հերոսի մարդեղացումը, կարող է ոչնչացնել բանաստեղծության ստեղծած իրականության ողջ հմայքն ու ոգեղենությունը:

Վարդան Հակոբյանի քնարական հերոսի ներքին էության, հոգևոր դաշտի մանրագծերի բացահայտումները կատարվում են մարդկային ապրումների, խտացված զգացում-զգացմունքների նրբերանգներով հարուստ յուրօրինակ պատկերներով: Հատկապես առանձնացող են ինքնաբերական-ինքնաբացահայտումներով, ինքնակենսագրական հիմքերով գործերը, որոնք քնարական հերոսի հոգու խռովքի գեղարվեստական մարմնավորման փայլուն արտահայտություններ են: Այս առումով արդեն հիշատակված գործերի ցանկը կարող ենք ավելի ընդլայնել՝ «Կոտորակներ», «Երբ արթնացա թռչունների երգից», «Սահմանումներ», «Հոգի», «Միձավանջ», «Անծրև» և այլն:

Հոգեկան ցավի, ներաշխարհի անընդհատ խռովքի մեջ պահող տվյալսանքների, մաքառման տառապանքի պատկերումներում պոետական նահանջի ոչ մի հետք չկա. դրանցում կոչնակողը Վարդան Հակոբյան պոետի անկուտրում ոգին է: Այդ պատկերներում, որպես մշտառկա գերակայություն, պետք է առանձնացնել բանաստեղծի գեղագիտական դավանանքի անխախտը՝ երբեք և ոչ մի պարագայում չխեղվող հավատը: Նա հավատում է, որ, երբ էլ լինի, ի վերջո, մարդու մեջ և մարդուց դուրս գոյություն ունեցող աշխարհներում ու նաև նրանց միջև հաստավելու է նախասահմանված ներդաշնակությունը. քանզի տեսնում է, «որ ծղոտն ի վեր ելնող մրջյունով» անգամ «կանոնակարգվում է աշխարհի ընթացքը» («Տիեզերական երգեհոն»):

Գեղագիտական ինքնահաստատման խնդիր շատ վաղուց չունեցող և ինքնամաքրման ուղիները հազարավոր տողերով անցած Վարդան Հակոբյանը համարում է, որ իր համար նախանշված գլխավոր ուղին մնացել է դեռ չանցած. «Թե կարողացա ստեղծել երգն այն, որով // մայրս վերադառնալու է // նորից, ուրեմն // ես բանաստեղծ եմ ու երեխա: // Ես ուզում եմ ինձ մաքրել ինձանից» («Գրություն լուսնի վրա՝ Սաքունց սարից վերև»): Սա է թերևս բանաստեղծի ինքնակերպավորման ընթացքն ամբողջացնող մանրագծերի, նրա գեղագիտական տեսլականի գլխավոր վրձնախազը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Հոդվածում մեջբերված բոլոր բանաստեղծական տողերը Վ. Հակոբյանի «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81 րոպե» ժողովածուից են («Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2009):

1. Վ. Փափագյան, «Հետադարձ հայացք», գիրք առաջին, «Սովետ. գրող» հրատ., Եր., 1979, էջ 48:
2. Պոլ Վալերի, Ոգու քաղաքականություն, «Սարգիս Խաչենց» հրատ., Եր., 2005, էջ 157:
3. Գր. Գուրզադյան, Կաքավաբերդի առեղծվածը, Եր., «Ապոլոն» հրատ., 1998, էջ 277:
4. Տե՛ս նույն տեղը:
5. Վ. Հակոբյան, Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81րոպե, էջ 3:
6. Բ. Շուլց, Առասպելը և իրականությունը, var addthis_config = {"data_track_addressbar": false});
7. Տե՛ս նույն տեղը:
8. Վ. Փափագյան, Աֆորիզմներ, «Գլածոր» կառավարման համալսարանի հրատ., Եր., 2003, էջ 74:
9. Գր. Գուրզադյան, Տիեզերքը ափի մեջ, «Ձանգակ-97» հրատ, Եր., 2005, էջ 15:
10. Պոլ Վալերի, Ոգու քաղաքականություն, էջ 152:
11. Նույն տեղում, էջ 151:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԻՆՔՆԱԿԵՐՊԱՐԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

ՋՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

Վարդան Հակոբյանի գեղագիտական աշխարհում ինքնակերպարավորման և ժամանակի բանաստեղծական ընկալման ու գնահատման յուրատիպ դրսևորումների ենք հանդիպում:

Հակոբյանի՝ ավանդական միջավայրում կյանք առած պոեզիան վաղուց հատել է ընդունված սովորականի սահմանագծերը: Նրանում գոյավորվող պոետական բնավորության, վարքագծի ու կենսահայեցողության արտահայտում-դրսևորումները ամբողջացնում են ոչ միայն հեղինակի կերպարը, այլև նրա աշխարհայացքի հիմնական հատկանիշների խտացումներով ուրվագծում են ժամանակի՝ նրա թելադրած չափումները:

РЕЗЮМЕ

СПЕЦИФИКА САМОВОПЛОЩЕНИЯ ПОЭТА И ВОСПРИЯТИЯ ВРЕМЕНИ

ЗУХРА ЕРВАНДЯН

Ключевые слова: условности, своеобразный, глубокие слои, тайнописи, выводы, внутренний мир, постулат, предначертанный.

В художественном мире Вардана Акопяна встречаем своеобразные проявления самовоплощения и поэтического восприятия и оценки времени.

Поэзия Акопяна, родившаяся в традиционной среде, давно пересекла границы общепринятого. Зарождающиеся в нем выражения-проявления поэтического характера, жизненной концепции и линии поведения делают целостным не только образ автора, но и путем концентрации основных качеств его мировоззрения очерчивают измерения времени, продиктованные им.

TIME PERCEPTION SPECIFICS AND SELF DEPICTION OF THE POET

ZOUKHRA YERVANDYAN

SUMMARY

Key words - conventions, unique, deep layers, cryptography, conclusions, inner world, postulate, intended.

In the artistic world of Vardan Hakobyan we see distinctive developments of specific images and poetic perception of time.

Hakobyan's poetry came into being in traditional environment, but crossed the borders of usual conventions long ago. Aborning expressions-manifestations of his poetic character, life views and behavior are making holistic not only the image of author, but also with the help of saturation of his ideology basic qualities draw the time measurements dictated by him.

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

**ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ
ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ
«ԶՎԱՅԵԼԱԾ ԵՂԵՄ» ՊԱՏՈՒՄԱՇԱՐՈՒՄ***

Բանալի բառեր ժամանակային ընդգրկում, մշակութային տեղաշարժեր, հակասական ժամանակներ, գեղարվեստական ընդհանրացումներ, բեկված ճակատագիր, շղթայական զարգացում, գրողի կենսափիլիսոփայություն, գեղագիտության հիմնաքար, պատճառահետևանքային կապ, հրապարակախոսական շեշտադրումներ:

Կիմ Գաբրիելյանը գրականություն մտավ անցյալ դարի 70-ական թվականներին: Նա ընթերցողներին հայտնի է բանաստեղծական և արձակ ժողովածուներով: Գրողի նախասիրած գրական ժանրը պատմվածքն է: Վերջերս Կ. Գաբրիելյանը ընթերցողներին ներկայացրեց «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ» ժողովածուն, որն ընդգրկում է «Զվայելած եղեմ» պատումաշարը, «Գրառումներ սրտի վրա» բանաստեղծական շարքը և «Լևոն Խեչոյանի ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունները» մենագրությունը: Գրականագիտական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պատումաշարի թեմատիկ, գաղափարական, ժամանակային, կերպարային ընդգրկումները:

Գրողն իր ապրած ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, մշակութային տեղաշարժերի անմիջական կրողն է: Այդ տեղաշարժերն այս կամ այն ձևով ներագրում են նրա ստեղծագործական երևակայությանը և արձագանքվում գեղարվեստական ստեղծագործություններում: Ստեղծագործող անհատն իր ներհայեցողությամբ կարող է կանխազգալ ապագան և հետախուզումներ անել անցյալ ժամանակներում: Բանաստեղծությամբ գրականություն մտած Կիմ Գաբրիելյանին իր ապրած հակասական ժամանակների հրամայականները պարտադրեցին անցնել արձակի: Իրական, կոնկրետ փաստերի խորագնումները և դրանց արմատների հայտնաբերումը գեղարվեստական ընդհանրացումների հարուստ ատաղձ են, և Կ. Գաբրիելյանի «Զվայելած եղեմ» պատմաշարում այդ ընդհանրացումներն ակնհայտ են: «Ինչպես մարդու կյանքը, բնության և հասարակական երևույթները, այդպես էլ այդ ամենը արտացոլող գեղարվեստական ստեղծագործության ներքին կյանքը դուրս չէ ժամանակից ու տարածությունից», - հատկանշում է գրականագետ՝ Զ.Ավետիսյանը: (1) Այս կտրվածքով Կ. Գաբրիելյանի պատումաշարի ժամանակային ընդգրկումները գրողի ապրած ժամանակաշրջանով չեն սահմանափակվում: Յենվելով վերիուշի գրական հնարանքին, երբեմն պատումն անելով անցյալ ժամանակի մեջ՝ գրողը վերակենդանացնում է հասարակական անցյալ տեղաշարժերը:

*Հոդվածն ընդունվել է 20.05.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

Տարաբնույթ դրդապատճառներով և հիմնականում խորհրդային տնտեսությունների խոշորացման հետևանքով լեռնային փոքր գյուղերի մահացման թեման նոր չէ մեր գրականության մեջ: Երևույթի լավագույն գեղարվեստական խտացումները Վ. Պետրոսյանի «Մենավոր ընկուզենի» և Մ. Գալշոյանի «Բովտուն» ստեղծագործություններն են: Արցախում տնտեսությունների խոշորացման հետևանքով դատարկվող գյուղերն այլ ճակատագիր են ունենում. որպես Ադրբեջանի հեռահար պետական քաղաքականության արդյունք այդ գյուղերն իբր տարրերայնորեն լցվում են ազերի թուրքերով, թուրք, որը դարեր ի վեր այք ունի հայի տարածքների, տուն ու տեղի, մշակութային արժեքների վրա, ինչը հիմա առանց դիմադրության նրանն է դառնում: Կ.Գաբրիելյանի «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ» քնարական շնչով հագեցած պատմվածքի անանուն հերոսի ժամանակը ձգվում է մինչև ռուս-ճապոնական պատերազմը և ավարտվում մինչև արցախյան շարժման արշավույթը: «Գնաց՝ քսան, եկավ՝ քառասուն»: Բայց անցած ջահելության դրաման չէ, որ ապրում է հերոսը, այլ դատարկված ծննդավայրի՝ Չընգըլի դրաման. «Մեր գյուղը... Թուրքը թողեց, որ գյուղ մնա: <...> Թողել, փախել էին, որ թուրքը չգա, կոտորի: Մարդ, կնիկ, մանուկ-մեծ: Էդքան շատ դսմաթ ունե՞ր թուրքը, բասմաչից էլ շա՞տ... Թյո՛ւ... Թքեց ու կացնի կոթը սեղմեց մատներում: Ամո՞թ»: (2) 20-րդ դարասկզբին հայ թուրքական ընդհարումներից տուժած և տնտեսությունների խոշորացումից դատարկված Չընգըլը իրենով վերակենդանացնելու գաղափարը ապրեցնում է նրան: Նրա հոգում արծազանքում է բնության սքանչելիքը. «Չընգըլը՝ բարձր-բարձր: Բայց արևը Քյաթուկա սարից է ելնում: Քյաթուկա սարը՝ սիրուն-սիրուն, գարունը ծխամորճ է ծխում գոլորշի-գոլորշի, ամառը՝ սև-կապույտ, աշմանը չես կարող որոշել իսկական գույնը: <...> Մեր սարերը՝ սև-կապույտ-մշուշագույն, ու նրանց վրա մշտնջենական խոնավ թախիծ կա՝ մշուշի տեսքով՝ համր-համր... Այստեղ լեզենդներ են հյուսվել, առասպելներ են չափազանցվել, երագ, շատ երագներ են խառնվել մեր սարերի խոնավ զեփյուռին ու զեփյուռի նման հալվել... <...> Մեր գյուղը՝ ծեր այա, փեշեր ուներ շուրջը փռած, գլխում՝ հին ու նոր հուշեր, աչքը՝ երկնագույն ժամանակին, ու՞ր է...»: (3) Երկնագույն ժամանակը գյուղի շենությունն է, երբ գյուղը գյուղ էր իր մարդկանցով: «Աշխարհի բոլոր կողմերը ման եկած, տեսած հողն ու ջուրը ոտի տակ տված» հերոսը որոշում է գյուղն ապրեցնել իր նոր կառուցած տնով, հիմնած տնտեսությամբ, կնոջով, ծնվելիք երեխաներով: Աշխարհից, Աստուծոց և նոր ղլիջցիներից խռոված, որովհետև նրա համար անընդունելի, նաև անհասկանալի են բոլոր նրանք, ովքեր կարողացել են լքել գյուղը. «Բա հարյուր տարվա գերեզմանոցից կխռովե՞ն, հեր ունեք թաղած, մեր, պապ, տատ, հարազատներ: Էն աշխարհում էլ պիտի հորից-մորից հեռու ապրե՞ք...»: (4) Աստուծոց էլ խռոված, որովհետև. «Մարդու աստվածը զավակն է, որ չեղավ, ի՞նչ գատ: Որ չեղավ, գյուղը ո՞նց պիտի ապրի: Ինչքա՞ն: Ասենք՝ ապրեցին իննսուն, հարյուր, հարյուր տասը տարի, հետո՞...»: (5) Հերոսը գիտակցում է վերջը: Մարդ մահկանացուն հավերժական չէ: Իր և կնոջ մահով կվերամահանա գյուղը: Գրողն իր գաղափարական եզրահանգմամբ արդիական հարց է բարձրացնում: Այսօր էլ քաղաքը շարունակում է ուռճանալ գյուղերի դատարկման հաշվին: Երևույթը կարող է դիտվել որպես կյանքի բնականոն զարգացման ընթացք: Մինչդեռ ոչ ոք չի կարող հերքել, որ մարդուն մարդ պահողը հողն է և, գոյի կենսունակության հիմքում առաջին հերթին ընկած է մարդ-բնություն ներդաշնակությունը: Գրողի գեղագիտության հիմնաքար հանդիսացող այս ճշմարտությունը կասկածի ենթակա չէ: Սա բնությունը

մարդով բնություն պահելու և մարդուն բնությամբ մարդ պահելու օրենքն է, որի խախտման պայմանում փլվողը վաղվա հավատն է:

Երևույթը մի այլ կտրվածքով է դիտարկվում «Քիրվայության ժամանակներ» պատմվածքում: Ջրվերի հոգևոր դատարկումը գուցե սկսել է այն օրից, երբ «տեր Օհանեսի միրուքը խուզեցին, ուշ նոյեմբերի ցրտաշունչ օրով մինչև ոտաշորը մերկացրին ու քացով-շվկոցով գյուղից քշեցին»: Խորհրդային անհավատության ժամանակներ էին, որին փոխարինելու են գալիս խոշորացման տարիները: Ջրվերը միացավ Մրգաշատին, և ջրվերցին դարձավ մրգաշատցի. «Ջրվերը քանդվեց, դատարկվեց, մնացին կովանոց-ֆերման և երկու հարյուրամյա եկեղեցին և մի քանի անտեր, կիսավեր տներ»: (6) Քանի եկեղեցին կանգուն էր, Ջրվերից տեղափոխված Թորոսին թվում էր, թե ապրում է Ջրվերը, նույնիսկ երբ Ջրվերը բնակեցվում է Հարթավայրից եկածներով, երբ գյուղը կոչվում է Հասանլու, երբ Հասանլուի բնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Թորոսի Ջրվերի հետ կապված հուշերը տարվա եղանակների հետ ծաղկում, հասնում, անցնում, զնում էին: Քանդած եկեղեցու տակն ու վրա եղած հիմքերը ցնցում են Թորոսին: Ջրվերը, ասես, նրա համար վերջնականապես մեռնում է, և նա դիվոտված հարցնում է Նազիմին. «Բա՛ մեր եկեղեցին ու՞ր է»: (7) Թուրքը չէր էլ կարող պատկերացնել պատշար Թորոսի կերպարանափոխության պատճառը, այլապես հազիվ նրան հրավիրեր իր տան պատերը շարելու: Որքան էլ Թորոսը քիրվայությունը հարգող ու խաղաղասեր մարդ լիներ, կատաղությունը գագաթնակետին է հասնում, երբ քանդած եկեղեցու քարը նրան են տալիս թուրքի տան պատին դնելու: Եկեղեցու քարի հետ շփումը Թորոսի մեջ լռած հիշատակներ են արթնացնում. «Ափը քսելուց՝ տաք խոտուտ եկավ, և ներսում հաճելի մի բան ուլորվեց: Ի՞նչ էր, չհասկացավ, բայց արտառոց բանի ակնկալում կար»: (8) Արտառոցը երևի համակերպումի ժամանակներում Թորոսի ազնիվ պոռթկումն էր. «Ես ձեր մերը... <...> Գյուղը գողացել եք, հերի՞ք չէ, հիմա էլ եկեղեցի՞ն եք գողանում, խաչքա՞րն եք գողանում: <...> կորեք, պղծողի լակոտներ, մեր գյուղից գնացեք, կորեք»: (9) Գրողը պատշար Թորոսի ազգային դիմագիծն ամբողջացնում է խորունկ մի ընդգծումով. «Առանց հեկեկալու լացը եկավ, և այդ պահին նրան թվաց, թե ինքը տեր Օհանեսն է՝ խայտառակված, անարգված, իր տնից ու գյուղից վտարված»: (10) Թորոս-տեր Օհանես զուգահեռը երևույթի շղթայական զարգացման արտահայտությունն է, Թորոսի պոռթկումը՝ մեր համազգային պոռթկման նախասկիզբը: Կ. Գաբրիելյանը առաջիններից մեկն է, որ փորձում է գեղարվեստականացնել արցախյան շարժման բուն դրդապատճառները, ժողովրդական պոռթկումը՝ ստեղծելով իրական ազգային դիմագիծ ունեցող կերպարներ, որոնցից մեկը Օհանեսն է:

Ներկան ու անցյալն իրար մեջ ներհյուսվում են «Շարունակվող աշուն» պատմվածքում: Սմբած, տեղաշոր ընկած Սաթի նանի վերհուշներում վերականգնվում են ջահելության տարիները, հայրենական պատերազմի պատճառով իր և Սայու չկայացած անուսնությունը, վեց տարուց հետո Սայու վերադարձը՝ գերության չքերվող խարանները մեջքին, իրենց միությունը, Սայու օտարվելը մարդկանցից, աքսորվելը, որովհետև ըստ փաստաթղթերի. «Սային նախկին դասալիք է, թշնամու մոտ գերի է եղել: Թշնամուն ծառայելու համար Սային պիտի տույժ կրի: Սային թշնամուն ինչու՞ ծառայեց, իր ուզելով էր, թե՞ ստիպեցին: Նշանակություն չունի»: (11) Անհատի պաշտամուրի տարիների սիբիրյան աքսորները վերակենդանանում են պատերազմի ժամանակ խորհրդային բանակի գերի ընկած զինվորներով: Սային դրանցից մեկն է: Նրա կյանքն ավարտվում է Ալթայում:

Բեկվում է ընտանիքի ճակատագիրը, անքերելի կնճիռներ թողնում Սաթի նանի հոգում: Նոր ժամանակներն ավելի կնճռոտ են, որովհետև անարդարացի մի հրամայականով նրա ճակատագիրը փոխանցվել է ջահել հարսին՝ Շողերին, որը անհույս սպասում է խոպաններուն ճակատագրի հետքերը կորցրած անուսնուն՝ Վադինակ-Վադոյին, ու շարունակվում է աշունն ընտանիքում: Գրողի ներթափանցումները հոգեբանորեն հավաստի են և գեղագիտորեն՝ հավանական: Բեկված ճակատագրերի տիպականացումը մերօրյա գրականության մեջ խորքային բնույթ է կրում: Վեր են հանվում այն պատճառահետևանքային կապերը, որի մեջ մարդ անհատը օտարվում է իր կոչումից ու նպատակից, կործանվում՝ առանց մեղքի փոքր ինչ բաժին ունենալու: Գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները անհատի ներուժի վերհանման արգելակներ են և ոչ խթանիչներ: Մարդու արժեքն ընկնում է հավասարվելով ոչնչի:

Ողբերգական ժամանակների դրաման շարունակվում է Կ. Գաբրիելյանի «Ամոթի արցունքներ: Երջանկության արցունքներ» պատմվածքի հերոսուհուն՝ Աշխենի հոգում: Աշխենն այն բազմաթիվ հայուհիների գեղարվեստական խտացումն է, որոնց կուսությունը լլկվեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերի հայկական կոտորածների ժամանակ: Նախնիների ծննդավայրում հայտնված ուսուցչուհի Աշխենի նախկին բարեկեցիկ կյանքից հետք անգամ չի մնացել: Նա կրում է մութ ու ցուրտ ժամանակների բոլոր զրկանքները: Մի կերպ հաղթահարելով լլկված մարմնի մեջ անաղարտ մնացած հոգու ամոթանքը՝ ցանկանում է ինչ-որ մեկի նախապատրաստած թղթի թափոնի կապոցը տանել՝ տունը տաքացնելու: Մթության մեջ նրա կողքին հայտնվում է կապոցի «տերը»: Ու ճանաչում են իրար: Ճակատագրի դաժան ճանապարհներով անցած և ուսուցչուհի Աշխենի կողմից երբևէ մերժված Երեմը տեր է կանգնում Աշխենի մենակությանը՝ ասելով. «Սա ապրելու ձև չէ, Աշխեն, երկուսով ապրելն ավելի հեշտ կլինի: Մարդ ու կին չեղանք, քուր ու ախպեր կլինենք»: (12) Ու կինը համաձայնվում է: «Գուցե դա, իրոք, չվայելած եղեմն է լինելու՝ անձանոթ ու հանելուկային շրջադարձերով», -պատմվածքն այսպես է ավարտում գրողը: Գրողի արձակում հրապարակախոսական շեշտադրումներ չկան, բայց նրա հերոսներն իրենց մեջ կրում են ապրած ժամանակի կնճռոտ հարցականները և փորձում են ելքեր որոնել անլուծելի իրավիճակներից դուրս գալու համար: Մի դեպքում դա հաջողվում է, մի այլ դեպքում՝ տանում փակուղի: Կ. Գաբրիելյանն ինչպես շատագիր, այնպես էլ շատախոս գրող չէ: Պատմվածքներին ավելորդ ծավալ չի հաղորդում, ասելիքը կոնկրետացնում է մի քանի էջի վրա:

Արցախյան գոյապայքարի և պատերազմի յուրաքանչյուր օրը խորապես ապրած և մաշկի յուրաքանչյուր բջիջով զգացած անհատի զգացողություններն են խտացված «Գառին» պատմվածքում: Պատումն առաջ է տարվում առաջին դեմքով: Չեղինակ-պատմողը հանդես է գալիս որպես դեպքերի ականատես-մասնակից: Պատերազմն իր մեջ ոչ մի զավեշտ չի պարունակում: Այն իր չզրված օրենքներն ունի և պահի հրամայականի տակ մարդ կարող է իր բնույթին անհարիր արարք թույլ տալ: Վաղոն գերի թրքուհու հետ այն է անում, ինչ ժամանակին թույլ չի տվել անելու արդեն զոհված ընկերոջը՝ Չովիկին: Չայ նոր և նորագույն գրականության մեջ բազմակողմանիորեն տիպականացված է պատերազմի թեման: Արդի գրականության մեջ նոր խտացումներ են ձեռք բերվում: Այսօրվա մեր թշնամին երեկվա մեր դրացին է: Պատերազմի չզրված օրենքներով իրար դեմ կանգնած երկու ժողովուրդների կորուստների չափերը անկշռելի են: Սակայն, ըստ

գրողի կենսափիլիսոփայության ամենամեծ կորուստը մարդու մեջ մարդկայինի մահն է, անհաղթահարելի իրավիճակների մեջ բնագրականի գերակայությունը: Մարդը թելադրող հանգամանքներում ետ է կանգնում քաղաքակրթական ձեռք-բերումներից, քարանձավային կերպարանք անում, որն անհարիր է գրողի գեղագիտական սկզբունքներին:

Խաղաղ, մերօրյա ժամանակների դրվագումներ են «Շեքին ընկած գավազանը», «Հարթավայրի բարկ արևը», «Բծավոր գոհություն», «Վայրի, թթու-դառը խնձոր», «Վերադարձ ամենասկիզբը» պատմվածքները: Գրողը ձեռք է մեկնում մեր օրերում լճացած արատավոր երևույթների գեղարվեստականացմանը՝ կերպավորելով աննշան մարդկանց: «Շեքին ընկած գավազանը», «Բծավոր գոհություն», «Հարթավայրի բարկ արևը» պատմվածքների հիմքում ընկած են ձգտումի և իրականության հակասությունները: Արցախյան ազգային զարթոնքին և պատերազմական օրերին հաջորդած ժամանակը բնորոշվում է իր անորոշ արժեհամակարգով: Դա բոլորովին այն ժամանակները չեն, որին ձգտել է զարթոնքի գազաթնակետին հասած ժողովուրդը: Կյանքը ճեղքվածք է տվել և հակադիր կողմերում են հայտնվել նույն ժողովրդին պատկանող, արժեհամակարգային ներհակ ընկալումներ ունեցող շերտերը: Գրողի ուշադրության առանցքում ինչ-ինչ դրդապատճառներով կյանքի հատակին գտնվող մարդկանց վարքագծերն են: Այդ մարդիկ դուրս չեն հասարակությունից, իրենց չնչին գոյությամբ աղավաղում են հասարակական կյանքի առողջ պատկերը: Գրողը հակված չէ մերժելու նրանց, բայց բացահայտորեն մերժում է մարդկանց այդ վիճակին հասցնող դրդապատճառները: «Վայրի թթու-դառը խնձոր» պատմվածքի հերոսը՝ Գարիկը, հրաժարվում է հղի կնոջ «սրտուզելիքը» կատարելուց, երբ համոզվում է, որ իրեն անտառ ուղեկցող վաթսուկ անց Սուրեն քեռու կյանքը թթու-դառը խնձորից էլ դառն է: Հյուսիսկովկասյան ռուսական քաղաքում հայտնված ամուրի հայ տղամարդը, բախվելով կյանքի անմարտելի իրականությանը, հայացքն ուղղում է իր նախասկիզբը. «Հաջորդ օրը նա մեկնեց հոգու լույսերը մարած այդ քաղաքից: Գնաց դեպի իր ամենասկիզբը, որտեղ հոգատար ու հարազատ դեմքեր կային, մշտավառ կանչող լույսեր՝ մանկուց հուշերի պես փափուկ ու վստահելի...» (13), «Վերադարձ ամենասկիզբը»): «Ինչպես կյանքում, այնպես էլ գրականության և արվեստի մեջ ժամանակը անձնավորվում է՝ դառնալով մարդու, գրականության մեջ հերոսի ճակատագրի գոյակերպը: Գրական երկի մեջ սեղմված ժամանակը, որը նույն գեղարվեստական ժամանակն է, փոխանցվում է ընթերցողին՝ դառնալով նրա իրական կյանքի մի պահը» (14),-գրականագետ Ջ. Ավետիսյանի այս դիտարկումը լրիվությամբ տարածվում է Կ. Գաբրիելյանի պատումաշարի դիտարկված պատմվածքների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Ջ. «Գրականության տեսություն», «Նաիրի» հրատ., Երևան, 1998, էջ 144:
2. Գաբրիելյան Կ. «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ», «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2014թ., էջ 38:
3. ն.տ., էջ 40:
4. ն.տ., էջ 41:
5. ն.տ. էջ 41:

6. ն.տ., էջ 159-160:
7. ն.տ., էջ 164):
8. ն.տ., էջ 167:
9. ն.տ., էջ 168:
10. ն.տ., էջ 168:
- 11.ն.տ., էջ 60:
12. ն.տ., էջ 152:
13. ն.տ., էջ 180:
14. Ավետիսյան Ջ. «Գրականության տեսություն», էջ 144:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ «ՉՎԱՅԵԼԱԾ ԵԴԵՄ» ՊԱՏՈՒՄԱՇԱՐՈՒՄ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածում քննության է առնվում արցախաբնակ արծակագիր Կիմ Գաբրիելյանի «Չվայելած եղեն» պատումաշարի ժամանակային ընդգրկումները: Նշվում է, որ գրողն իր ապրած ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, մշակութային տեղաշարժերի կրողն է և այն տեղաշարժերը ներագդելով նրա ստեղծագործական երևակայությանը՝ արծագանքվում են գեղարվեստական ստեղծագործություններում: Կ. Գաբրիելյանի պատումաշարի ժամանակային ընդգրկումները գրողի ապրած ժամանակով չեն սահմանափակվում: Հենվելով վերհուշի գրական հնարանքին, պատումն անելով անցյալ ժամանակի մեջ՝ գրողը վերակենդանացնում է հասարակական անցյալ տեղաշարժերը և նրանց արծագանքները ներկա ժամանակում:

РЕЗЮМЕ

ВРЕМЕННОЙ ОХВАТ В СБОРНИКЕ РАССКАЗОВ КИМА ГАБРИЕЛЯНА "НЕ НАСЛАДИВШИСЬ РАЕМ"

ЖАННА БЕГЛАРЯН

Ключевые слова: временной период, культурные передвижения, противоречивые времена, художественные противоречия, сломленная судьба, цельное развитие, причинно-следственная связь, публицистические акценты.

В статье анализируются временные периоды сборника рассказов "Не насладившись раем" арцахского прозаика Кима Габриеляна. Отмечается, что автор является носителем политического, общественного, культурного процессов своего периода, и они, влияя на его творческое воображение, отражаются в художественном творчестве. Временной охват сборника рассказов Кима Габриеляна не ограничивается прожитым автором периодом времени. Опираясь на литературный метод воспоминания, рассказывая в прошедшем времени, автор оживляет общественные процессы прошлого и их отражение в настоящем.

SUMMARY

TIME BOUNDARIES IN KIM GABRIELIAN'S COLLECTION OF STORIES
CALLED "THE NEVER ENJOYED HEAVEN"

JANNA BEGLARYAN

Key words: *time inclusion, cultural movements, contradictory times, fiction contradictions, broken fate, total development, causal-consequential relation, publicist accents.*

The article considers time boundaries in Artsakhi short story writer Kim Gabrielyan's series of narratives called "The Never Enjoyed Heaven". The author is noted to be the bearer of the social, political and cultural transformations of his time and these transformations, as they affect his creative imagination, are well reflected in his works of fiction. The time boundaries of Kim Gabrielyan's series of narratives are not limited by his life time. Based on the literary device of flashback recollection the author refers to the past occurrences, revives the past social transformations and currently unfolds their reflections in the present time.

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԵՐՊԱՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

Բանալի բառեր: Պատմագրություն, պատմական կերպար, գեղարվեստականացում, հեքիաթ, պատմավեպ, պատմավիպասան, պատմական գունդերանգ, դիպաշար, էպիկական, վիպերգ, լեզվաոճավորում, կերպարների տիպականացում:

Հայ գրականության պատմությունը հարուստ է պատմական դեմքերի, իրադարձությունների ու ժամանակաշրջանների գեղարվեստականացման բազմաթիվ օրինակներով: Դրանք էական նշանակություն ու կարևորություն են ձեռք բերում ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի տիպականացման ու հերոսների անհատականացման առումով, այլև ելակետային դրույթներ են դառնում ներկա իրադարձությունները դիտելու պատմական տրամաբանությամբ, նրա ծագումն ու հեռանկարը գնահատելու պատմության դասերով: Գրականագետ Ս. Սարինյանը՝ խոսելով պատմականության մասին, ժամանակին նկատել է.«Պատմականությունը գեղագիտական կատեգորիա է, որ գոյանում է կառուցվածքային բոլոր տարրերի, ձևի ու բովանդակության բաղադրիչների ներքին միասնությունից: Այս տեսակետից պատմականությունը ստանձնում է գեղագիտական կարևոր ֆունկցիա և մեծապես պայմանավորում երկի գեղագիտական-փիլիսոփայական տարողությունը»: (1) Գրողներն իրենց երկերում հավատարիմ մնալով պատմական իրողություններին, դրանք վերարտադրում են յուրովի: Անցյալի սեղմ ու ժլատ փաստերը ստեղծագործողների գրչի տակ վեր են ածվում մեծակտավ գործերի, որոնցում վառ երևակայության, պատկերավորման-արտահայտչական զանազան միջոցների, լեզվաոճական հնարանքների կիրառությամբ հաջողվում է ստեղծել տվյալ ժամանակաշրջանի կոլորիտային պատկերն ու հերոսների տիպական կերպարները: Այդպիսիք են հայ գրականության նախընթաց փուլերում ստեղծված Վարդանի ու Վարդանանց հերոսների կերպարները Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում, Արշակ երկրորդի կերպարն ու 4-րդ դարի պատմա-քաղաքական իրադարձությունները, անցքերն ու դեմքերը Բաֆֆու, Ստեփան Չորյանի, Հայկ Խաչատրյանի, Պերճ Չեթունցյանի, Լևոն Խեչոյանի և այլոց պատմավեպերում: Գրականագետ Ն.Գեյրը նկատել է. «Մեր ժամանակներում կերպարի, պատկերի ժամանակային ըմբռնումը սերտորեն կապված է գեղարվեստական գրականության մեջ առկա ժամանակի և տարածության խնդիրների հետ: Դրանք դառնում են յուրօրինակ տարածություն և միջոց՝ դեպքերի ծավալման և կերպարի ինքնակայացման համար»: (2)

Վաչագան Բարեպաշտ թագավորի կերպարը մեզ հայտնի է առաջին հերթին պատմագիտական աշխատություններից՝ Մովսես Կաղանկատվացի «Պատմու-

*Հոդվածն ընդունվել է 20.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

թյուն Աղվանից աշխարհի», Ստեփանոս Օրբելյան «Պատմություն տանն Սիսական», ինչպես նաև ժողովրդական ավանդություններից: Ըստ պատմիչ Կաղանկատվացու՝ Վաչագան թագավորը գահակալել է Աղվանքում, այսինքն՝ Արցախի և Ուտիքի շրջաններում սկսած 480-ական թվականներից: Գահ բարձրանալով երկրամասում ավելի քան երկու տասնամյակ տիրած անիշխանությունից հետո, Պարսից արքա Վաղարշի օրոք (484-488), նա ամրապնդում է Արցախ-ուտիքյան իշխանությունը՝ այն հռչակելով թագավորություն: Թագավորանիստ է դարձրել Գյուտական ավանը: Վաչագան թագավորը ծավալել էկեղեցական, լուսավորական և քարոզչական բուռն գործունեություն: Թագավորության վարչական հիմքերն ամրապնդելու նպատակով ձեռնամուխ է եղել ներքին կարգն ու կանոնն ապահովող օրենքների մշակմանը: Նրա նախաձեռնությամբ հրավիրվել է Աղվեցի ժողով, որտեղ էլ ընդունվել է «Սահմանադրություն կանոնականը»: Վաչագան արքան թաղվել է իր կառուցած Ջրվշտիկ վանքի մոտ: Նրա գերեզմանին 1286-ին կառուցվել է մատուռ:

Այդուհանդերձ, անժխտելի է այն իրողությունը, որ մեր պատմիչների հաղորդած տվյալներից գատ, Վաչագան Բարեպաշտի կերպարն առավել ամբողջական էդառնում գեղարվեստական երկերի քննման զուգահեռներում: Պետք է ասել, որ, ըստ էության, Վաչագան Բարեպաշտի կերպարի ընկալումը ժամանակի հոլովույթում գրեթե անփոփոխ է մնացել: Սակայն կախված ժամանակի հրամայականից, հեղինակների սուբյեկտիվ մոտեցումներից, այն ունեցել է յուրովի վերարտադրություններ ու դրսևորումներ՝ ինչպես բովանդակային, այնպես էլ ժանրային ձևային առումով:

Հայտնի է, որ Վաչագան Բարեպաշտի կերպարն առաջին անգամ գեղարվեստորեն մարմնավորվել է բոլորիս հայտնի ու սիրված Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթում: Հետագայում պատմավիպասան Հայկ Խաչատրյանն առավել ընդգրկուն ձևով է ներկայացրել Վաչագան թագավորի կերպարն իր «Վաչագան» պատմավեպում: Վաչագան թագավորի հերոսական կերպարին անդրադարձել է նաև բանաստեղծ Վարդան Հակոբյանն արցախյան գոյամարտի տարիներին իր «Տաճարն Աստծո» վիպերգում: Իսկ բոլորովին վերջերս արձակագիր Բակուր Կարապետյանը ընթերցողի սեղանին դրեց «Վաչագան Բարեպաշտ թագավոր» (3) պատմավեպը, որտեղ հեղինակը ներկայացնում է պատմական նորահայտ դրվագներ ինչպես Վաչական Բարեպաշտի գործունեությունից, այնպես էլ Հայոց հյուսիս-արևելքում տիրող պատմաքաղաքական իրադարձություններից:

Այսպես՝ Ղ. Աղայանը հեքիաթում պատմում է մի ժամանակաշրջանի մասին, որ անմիջապես հաջորդել է Հայաստանի և Հայոց Աղվանաց թագավորության համար կարևորագույն իրադարձությունների՝ Վարդանանց ու Վահանանց, Վաչեի կողմից մղված պատերազմներին, քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունմանը, աղվանաց գրերի ստեղծմանը: Աղայանի «Անահիտ» հեքիաթում Վաչագանն արդեն այն արքան է, ով երկրում, բանիմացության ու իմաստնության շնորհիվ, զարգացնում է կրթությունն ու լուսավորությունը, ուն օրոք ժողովուրդն ապրում է առատության ու խաղաղության պայմաններում:

Հեքիաթում առավել փառաբանվում է Անահիտի իմաստնությունն ու գեղեցկությունը: Անահիտը, բացի հայոց գերագույն աստվածուհուն խորհրդանշելուց, ներկայացնում է նաև «Անահիտ» տեսակի գորգը, Աղայանը շեշտում է հատկապես հերոսուհու սերը գորգագործության և, առհասարակ, արհեստավորների հանդեպ: Հաշվի առնելով, որ գորգագործության արհեստը կապվում է հայերի ետ

և բնորոշում է նրա հայկականությունը, Անահիտին կարող եք վերագրել հեքիաթում հայկական ոգու մարմնավորողի դերը ևս:

Ընդհանրապես, հեքիաթում՝ որպես բանահյուսական ժանրի ստեղծագործության մեջ, կարող է և չպահպանվի պատմական փաստերի ու իրողությունների հավաստիությունը: Այսինքն, դա առաջնահերթ պայման չէ հեքիաթի համար: Ահավասիկ, Աղայանի հեքիաթում նկատում ենք մի շարք փաստական անճշտությունների: Այսպես՝ հեքիաթում Վաչագանը Վաչեի որդին է, մինչդեռ պատմագրության մեջ Վաչագանը Վաչեի եղբոր՝ Յազկերտի որդին է: Մեր պատմավիպասանները՝ Յայկ Խաչատրյանը, Բակուր Կարապետյանը, հավատարիմ են մնացել պատմագրական այս իրողությանը:

Հանրահայտ է բոլորիս հեքիաթի սյուժեն, անդրադառնանք մյուս գեղարվեստական գործերի վերլուծությանը, որոնցում գեղարվեստորեն հյուսված է Վաչագանի հերոսական կերպարը, և փորձեն իրենքացս՝ անհրաժեշտության դեպքում, զուգահեռներ անցկացնել այդ երկերի և դրանց հեղինակների մոտեցումների միջև:

Անդրադառնանք Յայկ Խաչատրյանի «Վաչագան» պատմավեպին: Ի դեպ, ուշագրավ է այն փաստը, որ գրողին հաջողվել է վարպետորեն կերտել մեր գրեթե բոլոր արքաների կերպարները՝ պատմավիպական մեծակտավ գործերում՝ Տիգրան Մեծից, Երվանդ Սակավակյացից, Արտաշեսից, Արտավազդից մինչև Վաչագան: Ասել է թե՛ նա մեր պատմական անցյալի ուսումնասիրությամբ գրեթե անգերազանցելի է: Գրականագետ Սևակ Արզումանյանը գրել է. «Յեռավոր անցյալի քաջիմացությամբ, հեթանոսական դարերի դիմամիկան, ռիթմը զգալու և արտացոլելու հմտությամբ քիչ հեղինակներ (պատմաբան թե գրող) կարող են չափվել Յ. Խաչատրյանի հետ»:(4)

Գրողը նպատակ է ունենցել վեր հանելու պատմական հերոսների բնավորության այն էական գծերն ու առանձնահատկությունները, որոնք դարեդար, սերնդեսերունդ փոխանցվել են և այսօր մեր ժողովրդի խառնվածքի միջուկն են կազմում:

Վեպը սկսվում է Ավարայրի դաշտի նկարագրությամբ՝ ճակատամարտից հետո, ամենուր՝ դիակներ, վիրավորներ և նրանց մեջ՝ արցախեցի Բակ իշխանը, ով փնտրելով ու գտնելով Վարդան Մամիկոնյանի սաղավարտը, իր փոքրաթիվ զորքի հետ աճապարում է Արցախ՝ իր հետ տանելով Սպարապետի դին: Ճանապարհին բախվում, կռվում է դարանակալած պարսկական զորքերի դեմ: Արցախ հասնելուն պես իշխանը և նրա զինվորները Դահրավ գյուղի մոտ գտնվող Շնաքար լեռան մոտից ձգվող Քշմրոր անտառի մթին անկյուններից մեկում, գաղտնի մի տեղ՝ ժայռի տակ անփոփում են սպարապետի դին: Պարսից արքան չկարողանալով կտորել արցախցիների դիմադրությունը՝ որոշում է առերես մոգություն ընդունած, բայց հոգու խորքում քրիստոնյա մնացած Վաչեին նշանակել Աղվանքի թագավոր, որպեսզի հեշտությամբ կտորի արցախցիների կամքը:

Շուտով Յազկերտը, Յայոց Արևելից Կողմանց թագավոր հռչակելով Տիգրանում ապրող Վաչե իշխանագին, նրան ուղարկում է Աղվանք՝ հեռահար նպատակներով:

Փաստորեն, մինչ Վաչագան թագավորի գահակալությունը, Յայոց արևելից Կողմանքում թագավորում է Վաչեն՝ Վաչագանի հորեղբայրը: Սակայն մի որոշ ժամանակ անց, նա հրաժարվում է թագից, աշխարհիկ կյանքից և իրեն նվիրում ճգնավորության: Ըստ պատմավեպում ներկայացրած ավանդության՝ Վաչե թագավորը մի Ավետարան վերցրած առանձնանում է Շոշից ոչ հեռու մի գյուղում, և

որպես ճգնավոր անցկացնում իր կյանքի մնացած օրերը: Դրա համար էլ այդ գյուղը կոչվեց Ավետարանոց, որն այսօր գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում:

Նկատենք, հայոց Արևելքից Կողմանքի արքաների տիրակալման ժամանակագրական նույն հաջորդականությունը, տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունները, հայ-պարսկական, հայ-բյուզանդական բարդ ու հակասական փոխհարաբերություններն ու Վաչե թագավորի վարած պետականամետ քաղաքականությունը և ապա դրան հաջորդած Վաչեի՝ իրեն ճգնավորությանը նվիրելու փաստը արժարժված են նաև Բ. Կարապետյանի պատմավեպում:

Փորձենք պարզել, թե Վաչեն ու Վաչագանը ո՞ր թագավորական արքայատոհմից են սերում: Այս հարցը վիճահարույց է և տարբեր պատմաբանների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվել: Որոշ պատմաբաններ համարում են, որ նա Աղվանից Արշակունիների տոհմից էր, այլ պատմաբաններ նրան Առանշահիկների շառավիղ էին համարում: Պատմաբան Հ. Սվազյանն իր «Աղվանից Վաչե Բ և Վաչագան Գ Բարեպաշտ արքաների դինաստիական պատկանելության մասին» (5) հոդվածում փորձում է պարզաբանել հենց այս խնդիրը: Պատմաբան Բ. Ուլուբաբյանը Վաչե Բ-ին ու Վաչագան Գ-ին դասում է Առանշահիկների շարքին:

Հ. Սվազյանը հերքում է Ուլուբաբյանի կարծիքը, այն համարում էղիչեի պատմագրության սխալ մեկնաբանման արդյունք:

Հիմք ունենալով Մովսես Կաղանկատվացու հիշատակումները՝ ահավասիկ. «Թիւ անուանցն յԱռանայ մինչև ցքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զսոցայն ստոյգն թէ յորմէ տոհմէ են, չունին ասել: Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսոքիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւչագան, Մերիաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայ Աղուանից ...»: (6) Ուսումնասիրողները, հիմք ընդունելով Կաղանկատվացու այս հաղորդումը, ցույց են տալիս, որ Վաչեն ու Վաչագանը սերում են հայոց Արշակունիներից և Վաչեն իշխում էր Բուն Աղվանքում: Ըստ պատմաբան Սվազյանի՝ Աղվանների Արշակունիների դինաստիային հիմք է դնում Մասքթաց թագավոր Սանեսեանը՝ Սանատրուկը, որ հայոց Արշակունիների դինաստիայից Տիգրան Գ-ի ազգակիցն էր:

Ղազարոս Աղայանը Վաչե Բ-ին ու Վաչագանին համարել է Առանշահիկներ՝ հիմք ընդունելով Մովսես Խորենացու ներկայացրած փաստերը, քանի որ հեքիաթում նա Վաչեին ներկայացնում է որպես Հայոց Աղվանաց թագավորության արքա, ոչ թե Բուն Աղվանքի, իսկ Անահիտն՝ իր արքայական ծագումը թաքցնելով, ներկայացնում է որպես «Առանի դուստր»՝ հովվի հասարակ աղջկա կերպարով:

Հ. Խաչատրյանի պատմավեպից ակնհայտ է դառնում Վաչագանի Աղվանի Արշակունիներից սերված լինելու փաստը: Ըստ Հայկ Խաչատրյանի պատմավեպի՝ Վաչագանի հորական տատը՝ Էշխը, պարսկուհի էր, ով ընդունել էր քրիստոնեություն և սովորել հայերեն ու մինչև կյանքի վերջը ոչ միայն չէր դավաճանել հայերին, այլև մինչև Վաչագանի հասունանալն, ինքն էր տիրություն անում Հայոց Արևելքից Կողմանքում, քանի որ նրա թագավոր որդին՝ Վաչեն, հեռացել էր աշխարհիկ կյանքից և ճգնավորական դարձել, իսկ մյուս որդուն՝ Հազկերտին, չէր վստահում, որովհետև պարսկական անուն էր կրում: Էշխը նույնիսկ բանակն էր ղեկավարում ու հարկ եղած դեպքում իր տերության սահմանները ներխուժած պարսկական զորքին ետ քշում: Էշխին, Հայկ Խաչատրյանը ներկայացնում է որ-

պես ուժեղ, իշխող, տոհմական արժանապատվություն ունեցող, հայրենամուտ կնոջ կերպարի:

Իսկ ըստ Բ. Կարապետյանի՝ նրանք պատկանել են Վաչականյան տոհմին. «III դարի կեսից սկսած, Հայոց հյուսիսարևելյան կողմանքում շուրջ 280 տարի՝ Վաչական Քաջից սկսած, իշխում էր Վաչականյան տոհմը: Վաչականյան տոհմանունը պատմավեպի հերոսի անունից չէր կարող ծագել, -մեկնաբանում է հեղինակը,- քանի որ այս տոհմի թագավորների մեջ Վաչական Գ-ն նախավերջինն է՝ 11-րդը: Վաչականյան տոհմի մասին Կաղանկատվացին գրում է, որ չգիտե, թե որտեղից է ծագում այն: Սակայն հետագա խմբագիրը, որը հավանաբար Դասխուրանցին էր, գրում է, թե այն սերում է Առանշահիկներից»: (7) Նկատենք, Կարապետյանը իր գլխավոր հերոսին կոչել է Վաչական և ոչ թե ինչպես հայտնի է պատմագրությունից՝ Վաչագան: Հեղինակը այս կերպ է ստուգաբանում անձնանունը. «Վաչը նշում է տոհմի վաչկատուն, թափառական լինելը, իսկ երկրորդ մասը հայկական ընդունված «ական» վերջածանցն է, որը ցույց է տալիս տվյալ տոհմին պատկանելիությունը: Այս առումով, «ագան» վերջածանց գոյություն չի ունեցել, ու այն մատենագիրներից մեկի սխալմունքից է բխել ու շարունակվել: Իսկ ինչո՞ւ չուղղենք այդ սխալն ու տոհմին վերադարձնենք հայահունչ անունը»: (8) Այս փաստը թե ինչքանով է հավաստի, առայժմ թողնենք մի կողմ: Այժմ անդրադառնանք վերոնշյալ պատմավեպերում Վաչագանի կերպարի առավել խորքային բացահայտումներին:

Ուսումնասիրելով երկու պատմավեպերը՝ նկատելի է այդուհանդերձ դիպաշարային որոշ ընդհանրություններ Բ. Կարապետյանի պատմավեպի և Աղայանի հեքիաթի ու Հ. Խաչատրյանի պատմավեպի միջև: Այս առումով գրականագետ Սուրատ Խանյանը իր «Բաց նամակ արձակագիր, հրապարակախոս Բակուր Կարապետյանին» նամակ-գրախոսականում գրել է. «Վաչագան Բարեպաշտի սիրո պատմությունը ներկայացնելու համար գրեթե նույնությամբ հենվել ես Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի կառուցվածքին ու բովանդակությանը՝ միայն մեկ տարբերությամբ. քո վեպում Անահիտ անվան փոխարեն հնչում է Շուշան անունը»: (9)

Այնուամենայնիվ, պատմավիպասանին հաջողվել է յուրովի ներկայացնել Վաչագանի կերպարը՝ պատմավեպում, ընդգրկելով՝ նրա պատանեկությունը հայրենի գյուղում, ձիաորսը Կուր-Արաքսի տափաստանում, ուսումնառությունը Գուգարաց Աշուշա բղեշխի հիմնած դպրոցում, հանդիպումը Գյուլտ կաթողիկոսի և Մովսես Խորանացու հետ, վերադարձը հայրենի եզերք, ավերված երկրի վերականգնումը, Վահան Մամիկոնյանի հետ զուգահեռ ապստամբությունը պարսից բռնակալության դեմ, պսակը Շուշանիկի հետ, Վաղարշակ արքայից արքայի կողմից թագադրվելը, հեթանոսական աղանդների դեմ պայքարը, դպրոցների ու եկեղեցիների հիմնումը, Սահմանադրական ժողովը, եղիշա առաքյալի հուշակոթողը...

Այժմ դիմենք Հայկ Խաչատրյանի պատմավեպին: Այստեղ ներկայացված է, թե ինչպես Վաչագանը փոքրուց սովորում է բազմաթիվ արհեստներ՝ դուրգի՝ բրուտագործի, լկամի՝ սանձ պատրաստողի և այլն: Թագավոր դառնալով, նա ցերեկները երկիրն էր դեկավարում, գիշերները կնոջ՝ Շուշանիկի հետ այգիներն էր մշակում:

Պատանեկան տարիքում երկրի գահը ստանձնելով, նա անընդհատ մտածում էր Մեծ Հայքին միանալու մասին: Նա քաջ գիտակցում էր, որ պետք է հզորացնել երկիրը: Դարձյալ ստեղծել Մեծ Հայքի թագավորություն:

Դրա համար նա առաջին հերթին արտաքսեց երկրի սրտում բուն դրած դյուբողներին, գուշակներին, ցրեց աղանդները, որոնք օտարամույծ են և հայերի հա-

վատն էին խաթարում և ջլատում միասնականությունը: Դրանց մասին վկայում է նաև Կաղանկատվացին:

Վաչագան թագավորի հրամանով երկրում զարկ է տրվում ոչ միայն եկեղեցաշինությանը, այլև դպրոցաշինությանը: Տարվա օրերի թվով վանքեր ու կրթարաններ է հիմնում: «Անմահանալ կարելի է նախ և առաջ հայերենի պահպանումով: Հային կարող է հավերժակյաց դարձնել միայն հայկական դպրոցը: Իր հողի վրա հայը հայի և Աստծո հետ պիտի խոսի միայն հայերեն: Ազգային ոգու ամենագորեղ կրթատունը հայկական դպրոցն է», (10) - ասում է Վաչագանը:

Արքան հրովարտակ է արձակում, որով բոլոր ուսուցիչ-նաբբուներին աշխատավարձ էր նշանակում: Մինչ այդ Հայոց աշաարհի ոչ մի կողմում այդպիսի բան չէր եղել:

Կառուցվում է նաև Արցախի ամենամեծ քաղաքը՝ Վաչագան արքայի քաղաքամայրը՝ Գյուտականը (հեղինակի վկայությամբ՝ նրա ավերակները պահպանվել են այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ և Մատաղիս գյուղերի գրեթե մեջտեղը, Թարթառ գետի ափին): Սակայն նոր կառուցվող մայրաքաղաքը սրբազործելու և անվանակոչելու համար սրբի մասունք էր պետք և արքան դիմեց Դարահոջ գյուղի երեց Մատթեին, ով Արցախ է բերել Գրիգոր Լուսավորչի մասունքները և գիտի, թե որտեղ է Լուսավորչի թոռան՝ սուրբ Գրիգորիսի գերեզմանը, այն Ամարասի եկեղեցու արևելյան մասում էր գտնվում, բացեցին գերեզմանը, մի մասը հանեցին, մնացածը թողեցին տեղում և դրա վրա արքայի հրամանով կառուցեցին մատուռ: Նորակառույց արքայանիստը սրբազործեցին այդ մասունքներով: Այստեղից էլ՝ քաղաքի անունը՝ Գյուտական: Գյուտը հենց գտնված սրբի մասունքներն էին:

Պատմավեպում հետաքրքիր դրվագներ շատ կան, առանձնապես հետաքրքիր է Վահան Մամիկոնյանի այցն Արցախ, նրա հանդիպումը Վաչագան արքայի հետ: Իմաստունությամբ է շաղախված նրանց խոսակցությունը՝ երկիրը հզորացնելու և պարսից լուծը վերջնականապես թոթափելու առումով:

Երկխոսությունների, մտորումների միջոցով առավել ընդգծվում է Վաչագանի ազգային մտածողությունն ու նրա զուտ մարդկային հոգեբանությունը: Հեղինակին հաջողվել է տարբեր հնարանքների ու լեզվական միջոցների դիմելով, ստեղծել հերոսի անհատակացված կերպարը: «Հերոսների լեզվի ոճավորումը, որը դժվարին ու բարդ գործ է, առավել կարևոր նշանակություն է ստանում պատմավեպերում,-գրում է լեզվաբան Լ. Եզեկյանը,-քանի որ սա նույնպես նպաստում է պատմական տվյալ ժամանակաշրջանի երանգավորմանը և նրան հատուկ կերպարների տիպականացման»: (11)

Մեջբերեն մի հատված, որտեղ առավել ընդգծվում են Վաչագանի՝ պետական առաջնորդի հայրենանվեր պատգամներն ու պետականամետ դիրքորոշումը: Նա ասում է.«Հավերժականը ազգային ոգու կրակն է, որը յոթ բոց ունի՝ բնօրրան, մայրենի լեզու, պար, երգ, անձնանուն, գիր, պատմություն: Այս յոթով է պայմանավորված յուրաքանչյուր մարդու ազգային էությունը: Պահպանիր այս յոթը և կուզես յոթ դավանանք շալակիր՝ դու չես սայթաքի պատմության խաչուղիներում»: Ապա, շարունակելով, թափանցում է.«Բախտավոր չեղա ես՝ արու զավակ չթողնելով աշխարհի վրա: Ինձ կփոխարինի ժողովուրդը»: (12)

Նկատենք՝ եթե Աղայանի հեքիաթում Անահիտն է Վաչագանի խորհրդատուն, ապա Խաչատրյանի պատմավեպում արքայի առաջին խորհրդատուն թագուհին էր՝ Շուշանիկը:

Մի անգամ, երբ վարպետը տեսավ, որ արքան մի հսկա վիմաքար է շալակել, զարմացած հարցրեց, թե ինչու է, թագավոր լինելով հանդերձ, այդպես վարվում, պատշաճ չէ: Արքան նրան պատասխանում է. «Էյ, քարագործ, արքայությունը միայն վայելք չէ, այլև ծանր քար շալակել: Յենց որ վայելքս երկարում է քար եմ առնում ուսիս, որպեսզի ինքս ինձ հիշեցնեմ իմ մեծ հոգսերը»: (13)

Արցախի բոլոր վայրերն էլ սիրելի էին արքայի համար, բայց առանձնապես Ջրվշտիկ ջրվեժը նրան առավել էր գերում, այստեղ նա հաճախակի էր ներանձնանում, վայելում բնության հրաշքները: Ու պատահական չէ, որ այդ վայրում էլ նա կառուցել է Ջրվշտիկ վանքը: Վաչագանն իր շինարարական ծրագրերով շենացնում է երկիրը: Արքային ժողովուրդը տվել է Բարեպաշտ անունը, որովհետև անսահման բարեգործություններ էր անում, ունևոր հոգևորականներից ու իշխաններից վերցնում և բաժանում էր ժողովրդին:

Պատմավեպում խոսվում է նաև արցախյան օդապարիկ նժույգների մասին, որոնք մեծ համբավ ունեին ոչ միայն տարածաշրջանում, այլև նրա սահմաններից դուրս: Արքան հաճախակի էր կազմակերպում ձիարշավներ: Բավական հետաքրքիր է նաև այն տեղեկությունը, ըստ որի առաջին թագավորները թագադրվել են նժույգների վրա: Այն ժամանակ նժույգը գահ էր:

Արքայի մտահոգությունների առանցքում տերության ներքին կյանքը կարգավորող օրենքներ հրապարակելն էր: Ըստ թագավորի՝ օրենքները պետք է արդար և արդարուսույց լինեն: Նա որոշում է հարցումներ անել գիտակ մարդկանց, յոթ անգամ չափել, մեկ անգամ կտրել: Այսպիսով, Վաչագան արքայի Աղվեն ամառանոցում հրավիրվում է ժողով: Այստեղ էին հավաքվել տերության հոգևոր և աշխարհիկ դասի բոլոր առաջնորդները, երևելի դեմքեր՝ քննարկելու օրենքները: Երկար քննարկումներից հետո ընդունվում են կանոնները, որոնք վավերացվում են Վաչագան արքայի և բոլոր ներկաների մատանի-կնիքով: Դրանք ընտանիքի, ամուսնության, հարկատվության, հոգևորականության, ծիսկատարությունների, օրինազանցությունների և այլնի մասին էին, որոնց միջոցով կարգավորվեց երկրի ներքին կյանքը: Ի դեպ, Վաչագան Բարեպաշտ արքայի հաստատած սահմանադրության բնագիրը պահպանվել է Մովսես Կաղանկատվացու երկասիրության մեջ, պատմավիպասանը դրանք գետեղել է նաև վեպում:

Պատմավեպը հագեցած է ժողովրդական իմաստախոսություններով, ավանդազրույցներով, որոնք ստեղծում են պատմական գուներանգ, առավել համոզիչ, հետաքրքրական, ճանաչողական և ուսուցողական դարձնելով երկը:

Վեպը ավարտվում է դրամատիկ տեսարանով՝ Վաչագան թագավորի անփառունակ վախճանով: Պարսից Կավաղ թագավորի խարդավանքի զոհ են դառնում թագավորն ու իր ընտանիքը:

Վաչագան արքայի դին Սյունիքից բերում են Արցախ և ամփոփում Ջրվշտիկ վանքում:

«Վաչագանից հետո Արցախը, Ուտիքը և Կամբեճանը թագավոր չունեցավ: Բայց Վարդան Մանիկոնյանի, Բակի, Վաչեի և Վաչագան Բարեպաշտի ազատատենչ ոգին թագադրեց հայոց լեզուն և հայաշունչ դարձրեց Արցախամուր աշխարհի դարերի ու հազարամյակների բոլոր օրերը», (14)- այս տողերով է եզրափակվում վեպը:

Անկախ ամեն ինչից, պատմավիպասաններին հաջողվել է վարպետությամբ գեղարվեստականացրել ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու այդ համապատկերի վրա ներկայացրել Վաչագան թագավորի հերոսա-

կան կերպարը: Վիպական տիրույթ բերելով Վաչագանին՝ երկու հեղինակներն էլ մատնանշում են այն քաղաքական, իրավական, հոգևոր-մշակութային բազմաթիվ գործոնները, որոնց շնորհիվ Հայոց Արևելից Կողմանքում ստեղծվում է անանիկ, կենտրոնաձիգ թագավորություն:

Այժմ անդրադառնանք Վարդան Հակոբյանի կերտած Վաչագանի կերպարին՝ էպիկական կտավի համապատկերում: Հատկանշական է այն իրողությունը, որ Վ. Հակոբյանը «Տաճարն Աստծո» վիպերգը գրել է Արցախի համար արյունոտ ու ծանր մի ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտ էր ժողովրդին ոգևորել: Գրականագետ Ս. Սարինյանը գրում է.«Ստեղծագործական մի իսկական սխրանք է Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» վիպերգը՝ անկրկնելի ոչ միայն իբրև մտահղացում, այլ որպես ժանրային ձևույթ: Տիեզերքի, պատմության մի գեղեցիկ բանահյուսություն է դա, որ դիցաբանական արխետիպերի և պատմության դարերի վրա ուրվագծում է Արցախի լեզենդը, ուր Գերագույն Ոգին ճշմնարտության, Փրկության, Ազատության, Հավիտենության խորհրդով զորավիգում է արցախցու հավատը... Հիրավի այդպես, քանզի՝ «Աշխարհում գեղեցիկ ու չքնաղ շատ աշխարհներ կան, բայց ոչ մեկը Արցախ չէ: Արցախի սերը՝ տաճար է աստվածային»: (15)

Պատմական իրադարձություններին ու կոնկրետ իրողություններին դիմելով՝ բանաստեղծը լուծում է արդիական խնդիրներ, որոնք ուղիղ գծով առնչվում են արցախյան ազատամարտին: Վիպերգում հեղինակը Վաչագան Բարեպաշտի կերպարում ներկայացնում է Արցախի նորօրյա պայքարում խիզախող հերոսական արցախցիներին: Երկում բանաստեղծական բարձր վարպետությամբ են միահյուսված պատմությունն ու առասպելականությունը: Պոեմում նկատելի են անախրոնիզմի դրսևորումներ, մանավանդ այն պատկերում, երբ երկխոսության մեջ են մտնում Վաչագան Բարեպաշտն ու Վարդան Հակոբյանը: Վիպերգում հեղինակը դիմում է հետաքրքիր հնարանքի, նա 1500 տարի հետո Վաչագանին նամակ է գրում, որտեղ ասում է.

Քեզանից հետո տվին երկիրը,
Վաչագան արքա,
տվին մաս առ մաս,
մազ առ մազ,
ծախեցին հաճախ
ու «ոտքի կոխան դարձրին ամենքի»,
ամեն քոչվորի,
և Վարարակներ
ողբ է՝ Ջրվշտի՝ք... (16)

Բանաստեղծն իր բողոքի, անհանդուրժողականության ծայրն է բարձրացնում: Արցախի պատմությանը խորագիտակ բանաստեղծն ափսոսանքի խոսք է ուղղում Բարեպաշտին.

Ինչու, ինչու...
մոռացար հաճախ,
որ
այդ բողբոջուն գրերի կողքին՝
դրանք պահելու, փրկելու համար
թողնել
պատկերը լարված նիզակի,
Նիզակն Առանի: (17)

Հիրավի, մեր գրողներին հաջողվել է կերտել Վաչագան Բարեպաշտի հերոսական կերպարը: Դարերից հառնող պետականամետ, օրինապաշտ ու բարեպաշտ

Վաչագան արքայի կերպարն իր ուրույն հետազոծն ունի մեր ժողովրդի տարեգրության մեջ:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1970, էջ 178:
2. Н.К.Геу, Время и пространство в структуре произведения, Москва, 1998.
3. Բակուր, Վաչական Բարեպաշտ թագավոր, ՀԳՄ հրատ., Երևան, 2018:
4. Ազատ Արցախ, 15 դեկտեմբերի, 2016:
5. Lraber.asj-oa.am
6. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատուացի), քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983, էջ 41:
7. Գրական թերթ, 01.06.2018թ.:
8. Նույն տեղում:
9. Գրական թերթ, 18.05.2018:
10. Խաչատրյան Հ., Վաչագան, «Ձանգակ» հրատ., Երևան, 1998, էջ 158:
11. Լ. Եգեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2006թ:
12. Խաչատրյան Հ., Վաչագան «Ձանգակ» հրատ., Երևան, 1998, էջ 248:
13. Նույն տեղում, էջ 155:
14. Նույն տեղում, էջ 297:
15. Հակոբյան Վ., Մենարան, Երևանի համալսարանի հրատ., 1996, էջ 4:
16. Հակոբյան Վ., Երկեր, հատոր Գ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 255:
17. Նույն տեղում, էջ 257:

ԱՄՓՈՓՈՒՄ

**ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԵՐՊԱՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայոց Արևելից Կողմանքի հզոր արքաներից էր Վաչագան Բարեպաշտ թագավորը, որը թագավորել է 5-րդ դարի վերջում և 6-րդ դարի սկզբում՝ ստեղծելով հայկական մի փոքրիկ թագավորություն, որն իր գոյությունը նշանավորեց մշակութային, կրթական, իրավական ու շինարարական վերելքով:

Հողվածագիրը Վաչագան թագավորի կերպարը ներկայացրել է ոչ միայն V դարի հայ պատմագրության համատեքստում, այլև գեղարվեստական երկերի զուգահեռներում: Հողվածում քննության են առվել Հայկ Խաչատրյանի «Վաչագան», Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» և Բակուր Կարապետյանի «Վաչական Բարեպաշտ թագավոր» երկերը, որոնցում հաջողվել է վարպետությամբ գեղարվեստականացնել ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններն ու այդ համապատկերի վրա ներկայացնել Վաչագան թագավորի հերոսական կերպարը:

Հիրավի՝ մեր գրողները յուրովի կերտել են Վաչագան Բարեպաշտի կերպարը՝ ընդգծելով նրա ազգային մտածողությունն ու զուտ մարդկային հոգեբանությունը: Դարերից հառնող պետականամետ, օրինապաշտ ու բարեպաշտ Վաչագան արքայի կերպարն իր ուրույն հետազոծն ունի մեր ժողովրդի տարեգրության մեջ:

РЕЗЮМЕ

ОБРАЗ ЦАРЯ ВАЧАГАНА БАРЕПАШТА В
ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

АМАЛЯ ГРИГОРЯН

Ключевые слова: историческая летопись, исторический образ, охудожествление, сказка, исторический роман, историческая поэма, исторический колорит, сюжет, эпический, мифы, типология образов, языковая стилистика.

Одним из великих царей Восточной Армении был Вачаган Барепашт, который правил в конце V и в начале VI в, создавая одно маленькое царство, которое свое существование обозначило культурным, образовательным, юридическим и строительным подъемом.

Автор статьи представил образ царя Вачагана не только в историческом армянском контексте V в, но и в параллелях художественных сочинений. В статье исследовались сочинения Айка Хачатряна "Вачаган", Вардана Акопяна "Храм Божий", Бакура Карапетыана "Царь Вачаган Барепашт", в которых мастерски удалось охудожествить историко-социологические события времени и на этой основе представить героический образ царя Вачагана.

Конечно, наши писатели по-своему изобразили образ Вачагана Барепашта, подчеркивая его национальное мышление и его человеческую психологию. Примерный образ царя Вачагана Барепашта, приходящий из веков, имеет особый след в летописи нашего народа.

SUMMARY

THE IMAGE OF VACHAGAN BAREPASHT IN FICTION

AMALYA GRIGORYAN

Key words: historiography, historical character, artisticization, fairytale, novel, historian, historical colour, range of events, epic, linguistic style, typification of image.

Vachagan Barepasht was the king of the Eastern of Armenia, who reigned from the end of the 5th century till the beginning of the 6th century, making a small kingdom which was marked with its educational, legal and cultural rise.

The author of the article represents the image of King Vachagan not only in the historiography of the 5th century, but in the parallels of fictions as well. In this article are examined Hayk Khachatryan's "Vachagan", Vardan Hakobyan's "The Temple of God" and Bakur Karapetyan's "King Vachagan Barepasht" in which they could successfully artisticize the historical events and on this picture show the heroic image of Vachagan Barepasht.

Our writers create the image of Vachagan Barepasht underlining his national mentality and his human psychology.

The image of pious, law-abiding King Vachagan has its unique place in the history of our people.

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ Մ. ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐՈՒՄ*

*Արցախյան գոյամարտը եղավ Ոգու պոռթկում.
մեր արյան
ավյունը տվեցինք մեր մեծ պայքարին
և հիմա նվիրվել ենք... հոգնության նիրվանային:
Մինչդեռ ավելի մեծ գործեր կան առջևում,
որպեսզի մեր հաղթանակն ավարտվի մեզ
արժանավոր ոսկեհուն պսակով:*

Մաքսիմ Հովհաննիսյան

Բանալի բառեր. Արցախյան հերոսամարտ, հրապարակախոս, Մաքսիմ Հովհաննիսյան, հայ ժողովուրդ, հակամարտություն, Ստեփանակերտ, գործողություններ, ճակատագիր, ռեպորտաժ, հայ-ադրբեջանական հակասություններ:

Տասնամյակներ են անցել Արցախյան հերոսամարտից, ինչը եղել է շարունակում է մնալ թե՛ հայ, թե՛ օտարազգի գրողների, պատմաբանների, քաղաքական գործիչների եւ մի շարք այլ բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Եվ թեև նրան նվիրված են բազմաթիվ աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, գրքեր, հուշագրություններ, վիճակագրական եւ փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գիրք-հուշամատյաններ, տարեգրություններ, որոնք կարելի էր դեր են խաղում անհրաժեշտ եզրակացություններ անելու համար, այնուամենայնիվ, հայ ժողովրդի համար արյունոտ, սակայն հաղթական եւ ճակատագրական կարելի էր ժամանակաշրջանի ամբողջական իրապատկերն ավարտված համարել դեռևս չի կարելի, քանի դեռ ասելիք կա, եւ արթուն է մարդկային հիշողությունը: Արցախյան ազատամարտի հերոսների սխրագործությունները ներկայացնելու համար հայ գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության մեջ հայտնվում է ազատամարտիկ-զինվորի նորահայտ ու ինքնատիպ կերպարը: Այն ի տարբերություն Հայրենական մեծ պատերազմին մասնակցած խորհրդային զինվորի գրական կերպարի, դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, նոր ու հետաքրքիր երանգներով հարստացնելով արդի հայ արձակի ազգային դիմապատկերը: Հերոսազատամարտիկի կյանքն ու քաջագործությունները, ինչպես նաեւ Արցախյան

*Հոդվածն ընդունվել է 12.03.2018թ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

իրադարձությունների ամբողջական պատկերն արձանագրելու նպատակով ծնունդ է առնում վավերագրական արձակը, որտեղ իրենց նպաստն են բերում Հովիկ Վարդունյանը, Վարդգես Բաղդյանը, Նվարդ Սողոմոնյանը, Կոմիտաս Դանիելյանը եւ այլոք: Արցախյան վավերագրությունը որակական իմաստով լավագույնս դրսևորվեց գրող-հրապարակախոս Մ.Հովհաննիսյանի կողմից: Նրա բեղմնավոր գրիչը ազդարարում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի հաղթարշավը: Մ. Հովհաննիսյանն իր տաղանդի եւ փորձի շնորհիվ վարպետորեն համադրել է վավերականն ու գեղարվեստականը եւ արդյունքում ստացել ժանրային ձեւափոխված հետաքրքիր մի միասնություն, ինչպես ժամանակին ընդգծվել է «Սովետական գրականության պատմություն» ձեռնարկի 2-րդ հատորում. «Գեղեցիկ փաստագրական հավաստիության շրջանակները, ակնարկը վերաճում է պատմվածքի»: (1)

Մ. Հովհաննիսյանի «Ռեպորտաժ դեպքի վայրից» եւ այլ հրապարակումները լինելով լրագրային ժանրեր, միաժամանակ կարելի է համարել փոքրածավալ պատմվածքներ: Գրող-հրապարակախոսը ներդրել է իր մարդկային ու մասնագիտական ողջ ներուժը եւ հայ ժողովրդի կենսագրության կարեւորագույն էջերից մեկը՝ Արցախյան գոյապայքարի ամբողջական պատկերը հավերժացրել «Ռեպորտաժ դեպքի վայրից» խորագիրը կրող երեք մասից բաղկացած շարքում: Նրա հրապարակախոսական սուր մտքի արգասիքը դարձած Արցախյան գոյամարտի լավագույն վկայականը, ժամանակային ճշգրտությամբ, փաստերի հերթականության ամբողջությամբ հայ ազգի կենսագրության մեջ մեծ արժեք ներկայացնող գործ է՝ պատմական կարեւոր իրադարձությունների անմիջական շարադրանքով ու նկարագրությամբ: Հովհաննիսյանը, լրագրության ժանրային առանձնահատկություններից ելնելով, ժամանակին ու անկողմնակալ ներկայացնում է իրողությունը՝ երբեմն հենց դեպքի վայրից: «Ռեպորտաժ դեպքի վայրից» բաժնի հրապարակումները մեծամասամբ հենց նման բնույթ են կրում: Վերնագրի ընտրությունն իրոք համապատասխանում է շարքի մեջ ներառված գործերի կառուցվածքին:

Գրող-հրապարակախոսի յուրաքանչյուր գործ ընթերցողին օգնում է զգալ իրադարձությունների ողջ ընթացքը, պատկերացնել նրա ողջ խորությունը: Այն արցախյան ազգային-ազատագրական պայքարի, Արցախի ու արցախցիների փաստացի նկարագիրն է, արցախյան գոյապայքարի ժամանակագրությունը, ինչի մասին նշում է նաեւ ինքը՝ հեղինակը: Սակայն այն զուտ փաստագրական շարադրանք չէ: Փաստերը պարուրված են հուզական նկարագրություններով, ինչն արվում է տեղին ու չափի մեջ: Հովհաննիսյանի հրապարակումներում պարզ երեւում է հայ ժողովրդի ցավով տառապող արվեստագետ-քաղաքացին, ուն համար ժամանակի հրամայական գործը սեփական ազգի փրկությունն էր: Ձեռքը, որ նա վերցրեց 88-ին եւ 88-ից առաջ, գրիչն էր, առատ հունձքը՝ մշտապես թարմ, ճշգրիտ, հմտորեն գրված հոդվածները: Հրապարակախոսն անձամբ հայտնվում էր իրադարձությունների կենտրոնում, հետեւում նրանց ընթացքին, մտահոգվում երեւույթների անհաջող դասավորությունից, տխրում ողբերգական երեւույթներից, ուրախանում հաջող արդյունքներով: Նա ակտիվ պայքարում էր իր գրչով: Հրապարակումներում առավել ընդգրկում ու շոշափելի տարածք են գրավում ղարաբաղյան շարժման սկիզբը, ընթացքն ու պայմանական ավարտն ամբողջությամբ, որտեղ հայի լինել-չլինելու խնդիրն էր բարձրաձայնվում: Հրապարակախոսը, ներկայացնելով երկար ու քարքարոտ ճանապարհ անցած հայ ժողովրդի ծանր ճակատագիրն ու հերթական գոյապայքարի դառնությունները, ընդգծում է,

որ Արցախյան ազգային-ազատագրական գոյապայքարը նոր նպատակների, սպասելիքների տարածք էր բացել: Հայ ազգին աշխարհի երեսից վերացնելու եւ «մեկ հայ թողնելու՝ այն էլ թանգարանում» խելահեղ մարմաջով հարբած, մեր հարեւան թշնամին այս անգամ էլ հային՝ իր սեփական տնից վեճելու դաժան ու անմարդկային ճանապարհն էր բռնել: Այս անգամ մեկ այլ ժամանակամետ ձեւակերպմամբ՝ «Չկա հայ՝ չկա պորբլեն»: Ըստ որում, այդ նպատակին հասնելու համար առաջնորդվում էր՝ «ինչքան վատ՝ այնքան լավ» սկզբունքով: «Մեծ փորձության ժամանակը» հրապարակման մեջ հրապարակախոսը պատմության հիմնավոր խորքերից արձանագրում է այն իրողությունը, որ հայն ու ադրբեջանցին աշխարհագրական տարածքի պարտադրանքով պետք է ապրեն իրար հարեւանությամբ, քանի որ ճակատագրով պարտադրված են իրար, եւ սա այն դեպքը չէ, որ եթե հարեւանդ թո սրտովը չէ, կարող ես տունդ փոխել. «Հայրենի հողը աճուրդի չեն հանում», (2) - գրում է նա:

Մ. Հովհաննիսյանն արձանագրում է այն պատմական իրողությունը, որ արցախյան ազգային-ազատագրական շարժման արմատներն իրականում շատ խորն են: Այն սկսվել է 1921 թվականից, երբ Լեւինի եւ Ստալինի կամքով Հայաստանը մեկ անգամ եւս բզկտվեց, Նախիջեւանն ու Լեռնային Ղարաբաղը նվիրեցին Ադրբեջանին: «Արդեն իր գոյության արշալույսին,- «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր» խորագրի տակ մեկնաբանում է հրապարակախոսը,- համայնավարությունը, վերադասավորելով երկրներ ու ժողովուրդներ, այսպես լուծում էր ազգային հարցը: Այդ զոհասեղանին, թերեւս, Ղարաբաղն առաջին մատաղացուն էր: Ամեն անգամ, երբ փչել է ազատության թեկուզ բեկ-բեկ հովը, անթեղի տակ պահված կրակը նորից բորբոքվել է, եւ մեր ազգային բողոքն ասպարեզ է հանվել»: (3) ճակատագրական պոռթկում տեղի ունեցավ 1965-ին, երբ մի խումբ մտավորականներ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին հասցեագրված նամակում, փաստելով Ադրբեջանի իշխանությունների հայակործան քաղաքականությունը՝ որպես ազգային ծրագիր, պահանջեցին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանին: Նամակն արտահայտում էր Արցախի հայ ժողովրդի կամքը, եւ շուտով շարժման մեջ են ներքաշվում գյուղեր, քաղաքներ ու շրջաններ:

Ծանր էր եւ ոչ անհետեւանք Բորիս Գեւորգովի գործունեության ժամանակաշրջանը, որը «Ղարաբաղյան նացիոնալիզմը» արմատախիլ անելու համար Ստեփանակերտ էր ուղարկվել՝ որպես Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար: Այսպիսով՝ գեւորգովյան 15-ամյա իշխանության տարիներին կուտակված համբերատարությամբ աչքի ընկնող հայ ժողովրդի ցատունը ժայթքում է 1988-ին: Հրապարակախոսը մանրամասն ներկայացնում է 1988-ի փետրվարի կեսերին եւ հետագայում Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի եռուն իրավիճակը: Եվ թե ինչպես իրենց համայնքների վերջնական ու հաստատուն կամքն արտահայտելու համար Ստեփանակերտ էին գալիս Արցախի տարբեր քաղաքներից ու գյուղերից պատգամավորներ, որի հետեւանքով էլ փետրվարի 13-ին տեղի է ունենում առաջին հանրահավաքը՝ «ի հեճուկս տեղական իշխանությունների դիմակայության, ի հակադրումն Բաքվից ժամանած բարձրաստիճան բանազնացների»: (4)

Սկսվում է Արցախյան շարժումը: Դեպքերի հետագա ընթացքն անկանխատեսելի էր եւ միաժամանակ ողբերգական իրադարձություններով հագեցած: «Բայց արդյո՞ք՝ անկանխատեսելի: Մի՞թե, իրոք, հետագա արյունալի դեպքերը տարերային էին ծնվում, ինչպես փորձում էր ներկայացնել պաշտոնական կենտրոնը: Թե դրանք հղացվել էին նախօրոք, սառն ուղեղով: Այդ ամենը հստակվեց ու չեւ ուշացած, երբ ամենն այլեւս տեղի ունեցած էին»,- գրում է հրապարակախոսը:

Արցախյան շարժումը գնալով լայնածավալ մասշտաբների է հասնում: Հայ-ադրբեջանական առճակատումը պայքարի քաղաքակիրթ ձևերից անցնում է «բիրտ ուժին», ահաբեկչությանը, սպանություններին: Արցախի հարակից ադրբեջանական շրջաններից հենց Արցախում կազմակերպում են ճանապարհների շրջափակում, ավազակային հարձակումներ՝ հայկական գյուղերի վրա: Այսպես կոչված «ադրբեջանական գործոնը» գործողության մեջ էր դրվում Արցախում: Կարճ ժամանակահատվածում մարզը շրջափակման մեջ է առնվում եւ կտրվում է արտաքին աշխարհից: Փակվում են մարզկենտրոն Ստեփանակերտից Մարտունի, Հադրութ, Մարտակերտ տանող, ինչպես նաեւ Հադրութից շրջանի գյուղեր գնացող այն բոլոր ճանապարհները, որոնք անցնում են Աղդամ, Ֆիզուլի եւ այլ ադրբեջանական շրջաններով: Փակվում են նաեւ մարզի ներսի այն ճանապարհները, որոնք անցնում էին ադրբեջանական բնակավայրերով: Այս ամենի շուրջ «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր» հրապարակման մեջ ահա թե ինչ մեկնաբանությամբ է հանդես գալիս Մ. Հովհաննիսյանը. «Դա հնարավոր դարձավ, երբ Արցախ ներմուծվեցին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զինվորական կազմավորումները: Այդ ուժերը ոչ թե օրինականությունը պահպանելու համար էին ժամանել, ինչպես հայտարարվեց պաշտոնապես, այլ՝ իրականացնելու «կապված հորթին» խրատելու՝ պետականորեն մշակված ծրագիրը: Ղարաբաղյան «վարակը» լոկալացնելու եւ շարժումը վնասագերծելու նպատակին հետամուտ՝ Կենտրոնը դարձավ Ադրբեջանի կամա թե ակամա դաշնակիցը: 1990 թվականին ԼՂԻՄ-ում ու նրան հարակից շրջաններում հայտարարվեց արտակարգ դրություն, արցախյան շարժման վրա ճնշումն ավելի խորացնելու եւ բռնի ուժով մարելու այն: Իսկ առիթը եղան Բաքվի արյունալի դեպքերը: Հերթական անգամ Կենտրոնն Արցախը դարձրեց «քավության նոխազ»: Այս ժամանակաշրջանի իրական նկարագիրն իր բոլոր նրբությունների, պատճառահետեւանքային կապերի դրական ու բացասական դրսեւորումների մասին մանրամասն մեկնաբանություններն ու դիտարկումներն առավել շոշափելի են Մ. Հովհաննիսյանի «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր», «Նամակ Աշխեն Պետրոսյանին», «Սկզբում եղել է բանը», «Մեր նոյեմբերի 7-ը», «Ով պետք է կանգնի ժողովրդական դատի առջեւ» եւ մի շարք այլ հրապարակումներում: «Նամակ Աշխեն Պետրոսյանին» հրապարակման մեջ Մ. Հովհաննիսյանը գրում է. «Այս տարվա անցած ամիսների դաժան ու հետեւողական ճնշումները, որ ձեռնարկում էր Ադրբեջանի ղեկավարությունն արցախահայության նկատմամբ, իր նախադեպը չունեն խորհրդային իշխանության բոլոր ժամանակներում՝ նույնիսկ ավիելյան ժամանակների համեմատությամբ: Խտրականության, տնտեսական ու քաղաքական ճնշման, արտակարգ դրության պայմաններում մարզ մուծված զինվորական ուժի լայն օգտագործման միջոցով Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է ստեղծել նախիջեւանյան սինդրոմը, խախտել մարզի ժողովրդագրական կազմը: Արցախը նրանց համար «տերունական հող» է, որ ժառանգել են բեկական-ֆեոդալական ինչ-որ արտոնագրով»: (5)

«Մեր նոյեմբերի 7-ը» հրապարակման մեջ էլ հրապարակախոսը «բորբոքված ուղեղով» «կոկորդում կուտակված հարցականների» պատասխաններն է ուզում ստանալ. «Արտակարգ դրության անձուկ նեղվածքներում, շրջափակման ոսկրոտ ճիրաններում մենք պատասխան ենք ողորում՝ տվե՛ք մեզ ապրելու, մեր հողը հերկելու, մեր երեխաներին փայփայելու, մեր սիրեցյալներին սիրելու պարզագույն իրավունքը: Տվե՛ք մեզ մարդկության հնարած «մարդու իրավունքները»:

Տվե՛ք մեզ Արդարությունը, որպեսզի նրանով դատվեն սպանություն, ավերում, լլկում: Սուևզայիթում, Բաքվում, մեր ճանապարհների վրա, մեր հնձանի կողքին, արտի մեջ, մեր օջախում: Տվե՛ք մեզ Հավասարություն, որ գորավոր այլ ազգերի պես մեր ճակատագիրը, մեր ապագան ինքներս տնօրինենք: Որպեսզի առաջնորդի հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքը լինի կարգ եւ ոչ թե մերկ շեքին դրված թգեմու տերեւ: Հավասար լինենք իրար նկատմամբ ու պատմության առջեւ»: (6) Այնուհետեւ հրապարակախոսն արձանագրում է այն տխուր իրողությունը, որ գործարանները հումք չլինելու պատճառով կանգնել են, ճանապարհները երթելեկ չլինելու հետեւանքով փակվել են, սերմնացանը հողը ցանելու հնար չլինելու պատճառով մնացել է վիզը ծուռ կանգնած, պատն էլ մնացել է կիսատ՝ տունը կառուցելու հնար չկա: «Մինչդեռ կարգախոսը ի լուր աշխարհի հռչակել էր՝ գործարանները՝ բանվորներին, հողը գյուղացուն, փառքը՝ աշխատավորին: Փուստ, փուստ, փուստ... Վերակառուցման՝ մարզում իրականացվող այս դարբուդարաղը դարձել է պետական քաղաքականություն», (7) - պարզաբանում է Մ. Հովհաննիսյանը: Իսկ «Ո՞վ պետք է կանգնի ժողովրդական դատի առջեւ» խորագիրը կրող հրապարակման մեջ հեղինակը վառված Ծաղկածորի՝ իր իսկ տանը սպանված 83-ամյա ծեր կնոջ, ջահել-ջիվանների սպանության եւ այլ ողբերգական երեւույթների մասին հիշատակելով՝ ներկայացնում է արցախահայության միամտության հասնող այն հույսն ու հավատը, որ արտակարգ դրության ռեժիմը կարող է կայունացնել իրավիճակը:

«Սկիլլայի եւ Խարիբդիսի արանքում» հրապարակման մեջ ահա թե ինչ մեկնաբանությամբ ու եզրահանգումներով է հանդես գալիս հրապարակախոսը. «Արտակարգ դրությունը հնարվեց որպես քաղաքական զենք՝ անենթակա պրոբլեմներին ուժային լուծում տալու համար: ԽՍՀՄ երկրի լայնածավալ տարածքից պոլիզոն ընտրվեց քարտեզի վրա մի ասեղաչափ ԿՌՕ-ն: Ձինամթերք կա՝ չգիտեմ որտեղ հայտնագործված, բայց առաջինը Ադրբեջանում կիրառված շրջափակումը՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական՝ առանձին-առանձին կամ ցանկացած կոմբինացիայով: Իրենց ուժը դեռ չեն կորցրել երեսնական թվականներին լայնորեն կիրառված շանտաժը, պրովոկացիան, ռեպրեսիան: Դրան զուամարած՝ ցեղակից օսմանների զինապաշարը: Մի հսկայական կայսրություն մի փոքրիկ երկրամասի մսին է դառել, Նախիջեւանի սինդրոմն ուզում են սածիլել Արցախի հողերը»: (8) Այս շրջանում Արցախն ամբողջությամբ գտնվում է շրջափակման մեջ: Ձինված ադրբեջանցիներն իրավապահ մարմինների աջքի առաջ «հարյա-հրոցով», հրացանային կրակոցներով ավազակային հարձակումներ են ձեռնարկում հայկական բնակավայրերի վրա, թալանում ու ավերում: Մարդիկ, ստեղծված իրավիճակից ելք չգտնելով, հուսահատ թողնում-հեռանում են հայրենի գյուղերից: Անասնագողությունն Ադրբեջանի պետական քաղաքականության մասը կազմելով՝ մի քանի ամսում անասելի չափերի է հասնում: «Նույնիսկ Հայրենական պատերազմի տարիներին,- «Գործ անելու ժամանակը» հրապարակման մեջ գրում է Մ. Հովհաննիսյանը,- երբ մեր ծնակներում վխտում էին ռազմաճակատը լքած ոչ մեր «ղաչաղները», անասնագողությունն այսքան չէր հեշտացել: Առանց համարի ավտոմեքենաները վխտում են ձորակում: Եվ այդ ամենն արվում է մեր պետությունն իրավական պետություն դարձնելու կուսակցական-պետական ջանքերի մեր օրերում»: (9) 1990-91թթ. ԼՂԻՄ պետական եւ կոլեկտիվ տնտեսություններից քաշվել է ավելի քան 12 հազար խոշոր եղջերավոր անասուն: Պարետության քթի տակ եւ աչքի առաջ հրդեհվում էին արտերը, թալանվում դաշտային կայանները: Արցախն արտաքին աշխարհի հետ կապված էր միայն օդային ճանապարհով, որտեղ արդեն տեր ու տնօրեն էր դարձել ադրբեջանական օմօնը: Քրեական անցյալ ունեցող օմօնականները ծաղր ու ծանակի էին եւնթարկում հայ ուղեւորներին, առանց դատ ու դատաստանի ծեծում, թալանում, փոքր ինչ դիմադրության դեպքում՝ բանտարկում: «Ռեզուս կոնֆլիկտ, թե՛ ռեզուս համաձայնություն» վերնագրի տակ Մ. Հովհաննիսյանը խոսում է այն մա-

սին, որ առաջին անգամ չէ աղբբեջանական բնակավայրում տեղադրված զինված միավորումների օգնությամբ կազմակերպվող բռնությունները, սադրանքները, շիկացված քաղաքական մթնոլորտը, ինչպես նաև ծխածածկույթի տակ մարզ մտցված այն ուժերը, որոնց նպատակն է ահաբեկչությամբ ու բռնությամբ խեղդել արցախահայության ազգային իրավունքների համար պայքարը: Եվ ապա արձանագրում մարզում ստեղծված երկու զուգահեռ կառուցվածքների՝ պարետության եւ օմօնի առկայությունը, նշում է, որ վերջինիս ավելանում է «Աղբբեջանի ՆԳՆ միլիցիայի կոնտինգենտը»: «Սոււնգայիթ՝ նշանակում է ցեղասպանություն» հրապարակման մեջ էլ հրապարակախոսն արձանագրելով Աղբբեջանի Հանրապետության ղեկավար շրջանների որոշակի արդեցիկ ուժերի կողմից արցախահայությանը ծնկի բերելու նորանոր միջոցների հնարման փաստը՝ ընդգծում է, որ խախտելով երկրի սահմանադրական օրենքները՝ Աղբբեջանի Գերագույն խորհուրդը լուծարում է Արցախի բոլոր մակարդակի խորհուրդները: Իսկ Աղբբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն դադարեցնում է կուսակցության շրջկոմների գործունեությունը (բացառությամբ՝ Շուշիի): Քաղաքական այդ ոտնձգությունների նպատակը թերեւս կառավարման եւ կուսակցական բոլոր կառուցվածքների կազմալուծման, ժողովրդին ղեկավար մարմիններից զրկելու, արցախյան շարժումն այդպիսով ջլատելու մեջ էր կայանում: Ահա թե ինչ մեկնաբանություն է տալիս հրապարակախոսը. «Այսօր Արցախում, Կենտրոնի թողտվությամբ, իրականացվում է արցախահայության ցեղասպանություն: Սակայն այդ հրեշավոր ծրագիրը կրողները ճակատագրական սխալ են թույլ տալիս՝ Արցախը հայ ոգու հավերժական գոյատեւման սիմվոլն է: Այդպես եղել է դարեր շարունակ, այդպես է հիմա»: (10) 1991-ի վերջերից ռազմական գործողություններ ծավալվեցին Արցախի ամբողջ տարածքում: 1992 թվականն ամենաարյունալին էր մեր գոյապայքարի տարեգրության մեջ: Թշնամին գերազանցում էր մարտական տեսնիկայով եւ գորբերի թվաքանակով: Նրա զինյալ «հրոսակախմբերն ասպատակում էին» Արցախի բնակավայրերը, տարբեր տրամաչափի հրազենից երկաթե հեղեղ թափում քաղաքների եւ գյուղերի վրա, ավերում շենքեր, սպանում խաղաղ քաղաքացիների: Առանձնապես ծանր էր Ստեփանակերտի վիճակը, հատկապես, երբ քաղաքը սկսեցին հրթիռակոծել «գրադ» կայանքներից եւ փլատակների վերածել տասնյակ բնակելի շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ խաղաղ բնակչությունը, վերջնականապես քուն ու հանգիստ կորցրած, վախի ու սարսափի մեջ ամեն օր զոհեր էր ունենում: Շուշիից եւ շրջակա աղբբեջանական բնակավայրերից ամեն կերպ ձգտում էին Ստեփանակերտը՝ որպես Արցախի ազատագրական պայքարի միջնաբերդ, ավերակի վերածել, ճնշել նրա ազատատենչ ոգին: Հայերն այլընտրանք չունեին՝ թշնամուն պետք է դուրս վճնդեին իրենց հայրենի բնօրրանից: Տասնյակ քաջազուն հայորդիներ, զոհելով իրենց կյանքը, ազատագրում են Կրկժանը, Մալիբեկլուն, Խոջալուն, իսկ մայիսի 9-ին 70-ամյա գերությունից հետո ազատագրվում է նաեւ Շուշին: «Մայիսի 18-ին իրականացվում է արցախահայության մեկ ուրիշ երազանքը՝ ԼՂՀ-ն Լաչինի պորտալարով միանում է մայր Հայաստանին,- գրում է հրապարակախոսը: - Դա աստեղային ժամն է Արցախի գոյապայքարի պատմության մեջ: Այդ օրը տողերիս հեղինակը մարտի տաք հետքերով անցավ Լաչինի միջանցքով: Հիշում եմ միջանցքը մաքրող ազատամարտիկներից մեկի խոսքերը. «Այլեւս պետք է դադարեցվի ֆիդայական կռիվը, պետք է ստեղծել կանոնավոր բանակ: Ավաղ, այն ժամանակ դա ստեղի չունեցավ, ավելին՝ հաղթանակը բթացրեց մեր մարտական ոգին, մենք չկարողացանք ծավալել հաջողությունները»: (11)

Հաջողությունների ու անհաջողությունների, ոգու անկման եւ ոգեշնչումների աննախադեպ պայքարի հետագա ընթացքն ամենայն մանրամասնությամբ տեղ է գտնում գրող- հրապարակախոսի տողերում: Հայոց ազգային բանակի ստեղծման գաղափարն իրագործվում է 1992–1993թթ.՝ երկրապահ կամավորական ջոկատների եւ բանակ զորակոչված զինակոչիկների միասնական ուժերով: Հայ ազգը, մոտ 20-25 հազարանոց բանակով դուրս գալով Աղբբեջանի 75-80 հազա-

րանոց բանակի դեմ, հերոսաբար հետ է շարտում թշնամու գրոհը եւ ազատագրում Արցախը: 1994 թվականի մայիսի 12-ին կնքվում է գինադադար: Արդյունքում՝ հայերն ունենում են 5 հազար գոհ, ինչպես նաեւ՝ հազարավոր գոհեր՝ խաղաղ բնակչության շրջանում:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետևանքով ծագած զինված հակամարտությունը՝ 1988–1994թթ., իր փուլային բոլոր ընդգրկումներով տեղ է գտնում Մաքսիմ Հովհաննիսյանի հրապարակախոսական մտքի դիտակետում՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների, ներքին ու արտաքին քաղաքական դրսեւորումների ընդհանրությամբ: Անկախ նրանից, թե փուլային ինչ համակարգով արժե առաջնորդվել, գրող-հրապարակախոսն ամենայն մանրամասնությամբ, անկողմնակալ շարադրանքով ու մեկնաբանությամբ արձանագրել է հակամարտության ամբողջ անցուղարձը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Սովետահայ գրականության պատմություն», 2-րդ հատոր, 1965 թ., Երեւան, էջ 45:
2. Հովհաննիսյան Մ., Երկեր, երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, 2008 թ., էջ 187:
3. Նույն տեղում, էջ 243:
4. Նույն տեղում, էջ 244:
5. Նույն տեղում, էջ 371-372:
6. Նույն տեղում, էջ 412 :
7. Նույն տեղում, էջ 412:
8. Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, 2006 թ., էջ 357:
9. Նույն տեղում, էջ 312:
10. Նույն տեղում, էջ 436:
11. Նույն տեղում, էջ 436:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶՏԱՍՄԱՐՏԻ ԱՆԴՐԱԳՐԱՋԸ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐՈՒՄ

ԱԼԻՍԱ ԲԱԴԴԱՍՄԱՐՅԱՆ

Տասնամյակներ են անցել Արցախյան հերոսամարտից, ինչը եղել է շարունակում է մնալ թե՛ հայ, թե՛ օտարազգի գրողների, պատմաբանների, քաղաքական գործիչների եւ մի շարք այլ բնագավառների ներկայացուցիչների ու շաղկոթային կենտրոնում: Արցախյան վավերագրությունը որակական իմաստով լավագույնս դրսեւորվեց գրող-հրապարակախոս Մ. Հովհաննիսյանի կողմից: Հայ ժողովրդի պատմության կարեւորագույն էջերից մեկի՝ 20-րդ դարի Արցախյան գոյապայքարի արձանագրման գործում Հովհաննիսյանի ավանդը մեծ է «Ռեպորտաժ դեպքի վայրից» երեք բաժնից բաղկացած շարքում եւ այլ հրապարակումներում:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետևանքով ծագած զինված հակամարտությունը՝ 1988–1994թթ., իր փուլային բոլոր ընդգրկումներով տեղ է գտել Մաքսիմ Հովհաննիսյանի հրապարակախոսական մտքի դիտակետում՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների, ներքին ու արտաքին քաղաքական դրսեւորումների ընդհանրությամբ:

РЕЗЮМЕ

ОТБРАЖЕНИЕ АРЦАХСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРЬБЫ В РЕПОРТАЖЕ М. ОВАННИСЯНА

АЛИСА БАГДАСАРЯН

Ключевые слова: Арцахская героическая борьба, публицист, Максим Ованнисян, армянский народ, противоборство, Степанакерт, действия, судьба, репортаж, армяно-азербайджанское противостояние.

Прошли десятилетия со времени начала Арцахской героической борьбы, которая была и продолжает оставаться в центре внимания как армянских, так и зарубежных писателей, историков, политических деятелей и ряда представителей других сфер. В качественном плане арцахская документалистика проявилась в лучшем виде у писателя-публициста у М. Ованнисяна. Вклад Ованнисяна в освещение одной из важнейших страниц истории армянского народа – Арцахской освободительной борьбы 20 века велик в цикле "Репортаж с места происшествия", состоящем из трех частей, и в других публикациях.

Все этапы вооруженного противостояния 1988-1994 гг., возникшего вследствие агрессии Азербайджанской республики против НКР, нашли отражение в публицистической мысли М. Ованнисяна: в комплексе региональных и международных развитий, проявлений внутренней и внешней политики.

SUMMARY

THE REFLECTION OF ARTSAKH WAR OF INDEPENDENCE IN
M. HOVHANNISYAN'S REPORTS

ALISA BAGHDASARYAN

Keywords: Artsakh heroic battle, publicist, Maxim Hovhannisyanyan, Armenians, antagonism, Stepanakert, actions, fate, reporting, Armenian-Azerbaijani antagonism.

Decades have passed after Artsakh war which was and still remains on the focus of the Armenian and foreign writers, historians, politicians and representatives of many other spheres. The Artsakhi documentary was best expressed by writer-publicist M. Hovhannisyanyan in terms of its qualitative peculiarities.

Hovhannisyanyan's contribution to recording one of the most prominent pages of the history of the Armenian people in the 20th century the struggle for survival in Artsakh is great both in the three-part series "Reports from the scene" and in other publications. The armed conflict arising from the aggression of the Republic of Azerbaijan against Nagorno-Karabakh in 1988-1994 with its stage-by-stage coverage is included in the view stand of Hovhannisyanyan's public opinion with generalizing the regional and international developments, inner and foreign political manifestations.

ՆԱՆԱՐ ՄԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՆՑ ԳՐՈՂՆ ՈՒ ԳԵՂԱԳԵՏԸ*

Բանալի բառեր՝ գրական ժառանգություն, փիլիսոփայական հարցումներ, էկզիստենցիալիստական մտածողություն, արդիապաշտություն, աքսոր, համաշխարհային գրականություն, անկատար, խոսք:

Հակոբ Կարապենցն իր գրական հարուստ ժառանգության (պատմվածք, վիպակ, վեպ, փորձագրություն) ժանրային սահմաններում վերակառուցել է իմացական խոսքի սրությունն ու այժմեական նպատակասլաց բարձր ընթացքները: Նրա ստեղծագործությունն ամբողջապես փիլիսոփայական հարցումների դիմաց պատասխանների փնտրտուք է, ինչպես խոստովանում է ինքը «Բառի փրկությունը» կարճառոտ փորձագրության մեջ 1986-ի սեպտեմբերին. «Գրում եմ, որովհետև կեանքը ոչ կատարեալ է, ոչ էլ արդար: Գրելով փորձում եմ գտնել ճիշդ հարցումը, երբեմն էլ՝ պատասխանը: Գրելով ջանում եմ փրկել ինձ, ապա՝ մարդուն»: (1)

Հակոբ Կարապենցին կարելի է և պետք է արժևորել, նախ, էկզիստենցիալիստական (գոյապաշտական) գեղարվեստական մտածողության շրջանակում: Ավանդույթի բերած կաշկանդումների դիմաց գրողական «փրկության ճանապարհին» գոյապաշտները նախընտրում են «բացարձակ ազատության կարգախոսը», ինչի հետևանքով համաշխարհային գետնի վրա արդեն «գոյապաշտությունը խորտակել էր ամբարտակները: ...Յոյսից առաւել,- եզրակացնում է Հ. Կարապենցը,- նրանց ենթադաշտը գաղափարներն են՝ արտայայտուած մերթ իրապաշտ, մերթ վերացապաշտ գոյներով, սակայն միշտ մնալով գիտակցականի ու ենթագիտակցականի միջև ընկած ծիրում»: (2)

Գրական հետաքրքրության երկրորդ, սակայն ծննդաբանական գործոնով առաջինի հետ առարկայական ու տեսանելի, սերտորեն առնչված նրա դաշտն արդիապաշտ ուղղության ակունքն էր: Նրա հայկական սահմանների գլուխ ամերիկահայ արձակագիրը կարգում էր Հակոբ Օշականին՝ որպես գրական բարձր երևույթ, որպես իրական համակշիռ Ջեյմս Ջոյսին: (3) Ի դեպ, արդիապաշտության լայնահուն ճանապարհը նա բերում է շարժման հայկական նոր գետին գուզընթաց, թեև ընդունում է, որ մեր յուրացումն ամբողջական չէ, գետը հորդառատ չէ կարծես:

«Արդիապաշտ շարժումն իր բազմաթիւ հակասական, յաճախ անկեղծ, երբեմն մակերեսային, նոյնիսկ իրերամերժ հոսանքներով,- գրում է նա,- ամբողջ գրեթէ երկու դար Արեւմտեան Աշխարհը ողողելուց յետոյ վերջապէս հասել է մեր ափերը: Դեռ ցամաք չի մտել, մնացել է լուսանցքում: Իր մտաւոր ու իմացական հիմքերը դասականութեան ծովում խարսխած լինելով հանդերձ՝ Յակոբ Օշականը

*Հոդվածն ընդունվել է 14.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գրականության ամբիոնը:

հանդիսացաւ հայ նորագոյն գրականութեան արդիապաշտ ուղղութեան ռահվիրան թէ՛ որպէս ձեւ եւ թէ՛ որպէս բովանդակութիւն»։ (4) Իսկ ահա ազգային գրականութեան նորագոյն զարգացումներուն «ամենից հաւատացեալ» արդիապաշտների շարքուն Կարապետեցը տեսնում էր Վահե Օշականին, Գրիգոր Պըլտյանին ու իրեն։ Պատահական չէր, ըստ իր «չափումի», անձամբ իր հայտնութիւնը նրանց և ուրիշ այլ արդիապաշտ գրողների դիրքուն, ինչը փորձուն էր հաստատել գեղագիտական ընդհանրացումների իր փորձով և արձակ գործերի ժանրային բնութագրումների սուր հակվածությամբ, երբ, օրինակ, ոչ առանց միտումի, իր երկու ծրագրային վեպերը՝ «Կարթագենի դուստրը» և «Ադամի գիրքը», հայտարարում էր «ժամանակակից», որն իր համար արդեն արդիապաշտության ընդգծված հոմանիշն էր։ «Ես էլ արդիապաշտական փորձեր արել ու անում եմ, երբ նյութի զարգացումն այդ է պահանջում,- գրում է նա։ - Օրինակ՝ երագի ու ներքին մենախոսության վերակերտումը կամ ենթագիտակցական հոսանքների վերարտադրումը, եթէ հարազատ պիտի լինի, կետադրոթյուն չի ճանաչում, ինչպէս չի ճանաչում երևութների, պատկերների ու մտորումների հերթականութիւն»։ (5)

Բնութագրիչ են հեղինակի սկեռուն դիտարկումները դարից ու մարդկանցից, անգամ ինքն իրենից խորթացման՝ «աքսորի» մասին «Քաղցրադառն» փորձագրության մեջ՝ գրված Քընէկթիքութիւն անցյալ դարի ութսունականների երկրորդ կեսին. «Սակայն ինչպէ՞ս ասեն բառը։ Ո՞ր բառը։ Կա՞յ բառը։ Կայ միայն աքսորը։ Կայ իմ աքսորը։ Կայ մարդու աքսորը։ Կայ քաղաքական աքսորը։ Կայ մարդ լինելու աքսորը։ Մարդու ներքին աքսորը։ Աքսորականների զանգուածն աքսորական աշխարհում։ Գիտեմ, որ ինքնախաբէութեան մէջ են ընկել, սակայն ուրիշ ելք չունեն եւ այլեւս ես ես չեմ»։ (6) Նույն գրքում, բառի որոնման պատկերի իմաստավորումը մահվան ու աքսորի խաղարկումների շուրջպարի մեջ կրկնվում է։ Եվ կարևոր էլ չէ՝ հեղինակը որ հորձանքում է իրեն «հրաշալի» կամ «անկատար» զգում՝ ամերիկյան թե՞ հայկական գոյավիճակների շուրջպարերում։ Չմոռանանք. գիրքը հեղինակը ոչ պատահական զուգահիստությամբ կոչել է «Անկատար»։ Անկատարը կյանքն է, անկատար՝ երագը, քանի որ կատարյալին չի հասնում «բառը». հոգու «աքսորը» չի հաղթահարվում։ Կատարյալը «հոգեհանգիստն» է, ինչպէս խորագրել է ծրագրային այս ժողովածուն հեղինակն իր այս վերջին խոհագրութիւնը. «Նորից կրկնուած խօսքեր, կրկնուած քաղաքներ, կրկնուած ցաւեր, որոնք կրկնուելով այլեւս բթացել են։ Դու երբեք չիմացար բացարձակը։ ...Բացարձակից այն կողմ ոչինչ կայ, որ բացարձակը է կամ չէ։ Ասա, կա՞յ բառը։ Եթէ չկայ, ինչպէ՞ս ասել բառը։ Ճշմարտութեան մասին չէ խօսքը, այլ բանի, որ լինի ըստինքեան, որ լինի լինելութիւն»։ (7)

Խոսքը, ինչի մասին քանիցս համառորեն ակնարկում է նա, առարկայական չի թվում. խոսքը կամ բառն արվեստագետի համար միջավայրի ու անցյալի կենսական հանդիպադրումն է ազգային ու համազգային խաչուղիներում, խոսքը մարդու մեջ և գեղարվեստական հանգույցներում մարդկային տեղը ճշտորոշելու անդուլ գերխնդիրն է, ուր պատրաստի պատասխաններ չկան։

«Մարդկայինի տեղը», իբրև գեղարվեստական հանձնառութիւն, փոխում է արդեն 3. Կարապետեցի քննութեան ազգային անկյունագիծը դեպի մարդն առհասարակ. նա էլ դառնում է իր գրականութեան հավաքական հերոսը՝ լինի ամերիկացի թէ հայ, արաբ թէ թուրք, ինչը որևէ նոր բան չի փոխելու հարցադրումների ուղղութեան մեջ, այդտեղ ազգային գերակայութիւն կամ գնահատութեան գեղջում

չեք գտնի: Այդ առթիվ հստակ է նրա մոտեցման անակնկալ թվացող արդարամտությունը. «Այսօր կանգնած ենք 21-րդ դարի շեմին: Հայ գրականութեան սպասարկելուց առաջ՝ գրականութեան պետք է սպասարկել: Հայ լինելուց առաջ՝ մարդ պետք է լինել: Կրկնում ենք: Լեզուն ըստ ինքեան արդեն բնորոշում է ազգային պատկանելութիւնը: Եթէ ամերիկահայ գրականութիւնը վաւերական պիտի լինի, ապա այն պիտի արտացոլի ամերիկահայ ներկայ կեանքը, անկեղծօրէն ու համարձակօրէն ու նաեւ դաժանաբար» (8), ինչը, իհարկեւ, գրողին կարող է լիակատար հնարավորություն ընձեռել «ընթրիքի նստել օտարների հետ»: (9) Այստեղից է ծնունդ առնում համաշխարհային գրականության հետ նրա համաքայլ ընթացքի բուռն ձգտումը: Դրա մեջ մենք տեսնում ենք իր գրականության հանդէպ ներքին հպարտությունը: Թեպետ հեղինակը հաճախ ստեղծագործական դաշտում ներգրավել է ծագումով օտար կերպարների՝ «անծանոթ հոգիների», բայց միաժամանակ զգուշացնում է, թե երբևէ նպատակ չի ունեցել դիմելու օտարագրության գայթակղությանը, թեև, ինչպես վկայել է Մինաս Թոյոյոյանը, «...անգլերէնով հրատարակուող ամերիկեան հանդէսներու մէջ ունի բանաստեղծութիւններ, պատմուածքներ եւ գրական-գրադատական ակնարկներ»: (10) Նրա հերոսներն «օտարության» տառապանքը բաժանող մարդիկ են՝ անկախ ազգությունից, սակայն մի էական չափով՝ հայկական բնավորության գծերով:

Մեկ այլ դերակատարություն էր վերապահում Հ. Կարապետցը՝ սփյուռքահայ գրականության արժևորմանը. այն դիտվում է ոչ միայն հայ, այլև իբրև համաշխարհային գրականության բաղկացուցիչ և ցուցիչ: Հ. Կարապետցը խոսքի ոճական նորարարության, յուրովի ասելաձևի կողմնակից է: Բարձր գնահատելով ազգային ու տոհմիկ գրականությունը՝ նա ընդգծում է, որ հենց ազգայինից է գրողն անցնում համամարդկայինին: Այս առումով նկատում է, որ հայ կյանքը պատկերող հաջողված որևէ պատմվածք կամ վեպ արժանանում է համընդհանուր ուշադրության, եթե խորն է համամարդկային կենսահողը: Իսկ սփյուռքահայ գրականությունն այդ հարստությունը բանուկ դարձնելու ճանապարհին է, վստահեցնում է արձակագիրը:

«Ժամանակն է հասունութեան, մտքերի ու գաղափարների ազատ փոխանակման որդու ու մօր միջև» (11),- մի այլ առիթով գրում է արձակագիրը, որտեղ «որդի ու մայր» հարաբերությունը չի ենթադրում միայն Հայրենիք-Սփյուռք շերտերի կարգավորման նոր փորձ ութսունականների երկրորդ կեսին, այլ առավելաբար՝ ազգային և համաշխարհային քաղաքակրթությունների գրամշակութային փոխներթափանցումի հայեցակարգային պահանջ: Հ. Կարապետցի՝ գրականագետների նկատած «ուրույն աշխարհն» ամբողջացնում են «Անծանոթ հոգիներ» (Բեյրութ, 1970), «Նոր աշխարհի հին սերմնացանները» (Վաշինգթոն, 1975), «Միջնարար» (Նյու Յորք, 1981), «Ամերիկյան շուրջպար» (Նյու Յորք, 1986), «Անկատար» (Նյու Յորք, 1987), «Մի մարդ ու մի երկիր» (Ուոթերթաուն, 1994) պատմվածքների ժողովածուները, «Կարթագենի դուստրը» (Բեյրութ, 1972), «Ադամի գիրքը» (Նյու Յորք, 1983) վեպերը և «Երկու աշխարհ» փորձագրությունների ժողովածուն (Բոստոն, 1992):

Անցյալ դարի 70-80-ական թթ., մեկ տասնամյակի ընթացքում, Հ. Կարապետցը ընթերցողի սեղանին դրեց երկու վեպ՝ «Կարթագենի դուստրը» (1972) և «Ադամի գիրքը» (1983): Երկուսում էլ հեղինակի մտորումներն են ազգային ճակատագրի շուրջ: Առաջինն օտար «լուսանցքների» մեջ դեգերող հայկական միտքն է՝ «ավանդականից» խուսափուկ, բայց միշտ՝ նրա «միջանցքներից» կառչած: Երկ-

րորդում ազգային «վրիժառու հոգեբանության» շարունակական ընթացքների «արդար» (հայկական պատուհան) կամ «անարդար» (միջազգային ընկալման դիտանկյուն) նախահիմքերի քննության ճիգն է: Երկվություն, որ հակասական ժամանակի, ողբերգության ծնունդն է, երկվություն, որի մի բևեռում հայի մխացող ճակատագիրն է՝ իբրև ապրում ու գոյություն, մյուսում՝ Եղեռնի քաղաքական մոռացումի սարսուռը, աշխարհի անտարբերության գինը:

3. Կարապենցի ստեղծագործություններում հայկական կյանքը և մարդը փոխլրացնում են իրար տարաբնույթ և նույնակերպ երեսակներով, նրանք փորձում են գոյատևել համընդհանուր քաոսի մեջ, ճանաչել պատմությունն ու բնագոյը և դիմակայել ժամանակի քմայքներին:

Ծրագրում էր գրել «Ադամ Երկրորդի գիրքը» վեպը, նույնիսկ, ինչպես վկայում էր մտերմագույն ընկեր, գրագետ Սարգար Շարաբխանյանը, «...զայն սկսած էր գրել...: Անոր մասին միայն կը խօսէր ինձի: Վեպ մը պիտի ըլլար ան, որ անկեղծ մօտեցումներով, իր իսկական կեանքն ու իր ապրած շրջապատը պիտի տար մեզ՝ իր թաքուն ծալքերով, առանց քօղարկումներու: «Այս գրուելիք գրքիս մեջ անձս բզիք-բզիք պիտի անեն», - կըսէր ան յաճախ ինձի: Բայց ուրիշ գործերու նման այս «բզիք-բզիքն ալ չհասաւ գրելու: «Վաղուան գրելիքս աւելի կարելորդ էր լինելու», ըսաւ ու գնաց...: Ու ՎԱՂՆ ալ իր հետը տարաւ»: (12)

Նրա փորձագրություններում եռաչերտ կարգավորում կա՝ մարդը, հայը և աշխարհաքաղաքացին, ուր աչքի է ընկնում առաջին հերթին գրողի բերած գիտակից ու ենթագիտակից ճանաչողական ներհակությունը, այն, ինչ հեղինակը կոչում է լայն իմաստներով՝ գրականություն, որից փախուստ չկա իր համար, այն, ինչ զուգահեռի վրա պահում է գրողի հզոր ներաշխարհը:

Մեզանում 3. Կարապենցի գնահատողների մեջ արժեք առանձնացնել 3րանտ Թամրազյանին, ով գրողի մահից մեկ տարի առաջ գրված «Կարապենցի աշխարհը» հոդվածում (13) փորձել է արժևորել գեղարվեստական վաստակը՝ շեշտը դնելով հիմնականում խնդիրների արծարծման տարբերությունների վրա: Նրա հայացքի մեջ «...Կարապենցը որոշ առումով տարբերվում է Սփյուռքի նախորդ գրողներից, որոնք ամբողջովին խորասուզված էին անցյալի հայ կյանքի և «մնացորդաց» թեմայի մեջ, նկատելի չափով էլ դիմադրում էին «օտար» թեմաներին...: Ավելի ճիշտ՝ արվեստագետը ձգտում է գտնել այն տեղը, որ գրավում են հայկական սերունդներն ամերիկյան իրականության մեջ, հետևում է կյանքի ընթացքին ու վերափոխումներին, բնականաբար, նաև նորագույն խաչաձևումներին»: (14)

Ընդհանրական գնահատության մեջ 3ր. Թամրազյանն ունի ներթաքույց ենթախորք, որն ինչ-ինչ չափով փորձում է բացել Սարոյան-Կարապենց գրական առնչությունների ծալքերը: Բանն այն է, որ Վ. Սարոյանը 3. Կարապենցին շարունակ հորդորում էր «բացուել» ընթերցողին անգլերեն, քանի որ հայերեն կարդացողները քիչ են: Այս առումով նկատենք գրող և հրապարակագիր Սարգար Շարաբխանյանի գրական «հիշողությունը». «Կարապենց, ճիշդ է որ ամերիկեան մամուլին մեջ փորձեր կատարած էր՝ օրուան պատշաճ քրոնիկներ ու կարճ պատմուածքներ ուղարկելով անոնց: Իսկ 3ամաստեղ, որուն հանդէպ (3. Կարապենց – Ն.Ս.) մեծ հիացում ունէր, անընդհատ ու բուռն կերպով կը թելադրէր, Կարապենց շուտով անդրադարձաւ, թէ ինք հայ գրող էր, եւ թէ ամերիկեան գրականութիւնն իրեն պէտք չունէր, եւ ոչ ալ ինք ամերիկեան գրականութեան»: (15)

Պատահական չէ, որ 3այաստանի գրականագիտական միտքն առավել ջանասիրությամբ հակվում էր 3. Կարապենցի ամերիկահայ հերոսների մեջ «կյանքի լե-

զուն» ու ոգին, կշռույթը, ընթացքը որսալու գրողական եղանակին: Հր. Թամրազյանը նրան է վերապահում մասնավորապես հայ «սերմնացանների կենսական ուժը, ...ցեղի հատկանիշները պահելու» (16) ներուժը՝ թեկուզ բնաշխարհից դուրս, թեկուզ Ամերիկայում, հայապահպան գլխավոր ուղղությունը, որն ինքը դիտում է իբրև «խորհրդավոր իրողություն»։ «Սակայն այսօր տեղի է ունենում մի ուրիշ երևույթ. հայրենիքից ու հողից հեռու՝ նրանք տարերայնորեն կազմում են նաև ինքնապաշտպանական բջիջներ, որոնք կարծես թե առնում են կենդանի մաս ու մարմին, համայնքների տարերքը ձևավորվում է այդ կենդանի բջիջներից՝ ստեղծելով պաշտպանական կայուն շերտերը: Անխարդախ գրիչը պատկերների մեջ հաստատում է այդ խորհրդավոր իրողությունը»: (17) Հայ մնալու ջիղը, «տարերային ինքնապաշտպանական բջիջները», ինչպես նկատում է հայրենի գրականագետը, Նոր աշխարհում անգամ գալիս են ազգային հարատևող դյուցազնական, առասպելական շնչի շարունակական գիտակցությունից: Հ. Թամրազյանը ընդհանրացնում է. «Կարապենցին լիովին հաջողվում է արվեստի լեզվով խոսել և՛ Սփյուռքի, և՛ ամերիկյան կյանքի մասին: Նա կանգնած է մի մակարդակի վրա, որը բնավ չի զիջում ո՛չ ամերիկյան գրականության ժամանակակից որակին, ո՛չ էլ ժամանակակից հայ գրականության ճշմարիտ նվաճումներին»: (18)

Բնականաբար, հայրենի գրականագետը «Կարապենցի աշխարհը» ծավալուն հոդվածում որոշակի օրինակների, ի մասնավորի՝ Հակոբ Ասատուրյանի հետ հայտնի գրական-համեմատական զուգահեռների մեջբերումով քննության է առնում ու հաստատում ամերիկահայ արձակագրի գրական ուղղության իրապաշտական խնդիրը. «Հակառակ ռոմանտիկների ընդգծված ոգևորությանը և լուսավոր գիշերների վեհափառ խնդրության ներբողներին,- եզրակացնում է հոդվածագիրը,- նա իրապաշտ սկզբունքներ է պաշտպանում»: (19) Տրամաբանական է նրա նաև այն դիտարկումը, թե «Հակոբ Կարապենցի աշխարհն ավելի բազմերանգ է և ունի ուրույն զարգացում»: (20)

Նկատենք, որ կյանքի վերջին ամիսներին Հակոբ Կարապենցը բավական կարճ գրությամբ արձագանքում է Հրանտ Թամրազյանին՝ կատարելով իր՝ վաղուց երազված ուշագրավ մի փափագ-խոստովանությունը, թե լավ կլիներ, եթե պատվարժան գրականագետն ստանձներ իր մասին «...աշխատասիրութիւնը որպէս առանձին գիրք ներկայացնել, կամ որպէս լուրջ առաջաբան ներառել իմ հատընտիր (Երեւանում (ի դեպ, արևելահայ լեզվատրամաբանությամբ կառուցված այս փոքրիկ գրության վերատպության մեջ առկա է արևմտահայ մտքի տեսակետից՝ ակնհայտ վրեպ. պիտի լինի՝ - «Երեւանի մէջ» - Ն.Ս.) հրատարակուելիք) հատորին մէջ»։(21) «Ո՛չ մի առարկութիւն չունեն այս տարբերակի նկատմամբ: Փաստօրէն, սքանչելի վերլուծում է կարապենցեան գրական աշխարհի: Դեռ ոչ ոք այսքան հարազատ կերպով չի ներկայացրել իմ գրական ուղին, որքան Դուք»: (22)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարապենց Յ., Երկու աշխարհ / գրական փորձագրութիւններ, Ուոթըրթուն, Blue Crane Books, 1992, էջ 139:
2. Նույն տեղում, Երկու աշխարհ..., էջ 211:
3. Նույն տեղում, էջ 206:
4. Նույն տեղում, էջ 204:
5. Նույն տեղում էջ 272

6. Կարապենց Յ., Անկատար եւ այլ պատմուածքներ, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1987, էջ 203:
7. Նույն տեղում, էջ 245:
8. Կարապենց Յ., Երկու աշխարհ..., էջ 219:
9. Այդպես, ի դեպ, այլաբանական նշանառությամբ, կոչվում է օտարագիր ավագագույն արձակագիր Փ. Սուրյանի (ԱՄՆ) պատմվածքների ժողովածուն (Սուրյան Փ., Ընթրիք օտարների հետ, Եր., Լուսակն, 2010):
10. Թէլէթիւն Մ., Դար մը գրականութիւն (1920-1980) / երկրորդ հատոր, Նիւ Եորք, «Ոսկետառ», 1977, էջ 422:
11. «Կարապենց» / մատենագիտութիւն, կազմեց եւ խմբագրեց՝ Արա Ղազարեանց, Մասաչուսեթս, 1999, էջ 64:- Տե՛ս՝ Կարապենց Յ., «Գրողը եւ իր գործը» կարճառոտ փորձագրութիւնը:
12. «Հորիզոն» / գրական, Մայիս, Մոնրէալ, 2017, թիւ 5 (393), Մայիս, ԼԳ. տարի, էջ 12:
13. «Հայաստանի Հանրապետութիւն» / օրաթերթ, թիւ 15 եւ 16 Յուլիս, Եր., 1993:- Տե՛ս՝ Թամրայան Հր., «Կարապենցի աշխարհը» հոդվածը:
14. «Կարապենց» / մատենագիտութիւն, էջ 20:- Տե՛ս՝ Թամրայան Հր., «Կարապենցի աշխարհը» ուսումնասիրութիւնը, էջ 20:
15. «Հորիզոն» / գրական, Մոնրէալ, 2017, թիւ 5 (393), Մայիս, ԼԳ. տարի, էջ 10:
16. Թամրայան Հր., Գրական դիմանկարներ / հոդվածներ, հատոր երկրորդ, Եր., «Նաիրի», 1998, էջ 180:
17. Նույն տեղում, էջ 181:
18. Նույն տեղում, էջ 178:
19. Նույն տեղում, էջ 186:
20. Նույն տեղում, էջ 178:
21. Տե՛ս՝ Թամրայան Հր., Երկեր, Դ. հատոր, Եր., «Նաիրի», 2013, 943: Պետք է նկատի ունենալ Հր. Թամրայանի քննադատական երկերի ստվարածավալ բառահատորյակի վերջին գրքի կառուցվածքի յուրահատկութիւնը. այստեղ կուտակված է կենսամատենագիտական վիթխարի գրականութիւն, որը ներառում է ոչ միայն գիտնականի աշխատասիրութիւնները, այլև հուշագրութիւն, հիշատակի խոսք, նաև իրեն ուղղված նամակների կամընտրական փընջեր, որոնց թվում՝ Հ. Կարապենցի սույն նամակի չխմբագրված պատճենը:
22. Նույն տեղում:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԿԱՐԱՊԵՆՑ ԳՐՈՂՆ ՈՒ ԳԵՂԱԳԵՏՆ

ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Սույն հոդվածում լուսաբանվում է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նշանավոր դեմքերից մեկի՝ Հակոբ Կարապենցի գեղագիտական հայացքների մի շարք առանձնահատկութիւններ: Հոդվածագիրն ընդգծում է, որ գրողը պատմվածքի, վեպի, փորձագրության ժանրային սահմաններում վերակառուցել է իմացական խոսքի սրութիւնն ու բարձր ընթացքները: Կարապենցի ստեղծագործութիւնն ամբողջապես փիլիսոփայական հարցումների դիմաց պատասխանների փնտրտուքի փորձ է, ինչպէս խոստովանում է ինքը «Բառի փրկութիւնը» կարճառոտ փորձագրության մեջ 1986-ին: Հակոբ Կարապենցին պետք է արժևորել հայկական էկզիստենցիալիստական մտածողության ու գրական փորձարարության շրջանակում:

РЕЗЮМЕ

КАРАПЕНЦ ПИСАТЕЛЬ И ЭСТЕТ
НАНАР СИМОНЯН

Ключевые слова: литературное наследие, философские исследования, экзистенциалистское мышление, модернизм, изгнанник, мировая литература, неполный, речь.

В этой статье рассматривается ряд особенностей эстетических взглядов Акона Карапенца – одного из выдающихся фигур армянской прозы 20-го века. Автор подчеркивает, что писатель реконструировал остроту и высокую поступь познавательной речи в жанровых границах рассказа, романа, литературной экспертизы.

Произведения Карапенца целиком являются попыткой поиска ответов на философские вопросы, как признается сам автор в краткой экспертизе "Спасение слова", опубликованной в 1986 - ом году. Акона Карапенца нужно оценивать в контексте армянского экзистенциального художественного мышления.

SUMMARY

KARAPENTS - THE WRITER AND THE ARTIST
NANAR SIMONYAN

Key words: literary heritage, philosophical inquiries, existentialist thinking, modernism, exile, world literature, imperfect, speech.

This article discusses a number of features of the aesthetic viewpoint of one of the prominent figures of the 20th century Armenian prose Hakob Karapenz. The author emphasizes that the writer has rebuilt the complexity and high course of cognitive speech in the genre boundaries of history, novel and essay. His work is totally an attempt to search for answers to philosophical inquiries as he confesses in his essay of "Word Safety" in 1986. Hakob Karapents must be appreciated in accordance with the Armenian existentialist thinking and literary experiments.

ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ

ՉԱՐԵՆՑԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ*

Բանալի բառեր:Սուրբգրային վկայություններ, մոզական խորհուրդ, հոգի ու մարմին, հոգևորի տիրապետություն, աստվածային կատարելություն, ցասում, անառակ որդի, երկնքի արքայություն:

Անկախ կրոնի հանդեպ ունեցած մեր վերաբերմունքից, բոլորս էլ Աստվածաշնչի ժառանգորդներն ենք: Սուրբգրային պատմություններն ու վկայությունները դարերի ընթացքում իրենց վրա են հրավիրել արվեստի բոլոր ոլորտների գործիչների ուշադրությունը: Կրոնական հավատն ու կրոնական գաղափարը վերածվել են ստեղծագործական ներշնչանքի աղբյուրի, ինչի պերճախոս վկայություններն են Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Դ. Ալիգիերիի «Աստվածային կատակերգությունը», Դավթի և Մովսեսի հզոր կերպարները՝ Սիբելանջելոյի ձեռքով կերտված, Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը», Մոցարտի «Ռեքվիեմը», Բախի «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» գործն ու հարակայուն այլ արժեքներ: Այսպես, Աստվածաշունչը ներագդել է համարյա բոլոր ժողովուրդների և բազմաթիվ մշակույթների վրա՝ հսկայական հետք թողնելով հասարակական կյանքի տարբեր ձևերում: Այն անգնահատելի աղբյուր է: Չմոռանաք, որ հայոց այբուբենով գրված առաջին նախադասությունը ևս սուրբգրային է:

Աստվածաշնչյան բազմաթիվ ու բազմաբնույթ մոտիվներ տեղ են գտել նաև հայ գրողների երկերում: Եղիշե Չարենցի ստեղծագործություններում առկա են և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական մտածողության տարրեր: Հայտնի փաստ է, որ քրիստոնեական կրոնի քողի տակ ծվարել են նախաքրիստոնեական կրոնական հավատալիքները: Սրանք իրենց խորքով միմյանցից շատ հեռու և տարբեր հասկացություններ չեն, երկուսն էլ հիմնված են համանման ծեսերի, պաշտամունքների վրա, երկուսն էլ առաջնորդվել են կրոնական գրեթե միևնույն մտահայեցողություններով և ձգտումներով:

«Կապույտի մեջ, կապույտի մեջ - արևի ոսկին» բանաստեղծության մեջ (I, 78) իրար են խառնվել հեթանոսականն ու քրիստոնեականը: Բանաստեղծը նկարագրում է վաղորդայնի «սրբազան» պահը՝ գեղատեսիլ զարթոնքը, երբ վերջին կապույտում շողարծակում է արևի ոսկին: Ձանգերի կարկաչածայն դողանջին հետևում է «կապույտ աղջկա» արթնացումը. «-Չարթնիր, զարթնիր, կապույտ աղջիկ,- ու նայիր խաչին...»:

Թեև ստեղծագործական այս շրջանում Չարենցը խուսափում է քրիստոնեական խորհրդանիշերից, ու թեև այս բանաստեղծության մեջ ևս «նստած է» նա-

*Հոդվածն ընդունվել է 22.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

խաքրիստոնեական ենթատեքստը, այնուամենայնիվ, բանաստեղծը տեսադաշտ է բերում «վանքի» ու «խաչի» պատկերները: Վերջինս քրիստոնեության մեջ գոհաբերության խորհրդանիշն է: Չարենցը բացահայտում է «խաչի» իմաստը՝ «ոսկի միրաժ արթնացած խոսքի»՝ ընդգծելով «խոսքի» ուժը: Պատահական ոչինչ չկա. «խոսքը» հզոր ներգործություն ունի՝ «Ի սկզբանէ էր բանը»:

Ձանգերի դողանքը ևս մոգական խորհուրդ ունի: Միջնադարում եկեղեցական զանգերի վրա հաճախ գրված էին լինում հետևյալ բառակապակցությունները. «Vivos voco, mortuos plango, fulgura frango», ինչը բառացիորեն թարգմանվում է՝ «Ապրողներին կանչում եմ, մեռնողներին ողբում եմ, կայծակները կրճատում եմ»: Չնայած այս արտահայտությունները սուրբգրային չեն, կար հավատ, որ եկեղեցական զանգերի ձայնը օժտված է վերոնշյալ գործառույթներով: Այսպես, Պ. Սևակը սահմանել է իր ժողովրդի պատմական ուղին. «Ողբամ մեռելոց, բեկանեմ շանթեր, կոչեմ ապրողաց»:

Չարենցի վաղ շրջանի գործերից է «Հրո երկիր» շարքը, որը և՛ ժամանակագրական առումով, և՛ հոգեբանական անդրադարձումներով «Երեք երգ»-ի շարունակությունն է կազմում: Ամեն դեպքում սերն է մնում մարմնի և հոգու միասնության, բնության հավերժությանը ձուլվելու միակ հնարքն ու եղանակը: Բանաստեղծը չի ցանկանում, որ իր ցնորք-աղջիկը աննյութական վիճակից մարմնանա ու մնա այդպես՝ մարմնեղեն, երկրային: Նա հմայված է հրաշքով, թող որ՝ անհասանելի... Նա երազում է մարմնի և հոգու միասնություն՝ մի մարմին ու մի հոգի.

Ու միանա՞ն սեզ մարմի՞նը ու հոգի՞ն...

Ու չլինի՞, ու չլինի՞ դու ու ես: (1)

Աստվածաշունչն ասում է. «Սորա համար մարդը կ'թողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կ'յարի իր կնոջը. եւ մէկ մարմին կ'լինին» (Ծննդոց, Բ - 24): Հոգին մարդու կամքի դրսևորման տարածքն է, զգացական ցանկությունների տարածքը: Մարմնի և հոգու պառակտվածությունը հատուկ է քրիստոնեական պատկերացումներին՝ մեկը նյութի ժխտումն է. «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, եւ հոգին մարմնին հակառակ. եւ սորանք իրար հակառակ են, որ մի գուցէ այն որ դուք կամե՛նուն էք, այն անէք» (Պօղոս առաքեալի թուղթը առ Գաղատացիս, Ե - 17):

Բանաստեղծը ձգտում է հոգու և մարմնի ներդաշնակության, հաշտության: «Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք իմ անդամներումը՝ որ իմ մտքի օրէնքի դէմ պատերազմում է, եւ ինձ գերի է բռնում այն մեղքի օրէնքովը, որ իմ անդամներումն է» (Պօղոս առաքեալի թուղթը առ Հռովմայեցիս, Է - 23): Ազատ կամքը հնարավորություն է տալիս, որ մարդը ճիշտ ընտրություն կատարի: Աստվածաշունչը մահը սահմանում է, երբ բաժանվում են հոգին և մարմինը: Փշրվում ու անէանում են երազները: Բանաստեղծի՝ «հրդեհների լույսին կարոտ» սիրտը ճչում է... ցրտից: Հիասթափությունն անխուսափելի է...

Շարքի վերջում երկուսը դառնում են երեք: Երրորդը՝ դա հենց երկուսի միասնությունն է: Դա հենց բանաստեղծի երազն է, որին, սակայն, դեռ չի հասել, դեռ փնտրում է: Այս փնտրումներն անցնում են «Տեսիլաժամեր» շարքը: Ինչպես այս շարքերը, այնպես էլ «Ծիածան» գիրքը, տրամադրություններով ու պատկերներով հիշեցնում են տերյանական նվագները: Չարենցի վաղ շրջանի ստեղծագործությանը ևս բնորոշ է քրոջական սիրո երգը: Քույր բառն այստեղ զսպաշապիկի դեր է տանում: Սիրած աղջկան դիմելու այս ձևը գալիս է Աստվածաշունչից: Կար-

դանք Սողոմոնի «Երգ երգոց»-ը. «Սիրտս յափշտակել ես, ով իմ քոյր հարս, սիրտս յափշտակել ես նայուածքներիդ մէկովը, պարանոցիդ մանեակների մէկովը», «Ի՛նչ գեղեցիկ է քո սէրը, ով իմ քոյր հարս, ինչ լաւ է քո սէրը գինիից, եւ քո իւղերի բուրմունքը՝ ամեն խունկերից», «Փակուած այգի է իմ քոյր հարսը, փակուած ակն է, կնքուած աղբիւր է» (գլ. Դ - 9,10,12), «Ես եկայ իմ պարտեզը, ով իմ քոյր հարս...», «Ես քնում եմ, բայց սիրտս արթուն է. սիրականիս ձայնն է, դուռը թակում է. բաց ինձ համար, ով քոյրս, ընկերուհիս, աղաւնիս, կատարեալս...» (գլ. Ե - 1, 2): Ի տարբերություն Սողոմոնի՝ Չարենցը համակված է առավել թախծոտ ու հոգեմաշ տրամադրութամբ.

Իրիկնային քույր իմ հեզ, մեռելի՛ պես դու անցի՛ր,
Թող զանգերը օրհներգեն ու օրհնեն քեզ, - դու անցի՛ր: (2)

Կամ՝

Գուցե սու՛տ է սերը այս - հրաժեշտի մի երազ -
Քու՛յր, հու՛շ դարձած հեռավոր, դու հեռանում ես ահա... (3)

Քրիստոնեությունը հայտարարեց հոգևորի տիրապետություն, ինչը սկիզբ դարձավ նոր մտածողության, ըմբռնումների ու ճաշակի: Աստվածաշունչը դարձավ խոհ ու խորհուրդ Աստծո, աշխարհի ու մարդու մասին: Չարենցի երկերում սուրբգրային առնչություններն ամենատարբեր բնույթի են: Դրանք մեզ պատմում են մինչև մեր օրերը հասած բազմաթիվ սովորույթների մասին: «Աղոթք անեն, խունկեր բուրեն - ու լքեն» (I, 119),- գրում է բանաստեղծը: Խունկ «բուրելը», «ծխելը» Հին Կտակարանում նկարագրված է որպես սրբազան արարողություն. «Եւ խունկ ծխելու սեղան շինես...»: «Եւ Ահարոնը նորա վերայ անուշահոտ խունկ ծխէ. ամէն առաւօտ ճրագները պատրաստելիս խունկ ծխէ: Եւ Ահարոնը իրիկուայ դէմ ճրագները վառելիս խունկ ծխէ, որ Եհովայի առաջին մշտնջենավոր խունկ լինի ձեր ազգերի մէջ» (Ելից, L - 1, 7-8):

Չարենցն անհանգիստ բնավորություն էր, անհաշտ՝ նույնիսկ ինքն իր հետ: Նրա անխաղաղ ու փոթորկուն հոգին կարոտ էր անդորրի: Նա ընտրում է հոգևոր խորհուրդն ու այն պատգամում հեռավոր եղբորը. «Խաղաղություն քեզ...» (I, 337): Ողջույնի այս տեսակը, որի հիմքը դարձյալ Աստվածաշունչն է, առկա է նաև այլ գրողների երկերում: Թունանյանի մոտ ընթերցում ենք. «Խաղաղություն ձեզ, ո՛վ ուրախ մարդիկ,- ողջունում է դերվիշն ու խոնարհություն է անում տան տիրոջը» («Քե՛ք անողին քե՛ք չի պակսիլ»), «Խաղաղություն ձեզ, մեր անբա՛խտ պապեր...» («Հին օրհնություն»), Շիրազի մոտ՝ «Խաղաղություն ամենեցուն» և այլն: Նորից բացենք Սուրբ Գիրքը. «Եւ նոյն օրը, միաշաբաթի իրիկունը երբոր դռները փակուած էին, այնտեղ ուր որ աշակերտները ժողովուած էին Հրէաների վախիցը, Յիսուսը եկաւ եւ նորանց մէջ կանգնեց, եւ նորանց ասեց. Խաղաղութիւն ձեզ» (Յովհաննէս, Ի-19): Սակայն բոլորը չէ, որ կարող են վայելել Աստծո խաղաղությունը: Շարունակենք ընթերցել. «Եւ երբոր տունը կը մտնէք, բարեւ տուէք նորան: Եւ եթէ այն տունն արժանի է, ձեր բարեւը նորա վերայ գայ, բայց եթէ արժանի չէ, ձեր բարեւը ետ դառնայ դէպի ձեզ» (Մատթէոս, Ժ - 12-13):

Քրիստոսը խաղաղության Աստվածն է և խաղաղություն է պատգամում սերունդներին. «Խաղաղութիւն են թողում ձեզ, իմ խաղաղութիւնն են տալիս ձեզ. ոչ

թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չ'խռովի եւ չ'վախենայ» (Յովիաննէս, ԺԴ-27): Երկրի վրա երբևէ հնչած մեծագույն ավետիսը հրեշտակների ավետիսն է. «Փառք Աստուծոյ բարձունքունը, եւ երկրի վերայ՝ խաղաղութիւն, եւ մարդկանց մէջ հաճութիւն» (Ղուկաս, Բ-14):

Խաղաղություն միմյանց մաղթում են ոչ միայն հանդիպելիս, այլև՝ հրաժեշտ տալիս. «Երթաք խաղաղությամբ», «Մնացեք խաղաղությամբ» և այլն: Մաղթանքի այս տեսակը հանդիպում է հատկապես առաքյալների թղթերում, ովքեր իրենց խոսքը սկսում ու հաճախ նաև ավարտում են «Խաղաղություն լինի ձեզ հետ» բառերով: Հին Կտակարանում ևս կարելի էր «գնալ» կամ «մնալ» խաղաղությամբ. «Եւ թագաւորն ասեց նորան. Գնա խաղաղութեամբ. եւ նա վեր կացաւ ու գնաց Քեբրոն» (Բ Թագաւորաց, ԺԵ - 9):

Հոգու խաղաղությունն այն շավիղներից մեկն է, որը մարդուն տանում է դեպի կատարելություն: Իսկ ե՞րբ է մարդու հոգին խաղաղ: Մի՞թե հոգու խաղաղությունն ուղղակի կապ ունի անսխալական լինելու հետ: Իսկ եթե անսխալական է միայն Աստված, ուրեմն նա, ով ձգտում է հոգու խաղաղության, ձգտում է կատարելության, աստվածացման, գերմարդ լինելու:

Մի պահ միցջեյան գերմարդն ու աստվածային կատարելությունը կարծես թե նույն ծիրում են հայտնվում: Աստվածային կատարելության էր ձգտում Նարեկացին, գերմարդու թանձր արժանիքներ ու հատկանիշներ ուներ Չարենցը: Եվ ինչ է կատարելությունը, եթե ոչ լավագույն արժանիքների ամբողջություն. «Արդ դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ երկնքումն է, կատարեալ է» (Մատթէոս, ե-48): Բայց ահա թե որն է Չարենցի եզրահանգումը.

...Ով գործ է անում - նա սխալ ունի, -
Անսխալ մարդիկ աշխարհում չկան -
Աստված է միայն անսխալական...(4)

Չարենցի համար դեպի կատարելություն տանող ճամփաներն այլ էին.

Նա՛ է այս կյանքում ապրելու արժան,
Ով աստվածային ցասունով դաժան
Գիտե թշնամու արյունը քամել... (5)

Երբ խոսքը գնում է Աստծո ցասունի մասին, ակամայից հիշում ենք նոյյան ժամանակների ջրհեղեղը: Ինչքա՛ն մեծ պետք է լիներ Աստծո բարկությունը, որ ավերեր իր իսկ ստեղծածը: Սա փաստում է այն մասին, թե ինչ ահռելիության էր հասել ապականությունը: Աստվածային ցասունին «ակամատես ենք լինում» նաև այն դրվագում, երբ չար իրեաները առևտրի շուկայի էին վերածել Հայր Աստծո տունը: Այս ցասունը նման է հրի, որ երկաթից մաքրում է ժանգը: Նույնչափ ցասունով էր լցված բանաստեղծը ժողովրդի թշնամիների հանդեպ, որոնցից միայն մահ ու ավերք կարելի է ակնկալել: Իսկ ժողովուրդը՝ «աշխատավոր խալիսը», արարիչ է ու ստեղծագործ, ինչպիսին էր իր նախնին՝ Նոյը, ում բանաստեղծը հրավիրում է՝ «մաճ քաշելու», «կտավ գործելու».

Նո՛յն էր մինչև երեկ
Նստել

Վերը՝
Ձյունե Արարատի գլխին:

Էսօր վա՛ր ենք բերե,
Որ թևերը քշտե
Եվ խուղերը սրբե աշխատավոր խալխի: (6)

Բայց «որովհետև մարդի սրտի խորհուրդը չար է իր մանկութիւնիցը» (Ծննդոց, Ը-21), Չարենցն էլ շրջապատված էր թշնամիներով ու դավաճաններով, որոնց նա կոչում է «ճորտե՛ր մտքի կամ ոգու ստրուկ».

Որ վերուստ տրված ինքնությունը ձեր՝
Տաղանդը՝ տրված ըստ կարողության, -
Վատնել եք, իբրև Եսավ կամ Զուդա,
Եվ - արծաթն անգամ ձեր չե՛ք ստացել... (7)

Աստվածաշնչի վկայությամբ՝ Եսավն Իսահակի որդին էր, քաջ որսորդ, բայց մտածում էր եղբորն սպանել. «Եւ Եսաւն ասում էր Յակոբին այն օրինութեան համար, որ հայրը նորան օրինեց. եւ Եսաւն ասում էր իր սրտումը. Իմ հօր համար սգի օրերը մոտենում են. եւ ես սպանելու եմ իմ եղբայր Յակոբին» (Ծննդոց, ԻԷ-41): Զուդան Քրիստոսի մատնիչն է, արծաթը՝ մատնության գինը. «Այն ժամանակ տասներկուսից մէկը, որ Յուդա Իսկարիոփտացի էր ասվում, գնաց քահանայապետների մօտ եւ ասեց. Ի՞նչ էք կամենում ինձ տալ, եւ ես ձեզ մատնեմ նորան: Եւ նորանք երեսուն արծաթ կշռեցին տուին նորան» (Մատթէոս, ԻԶ - 14-15):

Առավել մեղմ էր Չարենցի վերաբերմունքը «անառակ որդիների» հանդեպ: Այսպես է նա կոչում Վաղարշակ Նորենցին իր բանաստեղծություններից մեկում. «Դու այն անառակ զավակը հո չե՞ս»: Աստվածաշնչում առակի ձևով պատմվում է հորից իր բաժինն առնելով տնից հեռացած, անառակության մեջ ամեն ինչ վատնած և աղքատության դուռը հասած որդու մասին, որ վերջում մեղայականով հորն է ներկայանում, ու սա նրան առաջվա պես ընդունում է, «Որ այս իմ որդին մեռած էր, եւ կենդանացավ. եւ կորած էր, եւ գտնուեցավ...» (Ղուկաս, ԺԵ-11-24): Բանաստեղծն էլ համոզված է.

Այդպես՝ ով երգի անառակ որդի,
Գիտեմ, դու մի օր կվերադառնաս
Քո տունն հայրենի - նայիրյան Պառնաս:(8)

«Մի սոնետ էր դա, որի բովանդակությունը նախորդ օրվա գրույցի այն միտքն էր, թե պոետը չպետք է դավաճանի իր կոչմանը», - հիշում է Վ. Նորենցը: (9)

Դարասկզբի ծանր իրականությունը ստիպում է բանաստեղծին՝ տագնապով մտածել ապագայի մասին: Կենսական երևույթների խոր ազդեցությամբ ծավալվում է մահվան թեման: Քամին բերում է մեռնող հայության ողբալից ելևէջներն ու զառանցանքը: Գիշերվա անթափանց խավարի մեջ Չարենցը տեսնում է մարդկային թափորը, որ «Մի խումբ էր կարծես հրեշտակների...»: Պատկերը նման է Զակոբի երագին. «...եւ ահա մի սանդուղք՝ երկրի վերայ դրուած, եւ նորա գլուխը երկնքին էր դաչում, եւ ահա Աստուծոյ հրեշտակները նորանով վեր էին գնում եւ իջնում» (Ծննդոց, ԻԸ-12):

Աստվածաշնչում գրված երազները Աստծո կողմից մարդկանց փոխանցված գրավոր տեղեկությունների մաս են կազմում: Իսկ գուցե երազը իմաստություն է բերում մարդուն, ինչպես, օրինակ, Սողոմոնը քնած ժամանակ երազի մեջ իմացավ Աստծո բարի խորհուրդները (Գ Թագաւորաց, Գ-5, 11-14):

Չարենցի՝ 1933 թվականին գրված «Մահվան տեսիլուն» կարելի է տեսնել միջնադարյան նկարիչ Յիերոնիմ Բոսխի կտավներին հարիր պատկերներ: Սարսափազդու տեսարանները, թվում է, քաղված են Սուրբ Գրքից: Փորձենք համեմատել դրանք: Չարենցի «տեսիլուն» դեպի բլուրը տանող ճանապարհը հատում է «մի ինչ-որ կերպարանք անդեմ, // Մի, կարծես դժոխքից ելած, անսահման դժնի արարած»: Այդ «ոսկորի և մսի կույտը» իրենից ներկայացնում էր մի կմախք՝ «գլխի տեղ - երկաթյա մեքենա», իսկ գլուխը ներքևում էր՝ ձախ ոտի մոտ.

Դա մա՞րդ էր, ուրու՞, թե մի դև՞,- դժվար էր որոշել իսկույն:-
Նման էր հսկա մորեխի, շարժվում էր թռիչքով թեթև.
Մնում էր մի պահ իր տեղում - և հանկարծ թռիչք էր անում,
Կարճ, հատու, ինչպես դաշտերում մորեխն էր թռչում տեղից տեղ: (10)

Յովհաննես առաքյալի հայտնության մեջ ընթերցում ենք. «Եւ մարախների նմանութիւնը նման էր ձիերի, որ պատրաստուած են պատերազմի համար, եւ նորանց գլուխների վերայ իբրեւ պսակներ կային ոսկու նման. եւ նորանց երեսները մարդկանց երեսների նման. եւ մազեր ունէին կանանց մազերի պէս. եւ նորանց ատամներն առիւծի ատամների նման էին: Եւ զրահներ ունէին ինչպէս երկաթէ զրահներ. եւ նորանց թւերի ձայնը նման էր շատ ձիերի կառքերի ձայնի, որ վազում են պատերազմ» (Յովհաննէս առաքեալի յայտնութիւնը, Թ-7-9):

Իր առանձնահատկությամբ այս պոեմին կարելի է համադրել «Կոմիտաս» երկը, որի մեջ նույնպես առկա են քրիստոնեական տարրերի նմուշներ.

Լռության դագաղի առջև քարացած մի Յիսուս,-
Մահախաչ քարացավ մի պահ մարմարե նաշի դեմ, որ արդեն
Պատանքված մահճում պատանքով մնջում էր ձայների մի նոր Ղազարոս... (11)

Երբ Յիսուսը վերադարձավ Բեթանիա՝ Ղազարոսն արդեն մահացել էր: Նա մոտեցավ քարայրին, որի մեջ թաղված էր Ղազարոսը, հրամայեց ետ տանել քարը, ապա «մեծ ձայնով աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ: Եւ մեռելը դուրս եկաւ՝ ոտները եւ ձեռքերը պատանով կապած, եւ երեսը վարշամակով պատած» (Աւետարան ըստ Յովհաննու, ԺԱ-43-44): Իր տողերով բանաստեղծը, կարելի է ասել, ակնարկում է «Մեռյալ ձայների Մարգարեի» երկրորդ կյանքի մասին, ինչը սկսվեց 1936 թվականի մայիսի 28-ից, երբ Կոմիտասի սրբացած մարմինը հայրենի հողին հանձնվեց: Կոմիտասի կերպարի մեջ Չարենցը տեսնում էր նաև իրեն՝ որպես նույն ողբերգական ժամապարհի ուղևոր, որպես իր սերնդակից Նեռի գոհ, «Որովհետեւ անօրէնութեան խորհուրդը արդէն զօրանում է» (Պօղոս առաքեալի երկրորդ թուղթը առ Թեսաղոնիկեցիս, Բ-7): Ու նա արդարացի իրավունքով հայտարարում է.

Չի պատկերել այսպես անփայլ մարդկությունն իր Փրկչին դեռ՝
Իբրև մի Նեռ՝ քաղցած, աններ - ձեռքին կարմիր մի կացին: (12)

Չարենցը լավ էր հասկանում, որ գալիքը եկվորներինն է: Նա հաստատակամորեն պատգամում է.

Եվ թող ձեր երթը հսկի ապագայի Ղովտը,
Որ երբեք դուք ետ չհայեք՝ ձեր լեռան կեսին հասնելիս... (13)

Ըստ Աստվածաշնչի՝ հրեշտակները օգնում են Ղովտին՝ իր կնոջ և երկու աղջիկների հետ դուրս գալու քաղաքից. «Եւ եղաւ երբոր նորանց դուրս հանեցին, նորանցից մեկն ասեց. Անձո՛ ազատիր, ետելիդ մտիկ մի տար, եւ բոլոր դաշտունը մի կանգնիր. սարը փախիր, որպէս զի չ'կորչիս»: «Եւ նորա կինը ետելին մտիկ արաւ եւ աղի արծան դարծաւ» (Ծննդոց, ԺԹ-17, 26): Այս ամենն իր մեկնաբանությունն է ստանում Ղուկաս ավետարանչի կողմից, երբ խոսում է Աստծո քազավորության և մարդու Որդու գալստյան մասին. «Այն օրունն ով որ կտրի վերայ լինի եւ իր բաները տան մէջ, թող չ'իջնէ նորանց առնելու. եւ յանդումը լինողն էլ այնպէս թող ետ չ'դառնայ: Յիշեցէք Ղովտի կինը» (Ղուկաս, ԺԷ-31-32):

Չարենցն անհանգիստ էր «պատմության քառուղիներով» անցած իր ժողովրդի համար.

Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ
Չարմանալի՛ թեթև, զարմանալի՛ անդեմ՝
Մերկության պես տկլոր ու անանցյալ...
Այդ մենք ենք երևի այն ուղտը հաստակող,
Որ Հիսուսի առակին հակառակ -
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նուրբ ծակով՝
Ապագայի դրախտը անարատ... (14)

Ակնարկվող առակը հետևյալն է. «Յիսուսն էլ ասեց իր աշակերտներին. ճշմարիտ ասում են ձեզ, որ հարուստը դժուար կ'մտնէ երկնքի արքայութիւնը: Բայց դարձեալ ասում են ձեզ. Աւելի հեշտ է, որ մի ուղտ ասեղի ծակովն անցնի, քան թէ մի հարուստ Աստուծոյ արքայութիւնը մտնէ» (Մատթեոս, ԺԹ-23-24):

Այդ մենք ենք երևի այն հարուստը,
Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ -
Պիտի ժառանգենք մեր դարերի կորուստը,
Որ բոլո՞ր տկլորներին սահմանված է վերուստ... (15)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղիշեն Չարենց, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Ե., 1962-1968:
2. Եղիշեն Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Ե., 1983:
3. Եղիշեն Չարենց, Նորահայտ էջեր, Ե., 1996:
4. Եղիշեն Չարենց, Վերջին խոսք, Ե., 2007:
5. Աստվածաշունչ, Ստոկհոլմի Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1989:
6. Վաղարշակ Նորենց, Հուշեր և արձագանքներ, Ե., 1968:
7. Գասպարյան Դ., Եղիշեն Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Ե., 1996:
8. Թամրազյան Հ., Եղիշեն Չարենց, Եր., «Արևիկ», 1987:
9. <https://hy.wikisource.org>:
10. . <https://hy.wikipedia.org>:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ

Քրիստոնեությունը հայտարարեց հոգևորի տիրապետություն, ինչը նոր մտածողության սկիզբ դարձավ: Չարենցի երկերում ևս տեղ գտան սուրբգրային բազմաբնույթ պատմություններ ու վկայություններ:

Չարենցն անհանգիստ բնավորություն էր, անհաշտ՝ նույնիսկ ինքն իր հետ: Նրա անխաղաղ ու փոթորկուն հոգին կարոտ էր անդորրի: Հոգու խաղաղությունն այն շավիղներից է, որ մարդուն տանում է կատարելության: Սակայն դարասկզբի ծանր իրականությունը ստիպում է բանաստեղծին տազնապով մտածել ապագայի մասին: Կենսական երևույթների խոր ազդեցությամբ ծավալվում են մահվան ու երազի թեմաները:

РЕЗЮМЕ

БИБЛЕЙСКИЕ ИСТОЧНИКИ ПРОИЗВЕДЕНИЙ ЧАРЕНЦА
АНИ ШИРИНЯН

Ключевые слова: *библейские свидетельства, магический совет, душа и тело, духовное владычество, божественное совершенство, гнев, блудный сын, небесное царство.*

Христианство провозгласило господство духовности, что стало началом нового мышления. В сочинениях Чаренца также нашли свое место разноплановые библейские истории и свидетельства.

У Чаренца был беспокойный характер, он был непримирим даже к самому себе. Его взволнованная и бурная душа тосковала по покою.

Мир души – одна из тропинок, которая ведет человека к совершенству. Однако тяжелая реальность начала века заставляет поэта тревожиться о будущем. Темы смерти и мечты разворачиваются под глубоким воздействием жизненно важных явлений.

SUMMARY

SCRIPTURAL SOURCES OF CHARENTS'S WORKS

ANI SHIRINYAN

Keywords: *scriptural testimonies, magic advice, soul and body, spiritual domination, divine perfection, wrath, prodigal son, heaven kingdom.*

Christianity proclaimed the domination of spirituality which became the beginning of new thinking. Various stories and testimonies were also found in the works of Charents.

Charents was anxious and dissatisfied even with himself. His warily and stormy soul was longing for peace. The peace of the soul is one of the tracks that lead a man to perfection. However, the hard reality at the beginning of the century made the poet worry about the future. Death and dream subjects evaluate under the influence of deep-seated life events.

ԿԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻՆ ՆԱԵՎ ԳՐԱԲԱՐՆ Է*

Բանալի բառեր: Արցախյան շարժում, մայրենի լեզու, գրաբար, հնչյունաբանություն, այբուբեն, բառագիտություն, ձևաբանություն, Գողթան երգեր, ուսուցում, կրթական ռազմավարություն:

Հորը, ազատ ու անկախ հայրենիք ունենալն արցախահայության նվիրական երազանքն է, ազատագրական պայքարի նպատակը: 1988 թվականի փետրվարին ազգովին սկսեցինք և 1994 թվականի մայիսի 9-ին հաղթականորեն ավարտեցինք այդ վեհ նպատակին ուղղված մեր առաքելության առաջին փուլը. ազատագրվեց Արցախը, ստեղծվեց հայկական երկրորդ անկախ պետությունը՝ Արցախի Հանրապետությունը: Այն կարողանում է դիմակայել ժամանակաշրջանի մարտահրավերներին, թշնամի հարևանի նկրտումներին՝ շնորհիվ կայացած բանալի, ժողովրդի անձնվիրության, հայրենասիրության, անկյտորում կամքի: Մեր պետության այս օղակը հուսալի ձեռքերում է: Բայց կա մի այլ օղակ ևս, որ պակաս կարևոր չէ հզոր ու անպարտ հայրենիք կերտելու մեր առաքելության համար: Դա մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործն է, նոր մարդու՝ ազատ ու անկախ Արցախի Հանրապետության քաղաքացու ձևավորումը:

Երկարատև հակամարտությունը (իսկ մեր պայքարը հարևան ժողովրդի հետ, ցավոք, այդպիսին է դարձել) ինչքան էլ հաղթանակով ավարտվի, ավերածություններ, մարդկային անդառնալի կորուստներ է բերում. ընդ որում, գոհվում են լավագույնները, նվիրյալները, որոնք միշտ առաջնագծում են...

Այսօր մեր պայքարը խրամատներից ձգվել է դեպի մի այլ հարթակ՝ քաղաքականության, գիտության, մշակույթի, դիվանագիտության դաշտ: Այս ոլորտում, ինչպես վկայում է մեր դարավոր պայքարի պատմությունը, մենք միշտ զիջել ենք արևելյան ճարտասանությանը, փորձել ենք դիվանագիտական մարտահրավերներին դիմակայել թղթե շերեփով և ձեռքներիցս բաց ենք թողել արյունով նվաճած անգամ:

Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում այլ է պատկերը: Մենք մեր թիկունքում ունենք երկու հայկական պետություն, նվիրված Սփյուռք, աշխարհասփյուռ հայություն, մեր ձայնը լսվում է միջազգային աստիճաններում, մեր բողոքը քննարկվում է, արցախահայ բնակչությունը համայն հայության ուշադրության կենտրոնում է: Սա հուսադրում է, բայց և պարտավորեցնում՝ արդարացնել բոլորի բոլոր ջանքերը: Մի առիթով հայտնի լեզվաբան Ս. Աբրահամյանը գրել է. «Հայրենիքի ձայն»-ում «ճանաչենք, սիրենք, պահպանենք» վերնագրով հոդված էր հրապարակվել, որը վերաբերում էր մայրենի լեզվի պահպանմանը

*Հոդվածն ընդունվել է 20.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

սփյուռքում: «Պահպանելու համար պետք է սիրել, սիրելու համար պետք է ճանաչել» պահանջն ու տրամաբանությունը, որ արտահայտված են մայրենի լեզվի առիթով, ըստ էության վերաբերում են ազգային բոլոր արժեքներին՝ հոգևոր, մշակութային, նյութական, այլև դպրոցին, գիտությանը և այլն»:(1) Այս առումով մեծ գործ ունենք կատարելու մայրենի լեզվի մասնագետներս: Արցախահայությունը երկար ժամանակ կտրված է եղել մայր Յայաստանից: Մեզ հաճախ այնքան էլ հասու չէին գրական հայերենի ռադիոհեռուստահոլորդությունները, կարոտ էինք մեր ազգի մեծերի կենդանի խոսքին: Եվ արդյունքում Արցախահայության գրական խոսքում իշխող դարձավ բարբառը, ունենալով հարուստ բառապաշար անգամ՝ խոսում էինք բարբառային առոգանությամբ, դժվարանում էինք անկաշկանդ արտահայտվել մեր մայրենի լեզվով:

Այսօր Արցախի Հանրապետությունը ՀՀ-ի հետ գտնվում է նույն կրթական դաշտում. նույն են ուսումնառության ծրագրերը, թեմատիկ, օրացուցային պլանները, դասագրքերը, կրթադաստիարակչական ռազմավարությունը, բայց միայն դրանցով առաջնորդվելով՝ չի վերացվի այն անդունդը, որ ստեղծվել է Արցախում խորհրդային 70 տարիների ընթացքում: Մեր բառապաշարը լցված է օտարաբանություններով՝ ադրբեջանա-թուրքական, լավագույն դեպքում՝ ռուսական բառերով, արտահայտություններով: Մաքրենք մեր լեզուն այդ մոլախոտերից: Դրանք փոխարինենք մեսրոպաշունչ հայերենով, որը մեր գոյության երաշխիքն է, հիրավի: Դրա համար պետք է վերադառնանք մեր արմատներին: Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ հարցերի պատասխանը նախ և առաջ պետք է փնտրել ոսկեղենիկ հայերենի՝ գրաբարի ուսումնասիրության մեջ: Ժամանակակից հայոց լեզվի դասավանդմանը զուգահեռ աշակերտներին պետք է տեղեկություններ տալ գրաբարի մասին: Ցույց տալ նրա դերն ու նշանակությունը հայերիս կյանքում, հայոց լեզվի գոյատևման, զարգացման, հարստացման գործում: Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է պահանջատեր լինել ժողովրդի գիտական, մշակութային, ազգագրական դարավոր ձեռքբերումներին: 21-րդ տեղեկատվական դարում առանձնահատուկ կարևորություն է ստացել հին մատյանների, արձանագրությունների, հուշարձանների, գրաբարյան արխիվի ուսումնասիրությունը: Այս առումով պարտադիր է դառնում հին հայերենի իմացությունը: Այն պետք է ուսուցանել՝ համադրելով մեր լեզվի զարգացման գրաբարյան և արդի ժամանակաշրջանի լեզվական համարժեք իրողությունները: Հանրակրթական դպրոցի 5-րդ, 6-րդ դասարանների հայերենի դասագրքերը կոչվում են «Մայրենի»: Եվ ոչ՝ «Հայոց լեզու»: Ըստ իս՝ այն մեծ խորհուրդ ունի. հայոց լեզուն (իմա՝ հայերի լեզուն) կարող են ուսումնասիրել նաև ոչ հայերը, դա սովորական լեզու է աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ լեզուների շարքում, որը կարող է ուսումնասիրել ցանկացած ոք: Իսկ մայրենին, մեր լեզուն է, հայ մայրերի լեզուն, որ փոխանցվել է սերնդեսերունդ: Ինչպես ասում է Ավ. Իսահակյանը. «Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:

Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի «Մայրենին» բացվում է մի բազմիմաստ հարցադրումով. «Մտածե՞լ ես , թե ինչո՞ւ ենք մեր լեզուն կոչում մայրենի»:(2) Ժամանակակից հայերենն իր բոլոր բաժիններով՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն ու շարահյուսություն, սերտորեն անջակցվում է գրաբարին: Դրանք ուսուցանելիս միշտ պետք է զուգահեռներ անցկացնել հայերենի զարգացման այդ երկու շրջանների լեզվական համարժեք իրարկու-

թյունների միջև, համադրել դրանք, նշել ընդհանրությունները, ընդգծել տարբերությունները:

Աշակերտի ծանոթությունը գրաբարին պետք է սկսել հայերենի հնչյունական համակարգն ուսուցանելիս, երբ խոսք է գնում տառի և հնչյունի, հայերենի այբուբենի մասին: Այբուբեն բառը կազմված է հայերենի առաջին երկու տառերի ա (այբ) և բ (բեն) անվանումների միացումից: Գրաբարի այբուբենն ունի 36 տառ, որովհետև հայոց լեզուն ունի 36 հնչյուն, իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հնչյունի համար ստեղծել է մեկ տառ: Ժամանակակից այբուբենի վերջին երկու տառերը (օ և ֆ) ավելացվել են, երբ հին հայերենը կենդանի, խոսակցական լեզու չէր, այլ գրաբար: Օ-ն օգտագործում ենք բառասկզբի և բառամիջի համապատասխան հնչյունները տարբերակելու համար, իսկ ֆ-ն՝ օտար, փոխառյալ բառերը գրելու համար, որովհետև հայերենում չկա ֆ հնչյուն:(3)

Մ. Մաշտոցը հայերենի ամեն մի տառին տվել է առանձին անվանում՝ այբ, բեն, գիմ, դա...: Դրանք անգիր սովորելը յուրաքանչյուր աշակերտի համար պարտադիր է: Այբուբենը մտապահելը դյուրին է դարձնում տառերի համահունչ դասավորությունը, հերթականության երաժշտականությունը: Տառերի գրության ձևը, դասավորությունը, արտասանությունը, թվային արժեքը ցայսօր նույնն են: Փոփոխություններ կատարվել են առանձին հնչյունների, հնչյունակապակցությունների գրության և արտասանության մեջ: Դրանց արդյունքում արդի հայերենում ունենք հանուն, հօգուտ, հոտնկայս, հանձին(ս) և նման բառեր, որոնց ստուգաբանությունը, ուղղագրությունն ու գործածությունը առնչակցվում են գրաբարին: (4)

«3 ձայնակապի ուղղագրությունը և ուղղախոսությունը» թեման անցնելիս (5) պետք է զուգահեռներ անցկացնել գրաբարի և ժամանակակից հայերենի նույն իրողությունների միջև: Հին հայերենում բառավերջում ա-ից և ո-ից հետո գրվում էր յ, բայց չէր արտասանվում: Օրինակ՝ տղայ, արքայ, երեկոյ և այլն: Ժամանակակից հայերենում յ ձայնակապը գրեթե բոլոր ձայնավորների միջև արտասանվում է, բայց գրվում է ա-ից և ո-ից հետո: Օրինակ՝ արքայություն, տղայական, երեկոյան և այլն:

Հին հայերենին անդրադառնալու անհրաժեշտություն է զգացվում նաև վ – ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու արտասանությունը բացատրելիս: Աշակերտների ուշադրությունը պետք է դարձնել այն բանի վրա, որ դասագրքի վարժություններում ֆ ունեցող բոլոր բառերը փոխառություններ են՝ ֆիզիկա, Աֆրիկա, ասֆալտ, Աֆղանստան: (6) Լավ կլինի աշակերտների հետ վերհիշել հայերենի հնչյունական համակարգը չունի ֆ հնչյունը, մերոպյան այբուբենը՝ ֆ տառը և հայերենի բառապաշարում ֆ ունեցող բոլոր բառերը օտար բառեր են: Դա կօգնի աշակերտներին կատարելու «Մայրենի 5» դասագրքի 104-րդ էջի թ. 3 վարժությունը. «Գրի՛ր Ֆ կամ Վ տառով սկսվող երկու – երեք պետության անուն՝ նշելով մայրաքաղաքները»:

Նույն տեսանկյունով պետք է բացատրել Եվ(և)–ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Թեման սկսվում է «Հայերենում մեծատառ և չկա» նախադասությամբ: (7) Ինչո՞ւ. հռետորական այս հարցի պատասխանն ուսուցիչը գտնում է՝ աշակերտների հետ վերհիշելով գրաբարյան այբուբենը: Ինչպես գիտենք, Մ. Մաշտոցը հայերենի յուրաքանչյուր հնչյունի համար ստեղծել է մեկ տառ, 36 հնչյունի դիմաց՝ 36 տառ: Եվ-ը երկու – երեք հնչյունների կապակցություն է՝ եվ (յէվ): Այն մեր այբուբենում առանձին տառ չի գիտակցվում և գրվում է եվ կամ և ձևով:

Արդի հայերենի ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունն անցնելիս անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն տալ գրաբարի ի, գ, ընդ, ըստ նախդիրների մասին՝ առանց դրանք անվանելու (դա թողնենք «Ձևաբանություն» բաժինն ուսումնասիրելիս), օգտագործելով «մասնիկներ» եզրույթը: Ինքնըստինքյան, խոչընդոտ, անընդմեջ, օրըստօրե, անընդհատ բառերում ը ձայնավորի գրությունը բացատրվում է ը-ով սկսվող ընդ, ըստ բաղադրիչներով, իսկ գիշերուզօր, ոսկեզօծ և նման բառերում օ-ի գրությունը՝ գ մասնիկից հետո օ-ով սկսվող բառարմատներով: (8)

Ի նախդրի մասին առաջին տեղեկատվությունը հարկավոր է տալ հօգուտ, հոտնկայս բառերի ուղղագրությունը բացատրելիս: Դրանց բառասկզբի հ-ն գրաբարի ի մասնիկն է, որը բառին միացած գրվելիս դառնում է հ, և դրանից հետո բառն ուղղագրությունը չի փոխում: Ի նախդրին անդրադառնալ է պետք նաև «Նամակի կառուցվածքը» ուսուցանելիս: (9) Ի պատասխան արտահայտության մեջ ի-ն նշանակում է որպես (որպես պատասխան), իսկ Ա. Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» բանաստեղծության մեջ (10) գրաբարյան առ մասնիկը հանգման, մատուցման իմաստ է արտահայտում՝ «Նամակ Հայաստանին»:

Էջմիածին, բամբասանք բառերի բառակազմությունը հուշում է դրանց գրությունն ու իմաստը: Այսպես. Էջմիածին բառի մեջ էջ-ը իջնել բայի արմատն է (11), որը գրաբարից թարգմանվում է իջավ, այսինքն՝ դա այն տեղն է ուր իջավ Միածինը: Ահա և դասագրքի նշված էջի 7-րդ վարժության բացատրությունը:

Բամբասանք բառն առաջացել է հին հայերենի բառ «ասում են», բառ «ասում են» արմատների+ անք վերջածանց կաղապարով:(12)

Հին հայերենին ուղղակի անդրադարձ է «Ծնունդ Վահագնի» գողթան երգը:(13) Այս բանաստեղծության օրինակով աշակերտներին տեղեկություն է տրված գրաբարյան գ նախդրի, ոյ, եա երկբարբառների արտասանության մասին (զկարմրիկն – ըզկարմրիկըն, բոցոյն –բոցույն, խարտեաշ – խարտյաշ):

Գրաբարյան տեքստերի ընթերցանությունը, գրաբարից ժամանակակից հայերեն թարգմանությունները շարունակվում և առավել մեծ ծավալներ են ընդունում «Մայրենի 6» դասագրքում: Գրաբարը ներկայացվում է «Տերունական աղոթքով»(14), որը տրված է նախ՝ հին հայերենով, ապա՝ գրական արևելահայերենով: Գրաբարյան տեքստի ընթերցանության համար հուշումները 6-րդ դասարանում, բնականաբար, առավել շատ են. յերկինս – հերկինըս, յերկրի – հերկրի, յալիտեանս – հավիտյանըս, զհաց – ըզհաց, զպարտիս – ըզպարտիս, փորձութիւն – փորձություն, արքայութիւն –արքայություն, զօրութիւն –զորություն: Այս հուշումները և թարգմանությունը, ինչպես նաև այդ աղոթքի հաճախակի կրկնությունը կօգնեն, որ աշակերտներն արագ յուրացնեն գրաբարյան տեքստը: Ուսուցիչը պետք է բացատրի, որ չնայած հին հայերենը գրաբար է դարձել, նրանով չենք հաղորդակցվում, բայց չի մոռացված: Այն լսում և օգտագործում ենք ամեն օր: Գրաբարը մեր հոգևոր պաշտամունքի լեզուն է, Աստծո հետ հաղորդակցվելու լեզուն:

Գողթան երգերից շատ անդրադարձներ կան «Մայրենի 6»-ում՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտաշես և Սաթենիկ»: Սրանցից յուրաքանչյուրի մասին խոսելիս հատուկ պետք է նշել ու կրկնել, որ դրանք մեր նախնիները ստեղծել են հին հայերենով, ժամանակի ընթացքում մի մասը ոչնչացվել է, առանձին հատվածներ մեզ են հասել Մ. Խորենացու շնորհիվ: Այս առասպելներից յուրաքանչյուրն ուսուցանելիս սյուժեի մեկնաբանության, հայրենասիրության, ազգային արժանապատվության ու հպարտության վեհ զգացումներ դաստիարակելուն զուգընթաց անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գրաբարյան կազմությունների մեկնաբանությանն ու ստուգաբանությանը: Այսպես, «Հայկ

և Բել» ավանդավեպի միջոցով պետք է տեղեկություն տալ Հայք և Հայոց ծոր կազմությունների մասին. Հայք-ը հայ բառի հոգնակին է, նշանակում է հայեր, Հայոց ծոր՝ հայերի ծոր, հայոց լեզու՝ հայերի լեզու: Այդպես էլ թագավորաց – թագավորների, երգ երգոց՝ երգերի երգ, օրիորդաց՝ օրիորդների, ականաց՝ ականների: Բառավերջին ք-ն հին հայերենում հոգնակիակերտ մասնիկ է: Ժամանակակից հայերենում այն վերածվել է վերջածանցի՝ գիրք, քայլք, աղոթք, անցք, ասք, միտք:(15) Ժամանակակից հայերենում ածանցների են վերածվել նաև գրաբարյան ց, ընդ նախդիրները: Դա ուղղություն կտա աշակերտներին դասագրքի 131-րդ էջի 5-րդ վարժությունը կատարելիս:

5-րդ դասարանում արդեն խոսվել է գրաբարյան համր յ-ի մասին: 6-րդ դասարանում դրան անդրադառնում ենք «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդավեպից մեզ հասած «Ուլունք Շամիրամայ ի ծով» նախադասությունը մեկնաբանելիս:(16) Աշակերտների հետ վերհիշում ենք նաև գրաբարյան ի նախդրի իմաստը, որին աշակերտները ծանոթ են նախորդ դասարանից:

Գողթան երգերից «Մայրենի 6»-ում առավել ընդարձակ ներկայացված է «Արտաշես և Սաթենիկ» ավանդավեպը:(17) Մեջբերումները, սակայն, տրված են ժամանակակից հայերենով՝ «Եվ որտեղի՞ց քաջ Արտաշեսը պիտի տա...», «Հեծավ արի Արտաշես արքան...», «Ոսկի անձրև էր տեղում...»: Քանի որ աշակերտներն արդեն ծանոթ են նման գրույցների գրաբար և ժամանակակից հայերեն զուգահեռ տարբերակներին, լավ կլինի, որ ուսուցիչը լրացուցիչ տեղեկություններ տա այդ ավանդավեպի գրաբար տեքստի մասին. կարող կամ անգիր արտասանի վերը նշված հատվածները, բացատրի ուստան, ականներ, շիկափոկ, փանդիռ գրաբարյան բառերը: Ծանոթությունը գրաբար տեքստին կօգնի այդ բառերն ըմբռնելուն և մտապահելուն:

Հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարաններում հայոց լեզուն ուսուցանվում է առանձին դասագրքերով: Ժամանակակից հայերենի քերականությանը զուգընթաց շարունակենք մեկնաբանել հին հայերենի լեզվական համարժեք իրողությունները:

Հայեցի կրթությունը գրական արևելահայերենի իմացությունը չէ սոսկ, այլև հայի ազգային արժանապատվության, մայր լեզվի նկատմամբ հպարտության, խորին հարգանքի և մեծ սիրո դաստիարակությունը: Ինչո՞ւ ենք հպարտանում, որ մեր լեզուն հազարամյակների պատմություն ունի: Չէ ո՞ր լեզուն հաղորդակցման միջոց է: Մարդիկ հաղորդակցվում են մի քանի դարերի պատմություն ունեցող լեզուներով անգամ և կարողանում են իրար հասկանալ: Ինչո՞վ է առանձնանում հայերենը: Այս հարցերի պատասխանը աշակերտները պետք է ուսանեն հին հայերենին առնչակցվելու ուղիով: Մեր լեզուն հին է, զարգացած, այնքան ու այնպես, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն ամենահինն է աշխարհում, ամենահինն ու կատարյալը, այնպես, որ այն ընդունում են որպես բնագիր և թարգմանում հայերենից այլ լեզուներ: Ոսկեդենիկ հայերենի ամբողջ բառապաշարը հավաքված է Հայկազյան բառարաններում, «թրի նման փայլեցված է» Նարեկացու Մատյանի մեջ: Հին հայերենն Արցախյան շարժման նահատակների հարգանքի խորանի կարգախոսն է դարձել. «Մահ իմացեալ մահ է, մահ ոչ իմացեալ անմահութիւն է»: Տարիների հետ հարստացել է մեր բառապաշարը, հղկվել, դարձել բազմաշերտ: Ամեն մի ժամանակաշրջան, իրողություն, դարակազմիկ իրադարձություն իրենց հետ բերել են նոր բառեր, կապակցություններ, արտահայտություններ: Երկարակյաց լեզուն դրանցից միայն շահել է:

Հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարաններում հայերենի խոսքի մասերն ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջիններիս տարածքությանը, խոսքիմասային փոխանցումներին: Եթե խոսվում է քերականական ձևերից առաջացած մակբայների, կապերի, շաղկապների, վերաբերականների և

այլնի մասին, պետք է առանձնակի ներկայացնել զրաբարյան քարացած ձևերը. բայ, գրեթե, հասցե, կեցցե, համարյա, առթիվ, շնորհիվ, երիցս, հագիվ, բարև, ցտեսություն, ցմահ, պատահմամբ և այլն:

Անվիճելի է, որ «կրթությունը մեր երկրի համար ռազմավարական խնդիր է, ազգային անվտանգության խնդիր»:(18) Մայրենի լեզվի խոր իմացությունը պարտադիր է այդ հարցում. ծառն արմատներով է կանգուն, տարիների հետ այն իր արմատներն ամուր կխրի հողում, կդիմակայի ցրտին ու տապին, եթե խնամվում է: Մեր մայրենի լեզուն էլ կկարողանա դիմակայել ժամանակաշրջանի մարտահրավերներին, եթե մեզնից յուրաքանչյուրը լավ տիրապետի հայոց լեզվին, կարողանա այն պաշտպանել ոչ միայն օտարներից, այլև բոլոր այն վայ հայերից, ովքեր չգնահատելով մեր ազգային այդ մեծագույն արժեքը, աղավաղում են այն, սովորում կիսատ-պրատ, հեշտությամբ փոխարինում օտար լեզվով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., Մեր լեզուն և մեր դպրոցը, Երգ, 2001, էջ 37:
2. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2011, էջ 4:
3. Բաբայան Օ., Գրաբարի ձեռնարկ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, էջ 5:
4. Տե՛ս նշված ձեռնարկի 6-րդ էջը. «Յ տառը բառասկզբում արտասանվում է հ... Ի նախդիրը ձայնավորով սկսվող բառից առաջ դառնում է յ և գրվում բառի հետ միասին՝ ի անապատի > յանապատի, ի օդս > հողս, ի օգուտ > յօգուտ, ի ուրախություն > յուրախություն, ի անձինս > յանձինս>>:
5. Տե՛ս Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2011, էջ 48:
6. Տե՛ս նշված դասագիրք, էջ 104:
7. Տե՛ս նշված դասագիրք, էջ 128:
8. Տե՛ս նշված դասագիրք, էջ 42:
9. Տե՛ս նշված դասագիրք, էջ 201:
10. Տե՛ս նշված դասագիրք, էջ 214:
11. Տե՛ս նշված դասագիրք, էջ 30:
12. Տե՛ս նշված դասագիրք, էջ 102:
13. Տե՛ս նշված դասագիրք, էջ 166:
14. Տե՛ս Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2012, էջ 36:
15. Տե՛ս նշված դասագիրք, էջ 140:
16. Տե՛ս նշված դասագիրք, էջ 100:
17. Տե՛ս նշված դասագիրք, էջ 134:
18. Աբրահամյան Ս. Գ., Մեր լեզուն և մեր դպրոցը, Երգ, 2001, էջ 38:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԱՅՐԵՆԻՆ ՆԱԵՎ ԳՐԱԲԱՐՆ Է

ԿԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ հարցերի պատասխանը նախ և առաջ պետք է փնտրել հին հայերենի ուսումնասիրության մեջ: Հողվածում խոսվում է հանրակրթական դպրոցի աշակերտներին ժամանակակից հայոց լեզվի դասավանդմանը զուգահեռ զրաբարի մասին անհրաժեշտ տե-

ղեկություններ տալու կարևորության մասին: Նշվում են հին հայերենի ուսուցման ռազմավարական նշանակությունը, 5–8–րդ դասարանների մայրենիի դասագրքերում ընդգրկված գրաբարյան տեքստերի հնչյունաբանական, բառակազմական, քերականական վերլուծությունների մի շարք միջոցներ ու եղանակներ:

РЕЗЮМЕ

РОДНОЙ ЯЗЫК – ТАКЖЕ И ГРАБАР

КАРИНЕ АВАНЕСЯН

Ключевые слова: Арцахское движение, родной язык, грабар, фонетика, алфавит, лексикология, морфология, песни Гохтана, обучение, стратегия обучения.

Кто мы? Откуда пришли? Куда идем? И почему? Ответы на эти вопросы прежде всего нужно искать в изучении древнеармянского языка. В статье говорится о важности, параллельно с обучением современному армянскому языку, предоставления необходимых знаний о грабаре в общеобразовательных школах. Отмечается стратегическое значение обучения древнему армянскому языку, приводится ряд способов и методов фонетических, словообразующих, грамматических анализов в текстах на грабаре в учебниках родного языка 5-8 классов.

SUMMARY

GRABAR (OLD ARMENIAN) IS ALSO A NATIVE LANGUAGE

KARINE AVANESYAN

Key words: Artsakh movement, native language, grabar, phonetics, alphabet, lexicology, morphology, songs of Goghtn, teaching, strategies of teaching.

Who are we? Where did we come from? Where are we going to? And why? Answers of these questions we must search in learning old Armenian. The article considers the importance of acknowledging the pupils about old Armenian in public schools in parallel with teaching literary Armenian. It mentions about strategic value of teaching old Armenian, kinds and methods of phonetic, word-forming, grammatical analyses in texts of Armenian textbooks of the 5th -8th forms.

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

**ՂԱՐԱԲՎՐԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ
ՉԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՅՈՒՄ*
(հարադրական բարդություններ)**

Բանալի բառեր: Կրթական ծրագիր, կամընտրական դասընթաց, դասախոսություն, Ղարաբաղի բարբառ, բառակազմական համակարգ, էթնիկական ինքնավստահություն, ռազմավարական նշանակություն, հարադիր բարդություններ, զուգադրման մեթոդ:

Արցախի Չանրապետության ԱրՊՅ, Գրիգոր Նարեկացի և Մեսրոպ Մաշտոց համալսարաններում Բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի կրթական ծրագրերում ներառված է «Ղարաբաղի բարբառ» առարկան՝ որպես կամընտրական դասընթաց: Սույն հոդվածը կարող է ծառայել որպես դասախոսություն այդ դասընթացի և, առհասարակ, բարբառագիտական դասընթացների համար:

Սովորողների կողմից նյութի ընկալումը արդյունավետ դարձնելու նպատակով փորձենք այն ներկայացնել՝ պահպանելով դասախոսության կառուցվածքային բաղադրիչները, առանձնացնելով կարևոր հարցադրումներն ու հասկացությունները:

Դասախոսության նպատակը: Սույն դասախոսության նպատակն է սովորողներին յուրացնել տալ Ղարաբաղի բարբառի բառակազմական համակարգը, բառակազմական գործուն կաղապարները, կրկնավոր, բաղիյուսական բարդությունների ու հարադիր բայերի կառուցվածքային առանձնահատկությունները:

Թեմայի կարևորությունը: Առհասարակ բարբառների ուսուցումը մեծապես նպաստում է ոչ միայն տվյալ լեզվի պատմության, այլև լեզուն կրող ժողովրդի պատմության, ազգագրության ու մշակութաբանության համակողմանի ուսուցմանը: Բարբառների ուսուցումը նպաստում է նաև սերունդների մեջ ազգային դիմագծի պահպանմանը, որովհետև բարբառը «էթնիկական ինքնապաշտպանական կարևորագույն միջոցներից»(1) է: Այս առումով արդի իրականության մեջ Ղարաբաղի բարբառի ուսուցումը ունի նաև ռազմավարական նշանակություն: «Այսօր, երբ փաստացի անկախ ու տարածքային առանձին միավոր է Արցախի Չանրապետությունը, երբ այդ վարչատարածքային միավորը դեռևս աշխարհի կողմից ճանաչված չէ, և նույնիսկ որոշ քոչվորականներ հանդգնում են տեղի բնակչության ծագումնաբանական պատկանելության և բնիկության հարցը վիճարկել, բարբառի ուսումնասիրության, նրա գործածության շրջանակների ընդ-

*Հոդվածն ընդունվել է 10.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

լայնման և տեղի ուսումնական հաստատություններում նրա ուսումնասիրության պահանջը դառնում է օրախնդիր»։ (2)

Ներկայացվող նյութի առավելություններն ու անհրաժեշտությունը: Ղարաբաղի բարբառի հարուստ ու ճկուն բառակազմական համակարգի մասին սույն դասախոսությունը սովորողներին կբերի այն համոզման, որ Ղարաբաղի բարբառը հայ բարբառների մեջ ոչ միայն ամենամեծ, այլև ամենակենսունակ և ամենահին բարբառներից է, քանի որ լեզուն և դրա տարբերակային ձևերը հարուստ ու կենսունակ են և կատարելագործվում են առավելապես այն դեպքում, երբ գործառնապես ակտիվ է բառապաշարի զարգացման ներլեզվական գործոնը՝ բառակազմական համակարգը:

Բացի դրանից բարբառի բառակազմական համակարգում բավականին ակտիվ են հնդեվրոպական նախալեզվից ժառանգված բազմաթիվ ձևույթներ, որոնք վկայված չեն գրական հայերենում: Դա ևս մեկ անգամ փաստում է, որ Արցախի տարածքը վաղնջական շրջանից հայկական է: Եվ Ղարաբաղի բարբառի ու նրա բառակազմական համակարգի ուսուցումը սովորողների մեջ կամրագրի էթնիկական ինքնավստահությունը: Եվ, ըստ իս, այսօր կարևոր է Ղարաբաղի բարբառի ուսուցումը ոչ միայն ԱՅ, այլև ՀՀ ուսումնական հաստատություններում:

Դասախոսության ենթադրվող կառուցվածքը: Դասախոսությունը ներկայացնենք 3 հիմնական բաղադրիչներով՝ **կրկնավոր բարդություններ, բաղիյուսական բարդություններ, հարադիր բայեր:**

Թեմայի հիմնական մասը ներկայացնելուց առաջ նպատակահարմար է առանձնացնել կարևոր հասկացություններ ու եզրույթները /**ձևույթ, հարադիր բարդություն, բաղիյուսական բարդություն, կրկնավոր բարդություն, հարադիր բայեր**/ և վերհիշել դրանց սահմանումներն ու առանձնահատկությունները:

Ներկայացվող նյութի պատմությունը: Ներկայացվող նյութը մասամբ ծանոթ է ուսանողների, որովհետև գրական հայերենի բառակազմական կաղապարները կենսունակ են նաև Ղարաբաղի բարբառում: Ուստի՝ Ղարաբաղի բարբառի բառակազմության ուսուցումը նպատակահարմար է կատարել գրական հայերենի նույն համակարգի հետ զուգադրելու միջոցով՝ օգտվելով ուսանողների՝ գրական հայերենի բառակազմական համակարգի մասին ունեցած գիտելիքներից: Արդյունավետ կլինի նախ հարցադրումների միջոցով վերհիշել գրական հայերենի բառակազմության օրինաչափությունները, բաղադրյալ բառերի տեսակները, բարդությունների և ածանցավոր բառերի բառակազմական կաղապարները, այնուհետև դրանք ցույց տալ բարբառում: Այդպես կապահովվի նաև սովորողների ընդգրկումը ուսուցման գործընթացին. որովհետև հաջողված և արդյունավետ դասախոսության գրավականը դասարանի հետ կայուն հաղորդակցումն է և քաջատեղյակությունը տվյալ ոլորտին:

Հիմնական մաս

Ղարաբաղի բարբառում ևս բառակազմական միջոցներն են բառաբարդումը և ածանցումը: Այստեղ ևս բարդությունները լինում են համադրական և հարադրական: Իբրև բառակազմական եղանակ՝ հարադրությունները մեծ ու կարևոր դեր են կատարում ոչ միայն գրական լեզվի, այլև բարբառի բառապաշարի հարստացման գործում: Բարբառում անվանական հարադրությունները իրենց քանակով զիջում են բայական հարադրություններին, սակայն դրանք դրսևորում են բարբառի բառակազմական համակարգի մեծ հնարավորությունները: Ղարաբաղի բարբառում տարածված են անվանական հարադրությունների կրկնավոր և բաղիյու-

սական տեսակները: Կրկնավոր բարդությունների կազմությունը բառակազմության ամենահին եղանակներից է, թերևս ամենանախնականը, սակայն, այսօր էլ բավականին կենսունակ է թե՛ գրական լեզվում, թե՛ բարբառներում: Կարծիք կա, որ նախախորհրդային շրջանում, ինչպես և խորհրդային շրջանի առաջին տասնամյակներում, կրկնավոր հարադրություններն առավել գործածական էին բարբառներում և գեղարվեստական լեզվում գործածվում էին վերջինիս ժողովրդախոսակցական երանգ հաղորդելու համար: Չարգացման այդ ընթացքը լեզվաբանության պատմության մեջ նկարագրվում է այսպես. «Կրկնավոր հարադրությունների գործածությունը խիստ կենսունակացել է հայերենի զարգացման հատկապես վերջին տասնամյակներում և բնորոշ է արդեն հայերենի ոչ միայն ժողովրդախոսակցական, այլև գրական ու գեղարվեստական լեզվին»:(3)

Ա. Պապոյանը գտնում է, որ բառաբարդման այս եղանակը առավել չափով գործուն է ժողովրդախոսակցական լեզվում և մասնավորապես բարբառներում և «Քանի որ կրկնավորները առավելապես հատուկ են բանավոր խոսակցական լեզվին, ուստի նման բարդությանը դիմում են հատկապես այն գրողները, որոնք ամենից շատ են կապված ժողովրդական լեզվամտածողությանը, և որոնք համար լեզվի ժողովրդայնությունը ներքին ունակություն է և բխում է բանաստեղծական խառնվածքից»:(4)

Ուսանողը պիտի իմանա նաև, որ բարբառում ևս կրկնավոր բարդություններ կարող են կազմվել տարբեր խոսքի մասերից: Արդյունավետ կլինի ուսանողների մասնակցությամբ տարբեր խոսքի մասերից կազմել կրկնավոր բարդություններ՝ զուգահերեով դրանք գրական հայերենի նույնակազմ կառույցների հետ **սմբ-սմբ՝ (1.կույտերով, 2.մաքրասեր), մը՛ծ-մը՛ծ (մեծ-մեծ), իրեք՝-իրեք՝ (երեքական), ինքը՝-ինքը՝ (ինքն-իրեն), կամանց-կամանց (կամաց-կամաց)** և այլն:

Այստեղ ևս կրկնավոր բարդությունները լինում են հնչյունափոխված (**թըյդի-թայդի (հապշտաս), թանուզ-թաքնուզ (մաքուր, մաքրասեր), ջենուլի-մենուլի (ցուցամուլ) ևն**) և **անհնչյունափոխ (լօշտրակ-լօշտրակ (մեծ-մեծ), լօպագ-լօպագ (մեծամտաբար), սիրի-սիրի (խտրականություն) ևն**):

Ղարաբաղի բարբառում կարելի է հանդիպել հնչյունական փոփոխությունների հետևյալ դրսևորումների.

1. Առաջին բաղադրիչի ձայնավորները կամ ձայնավորներից մեկը փոխվում են ը-ի, օրինակ՝ **թըթըն-թաքուն** (գաղտնաբար), **սըռըծ-սառած** /սառը, անտարբեր/, **դըշինգ-դաշանգ** /գեղեցիկ, գեղեցկաբար/, **յըվըշ-յավաշ** /կամաց-կամաց, դանդաղ/ ևն:

2. Առաջին ձայնավորը՝ ա, ի, ե, երկրորդ եզրում դառնում է ու: Օրինակ՝ **փալագ-փուլուզ** (1.լաթի կտորներ, 2.հին, քրքրված զգեստ), **քյնսիք-քյնսիք** (աղբատ), **ծակ-ծուկ** /1.անցքեր, ճեղքեր, 2 թաքստոցներ/, **սնս-սնս** ձայն-ծպտուն/և այլն.

3. Բառասկզբի բաղաձայնը երկրորդ եզրում փոխվում է մ-ի (կամ ավելանում է մ), սակավ դեպքերում՝ ուրիշ բաղաձայնի, օրինակ՝ **փ-ի**, ինչպես՝ **ջենտեղի-մենտեղի (ցուցամուլ), պուճախ-մուճախ (1.անկյուն, 2.վարագույրով առանձնացված մաս), անգնլու-մնգնլու** (տեղը-տեղին, հանով-հոտով), **իլլնթ-միլլնթ** (մարդ արարած), **ըռխ-մըռխ** (անրգ.բերանը՝ իր շրջակայքով), **քիսի-փիսի (ցածր ձայնով գաղտնի խոսակցություն)** և այլն: Բառաբարդման այս եղանակը առավել չափով գործուն է ժողովրդախոսակցական լեզվում և մասնավորապես բարբառներում: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառում այս տիպի բարդություն կարող է կազմվել զանազան արմատներից՝ **(յէխտուտ (կեղտոտ)-մէխտուտ, հաց-մաց)**: Ինչպես նշում է Ա. Պապոյանը՝ «Այդ եղանակով ամեն օր ու ժամ ամեն մարդ ուզածի չա-

փով կարող է կազմել նորանոր բառածներ, որոնք հաջող ու տեղին լինելու դեպքում կմտնեն շրջանառության մեջ կամ հակառակը՝ մեկ անգամ գործածվելով՝ այդպես էլ կմոռացվեն՝ առանց արժանանալու քաղաքական իրավունքի»:(5)

4. Առաջին եզրը ներկայացնում է մեկ վանկ, որի սկզբում բաղաձայնն ու հաջորդող ձայնավորը կրկնվող բառինն են, իսկ երրորդը՝ փ կամ պ՝ **լափ-լավ** (շատ լավ), **սփփ-սրճ** (սև), **լօփ-լօլի** (երկարահասակ, նիհար), կամ կարող է մնալ անփոփոխ՝ **հնլ-հնլբնթ** (արագ, շտապ) ևն:

Բարբառային կրկնավոր բարդությունները մեծ մասամբ կազմվում են առանց կապակցական տարրի, հազվադեպ կարող են կապակցվել շաղկապով (**ծակ ու ծուկ**): Նմանաձայնական բառերից բաղադրված մի խումբ կրկնավոր բարդության բաղադրիչներ կապակցվում են **հա** մասնիկով՝ **քռռ հա քռռ, քահ հա քահ, դռռ հա դռռ, դրդխկ հա դրդխկ** և այլն: Ղարաբաղի բարբառն «անընդհատ» իմաստով գործածում է **հա** բառը (**հա** խոսում **ա՛**՝ անընդհատ խոսում է): Այս բաղադրություններում **հա**-ն բառակազմական դեր է կատարում՝ պահպանելով իր «անընդհատ» իմաստը:

Կրկնավոր հարադրությունները բարբառի բառապաշարի հարստացմանը նպաստում են նաև նրանով, որ, հարադրական բարդություն լինելով հանդերձ, իրենց հերթին հիմք են ծառայում նոր բաղադրությունների համար: Դրանցով հաճախ կազմվում են հարադիր բայեր, ինչպես՝ **օրկուն-օրկուն** (*առատ, վարար*) և **օրկուն-օրկուն անել** (*վարար հոսել, թափվել*), **փահ-փահ անել** (գոհունակություն արտահայտել), **կուփե-կուփե անել** (հրմշտել), **կըցան-կըցան անել** (զանազան կտորներ՝ հատվածներ իրար կցել):

Բաղիյունական բարդությունները ևս ներկայանում են իմաստային ու կառուցվածքային բազմազանությամբ: Բաղիյունական բարդությունների բաղադրիչները կարող են բաղադրված լինել կապակցական տարրով՝ և, ու շաղկապներով, և կարող են բաղադրվել առանց շաղկապի:

Բարբառային բաղիյունական բարդությունների կազմության մեջ ակտիվ է ու շաղկապը: Գրաբարում և շաղկապը ավելի ակտիվ էր բառակազմության մեջ, քան ու շաղկապը, բայց «հայոց լեզվի զարգացման ընթացքում և շաղկապն աստիճանաբար կորցրել է իր բառակազմական ուժը, իսկ ու-ն, ընդհակառակը, հարադրությամբ բաղիյունական բարդություններ կազմելու առավել մեծ հատկություն է ձեռք բերել, իսկ դրանում, անշուշտ, կարևոր դեր են խաղացել երկու հանգամանք. մեկ այն, որ ու շաղկապն ի սկզբանե հատուկ է եղել ժողովրդախոսակցական լեզվին և, բնականաբար, ժողովրդական բնույթի բարդություններ է կազմել, մեկ էլ այն, որ ունյն այդ հիմքի վրա նա իմաստապես «հեռացել է» հոմանիշ և շաղկապից՝ արտահայտելով ավելի սերտ հարաբերություն՝ առնչակից բառերի միջև»:(6)

Ու-ով են կապակցվում նաև **քննջ** ու **պուճախ** (*անկյուններ, ծայրեր*), **քոռ ու փօշման** (*փոշմանած*), **բախչա ու բաղ** (*դաշտ ու այգի*), **լեն ու բօլ** (*ընդարձակ, ազատ*), **թուփն ու ծուպը** (*ազգը*), **թօռ ու թաց** (*անձրևային*), **տակ ու կլօխ** և այլ բարդություններ: Անշաղկապ բաղիյունականների միջբաղադրիչային դադարը կարող է արտահայտվել միության գծիկով: Այսպիսի բարբառային կառույցներ են **չօր-չիրթ** (*հագուստեղեն*), **բօյ-բուսաթ** (*հասակը, մարմնի կառուցվածքը*), **զուռնա-դավալ** (*երաժշտախումբ*), **բօլ-հերիթ** (*բավական*), **սաղ-սալամաթ** (*ողջ ու առողջ*), **պակաս-պըռատ** (*պակասություն*), **հարայ-հրօց** (*աղաղակ, կանչ*), **յօրդան-դօշակ** (*տեղաշոր*), **կ'ուլ-կ'եզան** (*զայլ-զազան*), **նամուս-ղը՛յրաթ** (*պատվախնդրություն*), **պակաս-պըռատ** (*կարիքավոր, աղքատ*), **հընգեդ-հըրեվան** (*մտերիմներ, բարեկամներ*), **չօր-չափար** (*շատ նիհար*) և այլն:

Բաղիյունական բարդություններով բազմաբնույթ բառեր են միահյուսվում իրար, դրանք ցույց են տալիս տարբեր իրողությունների, երևույթների առնչությունն ու կապակցելիությունը: Բարբառում բաղիյունական բարդության ձևավորման կենսունակ միջոց է տարբեր աղբյուրներից ծագած բաղադրիչներով կազմությունը: Առաջանում են հետևյալ կաղապարները.

ա. Բնիկ եզր + փոխառյալ եզր, ինչպես՝ լեն ու բոլ – ընդարձակ (գրբ. լայն+թյուրք. bol-լայն, արձակ), **քարավ-բոլավ** (գրբ. քար-կարծր ապար+թյուրք. kol-թուփ, մացառ)

բ. փոխառյալ եզր + բնիկ եզր, ինչպես՝ բոլ-հերիք՝ – բավական (թյուրք. bol-լայն, արձակ+գրբ. հերիք), **ալավ-կըրակ –** հուր, բոց (պրսկ., թյուրք. alav-բոց+գրբ. կրակ):

գ. Փոխառյալ եզր + փոխառյալ եզր, ինչպես՝ զուռնա-դավալ (պրսկ. zurna, թյուրք. zurne-արևելյան փողային գործիք+թյուրք. kaval-սրինգ, թմբուկ), **քոռ ու փուլչ** (պրսկ. kir-տեսողությունից զուրկ + պրսկ բււ. -մեջը դատարկ), **բոյ-բուսաթ** (թյուրք. boy-հասակի բարձրություն, երկարություն + թյուրք busat-մարմնի կառուցվածքը), **բախչա ու բաղ –** պարտեզ, այգի (պրսկ. bagce-պարտեզ, բաղ + պրսկ bag, թյուրք. ba - խաղողի այգի), **յօրղան-դօշակ** (թյուրք. yorgan-մեջը բուրդ, բամբակ լցված ծածկոց վերմակ + պրսկ. došak - ներքնակ) և այլն:

Առաջին և երկրորդ տարբերակների դեպքում ակնհայտ է, որ այդ բարդությունները բարբառի ստեղծած կառույցներ են, երրորդի դեպքում հնարավոր է դրանց՝ որպես պատրաստի կառույցների փոխառությունը:

Բաղիյունական բարդությունները ևս կարող են հիմք դառնալ նոր բաղադրությունների կազմության համար (**բեղ-մօրուքավոր, քոռ ու փուլչ անէլ, ախ ու վիշ անէլ,**):

Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում մեծ է հարադիր բայերի դերն ու կշիռը: Ռ. Իշխանյանը նշում է. «Հարադրական բայերը հայ ժողովրդական խոսքի ամենաբնորոշ բաղադրիչներն են»:(7)

Բարբառային հարադիր բայերի կազմության մեջ հատկապես ակտիվ են հետևյալ բայերը.

Անէլ – (կիլիպիծո անէլ (արագ և անհասկանալի խոսել), **պոռօշ անէլ** (շրթունքները ծամածռելով լացակումել), **տնագ անէլ** (ծաղրել), **հանաթ անէլ** (կատակել), **թիմիշա անէլ** (դիտել), **դաչչանք անէլ** (աղաչել), **չնննչ անէլ** (աղանդեր ուտել), **նաղլ անէլ** (պատմել), **քրնէնք անէլ** (խորհել), **վիւրիւրդ անէլ** (զննել, տնտղել) ևն), **կ'ալ – (նննն կ'ալ** (հաջողվել, ստացվել), **հօփ կ'ալ** (փակվել, սեղմվել), **տոնս կ'ալ** դուրս գալ, (հեռանալ), **սագ կ'ալ** (սագել, պատշաճել), **պար կ'ալ** (պարել), **հախան կ'ալ** (պատժել), **մէխկը կ'ալ** (խղճալ) ևն), **ընգնէլ – վէր ընգնէլ** (ցած ընկնել), **յր'ր ընգնէլ** (մեկի հետ կատակներ անել), **չիլ ընգնէլ** (սխալվել, շփոթվել), **փօթ ընգնէլ** (ծալք գոյանալ), **պարաց ընգնէլ** (պառկել), **դիլխօր ընգնէլ** (տխրել, տրամադրությունն ընկնել), **կօլ'ավն ընգնէլ** (մեկի գիրկն ընկնել), **փօխս ընգնէլ** (մի բան սխալմամբ մյուսի տեղ ընդունվել), **թայդի ընգնէլ** (շտապել) ևն), **տալ – քացի տալ** (ոտքով հարվածել), **կըռ տալ** (ոտքը ուրիշի ոտքերի արանքը դնելով՝ կորացնելով սայթաքեցնել), **մաննը տալ** (մատր կոկորդը խրելով՝ փսխում առաջացնել), **կօխ տալ** (կոխկրտել), **հծջաթ տալ** (հակառակվել), **լօթ տալ** (ցատկել), **բաղա տալ** (զոհաբերել), **թէյնը տալ** (թիկնել, կիսապառկել) ևն), **կէնալ** (**կօխ կէնալ** (ըմբշամարտել, պայքարել), **տապրո կէնալ** (թաքնվել, լռել), **յէր կէնալ** (1.բարձրանալ 2.արթնանալ), **վը'ննը կէնալ** (կանգնել), **հավան կէնալ** (հավանել), **անց կէնալ** (անցնել) ևն), **կըտրէլ–** դուռնա կըտրէլ (հիմարա-

նալ), *խազնա կրտրէլ* (հարստություն դիզել), *ծարը կրտրէլ* (միջոցները սպառվել) ևն), *բաշիլ — քառանջ բաշիլ* (հառաչել), *վըր բաշիլ* (1.հանել, 2 մորթազերծ անել), *ժերք բաշիլ* (հրաժարվել, ետ կանգնել), *խօսկ բաշիլ* (զաղտնիք դուրս կորզել) ևն), *քիճիլ (յօլա քիճիլ)* (մի կերպ ապրել), *փուստ քիճիլ* (վրիպել), *բա- դա քիճիլ* (զոհաբերվել) ևն), *ինիլ — ռադ ինիլ* (հեռանալ), *չօքավէր ինիլ* (հովա- նի լինել), *օյամիշ ինիլ*, (սթափվել, զգաստանալ), *յըխըթօղազ ինիլ* (վիճել, լեզ- վակռիվ տալ), *լաց ինիլ* (լացել) ևն), *օնէլ (յօր օնէլ* (1.բարձրացնել, ձեռքն առ- նել), *վըէր օնէլ* (1.իջեցնել, 2.ծածկ սարքել, 3 քերթել), *վըզավ օնէլ* (1.հանձն առ- նել, 2.խոստովանել, 3. խոստանալ) ևն), *աժէլ (չօռ աժէլ* (պտտեցնել, ման աժել), *պար աժէլ* (1. պարել տալ, 2. չարչարել):

Դրանց անվանական բաղադրիչը կարող է լինել.

գոյական՝ (*պար* (պար) կ'ալ-քնել, *զօռ* (ուժ) տալ - ուժ գործադրել, *նշունց* (հիշոցք) տալ-անիծել, *դաչանք* (աղաչանք) անել-աղաչել) **ածական**՝ (*չօրը* տալ (ծառի չոր ճյուղերը հատել), *շիլ* (ծուր, շեղ) քըցիլ-շփոթել, *հարամ* (պիղծ, ապա- կանված) անել-պղծել), **կախյալ բայարմատ**՝ (*յօրթ* (երթալ) ընգնել (ձիու դան- դաղ և ցատկոտելով վազք), *փաթ* ընգնել (փաթաթվել), *թօղ* անել (արծակել)), **մակբայ**՝ *աշկար* (ակներև) անել (բացահայտել), *պըլուքհան* անել (քերթել, քեր- ծել)), **ձայնարկություն**՝ *հարայ* (օգնության կանչ) տալ (օգնություն կանչել), **հիշյալ** (խրտնեցնելու բացականչություն) անել (խրտնեցնել):

Այն, որ բարբառում բառակազմական կաղապարները կենսունակ են, փաս- տում են բնիկ և փոխառյալ եզրերով բաղադրված կառույցները.

Բնիկ եզրերով կենսունակ կառույցներ են հետևյալ բայերը. **լափու**(8) (հ.ե. laph - ալիք, հորձանք) **տալ** – հորձանք տալ, **հօփ** (9) (հ.ե. sb – սեղմել) **տալ** – 1.սեղմել, 2.նեղել, **տուզ** (10) (հ.ե. teu - բարեկամաբար ուշադրություն դարձնել) **տալ** – ակնապիշ նայել, **լօք** (11) (հ.ե. lok – ցատկ) **տալ** – ցատկել, **պօրտը** (հ.ե. bordo - գրք. պորտ) **ընգնել** – ծանր աշխատանք կատարելուց պորտը տեղից խախտվել, **ժըպտուն** (12) (հ.ե.ger(h)– ծնոտ, բերան) **հանել** – թույլ ձայն հանել

Անվանական բաղադրիչը կարող է լինել փոխառություն արևելյան լեզուներից, ինչպես՝ **յան** (թյուրք. jan – կողք) **տալ** – շրջանցել, **յօլա** (թյուրք. yol - ճանա- պարհ) **գնալ** – 1.գոյատևել, 2.գոյատևել, **օյին** (թյուրք. oyun – խաղ, խաբեբայու- թյուն) **խաղալ** – մեկի գլխին փորձանք բերել, **քօքը** (թյուրք. kФk - արմատ) **կտ- րել** - արմատախիլ անել, **բօյ** (թյուրք. boy – հասակի բարձրություն) **քաշիլ** – 1.հասակը բարձրանալ, 2.աճել, **ճօթ** (թյուրք. jot, – 1.մաս, 2.գործվածք) **անել** - բաժանել, կիսել, **դուրբան** (արաբ., թյուրք. kurban-զոհ) **անել** - զոհաբերել, **շախ** (թյուրք. šax - ճյուղ) **անել** - փռել, տարածել, դօճաղ (թյուրք. konuk – հյուր) անել – հյուրասիրել, **լայըղ** (արաբ. պրսկ. layeg– վայել, արժանի) **անել** – արժանի հա- մարել, **մազա** (պրսկ. maze – խմիչքի հետ գործածվող ուտելիք) **անել** – խմիչքի հետ ինչ-որ բան ուտել, **թիք'ան** (պրսկ.tike- կտոր. մաս) **անել** – քիչ ուտել, **դալաթ** (արաբ., պրսկ. – galat - սխալ) **անել** - անխոհեմ քայլ անել, **մարաղ** (պրսկ. marag - դարան, թաքստոց) **կենալ** – թաքնվել, դարան մտնել և այլն:

Քիչ չեն նաև այնպիսի անվանաբայական հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը փոխառություն է ռուսերենից, ինչպես՝ **ռիսկ** (ռուս. риск–համարձա- կություն) **անել** – հանդգնել, **տէլեգրամ** (ռուս. телеграмма – հեռագրային հաղոր- դում) **տալ** – հեռագրով որևէ բան հաղորդել, **սյուրպրիզ** (ռուս. сюрприз - անակն- կալ) **անել** - անակնկալ մատուցել, **զուբրիտ** (ռուս. зыбрум - անգիր անել) **անել** – սերտել, **նօս** (ռուս. нос - քիթ) **մնալ** – պարտվել, խեղճանալ, **մատերիալ** (ռուս. материал– շինանյութ) **տալ** – զրպարտել, **զակազ** (ռուս. заказ – որևէ բան ար- տադրելու հանձնարարություն) **տալ** – պատվիրել, **մաղարիչ** (ռուս. магарыч – լավ գործի, ուրախ լուրի դիմաց տրվող նվեր) **անել** – լուրի դիմաց նվեր տալ և այլն:

Անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչները կարող են դրսևորվել նաև բարդություններով, ընդ որում՝ և՛ համադրական, և՛ հարադրական: Այս տիպի կառույցների կազմության մեջ հատկապես ակտիվ են կրկնավոր հարադիր բարդությունները, ինչպես՝ **ծնկի-ծնկի անէլ** (գաղտնի նայել), **դուզ-դուզ անէլ** (կռանալ), **տըպըկ-տապակ կ'ալ** (տանջվել, տառապել), **դըրըն-դարան ինիլ** (հալածվել, քշվել), **ճաք-ճաք ինիլ** (1.ճաքճքել, 2.գոռոզամտել, 3.իր արդարացիությունը համոզելու համար ջանք թափել), **ճըկը-ձօկի անէլ** (խտրականություն դնել), **կգօ-մգօ անէլ** (ձգձգել), **փահ-փահ անէլ** (հաճույքի բացականչություններով գոհունակություն արտահայտել), **թէվ-թէվ անէլ** (շատ ուրախանալ), **լըխկիը-թըխկէ անէլ** (խախտուտ լինելուց շարժվել), **տաշի-տուշի անէլ** (ուրախություն արտահայտել), **խըխըլ-խախալ անէլ** (կնոջ՝ պչրելով քայլելը) և այլն:

Եթե հարադիր բայերի բայական բաղադրիչն է իր նշանակությունը մուծում հարադրավոր բայի ընդհանուր նշանակության մեջ, այսինքն՝ դրանց ընդհանուր նշանակությունը իր մեջ առնում է հարադիր կամ բայական բաղադրիչի բովանդակությունը, ապա դրանք յուրահատուկ իմաստային կամ անթարգմանելի դարձվածքի նշանակություն չեն արտահայտում և հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր չեն:

Հարադրավոր բայերի մի այլ խումբ առանձնահատուկ է նրանով, որ դրանց ընդհանուր նշանակությունը չի բխում բաղադրիչների նշանակությունների գումարից և այլաբերական կամ փոխաբերական բնույթ է կրում: Դրանք յուրահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում, հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր են:

Ա. Մարգարյանը դարձվածային հարադիր բայերը սահմանում է հետևյալ կերպ. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադրիչն ու բայական բաղադրիչը միասին իմաստային առանձնահատուկ նշանակություն են արտահայտում և հանդես գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»:(13)

Հարադիր բայերի զգալի մասը դարձվածային արժեք ունի: Սրանք արտահայտում են մեր ժողովրդի պատկերավոր մտածողությունը: Ժողովրդական մտածողության ծնունդ են **դու-դու կանչիլ** (միայնակ, անտեր մնալ), **փուստ քինիլ** (նպատակին չժառայել), **չօքավէր ինիլ** (հովանավորել, պաշտպանել), **պոռոջ անէլ** (լացակումել, դժգոհության նշաններ ցույց տալ), **տիտիկ անէլ** (մնալ, հանգիստ նստել), **թէրթէն տալ** (հանդուգն խոսել, շաղակրատել), **ծիւկ անէլ** (գաղտագողի նայել) դարձվածային հարադրավոր բայերը:

Ուսումնասիրելով Դարաբաղի բարբառի բառակազմական համակարգը՝ սովորողները կհամոզվեն, որ բարբառն ունի հարուստ բառակազմական համակարգ և որ գրական հայերենի բառակազմության օրինաչափությունները գործում են նաև բարբառում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարգարյան Լ., Դարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական և բուհական կրթահամակարգերում, Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն, Երևան, «Լինուշ» հրատ., 2011, էջ 526:

2. Մարգարյան Լ., Դարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական և բուհական կրթահամակարգերում, Խաղաղ Կովկասը՝

տարածաշրջանի զարգացման գործին, Երևան, «Լինուշ» հրատ., 2011, էջ 527:

3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 260:

4. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 31:

5. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 31:

6. Մարգարյան Ա., Հայերենի բաղիյունական բարդությունները, Երևան, 1986, էջ 16:

7. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 108:

8. Տե՛ս Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 239:

9. Նույն տեղում, էջ 448:

10. Նույն տեղում, էջ 739:

11. Նույն տեղում, էջ 257:

12. Նույն տեղում, էջ 312:

13. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 225:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ (ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ղարաբաղի բարբառը Արցախի՝ վաղնջական շրջաններից հայաբնակ տարածք լինելու նստին վկայող անհերքելի իրողություն է, և Ղարաբաղի բարբառի ուսուցումը այսօր ունի ռազմավարական նշանակություն:

Արցախի Հանրապետության բուհերի Բանասիրական ֆակուլտետի կրթական ծրագրերում ներառված է «Ղարաբաղի բարբառ» առարկան՝ որպես կամընտրական դասընթաց: Սույն հոդվածը կարող է ծառայել որպես դասախոսություն այդ դասընթացի և, առհասարակ, բարբառագիտական դասընթացների համար:

Գրական հայերենի բառակազմական կաղապարները կենսունակ են նաև Ղարաբաղի բարբառում, ուստի՝ բարբառի բառակազմության ուսուցումը նպատակահարմար է կատարել գրական հայերենի նույն համակարգի հետ զուգադրելու միջոցով:

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА В ВУЗЕ (СОПОСТАВИТЕЛЬНЫЕ СЛОЖНОСТИ)

РЕНА МОВСЕСЯН

Ключевые слова: образовательная программа, факультативный курс, лекция, диалект Карабаха, система словообразования, этническая самоуверенность, стратегическое значение, сопоставительные сложности, метод сравнения.

Карабахский диалект является неоспоримым свидетельством того, что Арцах с незапамятных времен является территорией, заселенной армянами, и на сегодняшний день обучение карабахскому диалекту имеет стратегическое значение.

Предмет "Карабахский диалект" включен в образовательную программу филологического факультета вузов Республики Арцах в качестве факультативного курса. Эта статья может послужить в качестве лекции по данному предмету и в целом по курсу диалектологии.

Словообразовательные модели литературного армянского языка продуктивны также в карабахском диалекте, следовательно, обучение словообразованию в диалекте целесообразно проводить с помощью сопоставления с той же системой литературного армянского языка.

SUMMARY

TEACHING OF THE WORD-FORMATION SYSTEM OF THE KARABAKH DIALECT IN THE UNIVERSITY (COMPARATIVE COMPLICATIONS)

RENA MOVSESYAN

Key words: *educational program, out of class activities, lecture, Karabakh dialect, word formation system, ethnic self-confidence, strategic significance, comparative complexities, method of comparison.*

The Karabakh dialect is indisputable evidence that Artsakh has been a territory inhabited by Armenians since ancient times and today the teaching of the Karabakh dialect is of strategic importance.

The subject "Karabakh dialect" is included in the educational program of the Philological faculty of the higher educational institutions of the Artsakh Republic as an elective course. This article can serve as a lecture for this subject and, in general, for the course of dialectology.

The word-forming models of the literary Armenian language are also viable in the Karabakh dialect, therefore, it is expedient to teach the word-formation in the dialect by means of comparison with the same system of literary Armenian.

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՏԱՓԱՆ ՄԱՐԳԱՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ*

Բանալի բառեր՝ ոճավորում, պատկերավորման միջոցներ, արտահայտչական միջոցներ, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, շրջասույթ, օքսիմորոն, կրկնություն, շրջադասություն:

«Համաստեղ մեծ նորություն մըն է մեր գրական կյանքին մեջ: Ան մերօրյա մատենագրության մեջ կբանա գլուխ մը, որ իրն է, ան ստեղծած է եղանակ մը, հայ գյուղացին,- և անոր մեջքն մարդկային ճակատագիրը,- տեսնելու և թարգմանելու, զոր իրեն պես ներուժ ու ազդու կերպով մեր մեջ ոչ մեկն ունի այս պահուս», - նկատել է Արշակ Չոպանյանը և շարունակել. «...Նորությունը զոր կբերե իր անձնական տեսությունն է, և իր ոճը, մեծապես ինքնատիպ, ջղուտ, հակիրճ, գունագեղ, կյանքով լեցուն, իրականության առույգ բանաստեղծությամբ թրթռուն» [1:760]:

Եվ իսկապես, Համաստեղը ստեղծել է իր ինքնատիպ ոճը՝ անթերի գեղեցկությամբ, նուրբ հումորով, յուրատեսակ պատկերներով:

«Տափան Մարգարը» պատմվածքում Համաստեղը պատկերավորման իր արվեստը ցուցադրել է մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների, շրջասույթի, օքսիմորոնի միջոցով, իսկ արտահայտչականությունն ապահովել գերազանցապես շրջադասությունների և կրկնության օգնությամբ:

«Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլ նրա գեղարվեստական, պատկերավոր գեղագիտական բնութագրությունը», - գրում է Լ. Եզեկյանը [2:334]:

Իսկ Ա. Մարությանը շեշտը դնում է մակդիրի հուզական կողմի վրա և նշում. «Այն բառը կամ բառակապակցությունը, որ արտահայտչորեն ու պատկերավոր ձևով, հիմնականում փոխաբերական նշանակությամբ բնորոշում, բնութագրում է առարկան, երևույթը հեղինակային վերաբերմունքով՝ արտահայտելով գրողի հուզական վերաբերմունքն ու գնահատականը, կոչվում է մակդիր» [3:142]:

Ռուս լեզվաբան Ի. Գոլուբը առանձնացնում է պատկերավորող և հուզական մակդիրներ: Առաջինները գերիշխում են գեղարվեստական նկարագրություններում, երկրորդներն ավելի քիչ են հանդիպում և փոխանցում են հեղինակի զգացմունքները, տրամադրությունը [4]:

Մակդիրների առաջին և հիմնական հատկանիշն այն է, որ նրանք ունեն փոխաբերական իմաստ և առաջին հերթին մակդիրը հենց դրանով է տարբերվում քերականական որոշից: Բառի փոխաբերական իմաստը մակդիր կերտող միակ և հիմնական հատկանիշն է, ինչպես առարկաների, երևույթների, այնպես և գործողության հատկանիշները գեղագիտորեն բնութագրելիս [2:335]:

*Հոդվածն ընդունվել է 25.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

Համաստեղի ստեղծած մակդիրների հիմքում ընկած է անձնավորումը, մարդկային հատկանիշներով առարկաները բնորոշելը:

Այսպես՝ ճաղատ սեխերուն մեջ կ'աշխատեր պարտիզայանը ճաղատ...[5,287]: Գիժ երեսով կռաբանջարներուն մեջ՝ դեռ նոր իջած արագիլ մը իր թևերը կը ծալլեր...[5,287]:...Էն վերջը՝ բահի ծայրին հետ հատած էին նաև արևուն հիվանդ շողերը վերջին [5,288]:...Սեկ կտորը վագան ջուրի առվի մեջ կը ձգես...[5,289]: Քմայթուտ հովերը, փոքրիկ, չարածճի մանուկներու նման, անոր հետ կը կատակեին...[5,290]: Աշխարհի կապտորակ ստվերին վրա կը թափառեր մութ ամպի կտոր մը շվարուն [5,291]:

Ինչպես նկատելի է, մակդրային արժեքով գործածվել են ածականները: Քիչ չեն նաև բառակապակցություններով արտահայտված մակդիրները:

Օրինակ՝ Հարդով ու ցեխով լեցված խրտվիլակներն այլանդակ, գինովի գանազան ձևերով...մեկին հասակը ինքն իր վրա փլած...[5,285]: Խրտվիլակները թզուկ, փայտերուն կրթնած խրտվիլակներն հաշմանդամ, սմբած կամ ուռեցած փորերով, ծալված ոտքերով, կախադանեն դեռ նոր վար առնված ոճրագործի մը լիսկած մարմնով [5,286]: Տափան Մարգար ուներ արևեն այրված դիմագիծ մը [5,288]:...Տափան Մարգար, ժամուն բակը, մեկ քանի ծունկ աղոթք ընելե հետո...դաշտ իջավ [5,291]:

Մակդիրի հիմքում ընկած է թաքնված համեմատություն: Դա լավ երևում է կապային կապակցություններով ձևավորված մակդիրներում, որոնց թիվը փոքր չէ Համաստեղի նշված պատմվածքում:

Այսպես՝ Կովերը տուն կարտորային փեթակի պես լեցուն ծիծերով...[5,287]: Սրտի չափ լայն իր կռակը մեզի դարձուցած, բահը ուսին գյուղ կ'իջներ [5,287]: Ուրիշ անգամ մը տեսա շալվարեն չանչուլի պես կախված դաշտի սեզերու հետ եկեղեցի կը մտներ [5,288]: Ուներ տափանի չափ լայն, սերմնացանի թևեր [5,288]: ...Ձույգ մեծոյի գոմեշներ՝ ճակատներուն վրա զույգ սպիտակ նախշեր, փյունիկ քոչունի նկարին նման...[5,290]: Թթերու ճամփուն վրա, գոմեշները զույգ, քարայրներու մութ բերաններուն նման ահավոր, ինկած էին անկենդան [5,292]: ...Սեզմե քիչ հեռու թումբին վրայեն կը քալեր հաղթ հասակով, ուսերը լայն ու ծուռ, հարդով լեցված. ցորյաններու ալիքներու պես վետ-վետ, միևնույն շալվարը, թաղիքե միևնույն գլխարկը, ապան...[5,287]:

Համեմատությունն այլաբերության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, ոճական այնպիսի հնարանք, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ, պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմի արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը:

Համեմատության մեջ սովորաբար ընդգծվում է նաև համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը, և երկու հասկացությունների միջև ստեղծվում փոխադարձ կապ: Համեմատությունները, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ [2,340]:

«Համեմատությունը,-նշում է Պ. Պողոսյանը,-տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու,

հավասարեցնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում ենք առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով» [6,10]:

Համեմատությունների ստեղծման գործում Համաստեղին օգնության է հասնում բնությունը:

Այսպես՝ Ան գիտեր, թե ականջներուն ո՞ր տեղը պետք է շփել, որ ցուլը գառնուկի պես հանդարտեր [5,288]: Տափան Մարգար, վերջալույսին հետ ու վերջալույսին պես, գյուղին մեջ ընկղմեցավ [5,288]: Քիթը, այտերը, երկար ու փոքրիկ անկյուններով՝ կարծես պղնձե շինված ուլային [5,288]: Քմայքոտ հովերը, փոքրիկ, չարածճի մանուկներու նման, անոր հետ կկատակեին ու սուլելով, քրքջալով ցորյաններու մեջ կը պահվեին [5,290]: Ամպերը, մուրճով գարնված պղինձի պես հնչեցին [5,291]: Անոնց ճիշտ ետև կաղնիի մը պես շրջված էր Տափան Մարգարը [5,292]:

«Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը անսպասելիության, նորույթի, հնարամտության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով», -նշում է Ա. Եֆիմովը [7,491]:

Եվ Համաստեղը բացառություն չէ: Հետաքրքիր են այն դեպքերը, երբ Համաստեղը համեմատություններն արտահայտում է երկրորդական նախադասություններով, ինչպես՝ Մորմես կը հեռանայի ու կը մոտենայի այնպես, ինչպես զեփյուռն անտառեն [5,286]: ...Իր էրիկեն կ'ակնածեր այնպես, ինչպես նոր հարս մը իր կեսրարեն [5,288]: Անոր մեջ դաշտի բովանդակ անհանգստությունը կար այնպես, ինչպես գիշերվա լռության մեջ հորդ առու մը պիտի փլեր. խաղաղ ցորյաններու մեջեն հովը պիտի անցներ և կամ հերկված արտին մեջ լծվորուկ մը պիտի շարժեր [5,290]:

Ոճական այս դարձույթի հետ կապված է փոխաբերությունը, որը համարում են նաև թաքնված համեմատություն, որում արտահայտվում է առարկաների ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր, անցողիկ, պատահական նմանությունը [8]:

Լ. Եզեկյանը փոխաբերությունը բնորոշում է որպես «այլաբերության տարատեսակ, խոսքի պատկերավորման, ոճավորման այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը, և դրա շնորհիվ գրողը կամ խոսողը (նրանցից մեկի անունը փոխարինում է մյուսի անվամբ կամ նրանց բնորոշ որևէ հատկանիշով» [2,345]:

Համաստեղի փոխաբերությունները անկրկնելի են ու ինքնատիպ, մեծ մասամբ դարձյալ սերտորեն կապված բնությանը, գյուղին, նրա մարդկանց:

Այսպես՝ Ամեն գարունի, երբ...փոքրիկ գառնուկները դուրս կ'ելլեին իրենց փոքրիկ տոտիկներով հողին պորտը դրոշմելու, պարտիզպանը կը շալկեր իր խրտվիլակն ու պարտեզ կ'իջներ [5,286]: Անդին, երկու արտ հեռու կապույտ պաստառին վրա գծագված ամպի կտոր մը անուրթին տակ, կ'երևեր Տափան Մարգարի նկարը հսկա [5,287]: Վերջալույսը՝ ամպերուն մեջ գծած հրդեհի գեղեցիկ նկար մը կ'ավերեր [5,287]: Վերջալույսը տժգունեցավ աշունի գունով... [5,287]: Արտույտները, հոն, վեր կը թրվռային, վայր կ'իջնեին, թե իրենցմե ո՞րը առաջին անգամ արևուն առաջին ճառագայթը պիտի ողջունեն [5,291]: Արևն իր առեցները առաջին անգամ Տափան Մարգարի թաղիք գլխարկին նետեց [5,291]: ...Արշալույսը հետզհետե կը ճերմկնար՝ արծաթե գույնով, հեռո՛ւ, բլուրին վրա ծնելով Տափան Մարգարի ու գոմեշներու հաղթ ստվերները [5,291]: Երկնքի վրա ամպի

կտորները շատցան ու իրարու մոտ հսկա փիղերու երամակ մը կազմեցին [5,291]: Ամպերը կողորդային, կայծակը, շեղբի պես սուր, երկնքի կուրծը կպատ-
ռեր...[5,291]: Թամարը հոն էր, ամբողջ հասակը լացով փլած [5,292]:

Փոքրիկ պատմվածքում Համաստեղը ստեղծել է հեղինակային շրջասություն՝ վերջապետյալ տժգունեցավ աշունի գույնով...[5,287]:

«Աշունի գույն» շրջասությով Համաստեղը փոխարինում է կարմիր-դեղին-նարնջագույնը՝ պատկերն ավելի տպավորիչ ու գունավոր դարձնելով:

Եվս մի հետաքրքիր երևույթի ենք հանդիպում այս պատմվածքի շրջանակներում: Խոսքը օքսիմորոնի մասին է: Ինչպես վկայում է Ս. Էլոյանը. «Օքսիմորոնը կարևորագույն ոճաբանական միջոց է և մեծ կիրառություն ունի գրական լեզվի գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում: Տրամագծորեն հակադիր և անհամատեղելի հատկանիշներն իրենց անսպասելիությամբ և արտառոցությամբ առավել սուր ու շեշտակի են դարձնում ասելիքը, և ընդգրկող երևույթը ստանում է պատկերավորության մեծ ուժ և արտահայտչականություն» [9,173]:

Այսպես՝ Ղաշտը...գոմեշներն իրենց փնջածակերը կը լայնցնեին, թեթև փոթո-
րիկի պես անցնող հովերն ամբողջությամբ կը շնչեին...[5,290]:

Նախ՝ թեթև փոթորիկ, ապա՝ հովեր, հակադրությունը ստեղծում է արտառոց, բայց աշխույժ պատկեր:

Ինչպես արդեն նշել ենք, արտահայտչականության Համաստեղը հասել է հիմնականում կրկնության և շրջադասության միջոցով: Կրկնության մեկ դեպք է առկա «Տափան Մարգարը» պատմվածքում՝ Ան կը սիրեր իր գոմեշները, անոնց հետ կ'ապրեր, անոնց հետ կը խոսեր սրտանց. զույգ մեծղի գոմեշներ՝ ճակատներուն վրա զույգ սպիտակ նախշեր, փյունիկ թռչունի նկարին նման. զույգ գոմեշներ՝ պարարտ դնդերներով, Տափան Մարգարի կուրծքին չափ լայն ճակատներով, ամբողջ լեռ մը իրենց ետև քաշելու չափ հուժկու վիզերով [5,290]:

«Անոնց հետ» և «զույգ գոմեշներ» կրկնություններն ընդգծում են գյուղացու համար գոմեշների կարևորությունը, իսկ «չափ» կապական բառի կրկնությամբ՝ շեշտում նրանց արժեքը:

Առավել մեծ թիվ են կազմում շրջադասությունները: Բերենք միայն մի քանի օրինակ՝ Պուք տեսա՞՞ծ եք խրտվիլակներն արտերուն [5,285]: ...Կապած էր գոտի մը ծալ-ծալ [5,286]: Ճաղատ սեխերու մեջ կ'աշխատեր պարտիզպանը ճաղատ [5,287]: Անդին...ամաի կտոր մը անուրի տակ, կ'երևեր Տափան Մարգարի նկարը հսկա [5,287]: ...Կը փայլփայլային խոփերը փայլուն. կը լսվեին հնչյունները խոփերուն [5,287]: Քիթը, այտերը, երկար ու փոքրիկ անկյուններով՝ կարծես պղինձե շինված ըլլային [5,288]: Ան, հոն, արտերուն մեջ էր միշտ [5,288]: Հորիզոնին մոտ նախիրը ահագարհուր գյուղ կը վազեր [5,292]: Ամպերը հանդարտեցան, տարափը դադարեցավ հանկարծ [5,292]: Թթենու ճամփուն վրա, գոմեշները զույգ, քարայրներու մութ է:

Համաստեղի համար շրջադասությունը միջոց է ծառայում հետադաս անդամը շեշտելու և ուշադրության կենտրոնում տեղադրելու: Հիմնականում շրջում շարահասությամբ են գործածվել որոշիչները, սակավ դեպքերում՝ հատկացուցիչը, ժամանակի և նպատակի պարագաները, ուղիղ խնդիրը:

Այս թեթև անդրադարձը Համաստեղի լեզվաշխարհին թույլ է տալիս պատկերացում կազմելու այն յուրատիպ ոճի ու մտքի ճկունության, պատկերների անսպասելի ու խոսուն, երգեցիկ ու հյութեղ, տեղ-տեղ խորքային հունորով ներծծված խոսքարվեստի մասին, որ դրսևորում է հեղինակն իր ստեղծագործություններում, և որը դեռ կարոտ է բացահայտվելու ու ներկայացվելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1988:
2. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Երևան, 2006:
3. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
4. www.textologia.ru/russkiy/lingvisticheskiy-analiz/izobr-virazit-sredstva/raznovidnosti-i-gruppi-epitetov-kak-sredstva-yazika/2348/?q=463&n=2348
5. Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1994:
6. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990:
7. Ա. Եֆիմով, Գեղարվեստական խոսքի ոճաբանություն, Մոսկվա, 1961:
8. russkiiyazyk.ru//leksika/chto-takoe-metafora-v-literature.html
9. Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1969:

ԱՍՓՈՓՈՒՄ

ՊԱՏԿԵՐԱՍՏԵՂԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՏԱՓԱՆ ՍԱՐԳԱՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

Սփյուռքահայ գրականության ինքնատիպ դեմքերից է Համաստեղը, իսկ նրա լեզվական աշխարհն աչքի է ընկնում իր անսովոր ու գեղեցիկ երանգներով:

Պատկերների ստեղծման գործում Համաստեղը հենվում է մակդիրների, համեմատության, փոխաբերության, շրջասույթի, օքսիմորոնի վրա, իսկ արտահայտչականությունն ապահովում գերազանցապես շրջադասությունների և կրկնության օգնությամբ:

Մակդիրների մեջ հետաքրքիր են կապային կապակցություններով և բառակապակցություններով, համեմատություններում երկրորդական նախադասություններով արտահայտվածները:

Նա ստեղծել է հեղինակային շրջասույթ, կիրառել օքսիմորոնի հետաքրքիր օրինակ:

Շրջադասության միջոցով շեշտել է հետադաս գործածված անդամների կարևորությունը:

РЕЗЮМЕ

СРЕДСТВА СОЗДАНИЯ ОБРАЗОВ В РАССКАЗЕ АМАСТЕГА "ТАПАН МАРКАР"

ЛИАНА САНТРЯН

Ключевые слова: *стилизация, средства изображения, выразительные средства, эпитет, сравнение, метафора, перифраз, оксюморон, повтор, инверсия.*

Одной из уникальных фигур литературы армянской диаспоры является Амастег, а его языковой мир отличается необычными и красивыми оттенками.

Для создания образов Амастег использует эпитеты, сравнения, метафору, перифраз, оксюморон, а экспрессивность выражает главным образом с помощью инверсии и повторов.

Представляют интерес эпитеты, выраженные предложными сочетаниями и словосочетаниями, и сравнения, выраженные второстепенными предложениями.

Он создал авторский перифраз, применил интересный пример оксюморона.

С помощью инверсии Амастег подчеркнул важность использования переставленных членов предложения.

SUMMARY

THE MEANS OF CREATING IMAGES IN THE STORY "TAPAN MARKAR" OF HAMASTEGB

LIANA SANTRYAN

Key words: *stylization, means of representation, expressive means, epithet, comparison, metaphor, periphrasis, oxymoron, repetition, inversion.*

One of the unique figures of the literature of the Armenian diaspora is Hamastegh and his world of language is distinguished by unusual and beautiful shades.

To create images Hamastegh uses epithets, comparisons, metaphor, periphrasis, oxymoron and expressiveness is expressed primarily through inversion and repetition. The epithets expressed by prepositional combinations and word combinations and comparisons expressed by secondary sentences are of great interest.

He created the author's periphrasis, applied an interesting example of an oxymoron. With the help of inversion, he stressed the importance of using re-arranged members of the sentence.

ԼՍՏԻՆԵ ԿՕՎՄԱՏՅԱՆ

СОМАТИЧЕСКИЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ В БРИТАНСКИХ И АРЦАХСКИХ ФОЛЬКЛОРНЫХ СКАЗКАХ*

Ключевые слова: соматические фразеологические единицы, фольклорная сказка, соматический язык, компонент, восприятие мира, народное мышление, части тела, интеллектуальные факторы.

Современные исследователи-лингвисты обращаются к изучению языка как феномена непосредственно связанного с человеком вследствие произошедшего на рубеже XX – XXI веков сдвига в сторону антропоцентрического подхода при анализе языкового материала. Термины «соматизм», «соматический» (от греческого soma (somatos) – тело) имеют различные значения. В широком смысле – это средства обозначения явлений, относящихся к сфере телесности. В более узком смысле – любой значимый признак, положение или движение всего тела человека (Верещагин, 1980). Соматический язык включает жесты, мимику, позы, выражения лиц и разнообразные симптомы душевных движений и состояний (Кевлюк, 2013: 2).

Впервые в лингвистический обиход термин «соматический» был введен Ф. Вакком, который, изучая фразеологизмы, включающие названия частей человеческого тела, назвал их соматическими. По мнению ученого они являются самыми древними пластами фразеологии.

Соматические фразеологические единицы отображают восприятие и постижение индивидом окружающего мира через собственное тело. По мнению В. И. Постоваловой, «обращение к теме человеческого фактора в языке свидетельствует о важнейшем методологическом сдвиге, наметившемся в современной лингвистике, о смене ее базисной парадигмы и переходе от лингвистики «имманентной» с ее установкой рассматривать язык «сам в себе и для себя» к лингвистике антропологической, предполагающей изучать язык в тесной связи с человеком, его сознанием, мышлением, духовно практической деятельностью» (Постовалова, 1988: 8).

Соматизмы входят в ядро основного состава словарного фонда языка. Причиной постоянного внимания к соматическим единицам выступает тот факт, что «процесс осознания себя среди окружающей действительности и определения себя как личности человек начал с ощущений, возникающих непосредственно через органы чувств и части собственного тела» (Казанкова, Ростова, 2017: 5). По словам С. Н. Белявского «человеческое тело оказалось одним из самых доступных для наблюдения и изучения объектом, и слова, обозначающие части тела человека, так же древни, как и само человеческое сознание» (Белявский, 1997: 19).

*Հոդվածն ընդունվել է 20.05.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ օտար լեզուների ամբիոնը:

Другой причиной формирования соматических фразеологических единиц является то, что в центре внимания человека находится он сам, и его постоянное стремление описывать окружающий мир по своему образцу и подобию. Языковой антропоморфизм является общим законом развития средств номинации в языке (Кунин, 2005: 7).

Соматическая лексика, включающая части и внутренние органы человеческого тела, а также его биологические субстанции и покровы, характеризуется высокой частотностью употребления в любых языках мира, что подчёркивает значимость данного лексического пласта в описании картины мира: «Восприятие мира, находящее отражение в языке и задающееся языком, антропоцентрично. В центре Вселенной находится Человек. Именно человеческое тело задает параметры изначального измерения пространства и, соответственно, времени и базовые архетипические оппозиции «далеко — близко», «свой — чужой» и др. Тело в целом и отдельные его части могут рассматриваться как первичная основа концептуализации мира (как внешнего для человека, так и внутреннего). Рефлексия над собственным телом, его границами, строением служит источником как восприятия и описания пространства (вспомним такие меры длины, как пядь, локоть, foot и др.), так и универсальных метафор, давно стёршихся и не воспринимаемых как троп (нос корабля, атаковать в лоб, ушко замка и др.)» (Гудков, Ковшова, 2007: 72).

В рамках нашего исследования обратимся к интерпретации соматических фразеологических единиц, занимающих значительное место в текстах британских и арцахских фольклорных сказок. Согласно данным Оксфордского словаря идиом (The Oxford Dictionary of Idioms) при сравнительном анализе соматических фразеологизмов особое место занимают слова, обозначающие глаза, руку и голову.

Поскольку глаза являются важнейшим органом человеческого тела и через них человек получает более 80% информации об окружающем мире, то неслучайно, что соматические фразеологические единицы с этим компонентом занимают весомое место среди других фразеологических единиц. Как правило подобные соматические фразеологические единицы символизируют внимание, направленное на объект. Рассмотрим ряд примеров из фольклорных сказок. В сказке “Cap O’ Rushes” неоднократно выступают следующие фразеологические единицы с антонимическими значениями **set eyes on - take eyes off**.

*Well, who should be there but her master's son, and what should he do but fall in love with her the minute he **set eyes on** her. He wouldn't dance with any one else (Jacobs, 1890: 53).*

*Well, next morning they said to her, You did miss a sight, Cap o Rushes!
What was that? says she.*

*Why, the beautifullest lady you ever see, dressed right gay and ga. The young master, he never **took his eyes off** her (ibid).*

*The masters son was rarely glad when he saw her. He danced with none but her and never **took his eyes off her**. When she wouldnt tell him her name, nor where she came from, he gave her a ring and told her if he didnt see her again he should die (Jacobs, 1890: 54).*

Выражение **set eyes on** неоднократно встречается также в сказке “Tom Tit Tot”:

Բացի այդ, ցանկանում ենք ընդգծել նաև, որ ինչպես ցյուրիխյան արձանագրություններին նախորդող, այնպես էլ հաջորդող ժամանակահատվածում Թուրքիայի իշխանական վերնախավի ելույթներն ու գործողություններն զգալիորեն հակասում էին բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին: Ուստի, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Թուրքիան հենց սկզբից մտադիր էր չհարգել ձեռք բերված պայմանավորվածություններն ու միջազգային պարտավորությունները: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ Թուրքիան քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ-ի հետ հարաբերություններում վարում էր երկակի քաղաքականություն, որի նպատակը մի կողմից քաղաքակիրթ աշխարհին ցուցադրելն էր, թե իբր Թուրքիան զգալի ջանքեր է գործադրում հայթուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, մյուս կողմից, հավատարիմ մնալ ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում նախապայմանների առաջադրմանը:

ՀՀ-ում ևս ցյուրիխյան արձանագրությունների բովանդակությունը դառնում է խորհրդարանական լուսնների առարկա, որոնք անցկացվում են նախքան արձանագրությունների ստորագրումը՝ 2009 թ. հոկտեմբերի 1-ին Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում: Լուսններին մասնակցում էին ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը, հանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամյանը, հանձնաժողովի անդամներ, փորձագետներ և ուրիշներ:(13)

Հանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամյանն իր ելույթում նշում է, որ «նախաստորագրված արձանագրությունները թուրքական նախապայմանների համար հող են ստեղծում» և որ «ընդհանուր սահմանների ճանաչման մասին արձանագրություններում տեղ գտած ձևակերպումները Թուրքիային և Ադրբեջանին հնարավորություն են տալիս խուսափել Կարսի պայմանագրի իրավական վիճարկման հետևանքներից և հասնել Խորհրդային միության և Թուրքիայի միջև հաստատված սահմանների՝ Անկախ Հայաստանի կողմից ճանաչմանը»: Բացի այդ, Ռուստամյանի կարծիքով արձանագրություններում տեղ գտած պատմական փաստերն ուսումնասիրելու հետ կապված ենթահանձնաժողովի ստեղծման գաղափարը «մեծ նվեր է մատուցում Թուրքիային՝ Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը միջազգային մակարդակից իջեցնելով երկկողմ հարաբերությունների հարթություն»:(14)

Անկախ պատգամավոր Տ. Թորոսյանի կարծիքով, արձանագրություններով «կողմերը որոշում են բացել ընդհանուր սահմանը, այսինքն, հավասարության նշան է դրվում Հայաստանի և Թուրքիայի սահմանի նկատմամբ վերաբերմունքի միջև», որով էլ, փաստորեն, Հայաստանը «շատ մեծ զիջում է անում Թուրքիային՝ նրա վրայից ջնջելով միջազգային իրավունքը ոտնահարողի խարանը»:(15)

Ուշագրավ հարցադրումներ է պարունակում լուսնների ընթացքում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի ելույթը: Այստեղ վերջինս իր տարակուսանքն է հայտնում այն փաստի հետ կապված, որ «փաստաթղթերը պատրաստած անձինք պնդում են, որ դրանցում նախապայմաններ չկան»: Դրան

Մելքոնյանը հակադրում է այն փաստը, որ ըստ արձանագրությունների «կողմերը ճանաչում են միմյանց միջև գոյություն ունեցող սահմանը»: Բերելով նաև այլ փաստարկներ արձանագրություններում նախապայմանների առկայության վերաբերյալ, Ա. Մելքոնյանն ուշադրություն է հրավիրում նաև արձանագրություններում տեղ գտած այն ձևակերպման վրա, ըստ որի՝ «կողմերը ձեռնպահ են մնում բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց» և փաստում, որ այդ միտքը վերցված է 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրից, որը ըստ հեղինակի «Թուրքիայի և Հայաստանի միջև կնքված պայմանագրերից՝ մեզ համար ամենածանրն ու վատթարագույնն էր»:(16)

Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Ա. Մելքոնյանը դեմ է արտահայտվում արձանագրությունների ստորագրմանը:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից բավական ուշագրավ է նաև լուսնների ընթացքում Կանադայում ՀՀ նախկին դեսպան Ա. Պապյանի ելույթը: Այստեղ նա հանդես է գալիս արձանագրությունների բովանդակության հետ կապված կոնկրետ գնահատականներով: Այսպես, ըստ Պապյանի՝ արձանագրությունները նախ «խախտում են ՀՀ տարածքային ամբողջականությունը, ոտնահարում են միջազգային իրավունքի մի շարք հիմնադրույթներ, հակասում են ՀՀ Սահմանդրությանը և գործող օրենսդրությանը»: Բացի այդ՝ դրանք «սակարկության առարկա են դարձնում ՀՀ և հայ ժողովրդի շահերը, իրավունքներն ու ազգային մեծագույն ողբերգությունը, խիստ կասկածելի, միայն ենթադրյալ տնտեսական շահի համար մեզ զրկում են ապագայում մեր զարգացման հնարավոր միջոցներից և վտանգի են ենթարկում ՀՀ բուն իսկ գոյությունը» և, վերջապես, «չեն ապահովում բանակցությունների նպատակ հայտարարված լիարժեք դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանի երաշխավորված բացումն ու բաց մնալը»:(17) Ելնելով նշված գնահատականներից՝ Պապյանը ևս դեմ է արտահայտվում արձանագրությունները ստորագրելուն:

Արդեն 2010 թ. հունվարի 12-ի ՀՀ Սահմանդրական դատարանում քննության է առնվում Ցյուրիխյան արձանագրությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Արդյունքում, ՀՀ Սահմանադրական դատարանը հաստատում է, որ ցյուրիխյան արձանագրությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը միևնույն ժամանակ որոշման նախաբանում հայտարարելով, որ «արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ հակասի Հայաստանի անկախության հռչակագրի 11-րդ հոդվածին, որտեղ նշվում է, որ Հայաստանը աջակցում է Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915 թ. տեղի ունեցած ցեղասպանության միջազգային ճանաչմանը»:(18)

ՍԴ-ի որոշման հետ կապված մենք լիովին կիսում ենք հարգարժան Տ. Թորոսյանի այն կարծիքը, որ այդ «որոշումը հիմնված էր երկակի մոտեցման վրա. մի կողմից հաստատում էր Արձանագրությունների սահմանադրականությունը, մյուս կողմից՝ սահմանափակում դրանց կիրառումը Ցեղասպանության և գործող հայթուրքական սահմանի ճանաչման վերաբերյալ»:(19)

Թուրքական իշխանությունները անդրադառնալով ՀՀ ՍԴ-ի նշված որոշմանը, արտգործնախարարության մակարդակով տարածում են հաղորդագրություն, որում մասնավորապես նշվում էր. «Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը վտանգում է այդ արձանագրությունների շուրջ ընթացող բանակցությունների բուն իմաստը, ինչպես նաև դրանց հիմնարար նպատակը: Այդ մոտեցումը չի կարող ընդունելի լինել թուրքական կողմի համար»: (20)

Բացի այդ Թուրքիայի տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամի տնօրեն Ա. Գորգուլուն անդրադառնալով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմանը, կարծիք է հայտնում, որ «դրանք ձախողում են պատմաբան-

ների ենթահանձնաժողովի ստեղծման հիմքը, որն էլ իբր պետք է ուսումնասիրեր 1915 թ. իրադարձությունները»:(21)

Այսպիսով, Թուրքիան փորձում էր ցյուրիխյան արձանագրությունների վավերացման պատասխանատվությունը ՀՀ իշխանությունների վրա դնելով՝ պահանջել վերջիններից վերանայել ՍԴ որոշումը, մինչդեռ ըստ ՀՀ Սահմանադրության, այդ որոշումները վերջնական են և վերանայման ենթակա չեն:

ՀՀ ՍԴ որոշումից մեկ ամիս անց՝ փետրվարի 12-ին, ցյուրիխյան արձանագրությունները ուղարկվում են Ազգային ժողով՝ վավերացման: ՀՀ Ազգային ժողովում ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հետ կապված կարծիքները երկփեղկվում են: Այսպես, ՀՀ խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերից ՀՀԿ, ԲՀԿ և ՕԵԿ-ը արտահայտվում են արձանագրությունների վավերացման օգտին, ընդ որում միայն այն դեպքում, եթե Թուրքիայի խորհրդարանը առանց նախապայմանի վավերացնի դրանք:

Հակառակ դրան ՀՀ ԱԺ-ում ներկայացված ՀՀԴ խմբակցությունը կոչ է անում «ձախողել արձանագրությունների վավերացումը սահմանադրական բոլոր միջոցներով (22), այն պատճառաբանությամբ, որ 21-րդ դարում «փակ սահմանը անորմալ երևույթ է»:(23)

Օգտվելով այդ հանգամանքից թուրքական կողմը իրեն բնորոշ խորամանկությամբ առաջ է քաշում այն տեսակետը, թե արձանագրությունների վավերացման և երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը սանցնելու նախաձեռնողը ոչ թե Թուրքիան է, այլ Հայաստանը:

Նման պայմաններում 2010 թ. ապրիլի 12-ին Վաշինգտոնում կայացած հանդիպման ընթացքում ՀՀ նախագահն ու Թուրքիայի վարչապետը քննարկում են տարածաշրջանային զարգացումների ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հնարավոր ուղիները:(24) Ինչպես այդ, այնպես էլ արդեն ապրիլի 20-ին կայացած ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի և ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի հանդիպումները մեծ հաշվով չեն կարողանում հաղթահարել Հայաստան-Թուրքիա միջպետական բանակցություններում առկա խոչընդոտները (25) «քանզի Թուրքիան նախկինի նման շարունակում էր ՀՀ-ի հետ հարաբերություններում առաջ քաշել նախապայմաններ՝ դրանով իսկ հակասելով ցյուրիխյան արձանագրություններում առկա առանց նախապայմանների ձևաչափին:

Կարծում ենք հենց դա էր հիմնական պատճառը, որ 2010 թ.ապրիլի 22-ին՝ Հայոց ցեղասպանության 95 ամյակի նախաշեմին, Հայաստանում իշխող քաղաքական կոալիցիան հանդես է գալիս հայտարարությամբ, որում նշվում էր, որ չնայած ՀՀ Նախագահի և ՀՀ Ազգային ժողովի գործադրած հետևողական քայլերին ուղղված Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հրաբերությունների հաստատմանը, Թուրքիան շարունակում էր «նախապայմանների առաջադրման» քաղաքականությունը, որն էլ հենց համաձայն հայտարարության փակուղի մտցրեց հայ-թուրքական արձանագրությունների խելամիտ ժամկետներում վավերացման գործընթացը»: Ուստի ՀՀ-ում իշխող կոալիցիոն մեծամասնությունը, իմաստազրկված համարելով այդ փուլում վավերացման գործընթացի հետագա շահարկումը ՀՀ խորհրդարանում, անհրաժեշտ է համարում առկախել այդ գործընթացը՝ հանելով դրանք քառօրյա նիստերի օրակարգից մինչև թուրքական կողմը պատրաստ լինի առանց նախապայմանների գործընթացը շարունակելու»:(26) Դրանով ցյուրիխյան արձանագրությունների վավերացման գործընթացը ՀՀ Ազգային ժողովում սառեցվում է: (27)

Նույն օրը Ս. Սարգսյանը հանդես է գալիս հեռուստաուղերձով, որտեղ նշվում էր, որ«...Ցյուրիխյան արձանագրությունների վավերացման ողջամիտ ժամկետները մեր կարծիքով արդեն ավարտվել են», և որ «ամեն գնով ապրիլի 24-ն անցկացնելու թուրքական գործելաճը պարզապես անընդունելի է»: Ուստի ըստ ՀՀ

նախագահի՝ Թուրքիայի իշխանությունները պետք է լավ իմանան, որ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող օր է, բայց այն որևէ կերպ չի սահմանափակում դրա միջազգային ճանաչման ժամանակացույցը: Վերջում ՀՀ նախագահը հայտարարում էր, որ «այս պահից սկսված հարաբերությունների կարգավորման փուլը համարում են սպառված»:(28)

Ճշմարտության դեմ մեղանշած չլինելու համար ցանկանում ենք ընդգծել, որ ՀՀ նախագահի այս ուղերձն ընդամենը պատասխան էր դրանից վեց ամիս առաջ Էրդողանի կողմից Թուրքիայի խորհրդարանում ցյուրիխյան արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մայքլ Ամբյուլ՝ հայ-թուրքական գործընթացի շվեյցարացի «կապավորը», «Հատուկ թղթապանակ», 20.01.2014, <https://mediamax.am/am/news/special-file/8778>
2. Մայքլ Ամբյուլ՝ հայ-թուրքական գործընթացի շվեյցարացի «կապավորը», «Հատուկ թղթապանակ», 20.01.2014, <https://mediamax.am/am/news/special-file/8778>
3. Torosyan T., The Return of Turkey. Ankara in the South Caucasus after the Russian-Georgian War, Russia in Global Affairs, Vol. 7, 2009,N3, July-September, p. 127. Նույնը նաև, Shiriyev Z., and Davies C., The Turkey-Armenia-Azerbaijan Triangle: The Unexpected Outcomes of the Zurich Protocols, Perceptions: Journal of International Affairs, Spring 2013, Vol. XVIII, n 1, p 192.
4. Տե՛ս Phillips D., Diplomatic History: The Turkey-Armenia Protocols, New York: Columbia University, Institute for the Study of Human Rights, 2012, p. 55.
5. Նույն տեղում:
6. Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf
7. James N., Ready to Lead: Rethinking America’s Role in a Changed World. Chatham House Paper, 2010, p. 134.
8. Տե՛ս, ՀՀ ԱԳՆ 2008, 2009 հաշվետվությունները՝ <http://mfa.am/hy/annualreport/>
9. Գեղամյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունների 2008-2010թթ. հետա-հայաց ամփոփում, 01.02.2011, http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=5338
10. Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Բուրսա (Թուրքիայի Հանրապետություն), 14.10.2009, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/10/14/news-74/>.
11. Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014), ժամանակակից Եվրասիա, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2014, հատոր III (2), էջ 78-79:
12. Նույն տեղում:
13. Հայ-թուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ խորհրդարանական լսումներ Ազգային ժողովում, 01.10.2009, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3533&year=2009&month=10&day=01
14. Հայ-թուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ խորհրդարանական լսումներ Ազգային ժողովում, 01.10.2009 http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3533&year=2009&month=10&day=01
15. Նույն տեղում:
16. ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ելույթը հայ-թուրքական արձանագրությունների կապակցու-

թյամբ 2009 թ. հոկտեմբերի 1, Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից հատուցում, հոդվածներ և հարցազրույցներ, Երևան, 2015, էջ 274-279:

17. Պապյան Ա., Հայրենասիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2012, մաս 2-րդ, Հայ-թուրքական արձանագրությունների վերլուծություն (եւույթ ՀՀ Ազգային ժողովի լուսնների ժամանակ, 01.10.2009), էջ 199:

18. Տես ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 12.01.2010, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf>

19. Թորոսյան Տ., Սահմանադրական դատարանի ամանորեայ նւերը (Նոր Հառաջ, Փարիզ, 29 հունվարի, 2 փետրվարի, 2010):

20. Ավետիսյան Տ., Թուրքիան նախապայմաններ է տեսնում Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշման մեջ, 19.01.2010, <http://www.azatutyun.am/content/article/1933694.html>

21. Горгулы А., Турция и Южный Кавказ в 2010г./ КАВКАЗ-2010. Ежегодник Института Кавказа-Ереван, Институт Кавказа, 2012, с.148-149.

22. Տես ՀՀ-ն տարած է հաղորդագրություն հայ-թուրքական ստորագրված արձանագրությունների վերաբերյալ, «Անկախ», 12.10.2009:

23. Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան առաջարկված փոփոխությունները, Երևան, 2009թ., <http://notoprotocols.net/>

24. Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, <http://www.president.am/hy/press-release/item/2010/04/12/news-974/> .

25. Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Մոսկվա, 20.04.2010, <http://www.president.am/hy/press-release/item/2010/04/22/news-983/>

26. Տես Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010, <https://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490>

27. Տես Սաֆարյան Դ., Հայ-թուրքական կարգավորման գործընթացի սառեցման հայկական փաստարկների շուրջ, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, հոդվածների ժողովածու, VIII, Երևան, 2012, էջ 313-321:

28. Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, <http://www.president.am/hy/press-release/item/2010/04/22/news-983/>

ԱՄՓՈՓՈՒՄ

ՑՅՈՒՐԻԻՆՅԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2008-2010 ԹԹ.

ՄԵՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Հոդվածում ներկայացվում է Շվեյցարիայի միջնորդությամբ սկիզբ դրված Հայաստան-Թուրքիա բանակցությունների նոր փուլը և որպես դրանց հետևանք՝ 2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների կողմից ստորագրված երկու փաստթղթերը:

Այնուհետև անդրադարձ է կատարվել երկու երկրների խորհրդարաններում ցյուրիխյան արձանագրությունների հետ կապված խորհրդարանական լսումներին և դրանց արդյունքներին: Վերջում, շեշտադրված է այն հանգամանքը, որ թուրքիան, խախտելով ձեռք բերված համաձայնություններն ու միջազգային պարտավորվածությունները, շարունակում էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում հանդես գալ նախապայմաններով անտեսելով ՀՀ ղեկավարության երկու երկրների միջև առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու անկեղծ ցանկությունը:

РЕЗЮМЕ

ЦЮРИХСКИЕ ПРОТОКОЛЫ И АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В 2008-2010ГГ.

МЕРИ НАДЖАРЯН

Ключевые слова и выражения: *Геноцид армян, Цюрих, протокол, армяно-турецкие отношения, парламент, предусловия, 10 октября 2009 года.*

В статье представлен новый этап армяно-турецких переговоров при посредничестве Швейцарии и как результат этих переговоров – подписанные министрами иностранных дел Армении и Турции двух документов. Далее автор делает краткий обзор, посвященный слушаниям в парламентах двух стран по цюрихским протоколам. В конце подчеркнуто то обстоятельство, что Турция, нарушая достигнутые соглашения и международные обязательства, продолжала выдвигать предусловия в вопросе установления дипломатических отношений с Арменией, игнорируя искреннее желание руководства РА в установлении дипломатических отношений между двумя странами без предварительных условий.

SUMMARY

ZURICH PROTOCOLS AND ARMENIAN-TURKISH RELATIONS IN 2008-2010

MERI NAJARYAN

Key words and expressions: *Armenian Genocide, Zurich, protocols, Armenian-Turkish relations, parliament, preconditions, October 10, 2009.*

The article presents a new phase of Armenia-Turkey negotiations, initiated by Swiss mediation and as a result two documents were signed by Armenian and Turkish Foreign Ministers on the 10th of October, 2009, in Zurich, Switzerland. Then parliamentary sessions on the protocols signed by the parliaments of the two countries and their results are touched upon in the article. At the end, the fact is emphasized that Turkey, violating the reached agreements and the international commitments, continued to put forward some preconditions in the issue of establishing diplomatic relations with Armenia, ignoring the sincere desire of the RA to establish diplomatic relations without preconditions between the two countries.

ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ
«ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐ Է»
ԳՐՔՈՒՄ***

Բանալի բառեր: Ցեղասպանություն, պատմամշակութային հուշարձաններ, Արցախյան շարժում, վիճելի տարածքներ, խաչքար, ՄԱԿ, արտագաղթ, քաղաքակրթության բնօրրան, վերակառուցում, պատմական շրջաններ:

Նախիջևանը հանդիսանում է Հայոց հայրենիքի հերթական կորուստներից մեկը, որը տեղի է ունեցել 20-րդ դարի սկզբին, անարդար ճանապարհով: Խորհրդային տարիներին՝ իհարկե, ոչ Նախիջևանը, ոչ էլ մյուս հայկական կորուստները չէին կարող համապատասխան ուշադրության արժանանալ և լուսաբանվել: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո՝ ժողովրդավարության պայմաններում, Հայ պատմաբանների համար բացվեցին գործունեության լայն հնարավորություններ, ընդլայնվեց նրանց ուսումնասիրությունների շրջանակը: Հայ հեղինակները ձեռնամուխ եղան հայ ժողովրդի պատմության՝ մինչև այդ ցվագ կամ քիչ հետազոտված թեմաների համալիր ուսումնասիրությանը: Նման կարևոր թեմա է հայկական Նախիջևանի պատմության համակողմանի լուսաբանումը:

Հայկական բարձրավանդակի ու Հայաստանի բնական մաս կազմող Նախիջևանը կտրված է Հայաստանի Հանրապետությունից և ներկված քաղաքական այն գույնով, ինչ գույնով ներկված է Ադրբեջանի Հանրապետությունը: Այն որ Նախիջևանը աշխարհագրորեն, պատմական, տնտեսական ու մնացյալ առումներով Հայաստանի մաս է կազմել՝ հայտնի ճշմարտություն է:(1) Պատմական Հայաստանի Նախիջևան գավառը աշխարհագրական իր դիրքով Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում ունեցել է բացառիկ կարևոր նշանակություն՝ կապելով Արարատյան դաշտը Իրանի ու արևելքի այլ երկրների հետ և վճռորոշ դեր է խաղացել Հայաստանի պատմության ողջ ընթացքում, ինչպես անկախ պետականության պայմաններում, այնպես էլ օտար տիրապետության ներքո լինելու պարագայում:(2)

Նախիջևանը և նրա գավառները հայ մշակույթի, ճարտարապետության, կիրառական արվեստի, ինքնատիպ ազգային ավանդույթներով հարուստ երկրամասերից է: Այս լեռնաշխարհի հայկական ցեղերի նախահայրերը բնակվել են թերևս անհիշելի ժամանակներից ի վեր, սերնդե-սերունդ կերտել, արարել, դարերին են ավանդել իրենց գոյության ու լինելիության վկայարանները՝ բազմաթիվ հնագույն պատմաճարտարապետական հուշարձաններ, քաղաքներ, գյուղեր, ամրոցներ:(3) Եվ չնայած այդ ամենին՝ Ադրբեջանի պատմաբանները փորձում են ապացուցել, որ Նախիջևանը միշտ էլ եղել է Ադրբեջանի կազմում: Ինչը ևս մեկ

**Հոդվածն ընդունվել է 10.06.2018թ.:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի պատմության ամբիոնը:*

անգամ պարտավորեցնում է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել և գիտական առանձնակի ուշադրության արժանացնել Նախիջևանի խնդրին: Նախիջևանը խորհրդայնացվել է 1920թ. հուլիսի 28-ին: 1921թ. մարտի 16-ին ռուս-թուրքական պայմանագրով այստեղ կազմավորվել է ինքնավար մարզ՝ խորհրդային Ադրբեջանի կազմում, 1923թ. փետրվարին ինքնավար երկրամաս, 1924թ. փետրվարի 9-ին ինքնավար հանրապետություն տարածքը՝ 5.3 հազ. քառ. կմ, բնակչությունը՝ 256 հազ.մարդ:

Հայտնի հրապարակախոս Ջ. Բալայանը մեծ ցավով է խոսում Նախիջևանում կատարվածի մասին՝ ցույց տալով մշակութային և մարդկային ցեղասպանության իրողություններ, որոնք իրենց հանգուցալուծումը գտան Արցախյան շարժման տարիներին: Սակայն, ինչպես հեղինակն է նշում, այդ բռնությունների արմատներն ավելի խորն են: Ահա պատմական Հայաստանի այս դրախտավայր երկրից է, որ 20-րդ դարի սկզբից հաջորդական աղետներով դուրս մղվեց նրա բնիկ ժողովուրդը: Առաջին մեծ աղետը տեղի ունեցավ 1905թ. անդրկովկասյան թուրքերի և հայերի լայնածավալ ընդհարումների ժամանակ: Ցարական իշխանությունների խրախուսանքով Նախիջևանում թուրքերը ավերեցին 40.000 գյուղ, սպանեցին 500-ից ավելի հայերի: Վարանդյանը իր աշխատությունում գրում է. «Ավերվածի հողըն Բաքվից անցավ Երևանի նահանգ և ամենից առաջ Նախիջևան, ուր խաները տեր ու տիրական էին, ազգաբնակչության մեծամասնությունը՝ թուրքեր: Նշենք, որ շարունակվելով 1905թ. մայիսի 12-15-ը իշխանության աչքի առաջ կկատարւէր խուժանածին գինարբուք, ջարդ, հրդեհ, կողոպուտ, եկեղեցիների սրբապղծություն... Հայոց բոլոր ապրանքները յափշտակեցան, 182 հայկական խանութներէն ազատեցան չորս հատ միայն: Հայկական հակահարվածը ևս չուշացավ, թշնամին ևս ունեցավ գրեթէ նույնքան մարդկային կորուստ»: (4)

Նույն օրերի նմանատիպ իրավիճակ էր նաև բախտակից Ղարաբաղում, երկու հիմնավորց խմբապետեր իրենց ձեռքն առան երկու ամենախայաշատ և վտանգված շրջանների գինվորական հիրամանատարությունը՝ Նիկոլ Դումանը՝ Երևանի նահանգում, Վարդանը՝ Ղարաբաղում:

1905-1906թթ. իրադարձությունները փոխադարձ անվստահության ու թշնամության այնպիսի սերմեր ցանեցին, որ թեև հետագա տարիներին՝ մինչև 1917թ., լոյալ հարաբերությունները հիմնականում պահպանվեցին, բայց նաև չվերականգնվեց վստահության մթնոլորտը երկու ազգերի միջև և ամենափոքր կայծն անգամ կարող էր մեծ հրդեհ առաջացնել: Արդեն 1918թ. սկսած Թուրքիան իր իսկ ձեռքով ստեղծված Ադրբեջանի միջոցով սկսեց հայկական էթնիկ տարածքները թուրքացնելու ակտիվ քաղաքականությունը: Ինչը հատկապես դրսևորվեց Նախիջևանի, Ջանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ: 1917-18թթ. Թուրքիայի ակտիվ միջամտությունը ազգամիջյան կռիվներ սկսվեցին Շարուր-Նախիջևանում: Սկսվեց հայ բնակչության կոտորած և արտագաղթ:

20-րդ դարի 1-ին տասնամյակում Նախիջևանի գավառը բացառապես հայերով և ադրբեջանցիներով բնակեցված մի շրջան էր՝ վերջինիս թվական որոշ գերազանցությամբ: Ըստ «կովկասյան կալենդարի» 1916թ. գավառի բնակչության ազգային կազմը ուներ հետևյալ պատկերը (5)

	հայ	ադրբեջանցի	Քուրդ	հույն, ռուս և այլն
Նախիջևանի Գավառ	51365	69116	517	610
ք.Նախիջևան	2665	6026		243
Ընդամենը	54030	75142	517	853

Նշենք, որ Բաթունի պայմանագրից հետո իր զորաջոկատով Նախիջևան է անցնում Անդրանիկը և միանում Յերո Խարազյանին: Սակայն ի վերջո, օգոստոսին ստիպված է հեռանալ Ջանգեզուր: 1918թ. հուլիս-օգոստոսին Նախիջևանի գավառները ամբողջովին հայաթափվեցին, բացի լեռնային մի քանի գյուղերից: «Ջանգ» օրաթերթի՝ 1919 օգոստոսի 21-ի համարում ասված է թե Նախիջևանից գաղթականների թիվը՝ արևմտահայ գաղթածների հետ մեկտեղ կազմել է 80.000 (6), բայց ավելի հավաստի՝ 1919թ. խնամատարության նախարարության կազմած տեղեկագրի համաձայն, գավառում հայերի թիվը կազմում էր շուրջ 38.000 մարդ: Դրանցից մոտ չորս հազարը ապաստան գտան Գողթանի չգաղթած գյուղերում, իսկ մնացածը անցել էր Ջանգեզուր, Երևան, Թիֆլիս և այլն: Ըստ մամուլի՝ Նախիջևանի գավառում սպանվածների թիվը հասնում է շուրջ երկու հազարի:

Նախիջևանի հայության նկատմամբ ազերիներն ի սկզբանե թշնամական վերաբերմունք դրսևորեցին՝ վարկաբեկելով ու արտաքսելով սեփական հայրենիքից: Արդյունքում ստացվեց այն, որ երկրամասը հայաթափվեց: Նախիջևանում ադրբեջանական իշխանությունների հակահայ գործողությունների մի շարք հարցերի լուսաբանմանն է ուղղված Ջորի Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» գիրքը: Այս աշխատությունը ամփոփում է արժեքավոր նյութ՝ 20-րդ դարի վերջին պատմական Հայաստանի մաս հանդիսացող Նախիջևանում Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը: Գրքում Նախիջևանում տեղի ունեցող իրադարձությունները շաղկապված են նույն ժամանակաշրջանում Արցախում և Ադրբեջանի կողմից օկուպացված մի շարք այլ շրջաններում կատարված հակահայկական գործողությունների հետ: Գրքի մեծագույն արժեքը կայանում է նրանում, որ այն լուսաբանում է 20-րդ դարի վերջին Ադրբեջանի իշխանությունների բարբարոսական գործողությունները նախիջևանահայության, Նախիջևանի հայկական մշակույթի նկատմամբ՝ արդարացիորեն որակելով դրանք որպես ցեղասպանություն: Հայկական երկու ինքնավարությունները՝ Նախիջևանը և ԼՂԻՄ-ը, ստեղծվել էին 1920-ական թթ., դրանք բռնակցումը Ադրբեջանին կատարվել էր կամայականորեն՝ հաշվի չառնելով այդ տարածքների էթնիկական պատկանելության հանգամանքը: Թուրքիայի և Ադրբեջանի համար կարևոր էր այդ երկու տարածքների զավթումը, քանի որ դա կազմում էր Պանթուրքիզմի ծրագրերից մեկի՝ «օղուզականության» մի մասը, ըստ որի Թուրքիան և Ադրբեջանը պետք է միանային: Ադրբեջանը ստեղծման օրից տարածքային պահանջներ ներկայացրեց ՀՀ-ին՝ Ջանգեզուր, Նախիջևան, Ղարաբաղ: 80-ականների վերջերին տեղի ունեցող իրադարձություններն ունեն պատմական արմատներ, որոնք ձգվում են մինչև 1918-1923 թթ.: Սակայն նշենք, որ երկու հայկական տարածքների ճակատագրերը տարբեր կերպ ընթացան, եթե Նախիջևանում ազերիներին հաջողվեց հասնել իրենց նպատակներին, ապա Ղարաբաղում այլ կերպ եղավ, այստեղ հայ էթնոսը շարունակեց բացարձակ գերակշիռ մնալ և ծավալելով ազատագրական շարժում՝ հասնել փաստացի անկախության: Այստեղ կարևոր է համեմատականներ անցկացնել. ինչու՞ այդ նույնը չկատարվեց Նախիջևանում, ինչու՞ Ադրբեջանին հաջողվեց հայաթափել այս հայկական երկրամասը, ոչնչացնել հայկական մշակույթը, մի՞թե դրա կանխարգելման համար ժամանակին որևէ քայլեր չէին կատարվել: Գրքի հեղինակը, ժամանակին լինելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, իհարկե անտարբեր չէր ոչ Նախիջևանի, ոչ էլ Արցախի ու մնացած շրջանների հայության ճակատագրի նկատմամբ, ինչպես ինքն է նշում, համագունարներում և նստաշրջաններում իր բոլոր ելույթները վերաբերում էին Նա-

խիջևանի և Ղարաբաղի ճակատագրին: 1988 թ. փետրվարի 25-ին Ջորի Բալայանը և Սիլվա Կապուտիկյանը Կրեմլում հանդիպեցին ԽՍՀՄ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի հետ և խոսեցին Նախիջևանի և Ղարաբաղի մասին: Ջորի Բալայանը նրան տեղեկացրեց, որ, լինելով ԽՍՀՄ քաղաքացի, որպեսզի մուտք գործեր Նախիջևան, տաս օր առաջ պետք է դիմեր Նախիջևանի միլիցիային, որպեսզի մուտքի վիզա ստանար: Եվ, ըստ նրա, Գորբաչովը նույնիսկ զարմացավ պատկերացում չունենալով այդպիսի երևույթի մասին: Նշենք, որ այդ քաղաքականությունը սկսվեց կիրառվել Նախիջևանի բռնակցումից հետո, այն ճանաչվեց սահմանային գոտի և այստեղ գործում էին մուտքի և ելքի խիստ կանոններ: Դա, իհարկե, այն քաղաքականության մի մասն էր, որը նախատեսում էր հայազրկել երկրամասը, թույլ չտալ այստեղ հայրենադարձների մուտքը, արգելել շփումը Հայաստանի և այլ շրջանների հայրենակիցների հետ: Այս մասին հեղինակը գրում է. «Խորհրդային ողջ ժամանակահատվածում Նախիջևանի բնիկ հայ բնակչության համար մշտապես ու կանխատեսված ստեղծվում էին կյանքի անտանելի պայմաններ: Հայ բնակչությունը զրկված էր շփումներից իր Հայաստանյան ազգականների հետ»:(7) Այս հանգամանքը իհարկե նպաստում էր հայ բնակչության արտագաղթին դեպի ԽՍՀՄ տարբեր հատվածներ: Հեղինակը ճիշտ է նկատում, որ ՄԱԿ-ի համապատասխան հոդվածների համաձայն ցեղասպանություն է համարվում նաև որևէ խմբի համար այնպիսի անտանելի պայմանների ստեղծումը, որոնց առկայությունը ստիպում է բնիկ բնակչությանը տեղահանվել: Պատմականորեն Նախիջևան գավառը Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում ունեցել է բացառիկ նշանակություն: Այստեղ ստեղծվել է հայկական հզոր մշակութային շերտ, ինչպես գրքում է նշված, այն հանդիսանում է շատ ու շատ հայ մտավորականների, արվեստագետների, զինվորականների ծննդավայր՝ Լազարյանների, Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Մանուկ Աբեղյան, Դավիթ Մայիլյան, Սերգո Համբարձումյան, Լեզենդար զորահրամանատարներ Դրո, Նժդեհ, ՀՀԳ հիմնադիրներ Միքայելյան, Ջորյան, Ջավարյան: Իսկ ահա Ադրբեջանը, որ այստեղ չունեի մշակութային որևէ հետք, լավ էր գիտակցում, որ Նախիջևանը և մյուս տարածքները հայերի մասին կարող են խոսել նույնիսկ առանց հայերի: Եվ ամբողջ յոթ տասնամյակների ընթացքում ձեռնամուխ եղան Նախիջևանը ամեն հայկականից մաքրելու գործընթացին, իսկ 80-ականների վերջերին՝ հատկապես Արցախյան շարժման տարիներին, բռնի գործողությունները այստեղ ավելի ակտիվացան:

Հարկ է նշել, որ 1917թ. Նախիջևանում բնակվում էր 53,900 հայ՝ բնակչության 40 տոկոսը, 1926թ. 11,300 հայ՝ 10.8 տ, 1970թ. 5828 հայ, 1988թ. 1500 հայ: Խորհրդային ղեկավարությունը քիչ թե շատ տեղյակ էր կատարվող երևույթներին, սակայն նրանց համար կարևորը «ժողովուրդների բարեկամությունն» էր, իսկ Ադրբեջանը այդ հարցում նրանց համար հուսալի էր: Հեղինակի նշմամբ 1988թ. փետրվարի 29-ին քաղբյուրոյի նիստի ժամանակ Գորբաչովը հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղը հայկական ինքնավարություն է, նույնիսկ Հայաստան տանող ճանապարհները բարձիթողի վիճակում են, մշակութային կապը խզված է: Դա արվել է գիտակցաբար, թուրքական հեռուստատեսության հաղորդումները ընդունվում են Լեռնային Ղարաբաղում, իսկ հայկականը՝ ոչ»:(8) Այս հայտարարությունը նա անում է այն ժամանակ, երբ նույն օրերին Սումգայիթում տեղի էին ունեցել հայկական ջարդեր: Սակայն գործնական քայլեր չձեռնարկվեցին ջարդերը դատապարտելու համար, և այդ անպատժելիությունը բերեց նոր հան-

ցանքների Բաքվում և ադրբեջանական այլ քաղաքներում: Ձ. Բալայանը գրում է. «Նախիջևանում ադրբեջանցիները շարունակում էին սպանել հայերին և միայն այն պատճառով, որ նրանք հայեր էին, ավիրել հայկական մշակույթի գլուխգործոցները, արդեն ոչ թե գիշերով, այլ՝ օրը ցերեկով: Դա իսկական ցեղասպանություն է»: (9) Դեղինակը պատմում է, որ 1990թ. սեպտեմբերին ինքը և Վիկտոր Զամբարձունյանը Մոսկվայում ընդունեցին նախիջևանահայերի մի խմբի, նրանք պատմեցին, թե ինչպես այնտեղ ջարդում էին ամեն հայկականը, սպանում հայերին: Իսկ Վիկտոր Զամբարձունյանը անդադար կրկնում էր. «Նախիջևանում ցեղասպանություն է, իսկ մենք հանցավոր լռություն ենք պահպանում»: Ձ. Բալայանը անշուշտ ծանոթ էր ազերիների կատարած վայրագություններին Նախիջևանում: 1976թ. Նա մեկնել է Նախիջևան, եղել է Ազուլիս քաղաքում և ականատես է եղել կատարված հանցանքներին: Այդ մասին նա գրի է առել իր «Օջախ» գրքում. «Քսան տաճարներ և եկեղեցիներ, տասնյոթ աղբյուր: Այդ ամենը եղել է հեքիաթային քաղաքում: Այսօր ոչինչ չի մնացել: Ամեն ինչ ավերված է: Վանդալները անցան այստեղով»: (10) Դեղինակը պատմում է նաև, որ այդ օրերին Զայաստանի գրողների միությունը Նախիջևան գործուղեց գրող Բակուր Կարապետյանին, որը շուտով ներկայացրեց այնտեղ կատարվող վանդալիզմը ու նշեց որ «Քաղաքակիրթ աշխարհը լռում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ միասին»:

Արդեն նշվեց Ձ. Բալայանի ունեցած մտահոգության մասին Նախիջևանի խնդրով, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում ելույթի ժամանակ նա նշեց. «ԽՍՀՄ-ում 38 ինքնավար կազմավորումներից միայն երկուսը՝ Նախիջևանը և Ղարաբաղը, կրում են ոչ թե ազգային հատկանիշներով անվանումներ, ինչպես դա պահանջում է սահմանադրությունը, այլ աշխարհագրական»: (11) Իհարկե, դա արդարացված փաստարկ էր, և շատերը դրական արձագանքեցին: Բայց, ինչպես հեղինակն է նշում՝ ապարդյուն, մեջբերելով Գորբաչովի պատասխանը ԽՍՀՄ գերագույն խորհուրդի նախագահ Եվգենի Պրիմակովին, երբ վերջինս խոսել է հարցի տրամաբանական լինելու վերաբերյալ, նա պատասխանել է. «Տրամաբանությունը տրամաբանություն, բայց գլխացավանքից չես ազատվի»: Սա փաստում է, որ խորհրդային ղեկավարությունը որևէ կերպ չէր ցանկանում խոչնդոտել ադրբեջանական գործողություններին:

Ժողովուրդները իրենց պատմության ընթացքում ստեղծում են մշակութային մեծ արժեքներ, որոնք ունեն նաև համաշխարհային, համամարդկային նշանակություն, այդ պատճառով այսօր աշխարհում գործում են միջազգային կառույցներ, որոնք զբաղվում են այդ արժեքների պահպանությամբ և պաշտպանությամբ: Իսկ մի՞թե այդ կառույցները արժանվույնս չէին արձագանքում հայկական մշակույթի ոչնչացմանը, չէին կարող կանխարգելել այդ ամենը: Երևի թե այնպես, ինչպես այսօր միջազգային խաղաղարար կառույցները զբաղվում են Արցախյան հակամարտության կարգավորման հարցով, երբ Ադրբեջանը շարունակում է անպատիժ մնալ իր ագրեսիվ գործողությունների համար, երբ Թուրքիայում և Ադրբեջանում շարունակում են ոչնչացնել կամ յուրացնել հայկական մշակույթը: Գրքում առաջ քաշված հարցերից մեկն է ՄԱԿ-ի արմատական վերափոխումների հարցը: Այդ մասին Ձ. Բալայանը գրում է հետևյալը. «Այսօր աշխարհում շատ փոփոխություններ են եղել ՄԱԿ-ի ստեղծման պահից, և անհրաժեշտ է փոխել ՄԱԿ-ի էությունն ու բովանդակությունը՝ ելնելով տրամաբանորեն ճշգրտված գործունեությունից, որից կախված են աշխարհի բոլոր ժողովուրդների, բոլոր երկրների, մեր ողջ մոլորակի ճակատագիրը: Իսկ մոլորակն այսօր հիշեցնում է Աստվա-

ծաշնչյան Բարեւոյնը»:(12) Ասվածը տեղին է, քանի որ աշխարհի երկրների բացարձակ մեծամասնությունը ՄԱԿ-ի անդամ է, սակայն շարունակվում են տեղի ունենալ անօրեն և հակամարդկային գործողություններ, նույնիսկ հենց ՄԱԿ-ի անդամ երկրներում: Այն ժամանակ, իհարկե, դիմել էին անհրաժեշտ քայլերի, ուղարկվել են պաշտոնական դիմումներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆրեդերիկո Մայորին՝ պահանջելով ստեղծել միջազգային հանձնաժողովներ՝ փրկելու Նախիջևանի հնագույն պատմա-մշակութային հուշարձանները: «Եվ, իհարկե, խորապես գիտակցում էինք, որ պետք է պահանջենք ու գործենք ողջ ժողովրդով, ողջ Հայաստանով, ողջ աշխարհով, քանզի խոսքն իրոք ցեղասպանության մասին էր (Ձ. Բալայան)»:(13) Սակայն էական արդյունք այդպես էլ չեղավ: Այդ ամենին զուգահեռ զայրացնող է այն հանգամանքը, որ Ադրբեջանը անհիմն հայտարարություններ էր անում և շարունակում է անել՝ նորանոր տարածքային հավակնություններ ցուցաբերելով Հայաստանի նկատմամբ: Ուշադրության արժանի է հեղինակի մեջբերումը, ըստ որի Ալիևը 1998թ. Սահմանադրական հանձնաժողովի նիստի ժամանակ ռուսերենով ելույթ ունեցավ՝ նշելով. «Նախիջևանի շրջակա հողերը նույնպես ադրբեջանական էին, բայց չնայած դրան, այնտեղ ապրում էին հայեր: Ճիշտ այնպես, ինչպես նրանք զավթել էին այլ հողեր, օրինակ՝ որոշ հողեր ներկայիս Թուրքիայի տարածքում, կամ ադրբեջանական հողեր՝ Չանգեզուրի երկրամասը»:(14) Նշվում է նաև, որ Ալիևը խոսեց ադրբեջանական այնպիսի կորուստների մասին, ինչպիսիք են Կապանի և Մեղրիի շրջանները, ինչպես նաև Էրիվանը: Այսպիսի երևույթները, իհարկե բնորոշ են և՛ Ադրբեջանի, և՛ Թուրքիայի իշխանություններին: Այսօր էլ նրանք այդպիսի հայտարարություններ անում են՝ փորձելով իրենց համար վստահելի պատմություն ստեղծել:

Անդրադառնալով Նախիջևանում, Ղարաբաղում տեղի ունեցած ադրբեջանական հալածանքներին՝ հեղինակը ընդգծում է, որ այդ ամենը ակտիվացան հատկապես Գորբաչովի կողմից հայտարարված վերակառուցման քաղաքականությունից հետո: Ըստ նրա՝ Ադրբեջանը նշված «ազատությունները» ընկալեց յուրովի և ձեռնամուխ եղավ իր պատմության հնացմանը: Այդ մասին գրքում մեջբերված է մի հետաքրքիր փաստ, ըստ որի «Սովետսկի Նախիջևան»(15) թերթում 1986թ. ազերական մի բանասիրական գիտությունների թեկնածու գրում է, թե իբր, թյուրքալեզու ժողովուրդների նախահայրը՝ Նուխը, աստղագետ էր, որը, իմանալով ջրհեղեղի մասին, նավ կառուցեց, և հետո նկարագրում է, թե ինչպես Նուխը և իր ուղևորները հանգարվանեցին «Ալգարակ» լեռան գագաթին: Այդ բանասերը հորինում է փաստեր, թե իբր Ադրբեջանում հաճախ են հանդիպում տեղանուններ՝ կապված «Նուխ» անվան հետ՝ օրինակ բերելով Նուխրամ, Նուխբատան, Նուխաջիր տեղանունները: Այդ առթիվ Ձ. Բալայանը թերթի խմբագրությանը ուղարկեց նամակ՝ ընդգծելով, որ ինքը կարող է ընդունել նրանց հեղինակի գաղափարը, եթե նրանք էլ ընդունեն, որ Հոմերոսը հայ է: Եվ ինքն էլ իր հերթին է օրինակներ բերում՝ նշելով, որ միայն Հայաստանում և Ղարաբաղում են հանդիպում «Հարությունագոմեր», «Պողոսագոմեր», «Նժդեհագոմեր», «Ալեքսանագոմեր» և այդպիսի այլ տեղանուններ: Այս ընդգծումը վերջինս իհարկե արել է հեզմանքով, ինչպես ինքն է նշում, ցույց տալու համար, որ ցանկության դեպքում կարելի է գտնել այլ անվիճելի փաստեր սեփական պատմությունը հնացնելու, ուրիշի պատմությունը յուրացնելու համար: Այսօր էլ նրանք շարադրում են պատմություն և աղավաղում մեր պատմությունը: Մեր պատմաբանների, քաղաքագետների համար առաջին խնդիրներից է՝ վեր բարձրացնել մեր ժողովրդի պատ-

մության իրավական կողմերը:

Նախիջևանի միացումը Ադրբեջանին չափազանց կարևոր նշանակություն ունեցավ թե՛ թուրքիայի, թե՛ Ադրբեջանի համար: Ասվածի վկայությունն է Ձ. Բալայանի հետևյալ նկատառումը, ըստ որի՝ դեռևս Ալին ավագը խոստովանել է. «Նախիջևանի ինքնավարությունը չափազանց լուրջ գործոն է, որը կարող է օգնել կորցրած մյուս հողերի վերադարձման հարցի լուծմանը: Նախիջևանի ինքնավարությունը պատմական իրադարձություն է թուրքիայի հետ Նախիջևանի և Ադրբեջանի սահմանի ստեղծման տեսանկյունից»:(16) Գրքում անդրադարձ է կատարվում նաև այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել 70 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղում: Յեղիմակը այստեղ նշում է, որ ազերիների հակահայկական գործողությունները նշված տարածքներում հիմնականում սկսվեցին հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Ադրբեջանը, անօրեն կերպով յուրացնելով հայկական հողերը, ամեն ինչ անում էր դրանք հայազրկելու և թուրքացնելու համար: «Այդ ժամանակներից սկսած ադրբեջանցիները փոփոխել են ոչ միայն Ղարաբաղի քարտեզը, այլև ազատագրված տարածքներում՝ Լաչինում, Քարվաճառում, Կուբաթլույում, Ջանգելանում, Ֆիզուլիյում, Աղդամում ընդամենը հետքեր էին մնացել պատմական Չայաստանից: Նույն պատկերն էր նաև Գարդմանքի, Գյուլիստանի երկրամասի ահռելի տարածքներում (Ձ. Բալայան)»:(17) Այս ամենը ևս մեկ անգամ փաստում է Արցախյան շարժման համահայկական նշանակությունը, որ այս տարածքների մի մասը որ անվանում ենք «Արցախի Չանրապետություն» փրկեց հետագա մշակութային և մարդկային ոչնչացումից: Նորից իր ինքնուրույն գոյությունը շարունակեց «Չայոց Արևելից Երկիրը» և նորից դարձավ հայոց պետականության հիմնասյուներից մեկը, ինչպես որ եղել է դարեր շարունակ:

Նախիջևանի հետ կատարվածը ցավալի փաստ է, արդյունքում այսօր Նախիջևանը ամբողջովին հայաթափված է, ոչնչացված են հայկական մշակութային արժեքները, այս դեպքում ավելի դժվար է բարձրացնել Նախիջևանի՝ այնտեղ կատարված ցեղասպանության հարցը և պայքարել դրա համար: Սակայն դա չի նշանակում, թե ոչինչ անել հնարավոր չէ, և չպետք է պայքարել հանուն այդ նպատակի: Այստեղ տեղին են Ձ. Բալայանի խոսքերը. «Նախիջևանի համար սարսափելի չէր դառնալ Ստալին-աթաթուրքյան նենգության զոհ: Դա շտկելի գործ է: Շատ ավելի սարսափելի է, երբ հայրենիքը դառնում է սեփական զավակների մոռացության զոհ»:(18)

Թե՛ Նախիջևանում, թե՛ հայկական այլ տարածքներում հայ ժողովրդի ստեղծած մշակութային ժառանգությունն ունի համամարդկային նշանակություն: Նախիջևանի ադրբեջանական իշխանությունների հակամշակութային քաղաքականության գազաթնակետն էր Երնջակ գավառի հայկական Ջուղա քաղաքատեղիի պատմական գերեզմանատան եղեռնը: 2002թ. դեկտեմբերի 10-14-ին վերջնականապես ոչնչացվեց Ջուղայի գերեզմանատունը: Այդ ոճիրը իրագործեցին Ադրբեջանի բանակի 200 զինվորներ: Նախիջևանի ադրբեջանական իշխանությունները սեփական բանակի մասնակցությամբ ոչնչացրել են հազարավոր հայկական հուշարձաններ՝ խախտելով 1948թ. ՄԱԿ-ի ընդունած պատմամշակութային ժառանգության հռչակագիրը: Երկու-երեք պատմա-ճարտարապետական հուշարձաններից բացի, Նախիջևանի ողջ նյութական մշակույթը Չայ ժողովրդի ստեղծածն է: Ազերիները, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր կիսավայրենի ցեղերի խառնուրդ, չկարողացան Նախիջևանում քիչ թե շատ նշանակալի մշակու-

թային շերտ ստեղծել: 1989-1990թթ. իշխանությունների գործադրած հալածանքների հետևանքով Ադրբեջանը հայաթափվեց, իսկ 300 հազ. հայեր վերածվեցին փախստականների:

Ձ. Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» հրատարակությունը վեր է հանում 20-րդ դարի վերջին Նախիջևանի և Ղարաբաղի նկատմամբ կատարված հակամարդկային գործողությունները: Այստեղ ներկայացված են բազում նոր փաստեր և վերլուծություններ, որոնք վստահելի աղբյուր են հանդիսանում կատարվածի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանասյան Ա., Նախիջևանի հիմնադիր-իրավական և քաղաքական տեսանկյուններ, Եր., 2002, էջ 41:
2. Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի, 1921 մարտի 16, ռուս թուրքական պայմանագրում, գիտաժողովի նյութեր, Եր., 2001թ., էջ 292:
3. Գայրեմյաց պաշտպան, 2004, հունիս-հուլիս էջ 5:
4. Վարանդյան Մ., ԴՅԴ պատմություն, Երևան, 1992, էջ 313:
5. Ջոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվներ Երևանի նահանգում, 1918թ. Երևան 2000թ., էջ 77
6. <<Ջանգ>>, 1919թ., 21 օգոստոսի:
7. Բալայան Ձ., Նախիջևանը ցեղասպանության զոհ է, Եր. 2017թ., էջ 10
8. Բալայան Ձ., նույն տեղում, էջ 6
9. Նույն տեղում, էջ 6:
10. Նույն տեղում, էջ 29:
11. Նույն տեղում, էջ 46:
12. Նույն տեղում, էջ 60:
13. Նույն տեղում, էջ 9:
14. Նույն տեղում, էջ 10:
15. Նույն տեղում, էջ 26 :
16. Նույն տեղում, էջ 39
17. Նույն տեղում, էջ 13
18. Նույն տեղում, էջ 11:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՐ Է» ԳՐՔՈՒՄ

ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հոդվածում քննության է առնվում Ձորի Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» գիրքը: Նշվում է, որ հեղինակը գրքում անդրադարձ է կատարում Արցախյան շարժման տարիներին Նախիջևանում հայկական մշակույթի վերացման առավել ակտիվ դրսևորումներին, ինչպես նաև Նախիջևանի հայաթափմանը: Հեղինակը կոչ է անում մեծ ուշադրություն ու դարձնել Նախիջևանի հիմնախնդրին, պահպանել երկրամասի նկատմամբ զենետիկ հիշողությունը, ինչը կնպաստի կայուն խաղաղության ապահովմանը տարածաշրջանում:

РЕЗЮМЕ

ОТРАЖЕНИЕ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ В КНИГЕ ЗОРИЯ БАЛАЯНА
"НАХИЧЕВАН – ЖЕРТВА ГЕНОЦИДА"

АЛИК САРГСЯН

Ключевые слова: геноцид, историко-культурологические памятники, Арцахское движение, конфликтные территории, хачкар, ООН, эмиграция, колыбель цивилизации, перестройка, исторические районы.

В статье анализируется книга Зория Балаяна "Нахичеван – жертва геноцида". Отмечается, что автор затрагивает в книге тему уничтожения армянской культуры в Нахичеване, а также насильственного выселения местных армян в годы Арцахского движения. Автор призывает обращать большое внимание проблеме Нахичевана, сохранить генетическую память в отношении этого края, что послужит обеспечению стабильного мира в регионе.

SUMMARY

THE EXPRESSION OF ARTSAKH MOVEMENT IN
ZORI BALAYAN'S BOOK
"NAKHICHEVAN AS A VICTIM OF GENOCIDE"

ALIK SARGSYAN

Key words: Genocide, historical - cultural monuments, Artsakh Movement, disputed regions, Khachqar (cross stone), UNO, emigration, altar of civilization, reconstruction, historical regions.

The article analyses Zori Balayan's book "Nakhichevan as a Victim of Genocide." It is noted that the author touches upon the abolition of Armenian culture and demolition of Armenians in Nakhichevan during Artsakh Movement. The author invokes us to pay attention to the Nakhichevan problem and to keep genetic memory of the region which will promote sustainable peace in the region.

ՄԱՐԻԱՍ ԱՏԱԼՅԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ*

Բանալի բառեր և արտահայտություններ. Բարոյական կոնֆլիկտ, բարոյական երկընտրանք, սոցիալական կոնֆլիկտ, հնարավորություն, լինելիություն, ունիվերսալիզմ, պարտիկուլյարիզմ:

Բարոյական կոնֆլիկտի թեման արդիական է եղել բարոյագիտության պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններում: Սույն հոդվածում փորձ է արվել բարոյական կոնֆլիկտը ներկայացնել որպես սոցիալական կոնֆլիկտի տարատեսակ, տեսականորեն բացահայտել բարոյական կոնֆլիկտի հնարավորությունը բարոյագիտական ունիվերսալիզմի, իսկ բարոյական կոնֆլիկտի լինելիությունը բարոյագիտական պարտիկուլյարիզմի տեսանկյունից:

Կոնֆլիկտի մասին պատկերացումը՝ որպես հակապայքարի, հակադրության (լատ. Conflictus - բախում) դրսևորվում է խոսքի՝ լեզվի զարգացման վաղ փուլերում՝ արտացոլելով, «մենք» և «նրանք» կատեգորիաների հետ մեկտեղ, անհատների և խմբերի միջև բախումների առօրյա փաստերը: Հարկ է նշել, որ գրականության մեջ համընդունելի է կոնֆլիկտի հետևյալ սահմանումը. «սոցիալական հարաբերությունների, սոցիալական խմբերի, մարդկանց հարաբերությունների համակարգում հակասությունների զարգացման բարձրագույն փուլ է, որը բնութագրվում է սոցիալական հանրույթների և անհատների հակադիր հետաքրքրությունների և միտումների խորությամբ»: (1)

Ժամանակակից սոցիալական փիլիսոփայությունը բարոյականությունը դիտում է որպես հասարակական կարևորագույն համալիրներից մեկը: Այն կարգավորում է մարդկանց վարքն ու գործունեությունն առանց բացառության բոլոր ոլորտներում՝ մասնագիտական գործունեություն իրականացնելիս, կենցաղում, քաղաքականության և գիտության մեջ, անձնական, ընտանեկան և միջազգային հարաբերություններում: Բարոյականության սկզբունքները սոցիալ-համընդհանուր նշանակություն ունեն և վերաբերում են ողջ մարդկությանը՝ կենտրոնացնելով այն ընդհանուրն ու կարևորը, ինչն էլ կազմում է միջանձնային հարաբերությունների մշակույթը: Հետևաբար, այդ սկզբունքների խախտումը կարող է առաջացնել հասարակական բարոյական կոնֆլիկտ:

Կարևոր է նշել, որ հաճախ նեղ իմաստով բարոյական կոնֆլիկտը նույնացնում են բարոյական երկընտրանքի հետ: Բարոյական երկընտրանքի պարագայում մենք գործ ունենք հավասարաթեք բարոյական նորմերի հետ, որոնցից որևէ մեկի իրականացումն անխուսափելիորեն առաջացնում է բարոյական խնդիրներ: Այս դեպքում, ինչպես իրավացիորեն նկատել է բարոյական երկընտրանքների և բարոյական տեսության հիմնադիր Յ. Մեսսոնը՝ «մարդն ունենում է մեղքի զգացում, խղճի խայթ»: (2)

Բարոյական կոնֆլիկտը փոխհարաբերվող կողմերի հակապայքար է, որն ուղեկցվում է հուզական լարվածությամբ, ինչի արդյունքում էլ փոխադարձ վնաս (նյութական, ֆիզիկական, հոգեբանական) են կրում կողմերը: Արդյունքում գե-

*Հոդվածն ընդունվել է 08.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀԱԱՀ հայոց պատմության ու փիլիսոփայության ամբիոնը:

րիշխում է այն կարծիքը, որ կոնֆլիկտը միշտ անցանկալի երևույթ է և անհրաժեշտ է այն շուտափույթ լուծել: Սակայն, ինչպես ցույց է տալիս կյանքը, կոնֆլիկտը հաճախ օգնում է բացահայտել տեսակետների բազմազանությունը, պարզել այլընտրանքները, տալիս է լրացուցիչ տեղեկատվություն:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարծում ենք միանգամայն իրավացի է Ռ. Ղաբենդորֆի տեսակետն այն մասին, որ ոչ թե կոնֆլիկտի առկայությունը, այլ բացակայությունն է աննորմալ և զարմանալի: (3) Գաղտնիք չէ, որ երբեմն հասարակության մեջ հենց նոր հարաբերություններ են հաստատվում մի շարք կոնֆլիկտների միջոցով, որոնք անդրադառնում են սոցիալական կազմակերպության բոլոր հիմնական մակարդակների վրա՝

- քաղաքակրթական. հին արժեքային համակարգի բեկման և նոր արժեքային համակարգի հաստատման հետ կապված կոնֆլիկտներն են:
- կառուցվածքային փոփոխությունների. հին և կրկին ձևավորվող սոցիալական շերտերի և խմբերի միջև կոնֆլիկտներն են:
- հիմնարկային. ձեռնարկությունների մրցունակության, կազմակերպչական հարաբերությունների և ֆինանսական կապերի վերակառուցման հետ կապված կոնֆլիկտներն են:
- առօրյա կյանքի. մարդկանց կողմից օգտագործվող սոցիալական ինքնահաստատման նոր հնարավորությունների հետ և նոր ձևավորվող արժեքների ու նորմերին, շուկայական հարաբերությունների պահանջներին բնակչության մեծամասնության հարմարվողականության բարդ գործընթացների հետ կապված կոնֆլիկտներն են:

Ցավոք, մարդկանց համար միշտ չէ, որ ռեսուրսների հասանելիությունը միատեսակ է, ուստի սոցիալական անհավասարության հետևանքով առաջանում է սոցիալական կոնֆլիկտը: Կարծում ենք սխալված չենք լինի, եթե համաձայնենք Յու. Ջապրուդսկիի այն տեսակետին, որ «Սոցիալական կոնֆլիկտը սոցիալական սուբյեկտների զարգացման օբյեկտիվորեն տարաբնույթ նպատակների, հետաքրքրությունների, միտումների հակապայքարի ակնհայտ կամ թաքնված վիճակ է, սոցիալական ուժերի ուղղակի կամ անուղղակի բախում, որն էլ դեպի նոր սոցիալական միասնությանն ուղղված պատմական շարժման յուրահատուկ ձև է»: (4) Իհարկե, սոցիալական կոնֆլիկտը անցանկալի երևույթ է, որը քայքայում է նորմալ գործող սոցիալական համակարգը, բայց դրա ընթացքում հայտնվում են ուժեր, որոնք համակարգը բերում են հավասարակշռության: Գաղտնիք չէ, որ կոնֆլիկտը հաճախ դիտվում է ոչ որպես նորմայից շեղում, այլ որպես սոցիալական հարաբերությունների նորմա: Սակայն, չպետք է մոռանալ նշել նաև, որ, ըստ Ֆրոմի, «բարոյական նորմերը բացարձակ չեն և հասարակությունը պետք է հաշվի առնի իր անդամների շահերը, հաշվի առնելով դասակարգային տարբերությունները, ապահովի բոլոր անդամների լիարժեք մարդկային զարգացումը: Այս ամենի արդյունքում կնվազեն բարոյական կոնֆլիկտները»: (5) Այստեղ տեղին է հիշատակել Լ. Կոզերի կոնֆլիկտի դրական-գործառնական տեսությունն, ըստ որի «սոցիալական կոնֆլիկտը պայքար է արժեքների համար և որոշակի կարգավիճակի, հավակնություն է իշխանության և ռեսուրսների, պայքար, որտեղ հակառակորդների նպատակներն են վնաս հասցնել հակառակորդին, չեզոքացնել, օտարել: Կոնֆլիկտի միջոցով ուղղվում են թերությունները և հաստատվում է առաջընթաց»: (6)

Հետաքրքիր է նկատել, որ անցումային փուլում գտնվող հասարակությունների համար այս պնդումը դժվար ընդունելի է: Նման հասարակություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հասարակության և անձի հարաբերության, հասարակական հարաբերությունների, արժեքների, նորմերի անհատականացման, դրանց յուրացման ու վերարտադրության հիմնախնդիրները: Արդյունքում տեղի են ունենում հասարակարգի սոցիալ-տնտեսական, գաղափարաքա-

ղաքական, բարոյահոգեբանական հիմունքների համակարգային փոփոխություններ: Այստեղ հստակ սահմանված չեն որոշակի նորմեր, ձևավորման փուլում է արժեքային համակարգը և սոցիալական մի շարք արժեքներ սկսում են հակասել միմյանց: Սակայն ակտիվ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են բավարար պայմաններ, նպաստավոր միջավայր, կայացած արժեհամակարգ, որոնք անհաղթահարելի արգելքներ չեն ստեղծի հասարակության անդամների համար: Նման դեպքերում, ըստ Գ. Սողոմոնյանի, երկար տարիներ մարդկանց վարքը կարգավորող արժեքների ու նորմերի բախումը վերափոխված հասարակության արժեքների ու նորմերի հետ, զարգացման որոշակի աստիճանում վերածվում է կոնֆլիկտի: (7)

Ինչպես արդեն նշվել է, բարոյական կոնֆլիկտի հնարավորությունն ու լինելիությունը դիտարկելու գործընթացում շեշտը դրված է հիմնականում իրար հակադիր երկու մեթոդաբանական մոտեցումների՝ ունիվերսալիզմի և պարտիկուլյարիզմի ուսումնասիրության վրա: Ժամանակակից բարոյագիտության մեջ ընդունված է ունիվերսալիստների շարքը դասել հույն փիլիսոփա Պլատոնին, ստոիցիզմի և էպիկուրիզմի ներկայացուցիչներին, միջնադարի մտածող Օգ. Երանելիին, գերմանական դասական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Ի. Կանտին: Պարտիկուլյարիստների թվին են դասվում հույն դասական փիլիսոփայության հիմնադիր Արիստոտելը, էքզիստենցիալ փիլիսոփայության ներկայացուցիչները, Ա. Մակինտայիրը:

Համաձայն բարոյագիտական ունիվերսալիզմի, բարոյական արժեքը համընդհանուր բնույթ է կրում, այսինքն՝ յուրաքանչյուր ոք պետք է այն իրականացնի: Բարոյագիտական ունիվերսալիզմը չի ենթադրում մտքերի և արարքների միանմանություն կամ ցանկացած իրավիճակում համապատասխան բարոյական իրահանգների պարտադիր կատարում: Սակայն հարկ է նշել, որ համընդհանրացում չի նշանակում անհատական կեցության առանձնացվածության և եզակիության անտեսում: Հիմնվելով աստվածաշնչյան միավորման իդեալի վրա՝ բարոյագիտությունը որոշակի չափորոշիչներ է դնում աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ մարդկային վերաբերմունքի առաջ: Իդեալը սահմանում է Բացարձակի, օրենքի առաջ մարդկանց հավասարություն. հանդուրժողականություն և հարգանք ուրիշի նկատմամբ, այն է՝ օգնել, հոգ տանել ուրիշների մասին:

Հատկանշական է բարոյագիտական ունիվերսալիզմում իրականությունը և իդեալը կապակցող բարոյական պարտադրականության յուրահատկությունը: Նման դեպքում վերանում է պարտադիրի և գոյություն ունեցողի կոնֆլիկտը, քանի որ բարոյագիտության պահանջները համակողմանի են: Պլատոնը ևս, կարևորելով ընդհանուրը, իր հայացքներում բարձրագույն գաղափարը՝ իդեան, համարում է բարոյականության չափանիշ: Էպիկուրի կարծիքով՝ երջանկության ձգտումը մարդկանց կստիպի հետևել բնականին, որի արդյունքում էլ հնարավոր կլինի խուսափել բարոյական կոնֆլիկտներից:

Չմերժելով երջանկության գաղափարը՝ ստոիկները հանուն բարձրագույն բարոյական նորմերի, պատրաստ էին կիսաճգնավորական կյանք վարել, որի դեպքում արժանապատիվ մարդն իրերն ընդունում է այնպես, ինչպես կան:

Բարոյագիտական ունիվերսալիզմի մոտեցումն առավել ընդգծվում է քրիստոնեական գաղափարների միջոցով: Այս համատեքստում առավել հետաքրքիր է Օգ. Երանելու այն տեսակետն, ըստ որի մարդն իր գործերում պետք է ձգտի հասնել բարձրագույն բարիքին, քանի որ բարոյական կոնֆլիկտները մեր անկատարության հետևանք են: Ուստի, ըստ Երանելու, «Քո բոլոր մտքերը ճշմարիտ են, և ովքեր տեսնում են այդ ճշմարտությունը և ընդունում են, եկեք սիրենք միմյանց, և բոլորս սիրենք Քեզ՝ մեր Աստծուն, ճշմարտության աղբյուրին, եթե մենք ծարավի ենք հենց դրան և ոչ թե ունայնությանը»: (8)

Բարոյագիտական ունիվերսալիզմի միտումն իր գագաթնակետին է հասնում Ի. Կանտի բարոյագիտական հայացքներում: Նա ընդունում է, որ բարոյականությունը համընդհանուր է և չի կարող լինել էմպիրիկ, իսկ բարոյական կոնֆլիկտները հնարավոր են էմպիրիկ մակարդակում: Բարոյական կոնֆլիկտների անհնարինությունը, ըստ նրա, իրական է միայն գերզգայական աշխարհում: Յեղինակի համար խիստ կարևոր է պարտականության գիտակցումը, սակայն այս անկատար աշխարհում պարտքի կատարումը երջանկություն չի առաջացնի:(9) Այսպես Կանտը հիմնավորում է հոգու անմահությունը:

Նախքան բարոյագիտական պարտիկուլյարիզմի հիմնական դրույթներին անդրադառնալը՝ «ունիվերսալիզմ - պարտիկուլյարիզմ» և «ես – ուրիշներ» հակասությունները փորձենք դիտարկել սովետական փիլիսոփա, պրոֆեսոր Ռ. Ապրեսյանի ներկայացրած սխեմայի միջոցով: Նա տրված հակաթեզերը ներկայացրել է որպես կոորդինատներ, որոնց հատման կետում ստեղծվում են հիմնական բարոյագիտական սկզբունքները՝ հաճույք, օգուտ, անձնական կատարելություն, գթության սեր, որոնցից յուրաքանչյուրը նշում է անհատի բարոյական իդեալի ձգտումը: (10)

	Պարտիկուլյարիզմ	Ունիվերսալիզմ
Ես	Յեղոնիզմ	Պերֆեկցիոնիզմ
Ուրիշներ	Օգտապաշտություն	Այլասիրություն

Ի

տարբերություն բարոյագիտական ունիվերսալիզմի, բարոյագիտական պարտիկուլյարիզմը պնդում է, որ չկան օրինական, արդարացման ենթակա բարոյական սկզբունքներ, և բարոյական միտքը զերծ է դեպքերին վերաբերող բարոյական սկզբունքների կիրառումից: Բարոյագիտական պարտիկուլյարիզմը բացառում է բարոյական մտքի ռացիոնալությունը (բարոյագիտության մեջ ռացիոնալությունը նշանակում է, որ միևնույն առանձնահատկությունը ցանկացած իրավիճակում կհամարվի միևնույն պատճառ-Ա. Մ.): Յինք ընդունելով մարդկանց հետաքրքրությունների տարբերությունը՝ պարտիկուլյարիզմն ընդունում է բարոյական կոնֆլիկտների հնարավորությունը: Կոնֆլիկտներն իրական են, քանի որ արդի աշխարհում մարդն իր ակտիվ գործունեության ընթացքում չփվում է այլ մարդկանց հետ, ովքեր, իրենց հերթին ունեն մասնավոր հետաքրքրություններ, շահեր ու նպատակներ: Այդ ամենի արդյունքում լինում են տարաբնույթ արժեքների բախումներ:

Որպես նշվածի հիմնավորում բերենք հույն փիլիսոփա Արիստոտելի միտքն այն մասին, որ «գիտելիքը համընդհանուր բնույթ ունի, սակայն գործողությունը միշտ մասնավոր է» և՛ որ «մարդու ցանկացած գործողություն ազատ է, նույնիսկ այն դեպքում, երբ գործում է կրքերի ազդեցության տակ»: Ավելին, ըստ Արիստոտելի, մարդն ունի դրական բարոյական պատկերացումներ և պատասխանատու է իր գործողությունների համար: Ուստի, կարևոր են մարդկանց բնույթը, բնածին հակումները, քանի որ բնավորության դաստիարակության և լավագույն բարոյական որակներ ունենալու համար միայն ցանկությունը, ակտիվ գործունեությունը բավարար չեն: (11)

Էքզիստենցիալիզմի բարոյագիտական հայացքներում ընդգծվում է մարդկային կյանքի եզակիությունն ու անկրկնելիությունը, դրա անհամատեղելիությունը ցանկացած ընդհանուրի հետ: Մարդը բարոյական սուբյեկտ է, ով իր վրա է վերցնում բարոյական ընտրության պատասխանատվությունը և չի հիմնվում հասարակության մեջ ընդունված վարքի նորմերի վրա: Ըստ ֆրանսիացի էքզիստենցիալ փիլիսոփա Ա. Քամյուի, «մարդը կարող է ընդունել միայն մեկ բարոյականություն, որը տրված է ի վերուստ»: Սակայն «աբսուրդային մարդն օժտված է վառ գիտակցությամբ և ապրում է առանց Աստծո, հետևաբար, մարդու արարքները ծառայում են իրեն և դրանց համար պատասխանատվություն է կրում մարդն անկախ հանգամանքներից»: (12)

Պատմական զուգահեռներ անցկացնելով տարբեր ժամանակների ականավոր փիլիսոփաների հայացքների միջև՝ նկատելի է դառնում այն հանգամանքը, որ բարոյական կոնֆլիկտները առավել իրական են դառնում անհատի հետաքրքրությունները կարևորելու դեպքում: Այդ դեպքում անհրաժեշտություն է առաջանում հասկանալ անձի վարքագծի սոցիալ-հոգեբանական հիմքերը և մեթոդաբանական լուծումներ գտնել: Փիլիսոփայական տեսություններից մեկի՝ էմոտիվիզմի համաձայն, բարոյական դատողություններ ենք օգտագործում ոչ միայն մեր անձնական զգացմունքներն ու հարաբերություններն արտահայտելու, այլև ուրիշների մոտ նման հետևանքներ առաջացնելու նպատակով: Փաստացի դատողությունների կամ ճշմարիտ, կամ կեղծ լինելը ապացուցվում է փաստերի աշխարհում առկա բանական չափանիշների միջոցով: Բարոյական դատողություններում կարող ենք բարոյական էֆեկտներ կիրառել հույզերի և հարաբերությունների համաձայնության հասնելու նպատակով: Սակինտայիրի կարծիքով, անհնար է բարոյական դատողությունները քննարկել որպես փաստացի դրույթներ, եթե բացակայում է մարդկային հիմնական նպատակների կամ գործառույթների գաղափարը: (13)

Ամփոփելով հոդվածում բերված փաստերը և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները՝ կարող ենք փաստել, որ բարոյական կոնֆլիկտներն եղել են, կան ու կլինեն բոլոր ժամանակների քննարկման առարկա, քանի որ այժմ էլ աշխարհի գրեթե բոլոր երկրներում առկա են հասարակական շերտավորումներ, որոնք կամա թե ականա փոխազդեցության մեջ են գտնվում:

Հայ իրականության մեջ ևս անխուսափելի են բարոյական կոնֆլիկտները, քանի որ մեր հասարակությունը, դեռևս լիովին ազատված չլինելով նախկին բարոյական արժեհամակարգից, փորձում է ընդունել և յուրացնել երբեմն խորթ ու անընդունելի արժեքներ: Նման մոտեցումը կարելի է դիտարկել որպես քայլ, որը կօգնի ներգրավվել համաշխարհային գործընթացների մեջ, դառնալ դրա մասնիկը և ձևավորել սեփական մտքին հատուկ և հարիր արժեհամակարգ: Գաղտնիք չէ, որ հասարակության զարգացումն ընթանում է օբյեկտիվ հակասությունների հաղթահարման ճանապարհով: Նման հակասությունների պատճառ կարող են լինել կյանքի տարբեր հանգամանքներ՝ նյութական ռեսուրսները, կարևորագույն դիրքորոշումները, իշխանական լիազորությունները, սոցիալական կառուցվածքում կարգադրային տարբերությունները, անձնական տարբերությունները: Ստացվում է, որ մարդն արժեքային տեսանկյունից յուրացնում է աշխարհը, բարոյական արժեքը համակեցություն է: Նման բարոյագիտությունը պարտադրում է ուրիշին վերաբերվել որպես ներմարդկային ուրիշի, միևնույն ժամանակ կոչ անելով ինքը քեզ վերաբերվել ինչպես մարդկությանը: Ուստի հնարավոր է, որ եզակիությունների՝ Ես-Դու հարաբերությունն իր մեջ է առնում «ունիվերսալի» և «պարտիկուլյարի» հակադրությունը: Բարոյագիտական ունիվերսալիզմը մերժում է ինքնին բարոյական կոնֆլիկտի հնարավորությունը՝ ունենալով վարքի կարգավորման համընդհանուր օրենքներ: Բարոյագիտական պարտիկուլյարիզմը դեմ էր բարոյագիտական ունիվերսալիզմի տեսակետին, համաձայն որի՝ բարոյականությունը բացարձակ սկզբունքների համակարգ է: Այն բարոյական իրավիճակի վերլուծումը մոտեցնում է կեցության կոնկրետ պայմաններին՝ խուսափել տարբեր աշխարհների հակադրումից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Краткий словарь по социологии. М.: Политиздат, 1989, стр. 125.
2. St'u Mason H.E., Moral Dilemmas and Moral Theory, N. Y.-Oxford, Oxford University Press, 1996, p.202- 204.
3. St'u Дарендорф Р. Г. Элементы теории социального конфликта// Соц. Исследования, 1994, ' 5.
4. Запрудский Ю. Г. Внутри конфликта//Социологические исследования, 1993, ' 7.
5. Фромм Э. Человек для себя, Минск, Харвест, 2003, стр.347.
- 6.St'u Козер Л. Функции социального конфликта, М., 2000, стр. 32.
- 7.St'u Սողոմոնյան Գ. Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Երևան, 2005, էջ 210-211:
8. Օգ. Երանելի, Խոստովանություններ, Երևան, 2002, էջ 265:
9. St'u И. Кант, Критика практического разума, Сочинения в шести томах, Т. 4, 1965, стр. 238.
- 10.St'u Апресян Р. Г. Идея морали и базовые нормативно-этические программы, М., 1995, стр. 260-261.
- 11.St'u Аристотель, Большая этика, Сочинения в 4-х томах, М., 1984, стр. 329-332.
12. Камю А., Миф о Сизифе, Минск, 2000, стр.76.
13. MacIntyre A., After Virtue, Duckworth, 2000, p. 10-12; 59.

ԱՄՓՈՓՈՒՄ

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՐԻԱՍ ԱՏԱԼՅԱՆ

Ժամանակակից հասարակություններում բարոյական կոնֆլիկտներն անխուսափելի են: Բարոյական կոնֆլիկտը նույնացվում է բարոյական երկրճտրանքի հետ՝ ընդգրկելով նաև հանգուցալուծվող բարոյական կոնֆլիկտները, ինչպիսին է սոցիալական կոնֆլիկտը: Վերջինիս հաղթահարման կարևոր նախապայմաններ են դարաշրջանը, հասարակության սոցիալական կառուցվածքը, արժեքային համակարգը: Բարոյական կոնֆլիկտի հնարավորության և լինելիության հանգամանքն առավել ընդգծված է «բարոյագիտական ունիվերսալիզմ» և «բարոյագիտական պարտիկուլյարիզմ» մեթոդաբանական մոտեցումներում, որն էլ փորձել ենք վերլուծել հոդվածի շրջանակներում:

РЕЗЮМЕ

**ВОЗМОЖНОСТЬ И НАЛИЧИЕ МОРАЛЬНОГО КОНФЛИКТА
МАРИАМ АТАЛЯН**

Ключевые слова: моральный конфликт, моральная дилемма, социальный конфликт, возможность, бытие, универсализм, партикуляризм.

В современных обществах моральные конфликты неизбежны. Моральный конфликт идентифицируется с моральной дилеммой, также включая в себя решаемые нравственные конфликты, такие как социальный конфликт.

Для преодоления социальных конфликтов важными предпосылками являются эпоха, социальная структура общества, система ценностей. Возможность и наличие морального конфликта наиболее акцентируется в методологических подходах "морального универсализма" и "морального партикуляризма", что мы и попытались проанализировать в рамках этой статьи.

SUMMARY

THE OPPORTUNITY AND EXISTENCE OF MORAL CONFLICTS

MARIAM ATALYAN

Key words: *moral conflict, moral dilemma, social conflict, opportunity, existence, universalism, particularism.*

Moral conflicts are inevitable in modern societies. A moral conflict is identified with a moral dilemma, also including the settled moral conflicts such as the social conflict. The age, the role and social structure of the society and the system of the values are the important preconditions for handling a social conflict. The case of the possibility and existence of a moral conflict is much more highlighted in methodological approaches of "moral universalism" and "moral particularism" which we've tried to analyze in this article.

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

Բանալի բառեր. ընտանիք, դեռահաս, տեղեկատվական դաշտ, անձի զարգացում, ֆիզիոլոգիական պահանջ, «հոգևոր» կապ, անհատականության հիմք, անձի սոցիալականացում, սոցիալական միջավայր, հոգեբանական հիմք:

Այսօր, երբ դիտվում են հասարակական արժեքների, նորմերի, ընդհանրապես, կյանքի փոփոխություններ, կարծես վտանգված է նաև ընտանիքի դերակատարումը երեխայի անձի ձևավորման գործընթացում: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, չափից ավելի լայն տեղեկատվական դաշտը, կարծես, աճող սերնդի համար առավել նախընտրելի են դառնում, քան ծնողական խորհուրդը: Այսօր անձնական շփումը իր դիրքերը զիջում է վիրտուալ հաղորդակցմանը, ինչը սահմանափակում է ծնողների վերահսկողությունը: Նրանք հաճախ չեն կարողանում ճիշտ գնահատել երեխաների շրջապատը, չեն ճանաչում ընկերներին, չգիտեն ինչ ազդեցություն սպասել համացանցային «ընկերներից»: Ավելի մեծ վտանգ են պարունակում համակարգչային խաղերը, որոնք առավել նախընտրելի են երեխաների համար, քան թե շփումը ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ: Այս տեսանկյունից առավել քան արդիական ենք համարում անդրադառնալ ընտանիքում դեռահասի անձի զարգացման հոգեբանական հիմքերին ու խնդիրներին: Հատկապես, այն բանի գիտակցմամբ, թե «անձ» հասկացությունը ինչքան լայն սահմաններ ունի: «Անձը բարդ հոգեբանական կառուցվածք է, որի մեջ մտնում են խառնվածքը, բնավորությունը, դիրքորոշումները, կարծիքներն ու համոզմունքները, ընդունակությունները, զգացումները, կամային գծերը, պաշտպանական մեխանիզմներն ու ինքնագիտակցությունը»:(1)

Գաղտնիք չէ, որ ընտանիքի հիմնական գործառույթներից է հանդիսանում աճող սերնդի դաստիարակությունը, սոցիալականացումը: Ընտանիքը յուրաքանչյուր անհատի փոխանցում է մշակութային և էթնիկական ավանդույթներ ու պատկերացումներ, արժեքների համակարգեր, որոնց հետ նա աստիճանաբար հոգեբանական նույնականացում է ապրում:(2)

Ընտանիքը հանդիսանում է դաստիարակության կարևոր ինստիտուտ: Այն, ինչ երեխան ձեռք է բերում վաղ տարիքից՝ ընտանիքում պահպանվում է կյանքի ողջ ընթացքում: Ընտանիքը հատուկ տիպի կոլեկտիվ է, որը մեծ դեր և մշանակություն ունի դաստիարակության հարցում: Իսկ դաստիարակել երեխաներին մշանակում է, նախ և առաջ ստեղծել բոլոր պայմանները, կազմակերպել և ուղղորդել նրանց դեպի հուզական հագեցած կյանք: (3)

*Հոդվածն ընդունվել է 10.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի ՄՄ ամբիոնը:

Ընտանիքը երեխաների համար համարվում է առաջնային խումբ, որտեղից էլ սկսվում է անձի զարգացումը: Ծնողները կրում են պարտավորություն դաստիարակել իրենց զավակներին այնպես, որ վերջիններս դառնան այն հասարակության լիիրավ անդամը, որի բջիջն է տվյալ ընտանիքը: Ծնողները պետք է ի սկզբանե սերմանեն իրենց երեխաների մեջ այն նորմերն ու արժեքները, որոնք հանդիսանում են տվյալ հասարակության պատմամշակութային հարստությունը:

Երեխայի մոտ միշտ էլ մնում են վաղ մանկության շրջանից ընտանիքի հիմնական վարքային նմուշները: Ընտանեկան սոցիալականացման հիմնական միջոցը համարվում է երեխաների կողմից ընտանիքի չափահաս անդամների վարքի մոդելների ընդօրինակումը: Ընտանիքում է ձևավորվում երեխայի անձը, դրվում են նրա անհատականության հիմքերը: Ընտանիքի այս գործառույթի կարևորմամբ էլ նպատակ ունենք բացահայտելու ընտանիքում դեռահասի անձի ձևավորման ուղիներն ու խնդիրները, քանի որ դեռահասության տարիքում հաճախ վտանգվում է ընտանիքի դերն ու ազդեցությունը: Դեռահասության տարիքի ուսումնասիրմանն ուղղված բազմաթիվ հետազոտությունները, դրանք ամբողջացնող տեսությունները, ինչպես նաև կյանքն ապացուցում է, որ այս տարիքը խնդրահարույց ու ճգնաժամային է, մեծ են երեխայի անձի ձևավորմանը խոչընդոտող գործոնները: Արտաքին և ներքին կոնֆլիկտները հաճախ ուղեկցում են ողջ շրջանը:(4) Դեռահասն, անկասկած, ունի մեծահասակի, ծնողի օգնության կարիքը, թեև ինքը դա հաճախ չի ընկալում, նույնիսկ կարող է օգնությունը համարել ավելորդ ու անտեղի: Զոդվածում անդրադառնում ենք դեռահասի ինչպես հոգեբանաֆիզիոլոգիական առանձնահատկություններին, այնպես էլ այն նորագոյացություններին, միջանձնային փոխհարաբերություններին, որոնք դիտվում են այս տարիքում: Խոսել որևէ հարցում ընտանիքի դերի ու նշանակության մասին և չանդրադառնալ, ընդհանրապես, ընտանիք հասկացությանը, նրա գործառույթներին, թերևս, սխալ կլիներ: Դեռահասի անձի զարգացման գործընթացն ընտանիքում ուսումնասիրելու, դիտակետից առանձնացրել ենք նաև ընտանեկան անբարենպաստ գործոնները, որոնք բացասաբար են անդրադառնում դեռահաս-ծնող փոխհարաբերությունների կայացմանը, ընտանեկան դաստիարակության իրագործմանը: Զոդվածում նաև ընդհանրացվում են այն մոտեցումները, որոնք թույլ կտան խուսափել բացասական գործոններից ու ապահովել բարենպաստ պայմաններում դեռահասի անձի ձևավորումը:

Զոդվածում կատարված հետազոտությունը նպատակ ունի ցույց տալ, որ դեռահասներն ունեն իրենց սեփական կարծիքը ծնողների վարքի և կիրառած դաստիարակչական մեթոդների մասին:

Ընտանիքում են ստեղծվում երեխայի առաջին իդեալները, կարողությունները, որոնք անհրաժեշտ են երեխային հասարակությունում հաստատվելու, իր ուրույն տեղը գտնելու համար: Դրանց ընտանիքն է կոչված երեխային ապահովել ընդհանուր, բազայական գիտելիքներով: Այդ գիտելիքներից են.

- Ֆիզիոլոգիական պահանջ (քնի, հանգստի, ուտելու և այլն),
- Ապահովության պահանջ («տանիք գլխավերևում», սոցիալական և նյութական ապահովվածություն),

• Սիրո և հարգանքի պահանջ:

Բայց միշտ չէ, որ ընտանիքը կատարում է կյանքի գործընթացների և սոցիալականացվելու համար այս կարևոր ֆունկցիաները: Ընտանիքը շատ մեծ դեր է կատարում երեխայի սոցիալականացման գործում: Ընտանիքը երեխաների, դեռահասների համար անձնական կյանքի զարգացման միջավայր է: Ընտանիքում են ձևավորվում երեխաների բնավորությունը և նրանց ապագա կյանքը: Երեխաների կյանքի որակը որոշվում է մի շարք ընտանեկան չափանիշներով:

1. Ժողովրդագրական` ընտանիքի կառուցվածքը (մեծ կամ փոքր),

2. Սոցիալ-մշակութային` ծնողների կրթական մակարդակը և նրանց դերը հասարակության մեջ,

3. Տեխնիկական և հիգիենիկ` ապրելու պայմանները, տան տեխնիկայի քանակը և այլն:

Ընտանիքը կարևորագույն գործոն է մարդու սոցիալականացման համար: Երեխայի կյանքում ինչ դրվագ էլ փորձենք ուսումնասիրել, կտեսնենք, որ ընտանիքը ինչ-որ դեր է կատարել: Այդ իսկ պատճառով սոցիալական մանկավարժները ընտանիքը քննարկում են մի քանի տեսանկյունից:

1. Ընտանիքը ապահովում է ֆիզիկական, էմոցիոնալ կյանքը: Նորածնային շրջանում և վաղ մանկության շրջանում ընտանիքը կատարում է վճռական դեր, որը չի կրկնվում այլ սոցիալական միջավայրում: Երեխաների բաժր տարիքում ընտանիքը կրկին մեծ դեր է խաղում, բայց արդեն միակը չի լինում երեխայի սոցիալական դաստիարակության մեջ: Հետագայում ընտանիքի դերը երեխայի կյանքում շատ քիչ դեր է կատարում` կախված դաստիարակությունից և երեխայի մտածելակերպից:

2. Ընտանիքը ազդում է երեխայի հոգեբանական վիճակի վրա: Երեխայի կյանքի առաջին երեք տարվա ընթացքում հոգեբանական դաստիարակությունը մեծ դեր է խաղում, քանի որ հենց այդ ժամանակ է իրականանում երեխայի սեռաճանաչողությունը` այսինքն երեխան սկսում է հասկանալ, թե որ սեռի ներկայացուցիչ է ինքը: Երեխան այդ տարիքում է սկսում ճանաչել համերը, ծանոթանում է զգացմունքների տեսակներին, սկսում է ճանաչել էմոցիոնալ ռեակցիաները և ամեն երեխա դրան արձագանքում է յուրովի: Այս հարցերում ընտանիքի դերը շատ է կարևորվում և ընտանիքի յուրաքանչյուր անդամ կատարում է որոշակի դեր: Երեխայի յուրաքանչյուր տարիքում յուրովի է ընտանիքի անդամների դերը նրա երեխայի կյանքում:

3. Ընտանիքը երեխայի մտավոր կարողությունների վրա մեծ ազդեցություն է թողնում և բացի այդ ընտանիքից է կախված, թե ապագայում երեխան գրքերի հանդեպ ինչպիսի ուշադրություն կցուցաբերի կամ ինչ առարկա կսիրի:

4. Կարևոր է ընտանիքի դերը սոցիալականացման հարցում: Այս հարցում ընտանիքի ամեն անդամ իր դերն ունի, բայց ամենամեծ դերը, իհարկե, ծնողներինն է: Նրանցից է կախված երեխայի ապագա բնավորությունը, քանի որ երեխայի համար առաջին օրինակը իր ծնողներն են: Այն ծնողները, ովքեր փոքր ժամանակ ունեցել են ուշադրության պակաս կամ իրենց հասակակիցների հետ չեն կարողացել շփվել, այդ ծնողները չեն կարող հանդիսանալ լավ խորհրդատու, քանի որ

նրանք իրենց երեխաներին չափից շատ ուշադրություն են դարձնում:

5. Ընտանիքի կարծիքը վաղ հասակում երեխաների համար շատ կարևոր է, և ընտանիքի կարծիքից է կախված երեխայի ապագան, թե ինչպես կսոցիալակա-նացվի երեխան:

Մինչև մանկապարտեզ կամ դպրոց հաճախելը փոքրերի համար ընտանիքը հանդիսանում է գրեթե միակ սոցիալական միջավայրը, ուր հիմնվում են նրանց առողջության ու բնավորության հիմքերը, զարգանում են նրանց հարցասիրու-թյունը, ձևավորվում են նրանց վարքի որոշ հմտությունները:

Անհերքելի է, որ երեխայի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Այստեղ ծնողները աշխատում են զարգացնել երեխաների ընդունա-կությունները, հետևել նրանց առողջությանը և ձևավորել նրանց բարոյական հատկանիշները:

Ընտանեկան միջավայրի ազդեցությունը երեխայի վրա դրսևորվում է ընտա-նեկան կյանքի ընդհանուր բնույթով, նրա անդամների օրինակի և խոսքի հիման վրա: Ընտանիքը, որպես սոցիալական բջիջ առհասարակ, կապված է հասարա-կական կյանքի հետ և շրջապատի բոլոր կարևոր իրադարձություններն իրենց արձագանքն են գտնում այնտեղ: Լուրջ նշանակություն ունի նաև ընտանիքի կյանքի կազմակերպվածությունը, որոշակի կարգ ու կանոնը, սովորույթները, ավանդույթները, ընտանքի տեսքը նույնպես որոշում է ընտանիքի կյանքի ընդհա-նուր բնույթը: Եթե ընտանիքում գոյություն ունի որոշակի կարգ ու կանոն, քնից արթնանալու, նախաճաշի, ճաշի, ընթրիքի ժամանակ և այն դարձել է կենցաղ, եթե ստեղծված են որոշակի կայուն ավանդույթներ՝ կապված ծննդյան տարեդար-ծի, տոնի և կիրակնօրյա զբոսանքի հետ, եթե բնակարանը ձևավորված է պարզ, ճաշակով, պահվում է միշտ հավաքված և մաքուր, նշանակում է ընտանիքի կյան-քը կազմակերպված է: Այս ամենը երեխայի մեջ առաջ է բերում կարգապահու-թյուն, վստահություն ընտանիքի նկատմամբ, պատվի և սիրո զգացմունք և հա-կառակը: Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոցներից է նաև ընտանիքի անդամների անձնական օրինակը: Վաղուց հայտնի է, որ երեխային բնության կողմից շնորհված է ընդօրինակելը: Երեխան մշտապես դիտում է իրեն շրջապա-տող մարդկանց, նրանց գործերը, տեսնում է նրանց վերաբերմունքը շրջապատի մարդկանց և երևույթների նկատմամբ և այդ ամենը աննկատելիորեն ընդօրինա-կում է: Սակայն երեխան ընդօրինակում է ոչ միայն դրականը, այլև բացասակա-նը: Երբեմն ծնողները, տեսնելով երեխայի այս կամ այն բացասական հատկու-թյունները, մնում են զարմացած, այնինչ դրանց արմատները շատ հաճախ գտն-վում են ընտանիքում, ծնողների արարքներում:

Այստեղից հետևություն՝ ծնողների խնդիրն է աշխատել, որ ընտանեկան միջա-վայրում գերակշռի դրական օրինակը, այդ դեպքում միայն հնարավոր է ապահո-վել ընտանեկան միջավայրի բարերար ազդեցությունը երեխայի զարգացման գործում:

Ընտանեկան միջավայրի ազդեցություն է ընտանիքի անդամների խոսքը: Ըն-տանիքի թե՛ կրտսեր, թե՛ ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորու-թյունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գոր-

ծուներության և շրջապատում կատարվող կարևոր դեպքերի մասին: Խոսքի միջոցով ծնողները քննարկում են շատ հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

Ծնողները պարտավոր են աշխատել այնպես անել, որ խոսքը դրական արժեք ունենա: Չպետք է մոռանալ, որ երեխաները լսում են ընտանիքի անդամների խոսքը և համապատասխան ազդեցություն կրում: Ուստի պետք է մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր խոսքի վրա, ձգտել, որ այն համապատասխանի հասարակական դաստիարակության պահանջին:

Երեխայի համար անբարենպաստ ընտանիքը հակասոցիալական ընտանիքի հոմանիշը չէ: Մի երեխայի համար ընտանիքը կարող է լինել լավ, մյուսի համար՝ անբարենպաստ և կարող է պատճառ դառնալ ծանր հոգեկան ապրումների: Ընտանիքը կարող է լինել լիարժեք, բայց դաստիարակությունը՝ հակասող, ճնշող, խիստ պայմաններով: Երբեմն ոչ լիարժեք ընտանիքն ավելի օգտակար է երեխայի համար, քան անբարենպաստ լիարժեքը (հայրը հարբեցող է կամ նմանատիպ վիճակներ...):

Հանդիպում են արտաքննապես լավ հարաբերություններով ընտանիքներ, սակայն ծնողներն իրենց զբաղվածության պատճառով քիչ ժամանակ են հատկացնում երեխային, ինչն էլ կարող է փոքրիկի փխրուն հոգում վատ հետևանքներ առաջացնել:

Դաստիարակության արատներն անբարենպաստ ընտանիքի առաջնային և գլխավոր ցուցանիշներն են: Ո՛չ նյութականը, ո՛չ հոգևորը չեն բնութագրում բարենպաստ կամ անբարենպաստ ընտանիքը, այլ միայն երեխայի նկատմամբ վերաբերմունքը: Անբարենպաստ ընտանիքն առաջացնում է երեխայի հոգեկան զարգացման խոչընդոտներ: Այսինքն՝ ոչ թե ինտելեկտի խանգարման, այլ հուզականային ուղորտի, անձի բնավորության: Իսկ ինչպիսին բնավորությունն է, այնպիսին են տվյալ անձի փոխհարաբերություններն այլ մարդկանց հետ, այնպիսին է նաև նրա երջանկությունը: Անբարենպաստ գործոններից մեկը, որը փլուզում է ոչ միայն ընտանիքը, այլև երեխայի հոգեկան հավասարակշռությունը, ծնողների հարբեցողությունն է: Այդ պատճառով երեխան ձեռք է բերում վատ վարքագիծ, դժվար է դաստիարակվում, մինչև իսկ զրկվում է ծնողներից և հայտնվում մանկատանը:

Երեխան, հատկապես դեռահասը, ձգտում է բավարարել իր սեփական պահանջմունքները, ինքնուրույն դառնալ, ինքնահաստատվել: Հաճախ սա առաջացնում է երեխայի և ծնողների միջև կոնֆլիկտային իրավիճակ: Աղքատությունը, ազրեսիվությունը, միակողմանի ծնողազրկությունը, որպես օրենք, միաձուլվում են: Այս ամենը պղտորում է աճող սերնդի հոգին. ծեծի ենթարկված երեխաները հաճախ, մեծանալով, դառնում են սադիստներ: Այդ իսկ պատճառով ծնողները պետք է լուրջ և ժամանակին մտածեն զավակի ապագայի մասին, որովհետև հետագայում նման երեխաներին ոչ ոք՝ ոչ մի ծնող, ոչ մի ուսուցիչ չի կարող օգնել:

Երբ խոսք է գնում այս կամ այն երեխայի մասին, առաջին հերթին մեզ հետաքրքրում է այն, թե ինչ ընտանիքից է նա, ինչպիսի դաստիարակություն է ստա-

ցել, ովքեր են նրա ծնողները: Եթե նրա վարքը գովասանքի է արժանանում, ապա պարզ է դառնում, որ տվյալ անձը դաստիարակվել է լիարժեք, բարենպաստ ընտանիքում: Բարենպաստ ընտանիքը նպաստում է դրական մթնոլորտի, դրական հետաքրքրությունների, դիրքորոշումների, տրամադրության ու համերաշխության ստեղծմանը: Անբարենպաստն իր մեջ ներառում է շփման, վերաբերմունքի ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ փստահարված են, և դա նպաստում է անձի սխալ կայացմանը: Անբարենպաստ ընտանիքների ծնողների զգալի մասը չի կարողանում կազմակերպել ընտանեկան կյանքը, չեն տիրապետում երեխաների նկատմամբ ճիշտ մոտեցումներին, երբ բավարարում են երեխաների բոլոր ընդունելի և ոչ ընդունելի պահանջումները, չեն զգում, որ դաստիարակում են եսասեր, եսամոլ, չար, անտարբեր մարդու: Հանդիպում են սառը հոգեբանական մթնոլորտով ընտանիքներ, որտեղ ծնողների սառը հարաբերությունները պայմանավորվում են բազմաթիվ գործոններով՝ նրանց միջև չկա սեր, հարգանք, արտաքնապես միմյանց նկատմամբ դրսևորում են ջերմ մոտեցումներ, իսկ ներքուստ՝ այլ: Նման մթնոլորտում երեխաներն ավելի զգայունակ են դառնում, զգում են ծնողների աններդաշնակությունը, որի արդյունքում նրանց մոտ աստիճանաբար առաջանում է սառը վերաբերմունք իրենց իսկ ծնողների նկատմամբ:

Կոնֆլիկտային հարաբերություններով ընտանիքներում նյութական և կրթական անհրաժեշտությունը, նորմերի իմացությունն ի գորու չեն կանխելու պարբերաբար ծագող անախորժությունները: Ծնողները մերթ միմյանց նկատմամբ ջերմ են, հոգատար, մերթ էլ անպատվում են իրար, իրարից բաժանվում: Ամուսինների միջև կոնֆլիկտների պատճառը դերաբաշխման մեջ կարող է լինել՝ հայրը ձգտում է ստանձնել ընտանիքի ղեկավարման դերը, իսկ մայրը պահանջում է փոխհամաձայնեցում, ըմբռնում: Կոնֆլիկտն առաջանում է, երբ ամուսինները տարակարծիք են դաստիարակման հարցում, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում է իր ազդեցության տակ պահել երեխային: Ընտանիքի նման անբարենպաստությունը ներգործում է երեխայի ներհոգեկան զարգացման վաղ օնթոգենեզում: Հասունացման հետ մեկտեղ, ծնողների ներգործությունների նկատմամբ երեխայի հակազդումները համարժեք բնույթ չեն կրում: Ի վերջո, երեխայի մոտ մշակվում է բացասական վերաբերմունք, ինչն էլ վկայում է նրանց միջև արդեն ստեղծվող պատմեշի մասին: Սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքները բնութագրվում են նյութական ցածր մակարդակով: Այսպիսի ընտանիքներում կարող է բացակայել ծնողներից որևէ մեկը, կամ կրթական մակարդակը շատ ցածր լինել, սակայն դա չի նշանակում, որ նման ընտանիքներում մեծացող երեխաներն ավելի շատ են ընկալունակ բացասական ներգործությունների նկատմամբ: Էականն այն է, թե ինչ բնույթ ունի այդ ընտանիքների հոգեբանական մթնոլորտը, որից էլ կախված է երեխայի նորմալ զարգացումը: Ակնհայտ է, որ ընտանիքի անբարենպաստությունն ինքնին սթրեսածին, կոնֆլիկտածին է եւ առաջացնում է դաստիարակչական բնույթի շատ հիմնախնդիրներ:

Այնպիսի ընտանիքներում, որտեղ տիրում են կոնֆլիկտներ, ծնողների սոցիալ-հոգեբանական թերաճ, հիվանդություններ, վերջինները զրկում են երեխային

լիարժեք շփումից: Ծնողների ներկայությունը և դերը երեխայի կյանքի առաջին տարիներին շատ մեծ է: Այն երեխաները, որոնք զրկված են մեկ կամ երկու ծնողից, դանդաղ են զարգանում: Անգամ եթե երեխան ծնողներից մեկին կորցնում է վաղ տարիքում և չի հասցնում գիտակցել այդ կորուստը, դա դժվարություններ է առաջացնում ապագայում: Մայրը բավարարում է երեխայի պահանջները: Այդ պատճառով նրա մահը կամ հեռանալն առաջացնում է ճգնաժամ շրջապատող աշխարհի հանդեպ: Որոշ հոգեբաններ գտնում են, որ հոր բացակայությունն այդքան էլ խորը չի ազդում երեխայի վրա: Սակայն առանց նրա ներկայության, նրա հետ շփման, մոր ազդեցությունը զարգացման գործում ավելի է մեծանում, քանի որ երեխան չի տեսնում վարքի ուրիշ ձև: Նա զրկվում է տղամարդկային վարքի օրինակից, քանի որ հենց հայրն է երեխային տանում դեպի հասարակություն: Իսկ միայնակ մայրը՝ ծանրաբեռնված տնտեսական խնդիրներով, ժամանակ չի ունենում զբաղվել երեխայով, նրա մոտ կորչում է հետաքրքրությունը, առաջացնում է մոր եւ երեխայի օտարացում: Ընտանիքները, որտեղ պահպանվում են զուտ ձևական անուսնական հարաբերություններ, նույնպես ազդում են երեխայի վրա եւ բերում են ներքին ու արտաքին կոնֆլիկտի: Այս ամենի հետևանքը հանդիսանում է երեխայի փախուստը ընտանիքից, թափառականությունը, օրինախախտումը: Առավել դաժան և անմարդկային է սեփական երեխային որք դարձնելը:

Բայց ավելի վատ է միայնակ մոր անցանկալի երեխան. նման մայրերն իրենց երեխաների մեջ տեսնում են բնավորության վատ գծեր: Այդ երեխաները դժվարություններ են ունենում շփվելիս, չեն կարող հաղթահարել դժվարությունները. անցանկալի լինելը միշտ թողնում է իր հետքը: Երբեմն լինում է այնպես, որ երկու ծնողի ամկայության դեպքում քիչ ժամանակ են հատկացնում, որի պատճառը կարող են լինել սոցիալ-տնտեսական իրավիճակը, ամուսինների միջև կոնֆլիկտները: Կոնֆլիկտների ժամանակ ծնողները սեփական պայքարում երեխային որպես զենք են օգտագործում:

Մոր անբավարար խնամքը և հոր կարգապահության ազդեցության բացակայությունը բացասաբար են ազդում անձի ձևավորման վրա: Ծնողներից մեկի բացակայությունը, մտերիմների մահը, այս բոլորը անվանում են «զրկանքի և տրավմայի գործոն»: Որբությունը և մեծերի դաժան վերաբերմունքը երեխայի հանդեպ հաճախ են հանդիպում: Ընտանիքը պետք է պահպանել, զգույշ վարվել նրա հետ, հակառակ դեպքում մարդը դժբախտանում է, կորցնում ամեն ինչ և շատ անգամ՝ նույնիսկ իրեն:

Ընդհանրացնելով անբարենպաստ ընտանիքի սոցիալ-հոգեբանական նկարագիրը՝ նշենք դրա հիմքը կազմող հիմնական առանձնահատկությունները. ծնողների միջև հոգեբանական անհամատեղելիությունը, մանկավարժական անհամատեղելիությունը, ծնողների ինքնակառավարման, կազմակերպչական ընդունակությունների, ընտանիքի դերի գնահատման բացակայությունը, ծնողների գիտակցության երկատվածությունը և խորը հոգեբանական հակասությունը վարքի շեղում ձևավորում երեխայի մոտ:

Երեխայի մեջ ուրիշ մարդկանց, ծնողների նկատմամբ զգայուն, բարոյական

վերաբերմունք դաստիարակելու համար անհրաժեշտ է, որ իրենք՝ ծնողները, կանգնած լինեն անհրաժեշտ մակարդակի վրա: Նրանց շնորհիվ են երեխայի մոտ ձևավորվում մարդասիրությունն ու աշխատասիրությունը: Երեխային շատ են անհրաժեշտ ծնողների ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, խնամքը: Չափից ավելի խստությունն ու հսկողությունը պատճառ են դառնում երեխայի մոտ ագրեսիվ վարքի և կաշկանդվածության ի հայտ գալուն: Չափազանց խիստ հսկողությունը բացասաբար է ազդում երեխայի վրա, և, լինելով մշտական դիտողությունների ու ճնշվածության տակ, նա այլևս չի ցուցաբերում ակտիվություն, ինքնուրույնություն: Երեխան շատ զգայուն է ու շուտ է զգում իր նկատմամբ բացասական վերաբերմունքը: Նրան չի կարելի հանդիմանել վատ արարքի համար և, առավել ևս, վախեցնել: Լինում են դեպքեր, երբ ծնողների չպատճառաբանված խստության և բռնության հետևանքով երեխայի մեջ առաջացած վախը երևակայության ուժով վեր է ածվում սարսափի:

Երեխան ամենավաղ մանկությունից ընկալում է ծնողների ապրելակերպը, նրանց միջև տիրող հարաբերությունները: Ընտանիքում երեխայի կյանքի բարոյահոգեբանական մթնոլորտը հսկայական նշանակություն ունի նրա բարոյական զգացմունքների ձևավորման վրա: Երբ ծնողների միջև հաստատվում են ջերմ, բարիդրացիական հարաբերություններ, երեխան իրեն երջանիկ է զգում: Ծնողների սերը երեխայի մեջ ձևավորում է մարդկանց նկատմամբ բարի վերաբերմունք: Կոպտությունը երեխայի նկատմամբ նողկալի է: Երբեմն ծնողները նրա «երեսով են տալիս» երեխայի համար գնած որևէ իրը, և այդ պարագայում այդ նվերները միայն տանջանք են պատճառում նրան:

Որոշ ծնողներ երբեմն մոռանում են այն մասին, որ պետք է նպաստեն երեխայի հետաքրքրասիրությանը, բավարարեն նրա պահանջմունքները: Եթե երեխային խաբում են, հետագայում նա կորցնում է վստահությունը: Երեխաները շուտ տպավորվում են, և մեկ անգամ լսածը կարող է երկար ժամանակ մնալ նրա հիշողության մեջ ու ազդել վարքի վրա: Երեխայից հաճախ ինչ-որ բան են թաքցնում, բայց եթե նա տեսնում է, որ շրջապատն օգտվում է դրանից, իսկ իրեն չեն տալիս, նա առաջին իսկ հարմար առիթի դեպքում ձեռք կբերի այն: Հետագայում կարող է պատժվել իր արարքի համար, բայց անհրաժեշտության դեպքում նորից կանի նույնը, սակայն այս անգամ կլինի ավելի զգույշ: Պատիժը չի կարող նրա համար օբյեկտիվ երևույթի ճշմարտությունը պարզել, այն միայն կհուշի, որ եթե բռնեն, վատ է, եթե ոչ՝ լավ է: Եվ որևէ մեկին վնասելու հնարավորություն ունենալու դեպքում նա կվարվի հենց այնպես, ինչպես իր հետ վարվում են պատժելիս:

Ծնողները դաստիարակում են երեխային ոչ միայն երբ նրա հետ խոսում կամ հրամայում են, այլ նաև տնից բացակայելու ժամանակ: Ծնողի ձայնի հնչերանգի մեջ տեղի ունեցող ամենափոքրիկ փոփոխությունն անգամ երեխան զգում է, այն-ինչ ծնողը կարող է դա չնկատել: Եթե երեխան երբեմն ծնողի հետ կոպիտ է խոսում, կարելի է չկասկածել, որ, հավանաբար, նման կոպտություն նա լսել է ծնողից: Հատկապես երեխայի վրա շատ է ազդում մոր վերաբերմունքը հոր նկատմամբ. եթե մայրն արհամարհանքով է վերաբերվում ամուսնու հետ, ապա, բնական է, երեխան կհետևի նրա վարքին:

Դաստիարակության հետ կապված հարց է ծագում՝ ի՞նչ անել դրական ազդեցությունն առավելագույնի, իսկ բացասականը նվազագույնի հասցնելու համար: Դրա համար անհրաժեշտ է ճշգրիտ ձևով պարզել ներընտանեկան սոցիալ-հոգեբանական փաստերը, որոնք դաստիարակության վրա ազդեցություն ունեն: Հենց ընտանիքում է երեխան ձեռք բերում կյանքի առաջին փորձը, ստեղծում աշխարհայացք և սովորում, թե ինչպես իրեն դրսևորի տարբեր իրադրություններում:

Որոշ գիտնականներ գտնում են, որ անձի գծերը ձևավորող հիմնական գործոններից է սխալ դաստիարակությունը, որը երեխայի մոտ ձևավորում է նկրտիկ ռեակցիա: Դաստիարակությունը լինում է արհամարհական. այն պայմանավորված է գիտակցված և չգիտակցված պահերով: Ելությունն այն է, որ կիրառվում է կամ չափից դուրս պահանջկոտություն և կոպտություն, կամ անբավարար վերահսկողություն: Հիպերսոցիալական, որն արտահայտվում է ծնողների մոտ տագնապալի մտքերով երեխայի կամ տան որևէ անդամի առողջության նկատմամբ, հասակակիցների միջև երեխայի սոցիալական կարգավիճակի և նրա ուսումնական հաջողությունների հանդեպ, դրսևորվում է երեխայի և ընտանիքի նկատմամբ գերհոգատարությամբ: Եզոցենտրիկ, որը նկատվում է ցածր պատասխանատվության մակարդակ ունեցող ընտանիքներում, երբ երեխային ստիպում են շրջապատող միջավայրում դրսևորվել «ես մեծ եմ» արժեքային որակների միջոցով:

Ընտանիքի նորմալ ֆունկցիոնալ գործունեության մեջ նշանակություն ունի շփման ոճը, որն առաջանում է անուսինների միջև և կախված է նրանց հետաքրքրություններից, բնավորություններից: Շփման գլխավոր ունակությունն ուրիշի արժեքների ընդունման կարողությունն է:

Ընտանիքում շփման կարիք ունեն նաև երեխաները, ինչը երեխայի անձի ձևավորման գլխավոր գործոնն է: Ընտանիքում երեխաներն առավելապես շփվում են մոր, քան հոր հետ, քանի որ մայրը նոր սերնդին լույս աշխարհ բերողն է, խնամողը և, այս ամենի հետ մեկտեղ, ունի «հոգևոր» կապ իր սերնդի հետ: Կինն ավելի զգայուն է, էմոցիոնալ, կարեկից, և այդ պատճառով երեխան սերտ կապված է մոր հետ: Իսկ հայրն ուժ է, ընտանիքի հենարան: Նա իր ներկայությամբ երեխային վստահություն է հաղորդում, եւ կարճ ժամանակով բացակայությունը երեխայի մոտ առաջացնում է վախ, փակվածություն, ագրեսիվություն: Սակայն պատահում է այնպես, որ ծնող-երեխա փոխհարաբերություններում բացակայում է վստահությունը, որն էլ բացասական կերպով է ազդում երեխայի անձի զարգացման վրա: Ծնող-երեխա փոխհարաբերությունը մի ընթացք է, որի ժամանակ ծնողը կենտրոնանում է երեխայի վրա, սատարում նրան դժվար պահերին, օգնում է խուսափել սխալներից: Սակայն, ամենակարևորը, անհրաժեշտ է երեխային ցույց տալ, որ անհաջողությունը ոչ մի դեպքում չի փոքրացնում նրա անձնային արժանիքները:

Ընդհանրացնելով հոդվածը մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքը այն սոցիալական միկրոմիջավայրն է, որտեղ իրագործվում են երեխայի ուսուցումն ու դաստիարակությունը, երեխան կայանում է որպես անձ իր վրա կրելով այն արժեքներն ու նորմերը, որոնք իրեն են փոխանցում ծնողները, նաև ընտանիքում են դրվում սեռային նույնականացման հիմքերը, անհատականության սաղմերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչաջյան Ա. Ա. Սոցիալական հոգեբանություն: -Եր.- <<Ձանգակ-97>>, 2004.-432 էջ
2. Фридман Л. М. Психология воспитания. -М.: ТЦ <<Сфера>>, 1999. с . 167
3. Психология развития / Под ред. А. К. Болотовой и О. Н. Молчановой. М., <<Черо>>, 2005-524
4. Ընտանիք և դպրոց – Կրթ. Ազգային Ինստիտուտ: Գիտամեթոդական ամսագիր հ. 2, 2011 թ.
5. Պետրովսկի Ա. Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Եր. 1977..
6. Анализ семейных отношений у подростков при психопатиях, акцентуациях характера, невротизах и невротоподобных состояниях: Метод. рек. / Сост.: Эдмиллер Э.Г., Юстицкий В.В. - Обнинск: Б.у., 1992. - 22 с.
7. Горьковая И.А. Влияние семьи на формирование делинквентности у подростков // Психологический журнал. - 1994. - Т.15, ' 2. - С.57-65.
8. Психология человека от рождения до смерти (Психологическая энциклопедия (под ред. А. А. Реана), М., 2002 с. 346).

ԱՍՓՈՓՈՒՄ

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԵՐԵՆԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել ընտանիքի դերը դեռահասի անձի ձևավորման մեջ: Մեր օրերում, երբ դիտվում են հասարակական արժեքների, նորմերի և կյանքի փոփոխություններ, վտանգվում է ընտանիքի դերը և սահմանափակվում է ծնողների վերահսկողությունը:

Ուսումնասիրության արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ժամանակակից տեխնոլոգիաները, համակարգչային խաղերը և համացանցային «ընկերները» ծնողների կողմից դժվար վերահսկելի միջավայր են ստեղծում դեռահասի անձնային հատկանիշների ձևավորման գործընթացի համար, ինչը սահմանափակում է հասարակության պատմամշակութային ու էթնիկական արժեհամակարգերի հնարավորությունները:

РЕЗЮМЕ

СЕМЬЯ КАК ИНСТИТУТ В РАЗВИТИИ И ВОСПИТАНИИ РЕБЕНКА

АРМИНЕ САРГСЯН

Ключевые слова: семья, подросток, информационное поле, развитие личности, физиологические потребности, духовная связь, основа личности, социализация личности, социальная среда, психологическая основа.

В этой статье мы попытались представить роль семьи в формировании личности подростка. В наши дни, когда наблюдается смена ценностей и

норм жизни, под удар ставится роль семьи, ограничивается контроль со стороны родителей.

Актуальность исследования основывается на том, что современные технологии, компьютерные игры и соцсетевые “друзья” создают сложную среду для осуществления контроля над процессом формирования личностных качеств подростка. Это ограничивает возможности историко-культурных и этнических ценностей в социуме, где растет и формируется подросток.

SUMMARY

FAMILY AS A SOCIAL INSTITUTE IN THE DEVELOPMENT AND UPBRINGING OF A CHILD

ARMINE SARGSYAN

Key words: *family, teenager, information field, the development of a person, physiological demand, spiritual connection, base of individualization, social sphere, socialization of person, psychological base.*

In the following article we tried to present the role of the family in the formation of the teenagers' personality. Nowadays when the changes of social values, norms and life can be seen, the role of family is under risk and the control of parents is limited.

The relevance of the research is based on the fact that modern technologies, computer games and virtual friends make difficult conditions for taking control over the formation of the teenager's personality. All these aspects are limited by the historical-cultural and ethnic values where the teenagers grow and develop.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ** - Պարզության առեղծվածները. գրողի բանաձևային նտածողությունը և ստեղծագործության արխիտեկտոնիկան 5

2. **ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ** - Սուրացանագիտության զարգացման ընթացքը 29

3. **ՋՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ** - Բանաստեղծի ինքնակերպարավորման և ժամանակի ընկալման առանձնահատկությունը 38

4. **ԺԱՆՆԱ ԲԵԳՆԱՐՅԱՆ** - Ժամանակային ընդգրկումները Կիմ Գաբրիելյանի «Զվայելած եղեմ» պատումաշարում 47

5. **ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Վաչագան Բարեպաշտ թագավորի կերպարը գեղարվեստական գրականության մեջ 54

6. **ԱԼԻՍԱ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ** - Արցախյան ազատամարտի անդրադարձը Մ.Յովհաննիսյանի ռեպորտաժներում 64

7. **ՆԱՆԱՐ ՍԻՍՈՆՅԱՆ** - Կարապենց գրողն ու գեղագետը 72

8. **ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ** - Չարենցի ստեղծագործությունների սուրբգրային ակունքները 79

9. **ԿԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ** - Մայրենին նաև գրաբարն է 87

10. **ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ** - Ղարաբաղի բարբառի բառակազմական համակարգի ուսուցումը բուհում (հարադրական բարդություններ) 94

11. **ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ** - Պատկերաստեղծման միջոցները Համաստեղի «Տափան Մարգարը» պատմվածքում 103

12. **ԼՈՒՍԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ** - Соматические фразеологические единицы в британских и арцахских фольклорных сказках 109

13. **ԵԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Стилевая специфика языка передач на ТВ 121

14. **ՄԵՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ** - Ցյուրիխյան արձանագրությունները և հայ-թուրքական հարաբերությունները 2008-2010 թթ. 127

15. **ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ** - Արցախյան շարժման արտահայտությունը Ջորի Բալայանի «Նախիջևանը ցեղասպանության զոհ է» գրքում 135

16. **ՄԱՐԻԱՄ ԱՏԱԼՅԱՆ** - Բարոյական կոնֆլիկտի հնարավորությունն ու լինելիությունը 144

17. **ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ** - Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ երեխայի զարգացման և դաստիարակության գործում 151

**СОДЕРЖАНИЕ
CONTENTS**

1. ВАРДАН АКОПЯН - Таїны истории: доматическое мышление писателя и архитектоника произведения. VARDAN AKOPYAN - The mysteries of simplicity: The formulaic thinking of the writer and the architectonics of his works	5
2. СОКРАТ ХАНЯН - Процесс развития мурацанаведения SOKRAT KHANYAN - The process of Muratsan studies development	29
3. ЗУХРА ЕРВАНДЯН - Специфика восприятия времени и своеобразное изображение поэта ZOUKHRA YERVANDYAN - Time perception specifics and unique depiction of poet	38
4. ЖАННА БЕГЛАРЯН - Временной период в сборнике рассказов Кима Габриеляна "Ненаслаженный рай" JANNA BEGLARYAN - Time houndaries in artsakhian prosaist Kim Gabrielyans series of narrafivess called The never enjoyed edem.....	47
5. АМАЛИЯ ГРИГОРЯН - Образ царя Вачагана Барепашта в художественной литературе AMALYA GRIGORYAN - The image of Vachagan Varepasht in fiction	54
6. АЛИСА БАГДАСАРЯН - Отображение арцахской национально-освободительной борьбы в репортажах М. Ованнисяна ALISA BAGHDASARYAN - The reflection of Artsakh war of independence in M.Hovhannisyans reports	64
7. НАНАР СИМОНЯН - Карапенц писатель и эстет NANAR SIMONYAN - Karapents - the writer and the artist	72
8. АНИ ШИРИНЯН - Библейские источники произведений Чаренца ANI SHIRINYAN - Scriptural sources of Charentss works	79
9. КАРИНЕ АВАНЕСЯН - Грабар также родной язык KARINE AVANESYAN - Grabar (Old Armenian) is also a native language	87
10. РЕНА МОВСЕСЯН - Обучение словообразовательной системы карабахского диалекта в вузе (сопоставительные сложности) RENA MOVSESYAN - Teaching of the word-formation system of the Karabakh dialect in the university (Comparative compications)	94
11. ЛИАНА САНТРЯН - Средства создания образов в рассказе Амастега "Тапан Маркар" LIANA SANTRYAN - The means of creating images in the story Tapan Markar of Hamastegh	103

12. ЛУСИНЕ ТОВМАСЯН - Соматические фразеологические единицы в британских и арцахских фольклорных сказках	
LUSINE TOVMASYAN - Somatic phraseological units in the British and Artsakhi fairy tales	109
13. ЕЛЕНА ГРИГОРЯН - Стилиевые особенности языка телепередач	
ELENA GRIGORYAN - Stylistic features of TV program language	121
14. МЕРИ НАДЖАРЯН - Цюрихские протоколы и армяно-турецкие отношения в 2008-2010гг.	
MERI NAJARYAN - Zurich protocols and Armenian-Turkish relations in 2008-2010 ...	127
15. АЛИК САРГСЯН - Отражение арцахского движения в книге Зория Балаяна "Нахичеван-жертва геноцида"	
ALIK SARGSYAN - The expression of Artsakh movement in Zori Balayans book Nakhichevan as a victim of genocide	135
16. МАРИАМ АТАЛЯН - Возможность и наличие морального конфликта	
MARIAM ATALYAN - The opportunity and existence of moral conflicts	144
17. АРМИНЕ САРГСЯН - Семья как институт в развитии и воспитании ребенка	
ARMINE SARGSYAN - Family as a social institute in the development and upbringing of a child	151

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ավանսեյան Կարինե - ք.գ.թ., ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
2. Ատայան Մարիամ - ՀԱԱՀ հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնի հայցորդ
3. Բաղդասարյան Ալիսա - ք.գ.թ.,
4. Բեգլարյան Ժաննա - ք.գ.թ., Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնի վարիչ
5. Գրիգորյան Անայա - ք.գ.թ., Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնի դասախոս
6. Գրիգորյան Ելենա - Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս
7. Երվանդյան Զուլխրա - ք.գ.թ., ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ
8. Թովմասյան Լուսինե - ք.գ.թ., ԱրՊՀ օտար լեզուների ամբիոնի դոցենտ
9. Խանյան Սոկրատ - ք.գ. դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս
10. Հակոբյան Վարդան - ք.գ. դոկտոր, պրոֆեսոր, Գրիգոր Նարեկացի համալսարանի ռեկտոր
11. Մովսեսյան Ռենա - ք.գ.թ., Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնի վարիչ
12. Նաջարյան Մերի - ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
13. Շիրինյան Անի - ԵրՊՀ Գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
14. Սանթրյան Լիանա - ք.գ.թ., Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հումանիտար և լեզուների ամբիոնի դոցենտ
15. Սարգսյան Ալիկ - Գրիգոր Նարեկացի համալսարանի պատմության ամբիոնի դասախոս
16. Սարգսյան Արմինե - Գրիգոր Նարեկացի համալսարանի Մանկավարժության և Մեթոդիկայի ամբիոնի դասախոս
17. Սիմոնյան Նանար - ք.գ.թ., Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնի դասախոս

Сведения об авторах / Information about Authors

1. **Аванесян Карине** - к.ф.н, доцент кафедры армянского языка АрГУ
Karineh Avanesyan - Candidate of Philology, associate professor, ASU, Chair of Armenian Language
2. **Акопян Вардан** - д.ф.н, профессор, ректор университета "Григора Нарекаци"
Vardan Hakobyan - Doctor of Philology, Professor, rector of "Grigor Narekatsy" University
3. **Аталян Мариам** - АНА соискатель кафедры Истории Армении и философии
Mariam Atalyan - Post-graduate student of the Chair of History and Philosophy, ANAU
4. **Багдасарян Алиса** - к.ф.н
5. **Бегларян Жанна** - к.ф.н, заведующая кафедрой литературы университета "Григора Нарекаци"
Jhanna Beglaryan - Candidate of Philology, the Head of the Chair of Literature
6. **Григорян Амалия** - к.ф.н, преподаватель кафедры литературы университета "Григор Нарекаци"
Amalia Grigoryan - Candidate of Philology, Lecturer of the Chair of Literature "Grigor Narekatsy" University
7. **Григорян Елена** - преподаватель кафедры языков университета "Григора Нарекаци"
Elena Grigoryan - Lecturer of the Chair of Languages "Grigor Narekatsi" University
8. **Ервандян Зухра** - к.ф.н, доцент кафедры языков ГЭА Армении
Zukhra Ervandyan - Candidate of Philology, associate professor ASEU
9. **Мовсесян Рена** - к.ф.н, заведующая кафедрой языков университета "Григора Нарекаци"
Rena Movsesyan - Candidate of Philology, Head of the Chair of Languages "Grigor Narekatsi" University
10. **Наджарян Мери** - соискатель кафедры Истории Армении исторического факультета ЕГУ
Mery Najaryan - Post - graduate student of the Chair of History and Philosophy
11. **Сантрян Лиана** - к.ф.н, доцент гуманитарной кафедры и языков Шушинского технологического университета
Liana Santryan - Candidate of Philology, associate professor, Shushi Technological University
12. **Товмасян Лусине** - к.ф.н, доцент иностранных языков АрГУ
Lusine Tovmasyan - Candidate of Philology, associate professor, ASU Chair of Foreign Languages

- 13. Саркисян Армине** - преподаватель кафедры педагогики и методики университета Григора Нарекаци
Armine Sargsyan - Lecturer of the Chair of Pedagogy "Grigor Narekatsy" University
- 14. Ханян Сократ** - д.ф.н, профессор, преподаватель литературы и журналистики АрГУ
Sokrat Khanyan - Doctor of Philology, Professor, ASU Chair of Literature and Journalism.
- 15. Саркисян Алик** - преподаватель кафедры истории университета "Григор Нарекаци"
Alik Sargsyan - Lecturer of the Chair of History "Grigor Narekatsi" University
- 16. Симонян Нанар** - к.ф.н, преподаватель кафедры литературы университета "Григор Нарекаци"
Nanar Simonyan - Candidate of Philology, Lecturer of the Chair of Literature "Grigor Narekatsy" University
- 17. Ширинян Ани** - соискатель кафедры литературы и журналистики ЕГУ
Ani Shirinyan - Past-graduate student of the Chair of Literature and Journalism, YSU

Գրիգոր Նարեկացի պետական տարնագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекацц”
“Grigor Narekatsy” State Accredited University

Դ Պ Ր Ա Տ Ո Ւ Ն

Գիտական հոդվածների ժողովածու

Д П Р А Т У Н

Сборник научных статей

D P R A T U N

Collection of Scientific Articles

1(6)

2018

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ԶԱԿՈՐՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Համակարգչային էջադրումը՝ Գ.Սնացականյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x108 ¹/₁₆:
Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Ստեփանակերտ
Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
2018